

**Հայաստանի և Թուրքիայի
միջև ճանապարհների վերաբացման
առևտրատնտեսական հիմնախնդիրները**

Եզրակացություններ և առաջարկություններ

Հունիս, 2009թ.

Երևան

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է Հայ Յեղափոխական Դաշնակցության Բյուրոյի նախաձեռնությամբ՝ փորձագետներ Սիեր Ծատուրյանի, Պավել Հովհաննիսյանի և Ալբերտ Բաբայանի կողմից: Հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում թուրք գործընկեր, Թուրքիայի մրցակցության պաշտպանության գերատեսչության փորձագետ պրն. Սուրատ Այբերին՝ ուսումնասիրության ընթացքում տրամադրած անհրաժեշտ տեղեկատվության համար:

Բովանդակություն

| | |
|---|-----------|
| Ներածություն | 5 |
| 1. Ներմուծումների վրա ազդող կարգավորում | 11 |
| 1.1. Ներմուծումների վրա ազդող կարգավորումը թուրքիայում | 11 |
| 1.1.1. Ընդհանուր նկարագիր | 11 |
| 1.1.2. Մաքսատուրքեր | 12 |
| 1.1.3. Մաքսային ընթացակարգեր | 19 |
| 1.1.4. Ծագման կանոններ | 21 |
| 1.1.5. Ներմուծման արգելումներ, քվոտաներ և լիցենզավորում | 22 |
| 1.1.6. Չնախատեսված առևտրային կարգավորում | 25 |
| 1.1.7. Պետական գնումներ | 28 |
| 1.1.8. Փոխհամաձայնեցված առևտուր | 30 |
| 1.2. Ներմուծումների վրա ազդող կարգավորումը Հայաստանում | 31 |
| 1.3. Ներմուծումների վրա ազդող կարգավորման և առևտրի համեմատություն | 32 |
| 2. Արտահանումների և արտադրության վրա ազդող կարգավորում | 40 |
| 2.1. Թուրքիայի արտահանումների և արտադրության վրա ազդող կարգավորում | 40 |
| 2.1.1. Գրանցում և փաստաթղթեր | 40 |
| 2.1.2. Արտահանումներից գանձվող հարկեր | 41 |
| 2.1.3. Արտահանման արգելումներ, վերահսկողություն և լիցենզավորում | 41 |
| 2.1.4. Արտահանմանն ուղղված լրավճարներ, ֆինանսավորում, աջակցություն և խթանում .. | 42 |
| 2.1.5. Ազատ գոտիներ | 45 |
| 2.1.6. Այլ միջոցներ | 47 |
| 2.1.7. Խթաններ | 47 |
| 2.1.8. Պետական սեփականություն հանդիսացող կազմակերպություններ և մասնավորեցում .. | 51 |
| 2.1.9. Մրցակցության պաշտպանության քաղաքականություն և գնային կարգավորում | 53 |
| 2.1.10. Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանություն | 56 |
| 2.2. Արտահանումների և արտադրության վրա ազդող կարգավորումը Հայաստանում | 58 |
| 2.2.1. Արտահանման խթանում | 58 |
| 2.2.2. Արտադրության խթանում և պետական աջակցություն | 59 |
| 2.2.3. Մրցակցության պաշտպանության քաղաքականություն | 61 |
| 2.2.4. Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանություն | 61 |
| 2.3. Արտահանումների և արտադրության վրա ազդող կարգավորման համեմատություն | 62 |
| 3. Գյուղատնտեսություն | 66 |
| 3.1. Թուրքիայի գյուղատնտեսության ոլորտ | 66 |
| 3.1.1. Ընդհանուր նկարագիր | 66 |
| 3.1.2. Քաղաքականության ուղղությունները | 68 |
| 3.2. Հայաստանի գյուղատնտեսության ոլորտ | 76 |
| 3.3. Գյուղատնտեսության ոլորտների համեմատություն | 79 |
| 4. Սանիտարական և բուսասանիտարական կարգավորում | 82 |
| 4.1. Սանիտարական և բուսասանիտարական կարգավորումը թուրքիայում | 82 |
| 4.1.1. Ոլորտի կարգավորումը ԱՀԿ-ում | 82 |
| 4.1.2. Սննդի անվտանգության կարգավորումը ԵՄ-ում | 84 |
| 4.1.4. Բուսասանիտարական ոլորտի կարգավորումը ԵՄ-ում | 89 |
| 4.1.5. Բուսասանիտարական ոլորտի կարգավորումը Թուրքիայում | 90 |
| 4.1.6. Անասնաբուժության ոլորտի կարգավորումը ԵՄ-ում | 92 |
| 4.1.7. Անասնաբուժության ոլորտի կարգավորումը Թուրքիայում | 92 |
| 4.2. Սանիտարական և բուսասանիտարական կարգավորումը Հայաստանում | 94 |

| | |
|--|------------|
| 5. Արդյունաբերություն | 96 |
| 5.1. Թուրքիայի արդյունաբերության ոլորտ | 96 |
| 5.1.1. Ընդհանուր նկարագիր | 96 |
| 5.1.2. Քաղաքականության ուղղությունները | 97 |
| 5.1.3. Մանածագործություն և հագուստ | 99 |
| 5.1.4. Երկաթ և պողպատ | 101 |
| 5.1.5. Ավտոմեքենաշինություն | 102 |
| 5.1.6. Հանքարդյունաբերություն և էներգետիկա | 103 |
| 5.2. Հայաստանի արդյունաբերության ոլորտ | 113 |
| 5.2.1. Ընդհանուր նկարագիր | 113 |
| 5.2.2. Հանքարդյունաբերություն և էներգետիկա | 115 |
| 5.3. Արդյունաբերության ոլորտների համեմատություն | 116 |
| 6. Տեխնիկական պահանջներ | 121 |
| 6.1. Տեխնիկական պահանջները Թուրքիայում | 121 |
| 6.1.1. Ոլորտի կարգավորումն ԱՀԿ-ում | 121 |
| 6.1.2. Ոլորտի կարգավորումը Եւրոմիությունում | 122 |
| 6.1.3. Ոլորտի կարգավորումը Թուրքիայում | 123 |
| 6.2. Տեխնիկական պահանջները Հայաստանում | 127 |
| 7. Ծառայություններ | 131 |
| 7.1. Թուրքիայի ծառայությունների ոլորտ | 131 |
| 7.1.1. Ծառայությունների կարգավորումն ԱՀԿ-ում | 131 |
| 7.1.2. Թուրքիայի ծառայությունների ոլորտի ընդհանուր նկարագիրը | 131 |
| 7.1.3. Բանկային ծառայություններ | 132 |
| 7.1.4. Արժեթղթերի շուկա | 133 |
| 7.1.5. Ապահովագրություն | 134 |
| 7.1.6. Հեռահաղորդակցություն և փոստ | 136 |
| 7.1.7. Տրանսպորտ | 139 |
| 7.1.8. Ջրոսաշրջություն | 144 |
| 7.2. Հայաստանի ծառայություններ | 146 |
| 7.2.1. Ֆինանսական ծառայություններ | 146 |
| 7.2.2. Հեռահաղորդակցություն | 147 |
| 7.2.3. Տրանսպորտ | 148 |
| 7.2.4. Ջրոսաշրջություն | 149 |
| 7.3. Ծառայությունների համեմատություն | 150 |
| 7.3.1. Ֆինանսական ծառայություններ | 150 |
| 7.3.2. Կապիտալի շուկա | 154 |
| 7.3.3. Ֆինանսական ծառայությունների առևտուր | 156 |
| 7.3.4. Հեռահաղորդակցություն | 157 |
| 7.3.5. Տրանսպորտ | 161 |
| 7.3.6. Ջրոսաշրջություն | 162 |
| 8. Եզրակացություններ և առաջարկություններ | 164 |
| 8.1. Տնտեսական արդյունք, ազգային եկամուտ և ներդրումներ | 164 |
| 8.2. Ներմուծումների վրա ազդող կարգավորում | 165 |
| 8.3. Արտահանումների և արտադրության վրա ազդող կարգավորում | 171 |
| 8.4. Գյուղատնտեսություն | 176 |
| 8.5. Սանիտարական և բուսասանիտարական կարգավորում | 179 |
| 8.6. Արդյունաբերություն | 181 |
| 8.7. Տեխնիկական պահանջներ | 184 |
| 8.8. Ծառայություններ | 186 |
| Հավելված | 189 |

Ներածություն

Թեև հետխորհրդային շրջանում Հայաստան-Թուրքիա փոխհարաբերություններն սկսվեցին Հայաստանի անկախությունից անմիջապես հետո Թուրքիայի կողմից Հայաստանի պետության ճանաչմամբ, սակայն Թուրքիան տարբեր պատճառներով մերժեց Հայաստանի հետ պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Ավելին՝ 1993 թվականին Թուրքիան քաղաքական նկատառումներով փակեց Հայաստանի հետ իր սահմանները: Թողնելով քաղաքական խնդիրները մի կողմ՝ ևս մեկ անգամ պետք է ընդգծել, որ այս իրադրությունը տնտեսական վնաս է հասցրել Հայաստանին:

Հիմնականում համընկնելով Երոպական Միությանը Թուրքիայի անդամակցության գործընթացի որոշ աշխուժացման հետ՝ հայ-թուրքական սահմանի վերաբացումը հատկապես վերջին մի քանի տարվա ընթացքում գտնվել է բազմաթիվ տնտեսագետների ուշադրության կենտրոնում, ովքեր փորձել են գնահատել սահմանի վերաբացման ազդեցությունը մի շարք տնտեսական ցուցանիշների վրա: Նման ուսումնասիրություն առաջին անգամ իրականացվել է Ե. Պոլյակովի կողմից 2000 թվականին¹, որը կիրառել է ձգողականության մոդել և եզրակացրել, որ սահմանի վերաբացման դեպքում Հայաստանից արտահանումները կաճեն 200%-ով, իսկ ՀՆԱ-ն՝ 38%-ով:

Հետագայում Լ. Ֆրեյնկմանը, Ե. Պոլյակովն ու Կ. Ռենկոն² կիրառել են առևտրի բացության և ձգողականության մոդելները՝ հայկական առևտրային հոսքերի և ՀՆԱ-ի վրա Թուրքիայի հետ փակ սահմանի ազդեցությունը գնահատելու համար: Առևտրի բացության մոդելի կիրառումից ստացված արդյունքները ցույց են տալիս, որ փակ սահմանը զգալի ազդեցություն է ունեցել արտահանումների և ՀՆԱ-ի վրա, թեպետ ՀՆԱ-ի վրա ազդեցությունը նվազել էր՝ 21-րդ դարի սկզբին կազմելով 30%՝ 1990-ական թվականների վերջի 40% ցուցանիշի դիմաց: Այնուհետև կիրառվել է ձգողականության մոդելը, որի բնութագրիչները տարբերվում էին Պոլյակովի կողմից նախկինում կիրառված ձգողականության մոդելից: Այստեղ դրա արդյունքները զգալիորեն տարբերվում են առևտրի բացության մոդելից՝ ցույց տալով, որ սահմանի փակ լինելը չի ունեցել նշանակալի ազդեցություն Հայաստանի առևտրային հոսքերի վրա: Այս ուսումնասիրությունը քննադատության է արժանացել Ռ. Բեյլոքի կողմից մի շարք պատճառներով՝ ներառյալ ձգողականության մոդելի բնութագրիչները:

Տնտեսական քաղաքականության և իրավական հարցերով հայ-երոպական խորհրդատվական կենտրոնը (AEPLAC) կիրառել է հաշվարկելի ընդհանուր հավասարակշռության մոդելը³՝ սահմանի բացման ազդեցությունը ՀՆԱ-ի և առևտրի հոսքերի վրա գնահատելու համար: Ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ սահմանի բացումը միջնաժամկետ հեռանկարում կհանգեցնի արտահանման 17.7%, ներմուծման 13.0% և իրական ՀՆԱ-ի 2.7% աճի:

Հայ-թուրքական սահմանի վերաբացման հետևանքով առևտրի հոսքերի ծավալների աճի վերաբերյալ գնահատական է տրվել նաև Կ. Թորոսյանի, Ա. Գանգիժեի և Ռ. Բեյլոքի⁴ կողմից, համաձայն որոնց՝ Թուրքիայից Հայաստան ներմուծումները կաճեն 50%-ով, իսկ Հայաստանից Թուրքիա արտահանումները՝ 38%-ով:

2006 թվականին հայ-թուրքական սահմանի վերաբացման խնդրին անդրադարձել է նաև Մ.Բաղրամյանը,⁵ որն իր աշխատության մեջ կիրառում է նախորդ վերլուծություններից տարբերվող մոտեցում: Նա ենթադրում է, որ հայկական ու վրացական և թուրքական ու

¹ E. Polyakov, "Changing Trade Patterns After Conflict Resolution in South Caucasus", World Bank paper, 2000.

² L. Freinkman, E. Polyakov, C. Revenco, "Armenia's Trade Performance in 1995-2002 and the Effect of Closed Borders: A Cross-Country Perspective", Armenian Journal of Public Policy, 1(2), March 2004 pp. 185-212.

³ AEPLAC, Հայ-թուրքական սահմանների վերաբացման տնտեսական հետևանքները Հայաստանի համար, ենթադրություններ արտաքին առևտրի վերաբերյալ, 2005թ.:

⁴ K. Torosyan, A. Gangidze, R. Beilock, "A Phased Strategy for Opening Armenia's Western Border", 2006

⁵ M. Baghramyan, "Estimating the Change in Trade Flows Between Armenia and Turkey if the Border is Open: Case Study Based on Georgia-Turkey and Armenia-Iran Trade", 2006.

իրանական սպառողները համապատասխանաբար ունեն նման նախապատվություններ: Այս ենթադրությունը հնարավորություն է տալիս գնահատելու, թե ինչ կներմուծեն հայկական սպառողները Թուրքիայից և, նմանապես, ինչ կներմուծեն թուրքական սպառողները Հայաստանից: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի ընդհանուր ներմուծումները կավելանան 4%-ով, իսկ ընդհանուր արտահանումները՝ 4-12%-ով:

Հայ-թուրքական սահմանի վերաբացման ազդեցությունը Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների վրա գնահատվել է Կ. Բանայանի և Բ. Ռոբերթսի կողմից⁶, որոնց կարծիքով, եթե Հայաստանը կարգավորի իր հարաբերությունները Թուրքիայի և Ադրբեջանի հետ, Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների կուտակային ծավալը կավելանա մոտ 50%-ով:

Նախկին աշխատանքների բացահայտումները որոշակիորեն նպաստել են տարբեր ձևաչափերում սահմանի վերաբացման շուրջ քննարկումներին: Նախորդ տարվանից առ այսօր երկու երկրների միջև փոխհարաբերությունների հաստատման համար, քաղաքական կամքի ձևավորման նախանշաններին զուգահեռ, նոր խթան է առաջացել հայ-թուրքական սահմանի վերաբացման հարցի քննարկման համար: Թեև անժխտելի է Հայաստանի տնտեսության համար սահմանի վերաբացման անհրաժեշտությունը, սակայն կան բազմաթիվ հիմնախնդիրներ՝ պայմանավորված երկու երկրների առևտրատնտեսական և ինստիտուցիոնալ տարբերություններով, որոնք քննարկման կարիք ունեն: Այս աշխատանքի նպատակն է բացահայտել ու որակել սահմանի վերաբացման առևտրատնտեսական հիմնախնդիրները և սահմանել դրանց առնչությամբ Հայաստանի դիրքորոշման նախընտրելի ուղիները:

Այսպիսով՝ այս աշխատանքը կենտրոնանում է սահմանի վերաբացման հիմնախնդիրների հայտնաբերման վրա, և այդ տեսանկյունից դիտարկվում են երկու երկրների տնտեսության հիմնական հատվածներն ու դրանց համեմատությունը, ինչպես նաև՝ ներմուծումների, արտահանումների ու արտադրության վրա ազդող կարգավորումն ու դրանց համեմատությունը, և տրվում են բացահայտված հիմնախնդիրների վերաբերյալ եզրակացություններ ու առաջարկություններ:

Ուսումնասիրության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) քարտուղարության՝ առևտրի քաղաքականության վերաբերյալ հաշվետվություններն ու անդամների պարտավորությունների փաստաթղթերը, Համաշխարհային բանկի WITS⁷ և WDI⁸ տվյալների բազաներից քաղված տվյալները, Երոպական հանձնաժողովի աշխատանքային փաստաթղթերը, Հայաստանի և Թուրքիայի պետական կառավարման մարմինների հաշվետվությունները, Economist Intelligence Unit հետազոտական և խորհրդատվական ընկերության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) և Տնտեսական քաղաքականության և իրավական հարցերով հայ-երոպական խորհրդատվական կենտրոնի (AEPLAC) վերլուծական աշխատանքները և այլն:

Թուրքիայի նկարագիրն ընդհանուր տնտեսական համեմատության մեջ

Սերածական բաժնում սկսելով մեր դիտարկումները՝ նախ հակիրճ նկարագրենք Թուրքիայի իշխանությունների կառուցվածքը: Երկիրը պառլամենտական հանրապետություն է: Թուրքիայի իրավական համակարգը հիմնականում հիմնված է երոպական նմուշների վրա: Ազգային օրենսդիրը 4 տարով ուղղակիորեն ընտրված 550 անդամներից բաղկացած Մեջլիսն է /պառլամենտ/: Թուրքիայի ներկա վարչակարգը համարվել է ժողովրդավարականի և ոչ ժողովրդավարականի խառնուրդ. ժողովրդավարության առումով ստացել է 10

⁶ K. Banaian, B. Roberts, The Impacts of Conflict Risk Reduction on the Armenian Economy, 2006.

⁷ World Integrated Trade Solution.

⁸ World Development Indicators.

հնարավորից 5,69 գնահատական և 167 երկրների շարքում զբաղեցրել է 87-րդ տեղը⁹: Գործադիր մարմինը Նախարարների խորհուրդն է, որը բաղկացած է վարչապետի տեղակալ պետնախարարներից ու արտաքին գործերի պետնախարարից: Կան ևս վեց այլ պետնախարարներ: Նախարարների խորհուրդը ղեկավարում է վարչապետը: Հիմնական նախարարություններն են՝ Գյուղատնտեսության, Արդյունաբերության և առևտրի, Ֆինանսների, Էներգետիկայի և բնական ռեսուրսների, Անտառնային տնտեսության, Զբոսաշրջության և մշակույթի, Տրասպորտի, Աշխատանքի և սոցիալական ապահովության, Կրթության, Բնակարանաշինության և հանրային աշխատանքների, Առողջապահության, Պաշտպանության, Ներքին գործերի և Արդարադատության նախարարությունները: Դրամավարկային քաղաքականությունը իրականացնում է Կենտրոնական բանկը:

Այժմ հակիրճ ամփոփենք տնտեսական կարևոր ցուցանիշների առնչությամբ երկու երկրների հարաբերական դիրքերը: Համախառն ազգային եկամտի (ՀԱԵ)՝ ըստ մեկ շնչի հաշվի Համաշխարհային բանկի կողմից երկրների դասակարգման աղյուսակում Հայաստանը հանդիսանում է ստորին միջին եկամտային խմբի երկիր (խմբի ՀԱԵ-ն գտնվում է \$936 - \$3 705 միջակայքում), մինչդեռ Թուրքիան հանդիսանում է վերին միջին եկամտային խմբի (ՀԱԵ-ն՝ \$3 706 - \$11 455) երկիր (աղյուսակ 1): Երկու երկրներն էլ գտնվում են Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային խմբում, որտեղ ընդգրկված են միայն զարգացող երկրները:¹⁰ Համեմատությունը այսուհետ հիմնականում կկատարվի Հայաստանի և Թուրքիայի, ինչպես նաև ըստ հնարավորության այդ երկու երկրների և նշված խմբերի միջև:¹¹ ՀԱԵ-ից բացի՝ տնտեսական համեմատության առումով կարևոր են նաև ՀՆԱ-ի ավանդական ցուցանիշները (աղյուսակներ 2 և 3):

Աղյուսակ 1, մեկ շնչի հաշվով ՀԱԵ, Ատլաս մեթոդ (ընթացիկ \$)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 800 | 950 | 1160 | 1500 | 1960 | 2640 |
| Թուրքիա | 3250 | 3560 | 4770 | 6150 | 7080 | 8020 |
| Վրաստան | 730 | 860 | 1050 | 1330 | 1670 | 2120 |
| Ադրբեջան | 720 | 820 | 950 | 1270 | 1890 | 2550 |
| Իրան | 1730 | 1950 | 2210 | 2570 | 2960 | 3470 |
| Ստորին միջին եկամուտ | 940 | 1056 | 1231 | 1418 | 1617 | 1887 |
| Վերին միջին եկամուտ | 3372 | 3579 | 4206 | 5017 | 5891 | 6987 |
| Բարձր եկամուտ | 25629 | 27576 | 31466 | 34499 | 36097 | 37566 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 2134 | 2494 | 3195 | 4034 | 4922 | 6051 |
| Աշխարհ | 5176 | 5562 | 6348 | 7018 | 7468 | 7958 |

Աղյուսակ 2, մեկ շնչի հաշվով ՀՆԱ, գնողունակության համարժեք (ընթացիկ միջազգային \$)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|----------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 2652 | 3101 | 3536 | 4162 | 4879 | 5711 |
| Թուրքիա | 8217 | 8322 | 9688 | 10370 | 11535 | 12481 |
| Վրաստան | 2448 | 2807 | 3087 | 3520 | 4009 | 4667 |
| Ադրբեջան | 2755 | 3105 | 3488 | 4496 | 6172 | 7477 |
| Իրան | 7650 | 8240 | 8771 | 9314 | 10031 | 10934 |
| Ստորին միջին եկամուտ | 2784 | 3034 | 3336 | 3680 | 4108 | 4574 |
| Վերին միջին եկամուտ | 8327 | 8738 | 9565 | 10288 | 11188 | 12116 |
| Բարձր եկամուտ | 28823 | 29699 | 31337 | 32733 | 34487 | 36017 |

⁹ The Economist Intelligence Unit, *the Economist Intelligence Unit Index of Democracy 2008*, Հայաստանի վարչակարգը նույնպես համարվել է խառնուրդ՝ ստանալով է 4,09 գնահատականը և զբաղեցնելով 113րդ տեղը:

¹⁰ World Bank, Country Classification, <http://go.worldbank.org/K2CKM78CC0>

¹¹ Այս համեմատությունների բոլոր աղյուսակները կազմվել են World Bank, World Development Indicators Online տվյալների բազայից վերցված տեղեկատվության հիման վրա: Կարևոր ցուցանիշների դրամային արժեքները տրված են հավելվածում:

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|------|------|------|------|-------|-------|
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 7139 | 7671 | 8575 | 9310 | 10340 | 11394 |
| Աշխարհ | 7410 | 7716 | 8229 | 8708 | 9310 | 9896 |

Աղյուսակ 3, ՀՆԱ-ի աճ (տարեկան %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 13.19 | 14.00 | 10.50 | 13.90 | 13.30 | 13.70 |
| Թուրքիա | 6.16 | 5.27 | 9.36 | 8.40 | 6.89 | 4.45 |
| Վրաստան | 5.47 | 11.06 | 5.86 | 9.60 | 9.38 | 12.43 |
| Ադրբեջան | 10.60 | 11.20 | 10.20 | 26.40 | 34.50 | 19.21 |
| Իրան | 7.52 | 7.11 | 5.08 | 4.62 | 5.89 | 7.58 |
| Ստորին միջին եկամուտ | 6.33 | 7.56 | 8.29 | 8.36 | 9.45 | 9.66 |
| Վերին միջին եկամուտ | 1.11 | 3.28 | 6.72 | 5.17 | 5.89 | 5.79 |
| Բարձր եկամուտ | 1.43 | 1.98 | 3.35 | 2.63 | 2.92 | 2.63 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 4.74 | 6.03 | 7.78 | 6.52 | 7.37 | 6.76 |
| Աշխարհ | 1.86 | 2.65 | 4.18 | 3.49 | 3.93 | 3.77 |

Թուրքիայի մեկ շնչի հաշվով ՀԱԵ-ն ավելի քան 3 անգամ բարձր է Հայաստանի այդ ցուցանիշից: Չնայած Հայաստանի՝ վերջին տարիներին գրանցած բոլոր համեմատությունների մեջ տպավորիչ երկնիշ աճին՝ գնողունակության համարժեքով Թուրքիայի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ավելի քան 2 անգամ բարձր է Հայաստանի այդ ցուցանիշից: Այս համեմատությունները ենթադրում են տնտեսական ներուժի զգալի տարբերություն:

Տնտեսության համար կարևոր բնագավառի՝ ներդրումների հետ կապված, նախ դիտարկենք կապիտալի ձևավորման ցուցանիշները (աղյուսակներ 4-7): Այս և մյուս ցուցանիշների վերլուծության մեջ ըստ անհրաժեշտության կկատարվի նաև դիտարկվող ցուցանիշների համեմատություն՝ մեկ շնչի հաշվով, որպեսզի հարաբերական կարևորության գնահատման համար հաշվի առնվեն զարգացման տարբեր մակարդակներով պայմանավորված ՀՆԱ-ի տարբերությունները և համապատասխանաբար ՀՆԱ-ի մեջ այդ ցուցանիշների տարբերությունները:

Աղյուսակ 4, Համախառն կապիտալի ձևավորում (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 21.67 | 24.26 | 24.88 | 30.47 | 33.57 | 31.68 |
| Թուրքիա | 17.61 | 17.60 | 19.39 | 19.99 | 22.05 | 22.17 |
| Վրաստան | 25.48 | 27.69 | 28.25 | 28.59 | 26.69 | 29.05 |
| Ադրբեջան | 34.58 | 53.17 | 53.49 | 41.53 | 29.86 | 27.49 |
| Իրան | 35.10 | 36.29 | 36.02 | 34.09 | 33.54 | 36.87 |
| Ստորին միջին եկամուտ | 29.53 | 31.57 | 33.50 | 34.41 | 35.13 | .. |
| Վերին միջին եկամուտ | 18.26 | 18.38 | 20.05 | 19.97 | 20.96 | 22.65 |
| Բարձր եկամուտ | 19.82 | 19.78 | 20.32 | 20.64 | .. | .. |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 19.86 | 20.45 | 21.41 | 21.35 | 22.66 | 23.72 |
| Աշխարհ | 20.47 | 20.62 | 21.37 | 21.71 | .. | .. |

Աղյուսակ 5, Համախառն կապիտալի ձևավորում (տարեկան աճ, %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 27.28 | 29.24 | 18.17 | 27.97 | 25.03 | 9.57 |
| Թուրքիա | 28.77 | 10.80 | 17.38 | 18.40 | 13.29 | 10.13 |

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Վրաստան | 14.62 | 28.00 | 22.41 | 13.00 | 17.66 | 17.87 |
| Ադրբեջան | 79.31 | 75.12 | 5.58 | 31.59 | 39.55 | 12.01 |
| Իրան | 14.98 | 17.69 | 4.72 | 5.81 | 5.29 | 12.80 |
| Ստորին միջին եկամուտ | 10.32 | 14.39 | 13.64 | 11.94 | 12.09 | 13.74 |
| Վերին միջին եկամուտ | -3.72 | 2.83 | 14.46 | 7.89 | 12.44 | 16.93 |
| Բարձր եկամուտ | -2.02 | 2.50 | 5.72 | 3.56 | .. | .. |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 6.30 | 11.69 | 13.87 | 10.79 | 15.50 | 15.18 |
| Աշխարհ | -0.63 | 4.14 | 7.55 | 5.27 | .. | .. |

Աղյուսակ 6, Համախառն ֆիքսված կապիտալի ձևավորում (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 21.09 | 23.00 | 23.86 | 29.80 | 33.28 | 31.20 |
| Թուրքիա | 16.72 | 17.01 | 20.34 | 21.03 | 22.29 | 21.50 |
| Վրաստան | 24.48 | 26.67 | 27.46 | 28.07 | 25.56 | 28.27 |
| Ադրբեջան | 34.08 | 52.88 | 53.20 | 41.31 | 29.70 | 26.51 |
| Իրան | 28.34 | 28.73 | 28.57 | 27.12 | 26.68 | 30.98 |
| Ստորին միջին եկամուտ | 27.86 | 29.52 | 31.07 | 32.29 | 33.25 | .. |
| Վերին միջին եկամուտ | 17.56 | 17.42 | 18.54 | 18.98 | 20.00 | 21.66 |
| Բարձր եկամուտ | 19.81 | 19.66 | 19.93 | 20.38 | .. | .. |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 18.65 | 19.09 | 20.14 | 20.29 | 21.39 | 22.09 |
| Աշխարհ | 20.27 | 20.27 | 20.72 | 21.23 | .. | .. |

Աղյուսակ 7, Համախառն ֆիքսված կապիտալի ձևավորում (տարեկան աճ, %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 33.10 | 27.50 | 19.00 | 29.10 | 26.00 | 8.85 |
| Թուրքիա | 14.68 | 14.17 | 28.36 | 17.39 | 13.26 | 3.35 |
| Վրաստան | 18.86 | 30.57 | 29.05 | 13.00 | 17.89 | 19.49 |
| Ադրբեջան | 60.37 | 76.65 | 16.90 | 11.08 | 12.31 | 13.99 |
| Իրան | 12.01 | 10.79 | 6.96 | 5.81 | 5.29 | 14.41 |
| Ստորին միջին եկամուտ | 10.75 | 13.60 | 12.20 | 12.81 | 12.27 | 13.79 |
| Վերին միջին եկամուտ | -3.47 | 3.55 | 13.63 | 11.12 | 13.19 | 16.05 |
| Բարձր եկամուտ | -2.19 | 2.02 | 4.27 | 4.34 | .. | .. |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 5.41 | 11.79 | 16.14 | 12.10 | 15.30 | 12.37 |
| Աշխարհ | -0.76 | 3.63 | 6.09 | 6.18 | .. | .. |

Համեմատությունից երևում է, որ Թուրքիան հարաբերականորեն ավելի շատ է (մեկ շնչի հաշվով մոտ 3 անգամ) ներդրումներ կատարում լիկվիդային միջոցների (կապիտալի և ֆիքսված կապիտալի տարբերություն) մեջ, քան Հայաստանը: Դրանք հետագայում կարող են հոսել դեպի Հայաստան: Հայաստանում վերջին տարիներին ֆիքսված միջոցների մեջ ներդրումների շատ բարձր աճը եղել է տնտեսության զարգացման հետ ոչ համընթաց: Դա պայմանավորված է շինարարության ու հանքարդյունաբերական ոլորտներում ներդրումներով և չի ենթադրում մասնավորապես գյուղատնտեսության կամ արդյունաբերական ապրանքների արտադրության ոլորտներում հետագա զգալի առաջխաղացում:

Այստեղ նաև ավելացնենք, որ Թուրքիայի ուղղակի պարավորություն հանդիսացող պարտքի ռիսկայնության առնչությամբ երկիրը մոտ հեռանկարում համարվում է կայուն և ստացել է «BB» գնահատականը, ինչը, սակայն, նշանակում է, որ այն ունի ներկայում

պարտավորությունները կատարելու կարողություն և մտադրություն, բայց տնտեսական փոփոխությունների նկատմամբ դյուրագգաց է¹²:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների վերաբերյալ պետք է նշել, որ Թուրքիան ունի Օտարերկրյա ուղղակի ներդրումների մասին օրենք՝ ընդունված 2003 թ., որը ապահովում է բավական ազատական ու ոչ խտրական միջավայր՝ օտարերկրացիների համար: Թուրքական տնտեսության համարյա բոլոր ոլորտներում ընկերությունները կարող են 100%-ով լինել օտարերկրյա սեփականություն: Բացառություն են կազմում հետևյալ ոլորտները՝ հեռարձակում (25%) և օդային ու ծովային տրանսպորտ (49%), իսկ ձկնորսության համար օտարերկրացիներին չի տրվում լիցենզիա: Օտարերկրացիների կողմից 2,5-30 հա հողատարածքների գնման համար անհրաժեշտ է Նախարարների խորհրդի որոշումը: Հատուկ թույլտվություն է անհրաժեշտ ֆինանսական ծառայությունների, ինչպես նաև նավթային, հանքարդյունաբերական, էլեկտաէներգիայի և կրթական ոլորտներում: Չկա որևէ սահմանափակում Թուրքիայից դեպի դուրս ներդրումների համար: Այժմ դիտարկենք օտարերկրյա ուղղակի ներդրումների ցուցանիշները՝ Հայաստանի և Թուրքիայի տնտեսություններում դրանց հարաբերական կարևորությունը գնահատելու համար (աղյուսակ 8 և 9):

Աղյուսակ 8, Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսք (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 4.66 | 4.31 | 6.12 | 5.27 | 5.38 |
| Թուրքիա | 0.49 | 0.58 | 0.73 | 2.03 | 3.79 |
| Վրաստան | 4.72 | 8.38 | 9.60 | 7.06 | 13.68 |
| Ադրբեջան | 22.33 | 45.15 | 40.97 | 12.68 | -2.78 |
| Իրան | 0.47 | 0.36 | 0.06 | 0.02 | 0.40 |
| Ստորին միջին եկամուտ | 2.53 | 2.27 | 2.28 | 3.08 | 2.91 |
| Վերին միջին եկամուտ | 2.51 | 2.24 | 3.09 | 2.65 | 3.28 |
| Բարձր եկամուտ | 2.23 | 1.67 | 1.70 | 2.24 | 2.74 |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 1.85 | 2.41 | 3.43 | 3.07 | 4.64 |
| Աշխարհ | 2.28 | 1.78 | 1.89 | 2.37 | 2.82 |

Աղյուսակ 9, Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ արտահոսք (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | .. | 0.01 | 0.06 | 0.14 | 0.05 | -0.04 |
| Թուրքիա | 0.08 | 0.16 | 0.22 | 0.22 | 0.18 | .. |
| Վրաստան | 0.12 | 0.09 | 0.19 | -1.40 | -0.20 | 0.73 |
| Ադրբեջան | 5.22 | 12.83 | 13.88 | 9.22 | 3.36 | 0.91 |
| Իրան | .. | .. | .. | .. | .. | .. |
| Ստորին միջին եկամուտ | 0.22 | 0.15 | 0.26 | 0.57 | 0.68 | .. |
| Վերին միջին եկամուտ | 0.39 | 0.61 | 0.97 | 0.80 | 1.68 | 1.75 |
| Բարձր եկամուտ | 2.44 | 2.17 | 2.79 | 2.55 | 3.52 | 4.85 |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 0.52 | 0.96 | 1.01 | 0.98 | 1.44 | 2.29 |
| Աշխարհ | 2.07 | 1.85 | 2.37 | 2.16 | 2.99 | 4.36 |

Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը, որպես ՀՆԱ-ի մաս, թեև դրական համեմատության մեջ է Թուրքիայի և երկրների խմբերի հետ, սակայն այդ ցուցանիշը մեկ շնչի հաշվով զգալիորեն զիջում է Թուրքիայի ցուցանիշին, որի ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2 անգամ մեծ է: Թուրքիան արտերկրում շատ քիչ ներդրումներ է կատարում՝ նույնիսկ ստորին միջին եկամտային խմբի համեմատությամբ: Բարձր եկամտի երկրները շարունակում են մնալ որպես համաշխարհային ներդրումների հիմնական աղբյուր:

¹² The Economist Intelligence Unit, Country Risk Service, *Sovereign Ratings*, Հայաստանի վերաբերյալ գնահատական առաջին չկա:

1. Ներմուծումների վրա ազդող կարգավորում

1.1. Ներմուծումների վրա ազդող կարգավորումը Թուրքիայում

1.1.1. Ընդհանուր նկարագիր

Թուրքիա ներմուծված ապրանքները կարող են ենթակա լինել տարբեր վճարների՝ մաքսային տուրքեր ու վճարներ և ներքին հարկեր (ակցիզային հարկեր, որոնք նաև հայտնի են որպես հատուկ սպառողական հարկեր, ավելացված արժեքի հարկ և դրոշմանիշային տուրք, որը հարկվում է փաստաթղթերից): Եւրոպական համայնքների (ԵՀ) հետ մաքսային միության մեջ իր մասնակցության արդյունքում Թուրքիայի՝ երրորդ երկրներից ներմուծված բոլոր արդյունաբերական ապրանքների և մշակված գյուղատնտեսական ապրանքների արդյունաբերական բաղադրիչների մաքսատուրքերը հիմնված են ԵՀ-ի ընդհանուր արտաքին տուրքերի վրա: Բացի ԵՀ-ից՝ Թուրքիան մաքսատուրքերի արտոնություններ է տրամադրում Ազատ առևտրի եւրոպական ասոցիացիայի անդամ երկրներին՝ ինը երկուսն առևտրական համաձայնագրերով: Բանակցություններ են շարունակվում բազմաթիվ այլ երկրների հետ: Թուրքիան նաև մասնակցում է Եւրոպական-միջերկրածովյան համագործակցությանը, որի նպատակն է մինչև 2010 թ. տարածաշրջանում ստեղծել ազատ առևտրային տարածք:

Թուրքիայի մաքսատուրքերը բաղկացած են արժեքային դրույքաչափերից, որոնք կիրառվում են բոլոր ապրանքների 97,9%-ի նկատմամբ, և ոչ արժեքային դրույքաչափերից (հատուկ, խառը, բարդ և փոփոխվող), որոնք կիրառվում են 378 ապրանքների վրա: Առավել բարենպաստ ազգի միջին գործող մաքսատուրքի դրույքաչափը զգալիորեն ավելի բարձր է գյուղատնտեսության մեջ, քան այլ հատվածներում. 46,7% գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ և 4,8% ոչ գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ: Ապրանքների մոտ 50,4%-ի համար ամրագրված են առավելագույն դրույքաչափեր: Ամրագրված դրույքաչափերի պարզ միջինը 28,3% է, իսկ առավել բարենպաստ ազգի գործող դրույքաչափերի պարզ միջինը՝ 10%: Ամրագրված բարձր դրույքաչափերը Թուրքիային բավարար տեղ են թողնում մաքսատուրքերի բարձրացման համար: Ավելին՝ ոչ արժեքային դրույքաչափերի կիրառումը չի ապահովում արժեքային դրույքաչափերով կատարած ԱՀԿ ամրագրման Թուրքիայի պարտավորությունների կատարումը: Բացի գործող և ամրագրված մաքսատուրքերից՝ Թուրքիան նաև ունի օրենքով սահմանված մեկ այլ մաքսատուրք¹³:

Թուրքիայի մաքսատուրքերի առավելագույն դրույքաչափերի ամրագրման խիստ ցածր մակարդակը չի համապատասխանում բազմակողմ առևտրային համակարգի տարրական պահանջներին: Դա ստեղծում է անկանխատեսելիություն ու անորոշություն երկրի ներմուծման քաղաքականության առնչությամբ, քանի որ չամրագրված դրույքաչափերը կարող են կանայականորեն փոփոխվել: Ավելին, շուկաների մատչելիության ընթացիկ բանակցությունների համատեքստում՝ այն դեպքում երբ արդեն իսկ 100% ամրագրում ունեցող երկրներից պահանջվում է նվազեցնել դրույքաչափերը, Թուրքիան կարող է դա փոխհատուցել միայն դրույքաչափերի ամրագրման ավելացմամբ:

¹³ Մաքսատուրքերին և մյուս հարցերին առնչվող բազմաթիվ մտահոգությունները կներկայացվեն համապատասխան բաժիններում:

1.1.2. Մաքսատուրքեր

Թուրքիա ներմուծված ապրանքները ենթակա են մաքսային տուրքերի ու վճարների և ներքին հարկերի՝ ինչպիսիք են ակցիզային հարկերը, ավելացված արժեքի հարկը և փաստաթղթերից հարկվող դրոշմանիշային տուրքը: ԵՅ-ի հետ մաքսային միության համաձայն՝ Թուրքիան երրորդ երկրներից ներմուծված բոլոր արդյունաբերական ապրանքների և մշակված գյուղատնտեսական ապրանքների արդյունաբերական բաղադրիչների նկատմամբ կիրառում է ԵՅ-ի ընդհանուր արտաքին սակագները: Թուրքիայի սակագները հիմնված են 2007 թվականի՝ Ապրանքների նկարագրության ու կոդավորման ներդաշնակեցված համակարգի վրա (ՆՀ) և ներառում են 18 253 տող՝ ՆՀ-ի 12 միջային մակարդակով: Սակագներն ունեն 214 խումբ, ներառյալ՝ արժեքային համարժեքները: Թուրքիան չունի սեզոնային սակագներ:

Ըստ «Մաքսային սակագների ցանկի մասին» թիվ 474 օրենքի՝ կառավարությունը կարող է բարձրացնել Առավել բարենպաստ ազգի (ԱԲԱ) գործող սակագների դրույքաչափերը (տվյալ տարվա համար հաստատված Նախարարների խորհրդի կողմից), երբ դրանք համարվում են ոչ բավականաչափ բարձր՝ տեղական արդյունաբերական ճյուղերի «բավարար» պաշտպանության համար: Օրենքը սահմանում է, այսպես կոչված, օրենսդրական սակագներ, որոնք տարբերվում են ամեն տարի Նախարարների խորհրդի կողմից հաստատվող ԱԲԱ-ի գործող սակագներից: Ըստ օրենքի՝ կառավարությունը կարող է ԱԲԱ-ի գործող սակագների դրույքաչափերը փոխարինել օրենսդրական սակագների համապատասխան դրույքաչափերի 150%-ով՝ նպատակ ունենալով ավելի բարձր պաշտպանություն ապահովել տեղական արդյունաբերական ճյուղերի համար: Սակագնային ամրագրման պարտավորության ենթակա ապրանքների դեպքում, երբ նոր դրույքաչափը (օրենսդրական սակագնի դրույքաչափի 150%-ը) ավելի բարձր է, քան համապատասխան ամրագրված սակագնային դրույքաչափը, ապա գործում է վերջինը:

Թուրքիան ունի իր շուկայի մատչելիության վրա ազդող բազմապիսի միջոցներ կիրառելու հնարավորություն: Ամբողջությամբ ԵՅ-ի կանոններին անցնելը կարող է մեղմել դրանց միջոցով ներմուծումների սահմանափակման հնարավորությունը: Սակայն, հաշվի առնելով նաև ամրագրված սակագների հարաբերականորեն ցածր կշիռը, ներկայումս գործող կարգը «օրենսդրական սակագների» կամայական կիրառման անկանխատեսելի ու սահմանափակող հնարավորություն է տալիս: Ընթացիկ խնիրներ ունեցող և ամրագրման պարտավորություններից դուրս ցանկացած ճյուղ կարող է սակագնային լրացուցիչ ուղղակի պաշտպանություն ստանալ:

ա. Գործող Առավել բարենպաստ ազգի սակագների կառուցվածքը

Թուրքիայի սակագները բաղկացած են արժեքային դրույքաչափերից, որոնք կիրառվում են բոլոր սակագնային տողերի 97,9%-ի նկատմամբ, և ոչ արժեքային դրույքաչափերից (հատուկ, խառը, բարդ և փոփոխվող տուրքեր), որոնք կիրառվում են ՆՀ-ի 12 միջային մակարդակով 378 տողի վրա: Հատուկ տուրքեր կիրառվում են 30 տողերի նկատմամբ, որոնք ներառում են որոշ ակոհոլային խմիչքներ, աղ և կինոժապավեններ: Խառը տուրքերը կիրառվում են 151 տողերի նկատմամբ, իչպիսիք են գորգերը, ապակին ու ապակյա ապրանքները և ժամացույցները: Բարդ տուրքեր կիրառվում են 113 տողերի նկատմամբ, որոնք հիմնականում գյուղատնտեսական մշակված ապրանքներ են, ինչպիսիք են՝ յոգուրտը և մակարոնեղենը: Փոփոխական տուրքեր կիրառվում են 84 տողերի վրա, ինչպիսիք են՝ կարագը, շաքարային քաղցրավենիքը, շոկոլադը, գարու հումքի հիման վրա ստացված մթերքները և պատրաստված կարտոֆիլը:

Թուրքիայի ԱԲԱ-ի գործող սակագների պարզ միջինը 10% է (հաշվի առնելով ոչ արժեքային դրույքաչափերի արժեքային համարժեքները, աղյուսակ 10): Սակագնային դրույքաչափերի տատանման միջակայքը շատ մեծ է՝ գրոյից մինչև 225%: Ընդհանուր

առմամբ դրույքաչափերի մեծ մասն ընկնում է զրոյի (չհաշված) և 10%-ի միջև. սակագնային տողերի 57%-ն այս միջակայքում է: Զրոյական մաքսատուրքերով տողերը կազմում են ամբողջի 23,6%-ը և ներառում են «Տեղեկատվական տեխնոլոգիաների մասին» համաձայնագրում ընդգրկված ապրանքները, դեղագործական ապրանքները, ցելյուլոզան (փայտի հյուսվածք), ցեմենտ և կենդանական ծագման որոշ ապրանքներ: Հետևաբար սակագնային տողերի 80,6%-ի նկատմամբ կիրառվում են մինչև 10% մաքսատուրքեր, մինչդեռ տողերի 6,2%-ը ունեն 50%-ից բարձր դրույքաչափեր: Սակագնային ամենամեծ պաշտպանություն ստացող ապրանքները ներառում են մասնաբերքները և ուտելի մսային ներքին օրգանները՝ 225% դրույքաչափով:

Թուրքիայի գործող ոչ արժեքային սակագների բարդ համակարգը թափանցիկության պակասի պայմաններում կարող է ստեղծել անկանխատեսելիություն և, մասնավորապես, արժեքային համարժեքներով ստանձնած պարտավորությունների խախտման հնարավորություն տալ: Մյուս կողմից՝ գործող դրույքաչափերի պարզ միջինը գերազանցում է շատ գործընկեր երկրների նույնիսկ պարտավորություններով ամրագրված դրույքաչափերի միջին մակարդակը: Գործող դրույքաչափերի մեկ հինգերորդ մասը 10%-ից բարձր է, ինչը լրացուցիչ վկայում է սակագնային պաշտպանության ընդհանուր բարձր մակարդակի մասին:

Ըստ գյուղատնտեսական ապրանքների Միջազգային ստանդարտ արդյունաբերական դասակարգման (ՄՍԱԴ)՝ գյուղատնտեսության մեջ գործող ԱԲԱ-ի միջին 28,3% սակագինը զգալիորեն ավելի բարձր է, քան արդյունաբերության մեջ՝ 10,9%, և հանքարդյունաբերության մեջ՝ 0,3%: Ըստ գյուղատնտեսական ապրանքների ԱՀԿ-ի սահմանման՝ գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ միջին սակագնային պաշտպանությունը կազմում է 46,7%, մինչդեռ ոչ գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ այն կազմում է 5% (առանց բենզինի):

Աղյուսակ 10, ԱԲԱ-ի սակագների կառուցվածքը, 2007 թվական

| | % |
|---|------|
| 1. Ամրագրած սակագնային տողեր (բոլորի տողերի %) | 50.4 |
| 2. Զրոյական տուրքերով սակագնային տողեր (բոլորի տողերի %) | 23.6 |
| 3. Ոչ արժեքային սակագներ (բոլոր տողերի %) | 1.9 |
| 4. Ոչ արժեքային սակագներ՝ առանց արժեքային համարժեքի (բոլոր տողերի %) | 1.7 |
| 5. Կիրառվող պարզ միջին դրույքաչափ | 11.6 |
| Գյուղատնտեսական ապրանքներ (ԱՀԿ սահմանում) | 46.7 |
| Ոչ գյուղատնտեսական ապրանքներ (ԱՀԿ սահմանում, առանց բենզինի) | 5.0 |
| Գյուղատնտեսություն (ՄՍԱԴ) | 28.3 |
| Հանքարդյունաբերություն (ՄՍԱԴ) | 0.3 |
| Արդյունաբերություն (ՄՍԱԴ) | 10.9 |
| 6. Կիրառվող պարզ միջինը 3 անգամ գերազանցող սակագներ (բոլոր տողերի %) | 8.6 |
| 7. 15%-ը գերազանցող սակագներ (բոլոր տողերի %) | 13.4 |
| 8. Կիրառվող դրույքաչափերի ընդհանուր ստանդարտ շեղումը | 26.4 |
| 9. Զրոյից բարձր, 2%-ից ցածր կամ հավասար կիրառվող դրույքաչափերը (բոլոր տողերի %) | 5.8 |

Աղբյուրը՝ ԱՀԿ Քարտուղարություն

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի սակագները տարբեր կերպ են փոփոխվում (էսկալացիա)՝ ըստ ապրանքների մշակման փուլերի և ըստ արդյունաբերական ճյուղերի: Մշակման առաջին փուլի ապրանքների սակագների միջին դրույքաչափը 28% է ու ավելի բարձր է կիսաավարտված ապրանքների միջինից՝ 0,3%: Իսկ կիսաավարտված ապրանքների սակագների միջինը ավելի ցածր է ամբողջությամբ մշակված ապրանքների

սակագների դրույքաչափերի միջինից՝ 10,9%: Այսպիսի կառուցվածքը պայմանավորված է գյուղատնտեսական չմշակված ապրանքների նկատմամբ բարձր սակագներով և որոշակի արդյունաբերական ճյուղերում սակագների կառուցվածքով: Մշակման առաջին փուլի ապրանքների նկատմամբ ԱԲԱ-ի սակագների պարզ միջինը մոտ երեք անգամ ավելի բարձր է կիսամշակված ապրանքների նկատմամբ ԱԲԱ-ի սակագների պարզ միջինից: Սակայն հումքի սակագները ավելի ցածր են ավարտված ապրանքների սակագներից մանածագործվածքների ու հագուստի, հատկապես սննդի, խմիչքների և ծխախոտային ապրանքների ճյուղերում (աղյուսակ 11): Քիմիական և պլաստիկ ապրանքների ճյուղերում սակագները մշակման առաջին փուլի ապրանքների համար ավելի ցածր են, քան կիսաավարտված ապրանքների համար, և կիսաավարտված ապրանքների համար ավելի բարձր են, քան ավարտված ապրանքների համար: Ըստ ԱՅԿ-ի փորձագետների՝ կառուցվածքի պարզեցման ու դրույքաչափերի նվազեցման միջոցով սակագների բարեփոխումը կավելացնի սակագնային համակարգի թափանցիկությունը, կնվազեցնի աջակցության շրջանակներում տուրքերի գիջումների կարիքը և կօգնի բարելավել մրցունակությունը:

Թուրքիայի սակագների դրույքաչափերը խիստ տարբեր են ըստ ոլորտների ու ըստ ապրանքների մշակման աստիճանի: Գյուղատնտեսությունը ստանում է ամենաբարձր պաշտպանությունը, ինչը մեծ մասամբ կարող է այդ շուկա չթողնել յուրաքանչյուր ներմուծողի: Մնացած ոլորտներում շուկայի մատչելիությունը կախված է ներգրավված ապրանքների մշակման աստիճանից: Այնտեղ, որտեղ ավելի շատ է կարևորվում տեղական արտադրությունը, պաշտպանությունը բարձր է՝ անկախ ապրանքների մշակման աստիճանից (հումք, կիսաավարտված, ավարտված): Արդյունքում մուտքի հնարավորությունը մեծ մասամբ կարող է սահմանափակվել մնացած մյուս ճյուղերով:

Աղյուսակ 11, ԱԲԱ-ի սակագների ամփոփ վերլուծություն, 2007 թ.

| Վերլուծություն | Տողերի թիվը | Գործող դրույքաչափեր | | | | |
|--|-------------|---------------------|--------------------|--------------------|-------------------|---------------|
| | | Օգտ. տողերի թիվը | Պարզ միջ. սակգ (%) | Սակագ. տիրույթ (%) | Ստանդ. շեղում (%) | Վարիաց գործակ |
| Ամբողջը | 18,253 | 18,235 | 11.6 | 0-225 | 26.4 | 2.3 |
| Ըստ ԱՅԿ-ի սահմանման, առանց նավթի | | | | | | |
| Գյուղատնտեսություն | 2,865 | 2,847 | 46.7 | 0-225 | 51.9 | 1.1 |
| Կենդանիներ ու դրանց ապրանքներ | 418 | 418 | 114.3 | 0-225 | 71.1 | 0.6 |
| Կաթնաբերք | 178 | 178 | 109.4 | 8.3-170 | 55.6 | 0.5 |
| Սուրճ և թեյ, կակաո, շաքար, և այլն | 440 | 440 | 31.7 | 0-145 | 36.2 | 1.1 |
| Կտրած ծաղիկներ և բույսեր | 116 | 116 | 10.1 | 0-46.8 | 14.6 | 1.4 |
| Մրգեր և բանջարեղեն | 677 | 677 | 41.4 | 0-145.8 | 22.0 | 0.5 |
| Հացահատիկ | 65 | 65 | 48.3 | 0-130 | 40.7 | 0.8 |
| Յուղային սերմեր, ճարպեր, յուղեր և դրանց ապրանքներ | 250 | 250 | 19.5 | 0-50 | 12.6 | 0.6 |
| Խմիչքներ ու սպիրտեր | 296 | 278 | 46.7 | 0-70 | 28.5 | 0.6 |
| Ծխախոտ | 36 | 36 | 35.6 | 10-74.9 | 20.5 | 0.6 |
| Այլ գյուղատնտեսական ապրանքներ | 389 | 389 | 7.5 | 0-46.8 | 9.3 | 1.2 |
| Ոչ գյուղատնտեսական ապրանքներ | 15,307 | 15,307 | 5.0 | 0-81.9 | 6.8 | 1.4 |
| Չուկ և ձկնաբուծական ապրանքներ | 405 | 405 | 33.6 | 0-81.9 | 19.2 | 0.6 |
| Հանքային ապրանքներ, թանկարժեք քարեր և թանկարժեք մետաղներ | 919 | 919 | 2.4 | 0-20 | 2.8 | 1.2 |

| Վերլուծություն | Տողերի քիվը | Գործող դրույթաչափեր | | | | |
|--|----------------|------------------------|--------------------------|--------------------------|-------------------------|------------------|
| | | Օգտ. տողերի քիվը | Պարզ միջ. սակգ (%) | Սակագ. տիրույթ (%) | Ստանդ. շեղում (%) | Վարիաց գործակ |
| Մետաղներ | 1,952 | 1,952 | 3.7 | 0-23.4 | 4.7 | 1.2 |
| Քիմիական և լուսանկարչական նյութեր | 3,365 | 3,365 | 4.5 | 0-17.3 | 2.6 | 0.6 |
| Կաշի, ռետին, կոշիկ և ճամփորդական ապրանքներ | 514 | 514 | 4.5 | 0-17 | 4.5 | 1.0 |
| Փայտ, ցելյուլոզ, թուղթ և կահույք | 858 | 858 | 0.7 | 0-10 | 1.8 | 2.5 |
| Սանածագործվածք և հագուստ | 3,072 | 3,072 | 8.0 | 0-12 | 3.0 | 0.4 |
| Տրանսպորտային սարքավորումներ | 442 | 442 | 5.1 | 0-22 | 4.8 | 0.9 |
| Ոչ էլեկտրական մեքենաներ | 1,633 | 1,633 | 1.7 | 0-9.7 | 1.4 | 0.8 |
| Էլեկտրական մեքենաներ | 936 | 936 | 2.8 | 0-14 | 3.0 | 1.1 |
| Ոչ գյուղատնտեսական այլ ապրանքներ | 1,211 | 1,211 | 2.3 | 0-18.3 | 2.0 | 0.9 |
| Ըստ ՄԱԸ-ի ոլորտի, առանց էլեկտրատեխնոլոգիայի, գազի և ջրի | | | | | | |
| Գյուղատնտեսություն, որսորդություն, անտառային արտադրություն և ձկնորսություն | 928 | 928 | 28.3 | 0-150 | 32.7 | 1.2 |
| Հանքարդյունաբերություն | 255 | 255 | 0.3 | 0-20 | 1.7 | 5.7 |
| Արդյունաբերություն | 17,069 | 17,051 | 10.9 | 0-225 | 25.9 | 2.4 |
| Ըստ մշակման փուլի | | | | | | |
| Հումք | 1,856 | 1,856 | 19.0 | 0-150 | 27.5 | 1.4 |
| Կիսամշակված ապրանքներ | 6,527 | 6,527 | 6.4 | 0-135 | 11.1 | 1.7 |
| Ամբողջությամբ մշակված ապրանքներ | 9,870 | 9,852 | 13.7 | 0-225 | 32.2 | 2.4 |

Աղբյուրը՝ ԱՀԿ Քարտուղարություն

բ. Պարտավորությամբ ամրագրված Առավել բարենպաստ ազգի սակագներ

Թուրքիան առավելագույն մակարդակի պարտավորություն է ստանձնել իր սակագնային տողերի 50,4%-ի համար: Դրանք ներառում են ԱՀԿ սահմանմամբ բոլոր գյուղատնտեսական տողերը և ոչ գյուղատնտեսական տողերի մոտ 40%-ը: Վեջնական պարտավորությունները փոփոխվում են զրոյից մինչև 225%՝ գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ, և զրոյից մինչև 102%՝ ոչ գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ: Որոշակի ապրանքների համար կիրառվող ԱԲԱ-ի դրույթաչափերը բավական ցածր են ամրագրված դրույթաչափերից, ինչը Թուրքիային ներմուծման սակագները բարձրացնելու հնարավորություն է տալիս: Պարտավորությամբ ամրագրած պարզ միջին դրույթաչափը 28,3% է, իսկ պարզ միջին գործող ԱԲԱ-ի դրույթաչափը 2007 թվականին եղել է 10,0%: Ոչ արժեքային սակագնային դրույթաչափերի կիրառումը չի ապահովում արժեքային դրույթաչափերով կատարած ԱՀԿ-ի ամրագրման՝ Թուրքիայի պարտավորությունների կատարումը: ԵՀ-ի հետ Սաքսային միության որոշման շրջանակներում, իր պարտավորությունների համաձայն, Թուրքիան մեծ մասամբ համապատասխանեցրել է ամրագրած իր սակագնային պարտավորությունները (հիմնականում ոչ գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ) ԵՀ-ի հետ: Այնուամենայնիվ Թուրքիայի սակագնային պարտավորությունների ներկա մակարդակից երևում է, որ սակագնային համակարգի թափանցիկությունն ու կանխատեսելիությունը կբարելավվի, եթե ամրագրման պարտավորություններով ծածկված ապրանքների շրջանակը լայնացվի և ամրագրված դրույթաչափերը նվազեցվեն:

Թուրքիայի գործող ու ամրագրված դրույքաչափերի կառուցվածքից երևում է, որ գյուղատնտեսական ապրանքների սակագները ամբողջությամբ ամրագրվել են շատ բարձր մակարդակի վրա, իսկ ոչ գյուղատնտեսական ապրանքների ապագա անհրաժեշտ պաշտպանությունը «ապահովագրվել է» դրանց մեծ մասի սակագների չամրագրմամբ: Մյուս կողմից՝ այնտեղ, որտեղ կա ամրագրում, դա միջինով այնքան բարձր է, որ եթե գործող սակագների միջինը ըստ անհրաժեշտության հասցվի այդ մակարդակին, ապա ամրագրված ներքին ճյուղերը միջինով կստանան մոտ երեք անգամ ավելի բարձր պաշտպանություն:

գ. Տուրքերի և հարկերի զիջումներ

Ներմուծումների նկատմամբ տուրքերի և հարկերի զիջումները շնորհվում են Ներդրումների աջակցության ծրագրի շրջանակներում¹⁴: Ի լրումն՝ Դեպի ներս ուղղված մշակման ծրագրից օգտվում են արտահանողները: Հաշմանդամ անձանց կամ որոշակի պետական կառավարման մարմինների, ֆինանսական լիզինգի, դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող նախագծերի համար որոշակի ապրանքների ներմուծումները և որոշ ժամանակավոր ներմուծումներ նույնպես կարող են հավակնել սակագնային զիջումների: ՆԱՏՕ-ի շրջանակներում Ազգային պաշտպանության նախարարության բոլոր ներմուծումները ազատված են մաքսատուրքերի վճարումից:

Ներդրումների աջակցության ծրագիրը նպատակ ունի նվազեցնել շրջանների միջև անհավասարությունները և խթանել ՓՄՁ-ներին: Սկզբունքորեն բոլոր ներդրումային նախագծերն էլ կարող են հավակնել: Նախագծերի դիմումները գնահատվում են Գանձապետարանի ենթաքարտուղարության կողմից: Հավաստագրի շնորհման դեպքում նախագծերը կարող են օգտվել գործարաններում օգտագործման ենթակա բոլոր մեքենաների ու սարքավորումների նկատմամբ գործող մաքսատուրքերի ազատումից: Մեքենաների ու սարքավորումների հաստատված ցանկի շրջանակներում մեքենաների ու սարքավորումների ներմուծումներն ու ներքին գնումները նաև ազատված են ԱԱՀ-ից: Եթե տվյալ ազատումը նշված է հավաստագրի վրա, ներդրողը կարող է հաստատված ցանկում նշված մեքենաներն ու սարքավորումները ներմուծել միայն խնդրո առարկա ներդրման նպատակով: Ավելին՝ արտարժույթային եկամուտ վաստակող գործունեությունները ազատված են դրոշմանիշային տուրքերից ու վճարներից: Ֆինանսների նախարարությունը պատասխանատու է այդ ազատումը իրագործելու համար: Այս ազատումից օգտվելու համար հարկատուները պետք է Արտաքին առևտրի ենթաքարտուղարությունից ստանան հարկից, վճարից և տուրքից ազատման հավաստագիր և այն փոխանցեն գործարքը իրականացնող հաստատությանը: Գործարքը պետք է կատարվի հավաստագրի գործողության ժամկետի ընթացքում¹⁵: Ներդրումների աջակցության ծրագրերի շրջանակներում չկան օտարերկրյա ու տեղական ներդրողների միջև տարբերություններ:

Դեպի ներս ուղղված մշակման ծրագիրը թուրք արտադրողներին ու արտահանողներին հնարավորություն է տալիս ներմուծել տուրքերից (ներառյալ հավելավճարը) ու առևտրային քաղաքականության այլ միջոցներից ազատված նյութեր¹⁶: Այս ծրագրով ներմուծված ապրանքները նախատեսված են Թուրքիայի մաքսային տարածքից վերաարտահանման համար՝ «փոխհատուցող ապրանքների» (մշակման գործողություններից ստացված բոլոր ապրանքները) տեսքով: Համակարգը գործում է մինչև ապրանքների արտահանումը տուրքերի ու ԱԱՀ-ի հետաձգման (առավել հաճախ օգտագործվող տարբերակ) կամ արտահանումից հետո վերադարձման միջոցով (հիմնականում դեպի ներս ուղղված մշակման համար): Առաջինը օգտագործվում է, երբ փոխհատուցող ապրանքների տեսքով վերաարտահանման համար կա հիմնավորված մտադրություն:

¹⁴ Որոշում թիվ 2006/10921, փոփոխված թիվ 2007/12142 որոշմամբ:

¹⁵ Թիվ 5035 օրենքի հոդվածներ 28 և 33, Արտարժույթային եկամուտ վաստակող գործունեությունների նկատմամբ դրոշմանիշներից ու վճարներից ազատման հաղորդագրություն:

¹⁶ Որոշում թիվ 2005/8391, հրապարակված պաշտոնաթերթում:

Թուրքիայի ներմուծումների նկատմամբ տուրքերի և հարկերի զիջումները կարող են արդյունքում հանգեցնել որոշակի ճյուղերի արտադրական և/կամ արտահանման որոշակի նպատակների իրականացմանը և, հետևաբար, կարող են դիտարկվել որպես հատուկ լրավճարներ, որոնք բազմակողմ առևտրի շրջանակներում աջակցության արգելված միջոց են համարվում: Մասնավորապես Ներդրումների աջակցության ծրագիրը կարող է ներդրումներ խթանել այնպիսի ոչ բարենպաստ շրջաններում, որոնք նեղ մասնագիտացված են որոշակի ոլորտներում: Իսկ դեպի ներս ուղղված մշակման ծրագիրը կարող է հանգեցնել արտահանման արգելված լրավճարների:

դ. Սակագնային արտոնություններ

ԵՅ-ի հետ մաքսային միության պարտավորությունների շրջանակներում Թուրքիան պետք է երրորդ երկրներին տրամադրվող իր բոլոր արտոնությունները, ներառյալ Արտոնությունների ընդհանրացված համակարգը (ԱԸՀ), համապատասխանեցնի ԵՅ-ի հետ (աղյուսակ 12):

Աղյուսակ 12, ԱԲԱ-ի և արտոնյալ սակագների միջինները, 2007 թ.

| | Բոլոր ապրանքները | ՆՀ | | ԱՀԿ սահմանում | | ՄՍԱԴ | | |
|--|------------------|-------|-------|---------------|-----------|--------|-------|----------------|
| | | 01-24 | 25-97 | Գյուղ. | Ոչ գյուղ. | Գյուղ. | Հանք. | Արդյունաբերութ |
| ԱԲԱ | 11.6 | 48.8 | 4.2 | 47.6 | 5.0 | 28.3 | 0.3 | 10.9 |
| ԱԸՀ | 9.8 | 48.6 | 2.0 | 47.3 | 2.8 | 28.3 | 0.2 | 8.9 |
| Նվազագույն զարգացած երկրներ | 8.3 | 48.0 | 0.3 | 46.8 | 1.2 | 28.3 | 0.0 | 7.4 |
| ԵՅ | 7.9 | 49.3 | 0.0 | 48.6 | 0.8 | 28.1 | 0.0 | 6.9 |
| Ազատ առևտրի եւրոպական ասոցիացիա Բոսնիա և Հերցեգովինա | 7.2 | 44.9 | 0.0 | 48.6 | 0.0 | 24.7 | 0.0 | 6.3 |
| Խորվաթիա | 8.1 | 48.0 | 0.0 | 46.8 | 0.9 | 28.3 | 0.0 | 7.1 |
| Եգիպտոս | 8.1 | 48.0 | 0.0 | 46.8 | 0.9 | 28.3 | 0.0 | 7.1 |
| Իսրայել | 8.1 | 48.0 | 0.0 | 46.8 | 0.9 | 28.3 | 0.0 | 7.1 |
| Մակեդոնիա | 7.9 | 46.9 | 0.0 | 45.6 | 0.9 | 28.3 | 0.0 | 6.9 |
| Մարոկկո | 8.1 | 48.0 | 0.0 | 46.8 | 0.9 | 28.3 | 0.0 | 7.1 |
| Պաղեստին | 8.1 | 48.0 | 0.0 | 46.8 | 0.9 | 28.3 | 0.0 | 7.1 |
| Սիրիա | 8.1 | 48.0 | 0.0 | 46.8 | 0.9 | 28.3 | 0.0 | 7.1 |
| Թունիս | 8.1 | 48.0 | 0.0 | 46.8 | 0.9 | 28.3 | 0.0 | 7.1 |

Աղբյուրը՝ ԱՀԿ Քարտուղարություն

Ըստ Թուրքիայի արտոնյալ համաձայնագրերի մեծ մասի, որոնք համապատասխանում են ԵՅ-ի հետ մաքսային միության որոշմանը, վերացվել են ՆՀ-ի 25-97 գլուխների շրջանակներում բոլոր ապրանքների նկատմամբ սակագները: Թուրքիայի առևտրային համաձայնագրերով գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ շնորհվող սակագնային արտոնություններն ընդհանուր առմամբ ենթակա են քվոտաների: Թուրքիան նաև կիրառել է արտոնյալ սակագնային քվոտաներ՝ որոշ ոչ գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ (acrylonitryl և որոշ հեռուստացույցներ):

Թուրքիայի հետ հետագա առևտրային գործընկերությունը պետք է նաև դիտարկվի ԵՅ-ի հետ նրա պարտավորությունների և ԵՅ-ի հետ Թուրքիայի ապագա գործընկերոջ ձեռք բերած համաձայնությունների համատեքստում: Եթե ապագա գործընկերը վայելում է ԵՅ-ի Արտոնությունների ընդհանրացված համակարգի շրջանակներում ԵՅ-ի համապատասխան շուկաների արտոնյալ մատչելիություն, ապա սկզբունքորեն դա պետք է տարածվի նաև Թուրքիայի շուկաների վրա: Թուրքիայի հետ նոր ստեղծվող առևտրատնտեսական հարաբերությունների հանգամանքներում դա կարող է ձեռք բերվել միանգամից, այլապես կարող է քննարկվել դրան որոշակի ժամանակահատվածում անցնելու տարբերակը:

Ե. Այլ տուրքեր և հարկեր

Բացի մաքսային սակագներից՝ որոշակի ապրանքներ նաև ենթակա են Մասսայական բնակարանային հիմնադրամի վճարների, ակցիզային տուրքերի, որ նաև հայտնի են որպես հատուկ սպառողական հարկեր, ԱԱՀ-ի և դրոշմանիշային տուրքի:

Մաքսային հարկերի և վճարների առումով Մասսայական բնակարանային հիմնադրամի վճարները կիրառվում են ձկան ու ձկնաբուծական ապրանքների ներմուծումների նկատմամբ (ԵՅ-ի 12 նիշային մակարդակով 283 սակագնային տող՝ բոլոր տողերի 1,6%): Այս վճարները նպատակ ունեն ֆինանսավորել կառավարության՝ աղքատ և միջին եկամտի ընտանիքների համար ցածր ծախսերով բնակարանաշինական ծրագրերը¹⁷: Վճարների չափը պահանջվող սակագնային պաշտպանության և օրենսդրական սակագնային դրույքաչափի միջև տարբերությունն է:

Ի լրումն՝ ամրագրման պարտավորությունների ենթակա բոլոր ապրանքների համար (բացառությամբ զրոյական տուրքերով ապրանքների) Թուրքիան հետևյալ կերպ է ամրագրել այլ տուրքերն ու վճարները՝ մաքսատուրքի 15% (քաղաքապետարանի բաժինը) և արժեք-ապահովագրություն-ճանապարհածախս արժեքի, մաքսատուրքի ու այլ վճարների (տրանսպորտային ենթակառուցվածքի վճարը) գումարի 3% (ավտոճանապարհային, երկաթուղային կամ օդային տրանսպորտի դեպքում) կամ 4% (ծովային տրանսպորտի դեպքում): Թուրքիան ներկայումս չի կիրառում այս «այլ տուրքերն ու վճարները»:

Ներքին հարկերի առումով ակցիզային հարկը մեկ փուլային հարկ է և գանձվում է ներքին արտադրության ու ներմուծվող ապրանքներից հավասարապես: Այն կիրառվում է (1) նավթամթեքների (հատուկ տուրքեր), (2) ավտոմեքենաների (արժեքային տուրքեր), (3) ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի ապրանքների (արժեքային և/կամ հատուկ տուրքեր) և (4) պերճանքի առարկաների նկատմամբ (արժեքային տուրքեր): Մեծ մասամբ ակցիզային հարկը գանձվում է գործարանից ելքի կամ առաջին առաքման կետում, բայց որոշ ապրանքների, օրինակ՝ ավտոմեքենաների դեպքում այն գանձվում է վաճառողի մակարդակով, իսկ այլ ապրանքների, օրինակ՝ ծխախոտի դեպքում այն գանձվում է մանրածախ վաճառքի գնից, բայց՝ արտադրողից: Վերջերս Թուրքիան որոշ փոփոխություններ է կատարել ակցիզային հարկի օրենսդրության մեջ՝ ներառյալ ծխախոտային ապրանքների հատուկ ակցիզային հարկի արժեքային դրույքաչափերով փոխարինումը: Սակայն վերջինս չի համապատասխանում ԵՅ-ի օրենքներին¹⁸:

Ի լրումն 1% կամ 8% ԱԱՀ է գանձվում գյուղատնտեսական և հիմնական ապրանքներից, և 18%՝ որոշ ոչ գյուղատնտեսական ապրանքներից ու պերճանքի առարկաներից (ներառյալ կոսմետիկա, մորթիներ, հեռուստացույցներ և ավտոմեքենաներ): ԱԱՀ-ն կիրառվում է ներմուծումների տուրքերը ներառող մաքսային արժեքի և ներքին արտադրանքի ապրանքների առաքման արժեքի նկատմամբ:

28 նոր լիրա դրոշմանիշային տուրք է գանձվում իրական և իրավաբանական անձանց մաքսային հայտարարագրերից:

¹⁷ Մշակված ապրանքների գյուղատնտեսական բաղադրիչներից հավաքած մաքսատուրքերը նույնպես փոխանցվում են այս ծրագրին:

¹⁸ European Commission (2006), *Turkey 2006 Progress Report*, Brussels

Թեև Թուրքիան ամբողջությամբ չի կիրառում իր օրենսդրությամբ սահմանված մաքսային այլ հարկերն ու վճարները, դրանք բավական բարդ են: Դրանց ամբողջական կիրառման դեպքում հնարավոր է, որ գումարային մաքսային տուրքերն ու վճարները (գործող սակագնով մաքսատուրքը և մաքսային այլ հարկերն ու վճարները միասին) որոշ ապրանքների համար ավելի բարձր լինեն, քան անրագրված համապատասխան սակագնային դրույթաչափը: Գումարային մաքսային տուրքերն ու վճարները չպետք է գերազանցեն անրագրված սակագնային դրույթաչափը, ինչը խախտում է համարվում բազմակողմ առևտրի կանոններով:

1.1.3. Մաքսային ընթացակարգեր

Թուրքիայում հիմնական մաքսային օրենսդրական շրջանակը բաղկացած է թիվ 4458 մաքսային օրենքից և դրա կանոնակարգերից: Վերջին տարիներին մաքսային վարչարարության և առնչվող այլ մարմինների միջև համակարգումը բարելավվել է տարբեր արձանագրությունների միջոցով: Նաև բարձրացել է մաքսանենգության ու մաքսային առնչություն ունեցող այլ խնդիրների դեմ պայքարի արդյունավետությունը: Այնուամենայնիվ Թուրքիայի մաքսային ծառայության հիմնական խնդիրները վերաբերում են դրա վարչական ու գործառնական կարողություններին: Մաքսային ու առնչվող այլ մարմինների միջև, ինչպիսիք են Մշակույթի նախարարությունը, Պատենտների թուրքական ինստիտուտը, թուրքական ոստիկանությունը և նտավոր սեփականության իրավունքների դատարանները, համակարգումը նույնպես հետագա բարելավման կարիք է զգում¹⁹: Թուրքիան քայլեր է ձեռնարկում իր մաքսային օրենսդրությունը ԵՅ-ի օրենքների հետ համապատասխանեցնելու համար: Այս նպատակով մաքսային նոր օրենքի նախագիծ է պատրաստվել և ներկայացվել խորհրդարան՝ ընդունման համար:

Թուրքիայի մաքսային ընթացակարգերը արդիականացվել են 2001 թ.՝ GUMSIS համակարգի (մաքսային անվտանգության համակարգ, ռիսկերի վերլուծության գործընթաց և հակամաքսանենգության գործունեության փորձագիտություն) գործարկմամբ, և 2002 թ.՝ BILGE համակարգի (մաքսային բոլոր ընթացիկ ընթացակարգային պահանջների կատարման համար մշակված համակարգ) ներդրմամբ: 2007 թվականի դրությամբ 119 մաքսային գրասենյակներ են ավտոմատացվել, և բոլոր մաքսային գործարքների 99,9%-ը կատարվում են էլեկտրոնային համակարգով: Թուրքական մաքսային հայտարարագրման ձևաչափը համապատասխանեցվել է ԵՅ-ում մաքսային ընթացակարգերի համար օգտագործվող «մեկ վարչական փաստաթղթի» (SAD) հետ: Առևտրականները կարող են հայտարարագրեր ներկայացնել մաքսային գրասենյակներում տեղակայված կետերի կամ ինտերնետի միջոցով կամ իրենց գրասենյակներից՝ էլեկտրոնային տվյալների փոխանակման հաղորդագրությունների միջոցով: EUR.1 կամ EUR.MED տեղաշարժի հավաստագիր է պահանջվում ոչ ԵՅ-ի այն երկրներից ներմուծումների համար, որոնց հետ Թուրքիան ունի ազատ առևտրի համաձայնագրեր, և ԵՅ-ի երկրներից՝ գյուղատնտեսական, քարածխի ու պողպատե ապրանքների ներմուծումների համար²⁰: SAD-ի համար վճարը 2,20 նոր լիրա է: Մաքսային մարմինը կարող է պահանջների և ընթացակարգերի պարզեցման թույլտվություն շնորհել, ներառյալ՝ անտեսել որոշ փաստաթղթերի նկատմամբ պահանջը²¹: Մաքսային կետն անցկացնող գործակալի օգտագործումը պարտադիր չէ:

Մաքսային գրասենյակին ամփոփ հայտարարագիր պետք է ներկայացվի ապրանքների՝ մաքսային կետ հասնելուց հետո՝ մինչև աշխատանքային օրվա ավարտը: Այս հայտարարագիրը ներմուծվող և արտահանվող ապրանքների համար պարունակում է ապրանքների ինքնության հաստատման համար պահանջվող ամբողջ տեղեկատվությունը: Այն ունի հաստատված ձև և զետեղված է Մաքսային կանոնակարգերի հավելված 9-ում:

¹⁹ European Commission (2006), *Turkey 2006 Progress Report*, Brussels.

²⁰ ԵՅ-Թուրքիա ասոցիացիայի խորհրդի 1/98 որոշում և Թուրքիայի ու Աժխի ու պողպատի երրոպական համայնքների միջև համաձայնագիր:

²¹ Թիվ 4458 մաքսային օրենքի հոդված 71 և մաքսային կանոնակարգերի ու մաքսային ընդհանուր ծանուցման հոդվածներ 20-61 (մաքսային ընթացակարգեր, թիվ 15):

Պարտադիր է ամփոփ հայտարարագրին կցել ապրանքներն ուղեկցող բնօրինակ փաստաթղթերը: Մաքսային ենթաքարտուղարությունը կարող է թույլ տալ միջազգայնորեն ընդունված առևտրային կամ պաշտոնական այլ փաստաթղթի օգտագործումը, որոնք պարունակում է ապրանքների ինքնության հաստատման համար անհրաժեշտ մանրամասներ: Ամփոփ հայտարարագրերի համար օգտագործվող ամենատարածված մեթոդը BILGE-ն է: Սա պահանջում է օգտագործողի կողմից և ծածկագիրը, որոնք տրվում են մաքսային գրասենյակի կողմից:

Որոշ ապրանքներ շարունակում են ներմուծվել միայն մասնագիտացված մաքսային գրասենյակների միջոցով: Այս մասնագիտացված գրասենյակների նպատակն է ներմուծումների որակի չափանիշների պահպանությունը և հարկային մաքսանենգության կանխումը: Մասնագիտացված մաքսային տնօրինություններ են գործում՝ (1) ավտոմեքենաներ, տրակտորներ, մոտոցիկլետներ և դրանց մասեր, (2) մանածագործվածքային ապրանքներ և (3) որոշ լուծիչներ ու նավթաքիմիական ապրանքներ ազատ շրջանառության մեջ ներառելու համար: Այս ապրանքների՝ մաքսային այլ տնօրինություններով ներմուծման բացառիկ հանգամանքները սահմանվում են մասնագիտացված մաքսային այդ տնօրինությունները ստեղծող օրենսդրության մեջ:

Թիվ 4458 մաքսային օրենքի 23 և 31 հոդվածները ապահովում են մաքսային նպատակներով ապրանքների արժեքի որոշումը: Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը գործարքային արժեքն է, այն գինը, որը փաստացի վճարվել է կամ պիտի վճարվի այդ ապրանքների համար, երբ դրանք վաճառվել են թուրքիա արտահանելու համար: Ապրանքների մաքսային արժեքի համար տարադրամը թուրքական նոր լիրան է: Հաշիվ ապրանքագրերի և այլ փաստաթղթերի վրա արտարժույթը փոխվում է նոր լիրայի՝ օգտագործելով Կենտրոնական բանկի մաքսային պարտքի առաջացման օրվա փոխարժեքը: Բոլոր մաքսատուրքերը հաշվարկվում են՝ ելնելով ներմուծման արժեք-ապահովագրություն-փոխադրում արժեքից: Եթե գործարքային արժեքը չի կարող որոշվել, մաքսային արժեքը պետք է հաշվարկվի ԱՀԿ-ի Մաքսային գնահատման համաձայնագրով սահմանված հիմնական մեթոդներով: Այդ համաձայնագրի հավելված III-ի 3-րդ պարբերությամբ թուրքիան անորոշ ժամկետով պահպանել է ներմուծողի պահանջով դեդուկտիվ ու հաշվարկային գնահատման մեթոդների կիրառման հերթականությունը չփոխելու իրավունքը: Փչացող ապրանքների մաքսային արժեքը ներմուծողի պահանջով կարող է որոշվել պարզեցված ընթացակարգերով²²:

Ներմուծման մաքսային կետով անցումն ընդհանուր առմամբ տևում է առավելագույնը 24 ժամ (եթե բոլոր պահանջված փաստաթղթերը կարգին են)՝ անկախ տրանսպորտի տեսակից: Մաքսատուրքերը պետք է վճարվեն կամ երաշխավորվեն մաքսակետով անցման ժամանակ: 2007 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում թուրքիայի մաքսային վարչության կողմից ֆիզիկական ստուգում է անցկացվել ամբողջ ներմուծումների 29%-ի և ամբողջ արտահանումների 11%-ի համար: Ընտրության չափանիշները հիմնված են BILGE-ի վրա:

Մաքսային մարմնի որոշումների դեմ բողոքարկումները առաջնորդվում են մաքսային օրենքի XII վերնագրով: Ցանկացած անձ ունի մաքսային որոշումների բողոքարկման իրավունք: Հարկման հիմնախնդիրների վերաբերյալ բողոքարկման ընթացակարգերը տարբերվում են վարչական որոշումներին վերաբերվող ընթացակարգերից: Հարկային բողոքարկումները կարող են ներկայացվել առնչվող մաքսային վարչությանը, և որոշում պետք է կայացվի 30 օրվա ընթացքում: Մաքսային վարչության որոշումների բողոքարկումը 7 օրվա ընթացքում կարող է ներկայացվել շրջանային մաքսային տնօրինությանը, և որոշում պետք է կայացվի 30 օրվա ընթացքում: Շրջանային մաքսային տնօրինության կայացրած որոշումը կարող է բողոքարկվել Մաքսային ենթաքարտուղարությունում, և որոշում պետք է կայացվի 45 օրվա ընթացքում: Շրջանային տնօրինության կամ ենթաքարտուղարության վերջնական որոշումից հետո բողոքարկողը իրավունք ունի հարկային դատարաններում դատական գործ հարուցել: Վարչական դատարաններին ներկայացված գործերի վերաբերյալ վճիռ կայացնելու ժամանակային սահմանը 60 օր է, իսկ հարկային դատարաններինը՝ 30 օր²³: 2004-2006 թվականների ընթացքում միջինը տարեկան 11 486

²² Մաքսային օրենքի իրագործման կանոնակարգի հոդված 45 (մաքսային արժեքի բացառիկ հայտարարագրում):

²³ Թիվ 2577 վարչական դատավարության օրենք:

բողոքարկում է ներկայացվել շրջանային մաքսային տնօրինություններին (80% ապրանքների արժեքի, 15% մաքսատուրքերի դասակարգման և 5% այլ հարցերով):

Թուրքիայի մաքսային ընթացակարգերի արդիականացումն ու ճկունությունը կարող է ժամանակ ու այլ ռեսուրսներ տնտեսել ներմուծողների համար: Սակայն, վարչարարության ու մարմինների միջև համակարգման խնդիրները դեռևս որոշակի սահմանափակում են ստեղծում ներմուծումների համար: Սա մասնավորապես դրսևորվում է մաքսային հարցերով պատասխանատու մարմիններին ներկայացված բողոքարկումների բարձր մակարդակով: Մեկ այլ խնդիր կարող է լինել միայն առանձին մասնագիտացված մաքսային գրասենյակների միջոցով որոշ ապրանքների ներմուծումը: Հնարավոր է, որ սա ավելացնի ներմուծողի ծախսերն ու լրացուցիչ ժամանակ վատնի:

1.1.4. Ծագման կանոններ

Թուրքիան կիրառում է ծագման ոչ արտոնյալ և արտոնյալ կանոններ: ԵՀ-ի հետ Մաքսային միության որոշմամբ որպես իր պարտավորությունների մի մաս՝ Թուրքիան երրորդ երկրներից ներմուծումների նկատմամբ կիրառում է նույն ծագման կանոնները, ինչ ԵՀ-ն: Ոչ արտոնյալ ծագման կանոնները (մաքսային օրենքի հոդված 17 և 21) ծագումը վերագրում են այն երկրին, որտեղ տվյալ ապրանքը ամբողջությամբ արտադրվել է կամ անցել է իր վերջին զգալի փոխակերպումն ու արտադրության կարևոր փուլը²⁴:

Առևտրային տարբեր համաձայնագրերով ծագման արտոնյալ կանոնները հիմնված են մշակման աստիճանի կամ ավելացված արժեքի չափանիշների վրա՝ կուտակման հնարավորությամբ (աղյուսակ 13)²⁵: Երկկողմ կուտակումը կիրառվում է արտոնությունների ընդհանրացված համակարգի (տրամադրող երկրի բաղադրություն) և երկկողմ առևտրային համաձայնագրերով: Թուրքիան Համաեւրոպական ծագման կուտակման համակարգի մասնակից է, որը թույլ է տալիս ապրանք արտադրելու համար այդ գոտում (ԵՀ, Ազատ առևտրի եւրոպական ասոցիացիա և Թուրքիա) յուրաքանչյուր երկրից նյութերի օգտագործում՝ պահպանելով արտոնյալ ծագումը: Համաեւրոմիջերկրածովյան կուտակման համակարգը մեկ այլ օրինակ է: Սա, բացի ԵՀ-ից, Ազատ առևտրի եւրոպական ասոցիացիայից և Թուրքիայից ներառում է Ալժիրը, Եգիպտոսը, Իսրայելը, Հորդանանը, Լիբանանը, Մարոկկոն, Պաղեստինը, Սիրիան և Թունիսը: Գործընկեր երկրների միջև կուտակումը կարող է կիրառվել, եթե ծագման կարգավիճակի ստացման մեջ ներգրավված երկրների ու ներմուծող երկրի միջև կիրառելի է նմանատիպ ծագման կանոնների վրա հիմնված ազատ առևտրի համաձայնագիր:

ԵՀ-ի արտոնությունների ընդհանրացված համակարգով տրամադրվող արտոնությունների, ԵՀ-ի հետ հնարավոր ազատ առևտրի համաձայնագրի, ԵՀ-ի կողմից երրորդ երկրներին տրամադրված արտոնությունների՝ Թուրքիայի կողմից նույն երկրներին հետագա տրամադրման և Թուրքիայի՝ ԵՄ-ին ապագա անդամակցության համատեքստում շատ կարևոր է ԵՀ-ի հետ ծագման բարենպաստ կանոնների նպատակային քննարկման հարցը: Սա ներառում է արտոնությունների շրջանակներում հնարավոր առավելագույն թվով ապրանքախմբեր ընդգրկելու և, ընդհանրապես, արտոնություններից առավելագույնս օգտվելու հիմնախնդիրները:

²⁴ Մաքսային օրենքի հոդված 19:

²⁵ Մաքսային օրենքի հոդված 22 և Մաքսային կանոնակարգերի հոդված 34:

| Չամաձայնագիր | Ծագման կանոններ |
|---|--|
| Եւրոպական համայնքների հետ մաքսային միություն | Ամբողջությամբ ստացված կամ բավարար կերպով փոխակերպված ապրանքներ |
| Եւրոպական ազատ առևտրային ասոցիացիայի հետ ազատ առևտրի համաձայնագիր | Ամբողջությամբ ստացված կամ բավարար կերպով փոխակերպված ապրանքներ |
| Տնտեսական համագործակցության կազմակերպություն (Իրան, Թուրքիա, Պակիստան) | Նվազագույնը՝ գործարանային արժեքի 50% |
| Եգիպտոս, Իսրայել, Մորոկկո, Սիրիա, Թունիս | Ամբողջությամբ ստացված կամ բավարար կերպով փոխակերպված ապրանքներ |
| Ալբանիա, Բոսնիա-Յերցովինա, Խորվաթիա, Մակեդոնիա, Պաղեստինյան իշխանություններ | Ամբողջությամբ ստացված կամ բավարար կերպով փոխակերպված ապրանքներ |

Աղբյուրը՝ ԱՅԿ Քարտուղարություն, թուրքական իշխանությունների կողմից տրված տեղեկատվություն

1.1.5. Ներմուծման արգելումներ, քվոտաներ և լիցենզավորում

Կան ապրանքների 10 մեծ խմբեր, որոնց ներմուծումը արգելվում է օրենքով՝ շրջակա միջավայրի, հասարակական անվտանգության, առողջության, հասարակական բարոյականության կամ միջազգային պարտավորությունների կատարման պատճառներով: Դրանք ներառում են՝ (1) թմրադեղեր, հաշիշ և պատրաստված օպիում, (2) օզոնի շերտը քայքայող նյութեր, (3) ներկանյութ, (4) քիմիական զենքեր, (5) թուրքական իրավական կանոններին չհամապատասխանող չափման գործիքներ, (6) զենք ու զինամթերք, պատրաստի պայթուցիկներ, դետոնատորներ և այլն, (7) մոլախաղի գործիքներ (բացառությամբ զբոսաշրջային նպատակների համար բնորոշվածները), (8) որևէ ապրանքային նշանը ապօրինի օգտագործող ապրանքներ (բոլոր արդյունաբերական ապրանքները), (9) գյուղատնտեսական նպատակով օգտագործվող հող, տերև, ցողուն, ծղոտ, բնական պարարտանյութ և (10) մետաքսի որդի բոժոժ:

Սկսած 1996 թվականից՝ Գյուղատնտեսության ու գյուղական հարցերի նախարարությունը վերահսկման հավաստագրեր չեն տվել հիվանդությունների առումով ռիսկային համարվող երկրներից ներմուծումների համար: Որոշումը կայացվել է սանիտարական հիմքերի վրա (տեղական անասնապահությունը վարակիչ հիվանդություններից, ինչպիսիք են Bovine Spongiform Encephalopathy-ն և ուտքի ու բերանի հիվանդությունը, պաշտպանելու համար)՝ ելնելով Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության՝ կենդանիների (խոշոր եղջերավոր անասուններ, ոչխարներ, այծեր և թռչուններ) և մսի (տավարի, ոչխարի, այծի և թռչնի) ռիսկերի դասակարգումից: փոխադրողների ծառայություններից

2007 թ. արտոնյալ սակագնային քվոտաներ են կիրառվել acrylonitril-ի և որոշ հեռուստացույցների նկատմամբ: Քվոտաների բաշխումը կատարվում է նախկին կատարողականի կամ արտադրական կարողության հիման վրա: Օգտագործվել էին հեռուստացույցների նկատմամբ սակագնային քվոտաների մոտ 90%-ը, իսկ acrylonitril-ի՝ 100%-ը: Թուրքիան ներմուծման քվոտաներ է կիրառել որոշ մանածագործվածքային ապրանքների ու հագուստեղենի նկատմամբ՝ որպես իր ներմուծման քաղաքականության՝ ԵԶ-ի հետ համապատասխանեցման պահանջ: Եթե արտահանող երկիրը գալիս է երկկողմ համաձայնության, քվոտան հավասարակշռվում է կարիքներին համապատասխան: Թուրքիան որոշ գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ կիրառում է արտոնյալ քվոտաներ:

Ներմուծման լիցենզիաներ են պահանջվում ապրանքների բազմաթիվ խմբերի համար՝ ներառյալ որոշ ավտոմեքենաներ, հեռարձակման սարքավորումներ, քիմիական ապրանքներ, պարարտանյութեր, վայրի բուսական ու կենդանական աշխարհի վտանգված տեսակներ, լուծույթներ ու նավթամթերքներ և շաքարի որոշ փոխարինողներ (աղյուսակ 14): Այս ապրանքատեսակները ներմուծողները պետք է ստանան համապատասխան

մարմինների թույլտվությունը: Բացի անվտանգության, ապահովության ու շրջակա միջավայրի հետ կապված պատճառներից՝ սահմանափակումները նպատակ ունեն պաշտպանել սպառողներին, ապահովել, որ ներմուծված տրանսպորտային միջոցները հարմար լինեն տեղական ավտոճանապարհների համար, և կանխել քաղաքացիական ավիացիայում օգտագործման համար նախատեսված որոշ ներմուծված ապրանքատեսակների՝ այլ նպատակների համար օգտագործումը: Մտահոգություններ են արտահայտվել Թուրքիայի ներմուծման լիցենզավորման համակարգում թափանցիկության պակասի վերաբերյալ՝ որոշ գյուղատնտեսական ապրանքների ու զտված սպիրտների համար²⁶:

Թուրքիայի սակագնային քվոտաների, հատկապես արտոնյալ սակագնային քվոտաների կիրառումը խիստ հակասության մեջ է բազմակողմ առևտրային համակարգում ոչ սակագնային սահմանափակումներ չկիրառելու պահանջի հետ: Ավելին՝ գործող կարգը դրանց անարդարացի բաշխման հնարավորություն է թողնում:

Ներմուծման լիցենզավորումը թեև հիմնավորված նպատակներ է հետապնդում, սակայն համակարգում թափանցիկության վերաբերյալ մտահոգությունները մատնանշում են դրա առևտրի վրա հնարավոր սահմանափակող ազդեցության մասին:

Աղյուսակ 14, Լիցենզիա պահանջող ներմուծումները, 2007 թվական

| Նկարագրություն | Լիցենզիայի պատճառը |
|---|--|
| <p>Ռադիոակտիվությանը առնչվող ապրանքատեսակներ (11 ապրանքատեսակ) ուրանի հանքաքար, իզոտոպներ, միջուկային ռեակտորներ, ռենտգեն:</p> <p>Յեռահաղորդակցություն, մեքենաշինություն և առնչվող ապրանքատեսակներ (74 ապրանքատեսակ) Գծային հեռագրության համար էլեկտրական սարքեր, հեռախոսային պատասխանող մեքենաներ, ռադար, հեռարձակման, ընդունման սարքեր, օդորակիչ մեքենաներ, բնակարանային տեսակի էլեկտրական սառնարաններ, հագուստի չորանոցներ, արագ զազային ջրատաքացուցիչներ, բնակարանային տեսակի կարող մեքենաներ, ծակելու և այլնի համար մեքենա-գործիքներ, փոշեկուլներ, որոշ պատճենահանող մեքենաներ, որոշ ավտոմեքենաներ:</p> <p>Ավտոմեքենաներ (7 ապրանքատեսակ) Գնաապարհային տրակտորներ կիսաքարշակների համար, կայանման վագոններ, վազքարշավային ավտոմեքենաներ, քարշակներ, հատուկ նպատակի ավտոմեքենաներ, որոնք նախատեսված չեն մարդկանց կամ ապրանքների փոխադրման համար:</p> <p>Պարարտանյութեր (5 ապրանքատեսակ) Կենդանական կամ բուսական պարարտանյութեր և հանքային կամ քիմիական պարարտանյութեր:</p> | <p>Ներմուծումները թույլատրված են միայն Ատոմային էներգիայի թուրքական գերատեսչության կոմից՝ ռադիոակտիվության հավանական վնասակար ազդեցությունից անվտանգության ապահովման համար:</p> <p>Ներմուծումները թույլատրված են միայն Արդյունաբերության և առևտրի նախարարության կողմից տրված հավաստագրով, որպեսզի ապահովվի, որ հետվաճառքային ծառայությունները, ինչպիսիք են պահպանումն ու վերանորոգումը, երաշխավորված լինեն շրջանային մակարդակով և որ լինեն պահպանման ծառայության բավարար քանակով մասնագետներ ու մասերի պահուստ: Ապահովելու, որ ներմուծումները համապատասխանության մեջ լինեն ազգային հեռահաղորդակցության ցանցի հետ, և սպառողներին պաշտպանելու համար:</p> <p>Ներմուծումները թույլատրված են միայն Արդյունաբերության և առևտրի նախարարության կողմից հավաստագրված նախնական հաշիվ-ապրանքագրով: Ապահովելու համար ներմուծված ավտոմեքենաների համապատասխանությունը ավտոճանապարհներին:</p> <p>Ներմուծումները թույլատրված են միայն Գյուղատնտեսության և գյուղական հարցերով նախարարության հաստատմամբ: Մարդկանց, կենդանիների առողջությանը կամ բույսերի կյանքի ցիկլին հասցվող վնասից խուսափելու համար:</p> |

²⁶ USTR (2006), *National Trade Estimate Report on Foreign Trade Barriers, Turkey*, Washington, D.C.

| Նկարագրություն | Լիցենզիայի պատճառը |
|--|---|
| <p>Բանկային թղթեր և առնչվող ապրանքատեսակներ (1 ապրանքատեսակ) բանկային թղթեր և այլ նմանատիպ, արժեթղթեր:</p> <p>Պայթուցիկներ ու առնչվող ապրանքատեսակներ (14 ապրանքատեսակ) Տեխնիկական անոնիումի նիտրատ, պատրաստված պայթուցիկներ, որոշ պայթուցիչներ, հրավառություն, որոշ աստղագիտական գործիքներ:</p> | <p>Ներմուծումները թույլատրված են միայն Կենտրոնական բանկի կամ կապիտալի շուկաների խորհրդի հաստատումով: Ապահովելու համար թանկարժեք փաստաթղթերի (բաժնետոմսեր, պարտատոմսեր) առնչությամբ վարչական կարգի շարունակությունը Ներմուծումները թույլատրված են միայն Ներքին գործերի նախարարության անվտանգության գլխավոր տնօրինության հաստատմամբ: Ազգային անվտանգության ու հասարակական ապահովության ապահովման համար:</p> |
| <p>Քիմիական նյութեր ու առնչվող ապրանքատեսակներ (5 ապրանքատեսակ) Չեքսան, սպիտակ սպիրտ, քսիլեն, տոլուեն, լուծիչ նաֆթա, նավթային յուղեր, բենզին:</p> | <p>Ներմուծումները թույլատրված են միայն Էներգետիկայի շուկայի կարգավորող մարմնի հաստատումով: Տոլուենի ներմուծումները պահանջում են Առողջության նախարարության համաձայնությունը: Սպառողների պաշտպանության համար:</p> |
| <p>Աշխատողների առողջության վրա ազդող ապրանքներ (12 ապրանքատեսակներ) Ասբեստ, բենզին:</p> | <p>Ներմուծումները թույլատրված են միայն Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության Աշխատողների առողջության ու ապահովության ինստիտուտի հաստատմամբ: Աշխատողների առողջության պաշտպանության համար:</p> |
| <p>Քաղաքացիական ավիացիային առնչվող ապրանքատեսակներ (81 ապրանքատեսակներ):</p> | <p>Ներմուծումները թույլատրված են միայն Տրանսպորտի նախարարության Քաղաքացիական ավիացիայի գլխավոր տնօրինության հաստատմամբ: Ներմուծված ապրանքների քաղաքացիական ավիացիայից բացի՝ այլ բնագավառներում օգտագործումը կանխելու համար:</p> |
| <p>Քարտեզներին վերաբերվող ապրանքատեսակներ (2 ապրանքատեսակ) Քարտեզներ և ջրապատկերային կամ բոլոր տեսակի նմանատիպ գծապատկերներ, թվային քարտեզներ և մագնիսական կամ օպտիկական միջոցների վրա գրված քարտեզային տեղեկատվություն:</p> | <p>Ներմուծումները թույլատրված են միայն Պաշտպանության նախարարության քարտեզագրության գլխավոր հրամանատարության և ծովային ուժերի գլխավոր հրամանատարության հստատմամբ: Ազգային անվտանգություն:</p> |
| <p>Քիմիական զենքերի արտադրությանն առնչվող ապրանքատեսակներ (22 ապրանքատեսակներ)</p> | <p>Ներմուծումները թույլատրված են միայն Արտաքին առևտրի ենթաքարտուղարության հաստատմամբ: Քիմիական զենքի արգելման մասին կոնվենցիայի կատարում:</p> |
| <p>Շաքարի որոշ փոխարինողներ (11 ապրանքատեսակներ) Ասպարտամ, սախարին:</p> | <p>Ներմուծումները թույլատրված են շաքարի թուրքական մարմնի կողմից տրված իրավասության հավաստագրով՝ առանց որևէ սահմանափակման: Այս ապրանքների վերահսկողությունը ներմուծման փուլում կատարում է Գյուղատնտեսության և գյուղական հարցերի նախարարությունը: Այս ապրանքները ներմուծման լիցենզիայի ենթակա չեն:</p> |
| <p>Վայրի բուսական ու կենդանական աշխարհի վտանգված տեսակներ</p> | <p>Ներմուծումները թույլատրված են միայն Գյուղատնտեսության և գյուղական հարցերի կամ Շրջակա միջավայրի ու անտառային տնտեսության նախարարության հաստատմամբ: Կոնվենցիայի կատարում:</p> |
| <p>Էներգետիկա Էլեկտրաէներգիա և բնական գազ</p> | <p>Ներմուծումները թույլատրված են միայն Էներգետիկայի շուկայի կարգավորող մարմնի հաստատմամբ: Շուկայում արդյունավետ գործունեության և ԵՅ-ի դիրեկտիվների կատարման ապահովման համար:</p> |

| Սկարագրություն | Լիցենզիայի պատճառը |
|-------------------------------------|---|
| Լուծիչներ և որոշ նավթային ապրանքներ | Ներմուծումները թույլատրված են միայն Էներգետիկայի շուկայի կարգավորող մարմնի հաստատմամբ: Այս ապրանքատեսակների նպատակից դուրս անօրինական օգտագործումը կանխելու և վառելիքների որակը ապահովելու համար: |
| Չեղուկացված նավթային գազեր | Ներմուծումները թույլատրված են միայն Էներգետիկայի շուկայի կարգավորող մարմնի հաստատմամբ: Այս ապրանքատեսակների նպատակից դուրս անօրինական օգտագործումը կանխելու և վառելիքի որակը ապահովելու համար: |

Աղբյուրը՝ ԱՅԿ-ի Քարտուղարություն, թուրքական իշխանությունների կողմից տրված տեղեկատվություն

Հին, օգտագործված, վերանորոգված, սխալ ու բարոյապես հնացած ապրանքների ներմուծումը կատարվում է Արտաքին առևտրի ենթաքարտուղարության թույլտվությամբ: Չափող և կշռող գործիքները, որ թուրքիայում պետք է մտցվեն ազատ շրջանառության մեջ, ենթակա են Չափումների ու ստանդարտների գլխավոր տնօրինության (Արդյունաբերության և առևտրի նախարարություն) վերահսկմանը: Տեսագրական ու երաժշտական աշխատանքներ պարունակող կրիչները տեսչական ստուգման են ենթարկվում և հսկվում են Չեղինակային իրավունքի ու կինոյի տնօրինության կողմից՝ խախտումների դեմ պայքարելու նպատակով:

1.1.6. Չնախատեսված առևտրային կարգավորում

ա. Հակազնազցում և փոխհատուցման միջոցներ

Թուրքիայի հակազնազցման և փոխհատուցման միջոցների օրենսդրական դաշտը ներառում է (1) «Ներմուծումներում անարդարացի մրցակցության կանխման մասին» թիվ 4412/1999 օրենքը, (2) «Ներմուծումներում անարդարացի մրցակցության կանխման մասին» թիվ 13482/1999 որոշումն ու դա փոփոխող թիվ 9840/2005 որոշումը, որը սահմանում է հակազնազցման տուրքերից խուսափումների կանխման նոր կանոններ, և (3) «Ներմուծումներում անարդարացի մրցակցության կանխման մասին» կանոնակարգը՝ իր 2002 և 2006 թվականների փոփոխություններով, որոնք վերաբերում են ոչ շուկայական տնտեսություններից ներմուծումների կանոններին և խուսափումների դեմ հետաքննությունների, միջանկյալ ու վերջնական դիտարկումների, գումարների փոխհատուցման և հետաքննությունների այլ կանոններին ու ընթացակարգերին: ԱՅԿ-ի համապատասխան համաձայնագրերի հետ տեղական օրենսդրության որևէ անհամապատասխանության դեպքում գերակայում են ԱՅԿ-ի համաձայնագրերի դրույթները:

Որևէ արդյունաբերական ոլորտին շոշափելի վնաս հասցնող, այդպիսի վնասի սպառնալիք ներկայացնող կամ Թուրքիայում որևէ արդյունաբերական ճյուղի կայացմանը շոշափելիորեն խանգարող ներմուծումները կարող են ներկայացվել հետաքննության՝ ըստ օրենքի հոդված 3-ի: Ըստ կանոնակարգի հոդված 4-ի՝ գնազցված ապրանքի արտահանման գինը ավելի ցածր է, քան նմանատիպ ապրանքի «նորմալ» արժեքը: Արտահանման գինը արտահանման համար վաճառված ապրանքի դիմաց փաստացի վճարված կամ վճարվելիք գինն է, իսկ նորմալ արժեքը ծագման երկրում սպառման կամ արտահանման համար նախատեսված նմանատիպ ապրանքի համար առևտրի բնականոն ընթացքում վճարված կամ վճարվելիք համեմատելի գինն է՝ ըստ կանոնակարգի՝ համապատասխանաբար հոդվածներ 9-ի և 5-ի:

Արտաքին առևտրի ենթաքարտուղարության Ներմուծումների գլխավոր տնօրինությունը պատասխանատու է բողոքի դեպքում կամ ըստ անհրաժեշտության՝ սեփական նախաձեռնությամբ նախնական դիտարկումների, Ներմուծումներում

անարդարացի մրցակցության գնահատման խորհրդին հետաքննություն առաջարկելու և այդ հետաքննությունների կատարման համար: Այն հանդես է գալիս որպես Խորհրդի քարտուղարություն: Խորհուրդը ղեկավարվում է Ներմուծումների գլխավոր տնօրենի կամ փոխտնօրենի կողմից և բաղկացած է Գյուղատնտեսության ու գյուղական հարցերով նախարարության, Արյունաբերության ու առևտրի նախարարության, Պետական պլանավորման կազմակերպության ենթաքարտուղարության, Մաքսային ենթաքարտուղարության, Թուրքիայի պալատների ու ապրանքահումքային բորսաների միության, Գյուղատնտեսության պալատների միության ներկայացուցիչներից և Ներմուծումների գլխավոր տնօրինության համապատասխան վարչության պետից: Խորհուրդը որոշում է կայացնում հետաքննություն սկսելու մասին: Այն ներկայացնում է ժամանակավոր միջոցների մասին իր որոշումը արտաքին առևտրի հարցերով պատասխանատու պետնախարարի հաստատմանը, գնահատում է հետաքննության արդյունքներն ու ներկայացնում է վերջնական որոշված միջոցների վերաբերյալ որոշումը արտաքին առևտրի հարցերով պատասխանատու պետնախարարի հաստատմանը և առաջարկություններ է կատարում հետաքննության ընթացքում:

Ըստ կանոնակարգի հոդված 20-ի՝ դիտարկումները պետք է ավարտվեն 45 օրվա ընթացքում, և հետաքննություն սկսելու որոշումները պետք է հրապարակվեն պաշտոնաթերթում: Տեղական արդյունաբերական ճյուղի անունից բողոքը պետք է ունենա Թուրքիայում նմանատիպ ապրանքի տեղական արդյունաբերության ամբողջ արտադրության առնվազն 25%-ը արտադրող տեղական արտադրողների օժանդակությունը (բողոքը պետք է նաև ունենա տեղական այն արտադրողների օժանդակությունը, որոնց խմբակային արտադրանքը կազմում է ամբողջ արտադրության ավելի քան 50%-ը): Շահագրգիռ կողմերը տեղեկացվում են վարույթի սկսումից հետո: Նրանց ուղարկվում են հարցաշարեր, և տրվում է առավելագույնը 37 օր պատասխանելու համար, ինչը կարող է ըստ պահանջի երկարաձագվել, եթե հիմնավոր պատճառ նշվի: Ըստ կանոնակարգի հոդված 30-ի՝ վերջնական որոշում պետք է կայացվի հետաքննությունն սկսելուց հետո մեկ տարվա ընթացքում, բայց ըստ անհրաժեշտության սա կարող է երկարաձագվել մինչև վեց ամիս: Ժամանակավոր միջոցները կարող են կիրառվել ոչ շուտ, քան հետաքննությունն սկսելուց 60 օր հետո, և դրանց տևողությունը սահմանափակված է չորս ամսով: Սակայն, ըստ օրենքի հոդված 12-ի, դրանք կարող են երկարաձագվել առավելագույնը վեց ամսով՝ ըստ տվյալ ապրանքի՝ դեպի Թուրքիա արտահանումներում զգալի բաժին ունեցող արտահանողների պահանջի: Վերջնական որոշված միջոցները ուժի մեջ են մնում հինգ տարով՝ սկսած գնագցման ու վնասի դիտարկման վերանայման ամենավերջին հետաքննության եզրակացությունից կամ դրանց կիրառման օրվանից:

Թուրքիայում գործում են վերջնական որոշված հակազնագցման 93 տուրքեր (2002 թվականի վերջին դրանք եղել են 27): Մեծ մասը Զինաստանի դեմ է (34), որին հաջորդում են Թայվանը (8), Զնդկաստանը (7) և Թայլանդը (6): Միջոցները կիրառվել են մեծ մասամբ մանածագործվածքների ու հագուստի, հիմքային մետաղական ապրանքների, պլաստիկից ու ռետինից ապրանքների և այլ արդյունաբերական ապրանքների նկատմամբ: Մեծ մասը հատուկ տուրքեր են, որոշ արժեքային տուրքեր հասնում են մինչև 100%-ի (օրինակ՝ մոտոցիկլետի անվադողի ներսի փչվող մասը):

Թուրքիան երբեք փոխհատուցման միջոցներ չի սկսել կամ կիրառել:

Թուրքիան ունի մեծ փորձ ունեցող և լավ ձևավորված հակազնագցման համակարգ, ինչը մտահոգիչ է առևտրային գործընկերության տեսանկյունից: Զիննախնդիրները ներառում են ոչ շուկայական տնտեսություններից ներմուծումների առավել բարդ ու ոչ բարենպաստ կանոնները և պետական մարմնի՝ սեփական նախաձեռնությամբ դիտարկումները: Անկախ հետաքննության ելքից՝ չորսից տաս ամիս տևողությամբ ժամանակավոր միջոցները գործնականում կարող են շուկայից դուրս թողնել ներմուծողին, եթե նա զրկվի իր բաշխման ցանցից: Այս խնդիրը ավելի բարդ է մինչև հինգ տարի գործող վերջնական որոշված միջոցների դեպքում:

բ. Պաշտպանական միջոցներ

Թուրքիայի պաշտպանական միջոցների վերաբերյալ օրենսդրությունը ներառում է թիվ 735/2004 որոշումն ու «Ներմուծումների համար պաշտպանական միջոցների մասին» կանոնակարգը, որոնք նպատակ ունեն միաժամանակ ապահովել ԱՀԿ-ի համապատասխան համաձայնագրի և ԵՀ-ի հետ Մաքսային միության որոշման պարտավորությունների հետ համապատասխանությունը:

Արտաքին առևտրի ենթաքարտուղարությունն ունի պաշտպանական միջոցներ առաջարկելու, կրառելու և վերահսկելու իրավասություն: Ըստ թիվ 735/2004 որոշման հոդված 4-ի՝ Ներմուծումների նկատմամբ պաշտպանական միջոցների գնահատման հորիզոնը որոշում է, թե արդյոք պետք է սկսել հետաքննություն, ընդունում, վերանայում, երկարաձգում, փոփոխում կամ դադարեցնում է ժամանակավոր կամ վերջնական որոշված պաշտպանական միջոցները, ինչպես նաև որոշում է այդ միջոցների ձևը, չափը և տևողությունը:

Հաշվի առնելով ազգային շահերը՝ ժամանակավոր պաշտպանական միջոցներ կարող են կիրառվել ծայրահեղ հանգամանքներում, որտեղ ուշացնելը դժվար նորոգելի վնաս կարող է հասցնել, և նախնական գնահատումը ակնհայտորեն հաստատում է, որ ավելացած ներմուծումները լուրջ վնաս են հասցրել կամ սպառնում են հասցնել նմանատիպ կամ ուղղակիորեն մրցակցող ապրանքների տեղական արտադրողներին: Ժամանակավոր կամ վերջնական որոշված պաշտպանական միջոցները կարող են ընդունել մաքսատուրքերի, լրացուցիչ ֆինանսական վճարների, ներմուծումների քանակի կամ արժեքի վրա սահմանափակումների, սակագնային քվոտաների ձև կամ լինել այդ ձևերի համադրություն: Եթե հետաքննության վերջում հորիզոնը որոշում է, որ պաշտպանական միջոցներն անհրաժեշտ են, ապա որպես ապահովություն ստացված գումարը պետք է գանձվի գանձապետարանի կողմից: Եթե պաշտպանական միջոցի գումարը ավելի քիչ է, քան ժամանակավոր միջոցի գումարը, ապա տարբերությունը վերադարձվում է: Բայց հակառակ դեպքում տարբերությունը չի գանձվում: Եթե հորիզոնը որոշում է, որ պաշտպանական միջոցներ անհրաժեշտ չեն, ապա ժամանակավոր միջոցը դադարեցվում է, և որպես ապահովություն վերցված գումարը վերադարձվում է:

Հետաքննությունից հետո, ըստ ազգային շահի վերաբերյալ օրենսդրական դրույթների, պաշտպանական միջոցները կարող են կիրառվել, եթե որևէ ապրանք ներմուծվում է այնպիսի աճող քանակներով և այնպիսի պայմաններում, որ նմանատիպ կամ ուղղակիորեն մրցունակ ապրանքների տեղական արտադրողներին հասցնում կամ սպառնում է հասցնել լուրջ վնաս: Կիրառումը այնպիսի ժամանակահատվածի համար է, որը բավարար է լուրջ վնասը կանխելու կամ կարգավորելու և ներքին շուկայի պայմաններին տեղական արտադրողների հարմարվելը հեշտացնելու համար: Տևողությունը չպետք է գերազանցի չորս տարին՝ ներառյալ որևէ ժամանակավոր միջոցը, եթե այն չի երկարաձգվում: Միջոցի տևողությունը կարող է երկարաձգվել նոր հետաքննությունից հետո, բայց չպետք է լինի ավելի սահմանափակող, քան այն եղել է նախնական ժամանակահատվածի վերջում և պետք է շարունակի մեղմացվել: Որևէ պաշտպանական միջոցի կիրառման ամբողջական տևողությունը չպետք է գերազանցի տասը տարին: Եթե տևողությունը գերազանցում է մեկ տարին, ապա միջոցը պետք է կիրառման ընթացքում մեղմացվի աճող կարգով՝ հաստատուն ժամանակահատվածներով: Եթե տևողությունը գերազանցում է երեք տարին, իրավիճակը պետք է վերանայվի միջոցի միջնաժամկետից ոչ ուշ, որ պարզվի, թե արդյոք միջոցը դեռևս անհրաժեշտ է, կամ ավելացվի մեղմացման տեմպը: 180 օրից քիչ տևողությամբ պաշտպանական միջոցները կարող են նորից կիրառվել տվյալ ապրանքի նկատմամբ, եթե այդ ապրանքի նկատմամբ պաշտպանական միջոց սկսելուց անցել է առնվազն մեկ տարի, և այդ միջոցը նույն ապրանքի համար ավելի քան երկու անգամ չի կիրառվել դրան նախորդող հինգ տարիների ընթացքում:

Թուրքիան վերջին տարիներին աճող տեմպերով օգտագործել է պաշտպանական միջոցներ: Վերջնական որոշված միջոցներ են կիրառվել բոլոր երկրների նկատմամբ՝ այնպիսի ապրանքների համար, ինչպիսիք են մոտոցիկլետները, աղը, շոգեարդուկները, փոշեկուլները, կոշիկը, վոլտմետրերն ու այլ չափող փոխարկիչները և ակտիվացրած հողն ու

կավը: Ի լրումն՝ միայն Չինաստանի նկատմամբ վերջնական որոշված պաշտպանական միջոց է կիրառվում՝ հարթ ապակու համար:

Թուրքիան ակտիվորեն օգտվում է բազմակողմ առևտրային համակարգի ընձեռած հնարավորություններից, ինչը խոսում է նաև տնտեսության տարբեր ճյուղերի կարիքներին համակարգված լուծումներ տալու մասին: Երկիրն ունի լավ ձևավորված պաշտպանական միջոցների համակարգ, ինչը մտահոգիչ է առևտրային գործընկերության տեսանկյունից: Հիմնախնդիրները ներառում են վերջնական որոշված պահպանական միջոցների չորսից տասը տարի տևողություն, ինչը գործնականում կարող է շուկայից դուրս թողնել ներմուծողին, եթե նա գրկվի իր բաշխման ցանցից, և առանձին երկրների նկատմամբ պաշտպանական միջոցներ կիրառելու հնարավորություն:

1.1.7. Պետական գնումներ

Թուրքիայում պետական գնումների համակարգը ներառում է՝ (1) «Պետական գնումների մասին» թիվ 4734 օրենքը, (2) «Պետական գնումների պայմանագրերի մասին» թիվ 4735 փոփոխված օրենքը, (3) «Ծառայությունների գնումների իրականացման մասին» կանոնակարգը, (4) «Ապրանքների գնումների իրականացման մասին» կանոնակարգը, (5) «Աշխատանքների գնումների իրականացման մասին» կանոնակարգը, (6) «Խորհրդատվական ծառայությունների գնումների իրականացման մասին» կանոնակարգը և (7) «Գնումների դեմ վարչական պահանջների մասին» կանոնակարգը: Որոշ մտահոգություններ են արտահայտվել մրցույթների երկար և հաճախ բարդ ընթացակարգերի վերաբերյալ²⁷: Խորհրդարանը դիտարկում է «Պետական գնումների մասին» օրենքի փոփոխությունների նախագիծը, «Կոմունալ ծառայությունների պետական գնումների մասին» օրենքի նախագիծը և «Որոշակի ներդրումների ու ծառայությունների (ներառյալ կոնցեսիոն) հանձնարարման մասին» օրենքի նախագիծը, որոնք բոլորը նպատակ ունեն պարզեցնել ու արագացնել գնումների ամբողջ գործընթացը՝ կրճատելով բողոքների ուսումնասիրման ու հայտարարությունների հրապարակման ժամկետները, և կանոնակարգել ջրի, էներգիայի, տրանսպորտի, հեռահաղորդակցությունների ու փոստային ծառայությունների ոլորտներում գործող հաստատությունների գնումների ընթացակարգերը: Օրենքների այս նախագծերը նաև նպատակ ունեն մոտեցնել Թուրքիայի տեղական համակարգը ԵՅ-ի օրենքներին:

Պետական գնումների մարմինը, որն ստեղծվել է «Պետական գնումների մասին» օրենքի հոդված 53-ով, վարչական ու ֆինանսական առումով անկախ մարմին է և համագործակցում է Ֆինանսների նախարարության հետ: Այդ մարմնի հիմնական պարտականություններն են ապահովել օրենքի արդյունավետ իրագործումն ու մրցույթների ընթացքում կանոնների ու ընթացակարգերի պատշաճ կիրառումը: Պետական գնումների մարմինը բաղկացած է նախագահությունից, Պետական գնումների խորհրդից և ծառայությունների ստորաբաժանումներից: Խորհուրդը մարմնի որոշում կայացնող հիմնական միավորն է: Այն նաև ուսումնասիրում է բողոքները և կարող է ուղղիչ գործողություններ կատարել ու որոշել կարգավորող գործողությունները, չեղյալ համարել մրցույթի որոշումը և դադարեցնել մրցույթի գործընթացը կամ որոշել, որ բողոքը տեղին չէ: Խորհրդի տաս անդամները նշանակվում են Նախարարների խորհրդի կողմից՝ հինգ տարով, և չեն կարող վերստին նշանակվել: Բողոք ներկայացնելուց հետո Պետական գնումների մարմնի կամ Խորհրդի կողմից վերջնական որոշումներ պիտի կայացվեն 45 օրվա ընթացքում: Մարմինը աշխատանքներ է իրականացնում ամբողջ երկրով գնումների ոլորտում ներգրավված պաշտոնյաներին վերապատրաստելու համար և օգտագործում է իր ինտերնետային կայքը՝ տեղեկատվության տարածման համար (<http://www.kik.gov.tr>): Թուրքիան նաև պլանավորում է ներդնել գնումների արդիական համակարգեր, ինչպիսին է էլեկտրոնային գնումների համակարգը:

²⁷ USTR (2006), *National Trade Estimate Report on Foreign Trade Barriers, Turkey*, Washington, D.C.

Օրենքը տարածվում է այն պետական հաստատությունների մեծ մասի վրա, որոնք կառավարվում են հասարակական օրենքով կամ գտնվում են պետական վերահսկողության տակ, կամ օգտվում են պետական ֆինանսավորումից (հոդվածներ 1 և 2): 48-52 հոդվածները կարգավորում են խորհրդատվական ծառայությունների գնումները: Օրենքի բացառությունները ներառում են որոշ պետական հաստատությունների կողմից ապրանքների ու ծառայությունների գնումները (օրինակ՝ պետական բանկերը, որոնց վրա օրենքը տարածվում է միայն շինարարական աշխատանքների գնման դեպքում, և հեռահաղորդակցությունների, տրասնպորտի, էներգիայի և ջրի ոլորտներում գործող հաստատությունները), պաշտպանության, անվտանգության ու հետախուզության կարիքների հետ կապված գնումները, միջազգային համաձայնագրերով օտարերկրյա ֆինանսավորմամբ իրականացվելիք գնումները, հետազոտությունների ու զարգացման նախագծերի համար ապրանքների ու ծառայությունների գնումները, գյուղատնտեսությանն ու անասնապահությանը վերաբերվող գնումները, Պետական պահուստի գրասենյակից գնումները և արտերկրում գտնվող պետական հաստատությունների, ինչպիսիք են դեսպանատներն ու հյուպատոսությունները, գնումները:

Ըստ հոդված 8-ի՝ կան շեմեր, որոնցից վեր օտարերկրացիներն ունեն թուրքիայում բացված մրցույթներին մասնակցության իրավասություն: Այդ շեմերն են՝ 529 111 նոր լիրա արժողությամբ ապրանքներն ու ծառայությունները՝ ընդհանուր կամ հավելվածային բյուջեով գործող հաստատությունների համար, 882 352 նոր լիրա արժողությամբ ապրանքներն ու ծառայությունները՝ օրենքի շրջանակներում այլ հաստատությունների համար և 19,4 միլիոն նոր լիրա արժողությամբ շինարարությունը՝ օրենքի շրջանակներում գերատեսչությունների համար: Օրենքում բնորոշված շեմերն ու դրամական սահմանները ամեն տարի թարմացվում են Պետական գնումների մարմնի կողմից՝ նախորդ տարվա մեծածախ վաճառքի գների ցուցիչի հիման վրա: Դրանք հրապարակվում են պաշտոնական տեղեկագրում և գործում են ամեն տարվա փետրվարի 1-ից: Արտակարգ իրավիճակներում Մարմնի առաջարկությամբ և Նախարարների խորհրդի հաստատմամբ շեմերը կարող են նորից փոփոխվել (հոդված 67):

Օրենքի թիվ 63 հոդվածի համաձայն՝ մրցույթի տեղական մասնակիցներին շնորհվում է գնային 15% արտոնություն, եթե Պետական գնումների մարմինը, Արդյունաբերության և առևտրի նախարարությունը և առնչվող այլ գերատեսչություններ եզրակացնում են, որ մատակարարումը տեղական ծագման է (Թուրքիան խթանման նպատակներով չունի տեղական բաղադրության այլ պահանջներ): Գնային արտոնություն ստանալու համար մրցույթի տեղական մասնակիցները պետք է նախապես ստանան ծագման հավաստագիր, որը տրվում է ապրանքների արտադրման վայրի առևտրի պալատի կողմից՝ որոշ փաստաթղթերի ներկայացման դիմաց (օրինակ՝ Արդյունաբերության և առևտրի նախարարության տված գրանցման արդյունաբերական հավաստագիր, Գյուղատնտեսության և գյուղական հարցերով նախարարության տված գրանցման սննդի հավաստագիր): Սակայն այս դրույթը կիրառելի չէ մրցույթի օտարերկրյա մասնակիցների հետ համատեղ ձեռնարկություններում գտնվող մրցույթի տեղական մասնակիցների նկատմամբ:

Պետական գնումների օրենքում բնորոշված են մրցույթի անցկացման երեք ընթացակարգեր՝ (1) ըստ հոդված 19-ի՝ բաց մրցույթներ, որտեղ մրցույթի բոլոր մասնակիցները կարող են առաջարկներ ներկայացնել, իսկ հայտարարությունները հրապարակվում են մրցույթի գործընթացի մեկնարկից առնվազն 40 օր առաջ, (2) ըստ հոդված 20-ի՝ սահմանափակված մրցույթներ, որտեղ սկզբից լինում է նախաորակավորվելու համար բաց հրավերք, որի հայտարարությունները հրապարակվում են նախաորակավորման համար դիմումի վերջնաժամկետից առնվազն 14 օր առաջ, և հետո մրցույթի բոլոր նախաորակավորված թեկնածուները առաջարկներ են ներկայացնում, որից առնվազն 40 օր առաջ նրանց մրցույթի հրավերքի նամակներ են ուղարկվում և (3) ըստ հոդված 21-ի՝ բանակցվող մրցույթներ, որոնք կիրառվում են որոշակի հանգամանքներում, օրինակ՝ եթե բաց կամ սահմանափակ ընթացակարգերի վերջում ոչ մի առաջարկ չի ներկայացվում, և երբ անհնար է սահմանել տեխնիկական և ֆինանսական բնութագրերը: Վերջին դեպքում գնումների գործընթացը անց է կացվում երկու փուլով. նախնական առաջարկները ծածկում են այնպիսի կողմեր, ինչպիսիք են տեխնիկական մանրամասներն ու պայմանագրի պահանջների կատարման մեթոդները, իսկ հետո վերջնական առաջարկներն են ներկայացվում՝ ներառյալ առաջարկի գինը: Բաց և սահմանափակ մրցույթները հիմնական

ընթացակարգերն են: Ուղղակի գնումներ կարող են կատարվել որոշ հանգամանքներում, օրինակ՝ եթե ապրանքները կամ ծառայությունները կարող են մատակարարվել միայն մեկ իրական կամ ֆիզիկական անձի կողմից, կամ երբ գնումները չեն գերազանցում 28 800 նոր լիրա արժեքը՝ քաղաքապետարանների հաստատությունների համար, կամ 9 624 նոր լիրա՝ այլ հաստատությունների համար:

Պատվիրատու պաշտոնյան պարտավոր է առաջարկ ներկայացրած բոլոր մասնակիցներին տեղեկացնել մրցույթի գնահատման արդյունքներ մասին: Այն դեպքում, երբ հաղթող մասնակիցը չի ընդունում պայմանագիրը, այն տրվում է երկրորդ ամենաբարենպաստ առաջարկին: Ավելին՝ «Պետական գնումների պայմանագրերի մասին» օրենքը սահմանում է ըստ «Պետական գնումների մասին» օրենքի շնորհիված պայմանագրերի տրամադրմանն ու իրագործմանը վերաբերվող սկզբունքներն ու ընթացակարգերը և կարգավորում է այնպիսի պայմանագրային հիմնախնդիրներ, ինչպիսիք են պահանջվող բաղադրությունը, փոխանցման սահմանափակումները և դադարեցման կարգավորումը:

Պետական պահուստի գրասենյակը, բացառությամբ իր կողմից արտադրվող որոշակի ապրանքների, «Պետական գնումների մասին» օրենքի շրջանակներում ապրանքների գնումներ է կատարում տեղական ու, ըստ անհրաժեշտության, օտարերկրյա շուկաներից և երկրում գործող գներով դրանք վերավաճառում է պետական հաստատություններին: Գրասենյակը եղել է գնումների կենտրոնական հաստատություն և պետական այլ հաստատություններին վերավաճառող՝ նույնիսկ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը: Դրա գնումների ընթացակարգերը համապատասխանում են օրենքին: Պետական մարմինները այլևս չեն պարտավորվում գնել միայն Պետական պահուստի գրասենյակից: Այն ապրանքներ և ծառայություններ է գնում այն գնորդների համար, որոնք բնորոշված են պաշտոնական տեղեկագրում հրապարակված իր հիմնական կանոնադրության հոդված 6-ում:

Թուրքիայի մեծածավալ պետական հատվածի բազմատեսակ գնումների կարիքները կարող է մոտ հարևանությամբ դիտվել որպես լավ հնարավորություն: Երկրի պետական գնումների համակարգը զարգացում է ապրում՝ դառնալով ավելի պարզ ու արդյունավետ: Կան մրցույթների օտարերկրյա մասնակիցների հստակորեն սահմանված իրավասություններ, թեև պահպանվել է ընթացքում դրանք փոփոխելու հնարավորություն, ու ընթացակարգերի թափանցիկություն: Համակարգի կանոնների հետ կապված մտահոգություններից է մրցույթների տեղական մասնակիցներին տրվող գնային արտոնությունը, որի չափը կարող է ոչ բարենպաստ վիճակ ստեղծել մրցակիցների համար:

1.1.8. Փոխհամաձայնեցված առևտուր

Թուրքիան օգտագործում է փոխհամաձայնեցված առևտրի գործելակերպի երկու հիմնական տեսակ՝ բարտեր կամ փոխադարձ գնումներ (ապրանքների ու ծառայությունների օտարերկրյա մատակարարները խոստանում են ներմուծող երկրից հետագայում գնել որոշ ապրանքներ) և հատուցում (համաձայնություն, ըստ որի որևէ ապրանքի կայուն փոխարկելի արտարժույթով գնման դեպքում մատակարարը կհատուցի հետագայում, օրինակ՝ կզնի վերջնական արտադրանքը, եթե մատակարարվել է հունք կամ բաղադրամաս): Առաջինը հիմնականում օգտագործվում է այն երկրների հետ, որոնք ունեն թերզարգացած բանկային համակարգ կամ արտարժույթի ղեկավարություններ: Հատուցումը փոխհատուցում է ներմուծման ծախսերը արտահանումների հասույթներով և օգնում ներկրել նոր տեխնոլոգիաներ ու բարձր տեխնոլոգիական ներդրումներ: Բարտերը կամ փոխադարձ գնումները կատարվում են պաշտոնական ընթացակարգով²⁸: Հատուցումը կառավարվում է

²⁸ «Արտահանումների կանոնների մասին» որոշում և «Փոխադարձ գնումների կամ բարտերի միջոցով կատարված արտահանումների մասին» թիվ 4/2006 հաղորդագրություն:

Արտաքին առևտրի ենթաքարտուղարության կամ Պաշտպանության արդյունաբերության ենթաքարտուղարության կողմից²⁹: Բոլոր ընկերություններին թույլատրվում է սահմանված ընթացակարգերով բարտեր և փոխադարձ գնումներ կատարել: Դիմումները ներկայացվում են Արտահանողների միությանը:

2005 թ. բարտերային կամ փոխադարձ գնումների առևտուրը կազմել է \$6,2 միլիոն (\$9,7 միլիոն 2002 թ.)՝ ներառելով ոսկերչությունը, կերամիկական ապրանքները, երկաթը, պողպատն ու շաքարեղեգը: Քաղաքացիական ավիացիայի ոլորտում հատուցման մեկ նախագիծ, որ սկսվել է 2000 թ. պետք է դադարեցվի 2010 թ.:

Թուրքիայի զարգացման կայուն միտումներ գրանցող տարատեսակ տնտեսական ոլորտները մոտ հարևանությամբ կարող են ստեղծել փոխհամաձայնեցված առևտրի լայն հնարավորություններ: Կարելի է զարգացնել արտահանումների և ներմուծումների փոխափոխման բազմաթիվ տարբերակներ՝ ելնելով նաև վճարային հաշվեկշռի ու արտարժույթի հետ կապված հնարավոր խնդիրներից: Ապագա զարգացումները կարող են ներառել ամբողջ արդյունաբերական ճյուղերի փոխկապակցված զարգացման նախագծեր՝ փոխադարձ մատակարարումների, բարձր տեխնոլոգիական համատեղ ներուժի և ներդրումների ներգրավմամբ:

1.2. Ներմուծումների վրա ազդող կարգավորումը Հայաստանում

Հայաստանն ունի միջազգային չափանիշներով բավական ազատական ներմուծման քաղաքականություն: Մասնավորապես ամրագրվել են բոլոր ապրանքների մաքսային սակագների առավելագույն չափերը: Շատ ցածր են ներմուծումների նկատմամբ կիրառվող վճարները: Մաքսային սակագների ենթակա ապրանքներից առավելագույնը գանձվում է 10% ներմուծման տուրք: Բոլոր ապրանքների մաքսային ամրագրված սակագների պարզ միջինը կազմում է 8,5%: Այս ցուցանիշը 14,7% և 7,5% է գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ապրանքների համար համապատասխանաբար: Առավել բարենպաստ ազգի գործող սակագների պարզ միջինը կազմում է 2,9% բոլոր ապրանքների, 6,9% գյուղատնտեսական ապրանքների և 2,3% ոչ գյուղատնտեսական ապրանքների համար: Ոչ արժեքային տուրքեր կիրառվում են բոլոր սակագնային տողերի միայն 0,4%-ի նկատմամբ (մի քանի տասնյակ): Մարդասիրական օգնության, որոշ սննդամթերքի և հումքային նյութերի նկատմամբ ներմուծման տուրքեր չեն գործում: Գործող 0-ական մաքսատուրքերը կազմում են բոլոր գյուղատնտեսական ապրանքների 28,1%-ը և ոչ գյուղատնտեսական ապրանքների 78%-ը:

Ինչ վերաբերում է ոչ սակագնային սահմանափակումներին, դրանք գործում են մասնավորապես զենք ու զինամթերքի ներմուծման նկատմամբ: Ներմուծման լիցենզիաներ են պահանջվում դեղագործական և գյուղատնտեսական քիմիական ապրանքների համար:

Դժվար ու երբեմն հակասական բանակցային գործընթացից հետո Հայաստանը Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամ է 2003 թվականից: Միջազգային շուկաների հետ ավելի մեծ կապի շնորհիվ ԱՀԿ-ին անդամակցությունը Հայաստանին պետք է, որ առավելություններ տա, սակայն կան առևտրի մի շարք խոչընդոտներ, այդ թվում՝ Թուրքիայի հետ փակ սահմանը:

Ներքին շուկայի պաշտպանության և տնտեսական արդար մրցակցության ապահովման համար Հայաստանն ունի ԱՀԿ-ի կանոններին համապատասխան հակազնագցման, լրավճարների փոխհատուցման և պաշտպանական միջոցների մասին օրենքներ: Հայաստանը ԱՀԿ-ին անդամակցությամբ պարտավորություն է ստանձնել հետագայում հակազնագցման տուրքերը, փոխհատուցման տուրքերը և պաշտպանական

²⁹ Հաղորդագրություն թիվ 6/2007:

միջոցները կիրառել միայն ԱՅԿ-ին առնչվող համաձայնագրերի ու դրույթների հետ ամբողջական համապատասխանության մեջ:

ԱՅԿ անդամակցությունը պարտավորությունների ու իրավունքների համատեղ փաթեթ է: Կարևորագույն իրավունքներից է վնաս հասցնող ներմուծումներից ներքին արտադրողների պաշտպանությունը: Այս իրավունքից առավելագույնս օգտվելու համար Հայաստանը պետք է հետևողականորեն անհրաժեշտ բարձրության հասցնի իր համապատասխան մարմինների կարողությունները և առնչվող գործընթացների իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:

Վերջինիս հետ կապված՝ խիստ կարևորվում են պատասխանատու մարմինների կողմից իրականացվող անընդհատ վերահսկողությունն ու սեփական նախաձեռնությամբ պարբերական ստուգումները: Պետք է նաև գործարարության շրջաններում բարձրացնել շուկայի պաշտպանության այդ միջոցների ու դրանց առնչվող գործընթացների մասին իրազեկությունը, որպեսզի շուկայում ոչ ցանկալի զարգացումների դեպքում ապահովվի գործարարության արագ արձագանք:

1.3. Ներմուծումների վրա ազդող կարգավորման և առևտրի համեմատություն

Նախ պետք է նշել, որ Հայաստանի և Թուրքիայի ներմուծումների վրա ազդող միջոցառումները ամբողջությամբ կարգավորվում են ԱՅԿ-ի շրջանակներում՝ բանակցությունների արդյունքում ստանձնած անհատական պարտավորությունների և ԱՅԿ-ի ընդհանուր կանոնների միջոցով: Հիմնական միջոցները մաքսատուրքերն են՝ արտահայտված սակագների դրույթաչափերով: Երկու երկրների միջև մաքսատուրքերի հարաբերական կարևորությունը գնահատելու համար պետք է դիտարկել համապատասխան ցուցանիշները (աղյուսակ 15):

Աղյուսակ 15, Սակագնային դրույթաչափերի կառուցվածքը

| | Հայաստան | | Թուրքիա | |
|---------------------------|------------------|---------------|------------------|---------------|
| սակագների ամրագրում, % | 100 | | 50,4 | |
| սակագներ | ամրագրված | գործող | ամրագրված | գործող |
| պարզ միջին, % | | | | |
| բոլոր ապրանքներ | 8,5 | 2,9 | 28,3 | 10,0 |
| գյուղատնտեսական | 14,7 | 6,9 | 60,1 | 46,7 |
| արդյունաբերական | 7,5 | 2,3 | 16,9 | 4,8 |
| ոչ արժեքային, % | 0,0 | 0,4 | 0,1 | 1,9 |
| մաքսատուրքերից ազատված, % | | | | |
| գյուղատնտեսական | | 28,1 | | 19,3 |
| արդյունաբերական | | 78,0 | | 34,9 |

Երկրների մաքսային սակագների պատկերների համադրումը նորից հաստատում է, որ Հայաստանի ներմուծումները անհամեմատ ավելի ազատականացված են և կանխատեսելի: Թուրքիայի հետ առևտրային զործընկերության բանակցությունների խնդիրը պետք է լինի մասնավորապես այս անհավասարության հարթեցումը:

Անցնելով առևտրին՝ նախ գնահատենք Հայաստանի և Թուրքիայի արտաքին ամբողջ առևտրի հարաբերական կարևորությունը: Դրա համար պետք է դիտարկենք արտաքին առևտրի համապատասխան ցուցանիշները (աղյուսակներ 16-23):

Աղյուսակ 16, Առևտուր (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|--------|--------|--------|--------|-------|
| Հայաստան | 75.94 | 82.19 | 69.51 | 67.76 | 58.49 | 52.85 |
| Թուրքիա | 48.80 | 47.03 | 49.74 | 47.21 | 50.25 | 48.94 |
| Վրաստան | 71.63 | 78.26 | 79.74 | 85.32 | 89.88 | 89.26 |
| Ադրբեջան | 92.82 | 107.56 | 121.50 | 115.83 | 105.27 | 80.55 |
| Իրան | 49.27 | 52.94 | 54.98 | 68.15 | 73.54 | 62.77 |
| Ստորին միջին եկամուտ | 53.63 | 58.43 | 65.27 | 69.02 | 70.69 | .. |
| Վերին միջին եկամուտ | 55.39 | 55.47 | 58.54 | 58.25 | 59.66 | 59.92 |
| Բարձր եկամուտ | 46.79 | 46.99 | 49.79 | 52.18 | .. | .. |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 65.86 | 67.75 | 70.24 | 68.36 | 69.83 | 67.05 |
| Աշխարհ | 48.18 | 48.77 | 51.91 | 54.18 | .. | .. |

Աղյուսակ 17, Ապրանքների և ծառայությունների արտահանումներ (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 29.36 | 32.15 | 27.38 | 27.28 | 22.04 | 19.05 |
| Թուրքիա | 25.22 | 22.99 | 23.55 | 21.86 | 22.67 | 21.95 |
| Վրաստան | 29.23 | 31.84 | 31.56 | 33.75 | 32.87 | 31.52 |
| Ադրբեջան | 42.77 | 42.01 | 48.79 | 62.94 | 66.51 | 53.99 |
| Իրան | 26.54 | 27.23 | 29.05 | 38.35 | 40.66 | 32.75 |
| Ստորին միջին եկամուտ | 27.22 | 29.51 | 32.99 | 35.40 | 36.82 | .. |
| Վերին միջին եկամուտ | 29.41 | 29.44 | 30.77 | 30.74 | 31.20 | 30.45 |
| Բարձր եկամուտ | 23.39 | 23.41 | 24.73 | 25.74 | .. | .. |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 33.66 | 34.40 | 35.72 | 35.06 | 35.36 | 33.22 |
| Աշխարհ | 24.24 | 24.45 | 25.95 | 26.98 | .. | .. |

Աղյուսակ 18, Ապրանքների և ծառայությունների արտահանումներ (տարեկան աճ, %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 35.80 | 29.10 | -1.70 | 19.20 | -4.30 | 9.05 |
| Թուրքիա | 6.89 | 6.86 | 11.17 | 7.89 | 6.64 | 6.65 |
| Վրաստան | 5.74 | 4.83 | 4.56 | 4.77 | 16.30 | 9.77 |
| Ադրբեջան | 16.71 | -4.38 | 18.11 | 21.01 | 29.27 | 37.01 |
| Իրան | 8.33 | 11.17 | -0.85 | 16.17 | 36.66 | 1.72 |
| Ստորին միջին եկամուտ | 16.10 | 15.48 | 21.23 | 17.04 | 18.43 | 16.45 |
| Վերին միջին եկամուտ | 4.86 | 6.41 | 12.24 | 7.54 | 7.90 | 6.83 |
| Բարձր եկամուտ | 2.11 | 3.65 | 9.08 | 5.90 | .. | .. |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 8.80 | 10.65 | 12.53 | 6.08 | 8.24 | 8.81 |
| Աշխարհ | 3.81 | 5.33 | 10.97 | 7.66 | 10.93 | .. |

Աղյուսակ 19, Ապրանքների և ծառայությունների ներմուծումներ (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 46.59 | 50.03 | 42.13 | 40.48 | 36.45 | 33.80 |
| Թուրքիա | 23.58 | 24.04 | 26.19 | 25.35 | 27.58 | 26.99 |
| Վրաստան | 42.40 | 46.42 | 48.18 | 51.57 | 57.02 | 57.74 |
| Ադրբեջան | 50.05 | 65.55 | 72.72 | 52.90 | 38.76 | 26.56 |
| Իրան | 22.73 | 25.70 | 25.93 | 29.81 | 32.88 | 30.02 |
| Ստորին միջին եկամուտ | 26.40 | 28.92 | 32.28 | 33.62 | 33.88 | .. |
| Վերին միջին եկամուտ | 25.99 | 26.03 | 27.77 | 27.51 | 28.46 | 29.47 |
| Բարձր եկամուտ | 23.40 | 23.58 | 25.06 | 26.44 | .. | .. |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 32.20 | 33.35 | 34.52 | 33.31 | 34.47 | 33.84 |
| Աշխարհ | 23.94 | 24.31 | 25.95 | 27.20 | .. | .. |

Աղյուսակ 20, Ապրանքների և ծառայությունների ներմուծումներ (տարեկան աճ, %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 18.90 | 26.50 | -2.90 | 15.00 | 6.70 | 17.10 |
| Թուրքիա | 20.87 | 23.52 | 20.84 | 12.17 | 6.89 | 11.12 |
| Վրաստան | 4.24 | 3.57 | 8.34 | 5.04 | 19.45 | 22.18 |
| Ադրբեջան | 48.39 | 43.46 | 17.23 | 11.41 | 12.31 | 9.50 |
| Իրան | 23.26 | 23.86 | 13.90 | 18.89 | 38.91 | 15.21 |
| Ստորին միջին եկամուտ | 14.54 | 15.21 | 18.11 | 14.39 | 13.71 | 13.48 |
| Վերին միջին եկամուտ | 1.45 | 7.07 | 17.45 | 10.69 | 13.76 | 12.90 |
| Բարձր եկամուտ | 2.57 | 4.36 | 9.12 | 6.08 | .. | .. |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 11.29 | 14.61 | 18.25 | 9.98 | 13.67 | 18.23 |
| Աշխարհ | 3.63 | 5.81 | 10.98 | 7.68 | .. | .. |

Աղյուսակ 21, Ապրանքների և ծառայությունների արտաքին հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | -17.23 | -17.88 | -14.74 | -13.21 | -14.42 | -14.75 |
| Թուրքիա | 1.63 | -1.04 | -2.63 | -3.50 | -4.91 | -5.04 |
| Վրաստան | -13.17 | -14.58 | -16.63 | -17.82 | -24.15 | -26.23 |
| Ադրբեջան | -7.28 | -23.54 | -23.93 | 10.04 | 27.75 | 27.42 |
| Իրան | 3.81 | 1.53 | 3.12 | 8.54 | 7.78 | 2.73 |
| Ստորին միջին եկամուտ | 0.82 | 0.59 | 0.71 | 1.77 | 2.94 | .. |
| Վերին միջին եկամուտ | 3.42 | 3.41 | 3.00 | 3.23 | 2.74 | 0.98 |
| Բարձր եկամուտ | -0.01 | -0.17 | -0.33 | -0.70 | .. | .. |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 1.46 | 1.05 | 1.20 | 1.75 | 0.89 | -0.62 |
| Աշխարհ | 0.30 | 0.14 | 0.00 | -0.22 | .. | .. |

Աղյուսակ 22, Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | -6.22 | -6.75 | -0.55 | -1.06 | -1.83 | -6.23 |
| Թուրքիա | -0.65 | -2.64 | -3.97 | -4.67 | -6.18 | .. |
| Վրաստան | -6.10 | -9.41 | -6.72 | -10.93 | -14.90 | -18.98 |
| Ադրբեջան | -12.32 | -27.78 | -29.83 | 1.26 | 17.67 | 28.86 |

Աղյուսակ 23, Ամբողջ պահուստները՝ արտահայտված ներմուծումների ամիսներով

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|------|------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 4.48 | 4.08 | 3.43 | 3.28 | 4.37 | 4.90 |
| Թուրքիա | 5.61 | 5.30 | 4.09 | 4.80 | 4.88 | .. |
| Վրաստան | 1.52 | 1.17 | 1.75 | 1.64 | 2.44 | 2.57 |
| Ադրբեջան | 2.44 | 1.83 | 1.82 | 1.60 | 2.70 | 3.46 |
| Իրան | .. | .. | .. | .. | .. | .. |
| Ստորին միջին եկամուտ | 8.94 | 9.67 | 10.40 | 11.24 | 12.14 | .. |
| Վերին միջին եկամուտ | 6.01 | 7.20 | 7.48 | 8.39 | 10.43 | 11.05 |
| Բարձր եկամուտ | 6.98 | 8.96 | 9.51 | 8.59 | 8.03 | 7.94 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 5.31 | 5.82 | 6.85 | 7.71 | 9.72 | 12.41 |
| Աշխարհ | 7.22 | 8.83 | 9.38 | 9.24 | 9.62 | .. |

Երկու երկրներում էլ ամբողջ արտաքին առևտուրը կազմում է ՀՆԱ-ի մոտ կեսը, սակայն մեկ շնչի հաշվով այն մոտ 2 անգամ ավելի շատ է Թուրքիայում: Երկու երկրներում էլ արտահանումները զիջում են ներմուծումներին, սակայն Հայաստանում արտահանումները հարաբերականորեն ավելի քիչ են, քան Թուրքիայում: Հայաստանում ներմուծումների և արտահանումների տարբերությունը, որպես ՀՆԱ-ի մաս, մոտ 3 անգամ ավելի մեծ է քան Թուրքիայում և անհամեմատ ավելի բարձր է, քան եկամտային ու աշխարհագրական խմբերում: Հայաստանում վերջին տարիներին արտահանումների աճը եղել է անկայուն, այն դեպքում, երբ Թուրքիան գրանցել է արտահանումների կայուն և զգալի աճ: Վերջին տարիներին երկու երկրներն էլ գրանցել են ներմուծումների զգալի աճ:

Հայաստանի բացասական առևտրային հաշվեկշռի մեծացումը խիստ մտահոգություն է ընթացիկ հաշվի բացասական հաշվեկշռի մեծացման համատեքստում՝ կապված վերջինիս ֆինանսավորման հնարավոր բարդությունների հետ: Այս առումով պետք է նշել, որ ըստ ներմուծման ամիսների՝ ամբողջ պահուստները թեև համեմատական են Թուրքիայի հետ, սակայն զգալիորեն զիջում են եկամտային ու տարածաշրջանային խմբերին: Բացի արտահանումների ներուժը բարձրացնելու միշտ առկա անհրաժեշտությունից՝ իրադրության բարդացման դեպքում կարող են նաև սահմանափակվել ներմուծումները՝ օգտվելով այդ նպատակներով հատուկ մշակված ԱՀԿ վճարային հաշվեկշռի խնդիրների հետ կապված դրույթներով տրված բազմակողմ իրավունքից:

Այժմ գնահատենք Հայաստանի և Թուրքիայի արտաքին առևտրի հարաբերական կարևորությունը ըստ ապրանքների, Առավել բարենպաստ ազգի մաքսային սակագների գործող դրույթաչափերի, ներմուծման ու արտահանման մակարդակների, մատակարար երկրների և արտաքին շուկա հանդիսացող երկրների: Դրա համար պետք է դիտարկենք արտաքին առևտրի համապատասխան ցուցանիշները (աղյուսակներ 24-27³⁰):

³⁰ Այս աղյուսակները կազմվել են World Bank, World Integrated Trade Solution տվյալների բազայից վերցված տեղեկատվության հիման վրա:

Աղյուսակ 24, Հայաստանի հիմնական ներմուծումները, դրանց նկատմամբ գործող մաքսային սակագների դրույթաչափերը և դրանց հիմնական մատակարարները, 2007 թ.

| ՆՀ-2 | Ապրանքախմբի Անվանում | Դրույթ. պարզ միջին | Նվազ. դրույթ. | Առավել. դրույթ. | Բոլոր տողերի թիվը | Ներմուծումները (\$ '000) | Հիմնական մատակարար. |
|------|--|--------------------|---------------|-----------------|-------------------|--------------------------|------------------------------------|
| 27 | Հանքային վառելանյութեր, յուղեր և այլն | 0 | 0 | 0 | 43 | 482,721.853 | Ղազախստան Բուլղարիա Ռումինիա |
| 71 | Բնական կամ աճեցրած մարգարիտներ, թանկարժեք քարեր | 3.02 | 0 | 10 | 53 | 296,238.232 | Ավստրիա Բելգիա Իզրայել |
| 84 | Միջուկային ռեակտորներ, բոյլերներ, մեքենաներ և այլն | 0.35 | 0 | 10 | 716 | 243,445.469 | Ռուսաստան Չինաստան Իտալիա |
| 85 | Էլեկտրական մեքենաներ, սարքավորումներ, մասեր | 3.53 | 0 | 10 | 496 | 180,287.347 | Ֆրանսիա Չինաստան Կորեա |
| 87 | Տրանսպորտային մեքենաներ, ոչ երկաթուղային կամ տրամվայ | 4.88 | 0 | 10 | 84 | 175,884.287 | Ռուսաստան Ճապոնիա Գերմանիա |
| 73 | Երկաթից և պողպատից ապրանքներ | 0.47 | 0 | 10 | 129 | 144,432.445 | Ռուսաստան Ուկրաինա Իրան |
| 72 | Երկաթ և պողպատ | 0 | 0 | 0 | 171 | 112,213.125 | Ուկրաինա Թուրքիա Իրան |
| 10 | Հացահատիկ | 0 | 0 | 0 | 16 | 108,223.451 | Ռուսաստան Ղազախստան Ուկրաինա |
| 39 | Պլաստիկ նյութեր և դրանցից ապրանքներ | 2.29 | 0 | 10 | 146 | 101,895.136 | Չինաստան Թուրքիա Իրան |
| 30 | Դեղագործական ապրանքներ | 0 | 0 | 0 | 43 | 99,806.566 | ԱՄՆ Ֆրանսիա Գերմանիա |

Աղյուսակ 25, Թուրքիայի հիմնական ներմուծումները, դրանց նկատմամբ գործող մաքսային սակագների դրույթաչափերը և դրանց հիմնական մատակարարները, 2007 թ.

| ՆՅ-2 | Ապրանքախմբի Անվանում | Դրույթ. պարզ միջին | Նվազ. դրույթ. | Առավել. դրույթ. | Բոլոր տողերի թիվը | Ներմուծումները (\$ '000) | Հիմնական մատակարար. |
|------|--|--------------------|---------------|-----------------|-------------------|--------------------------|---------------------|
| 27 | Հանքային վառելանյութեր, յուղեր, և այլն | 0.72 | 0.00 | 8.00 | 114 | 23,883,684.529 | Ռուսաստան |
| | | | | | | | Իրան |
| | | | | | | | Սաուդյան Արաբիա |
| 84 | Միջուկային ռեակտորներ, բոյլերներ, մեքենաներ և այլն | 1.75 | 0.00 | 9.70 | 1,180 | 22,893,106.906 | Գերմանիա |
| | | | | | | | Չինաստան |
| 72 | Երկաթ և պողպատ | 3.57 | 0.00 | 23.40 | 475 | 16,182,378.605 | Ռուսաստան |
| | | | | | | | Ուկրաինա |
| | | | | | | | Ռումինիա |
| 85 | Էլեկտրական մեքենաներ, սարքավորումներ, մասեր | 2.66 | 0.00 | 14.00 | 700 | 12,863,032.412 | Չինաստան |
| | | | | | | | Գերմանիա |
| 87 | Տրանսպորտային մեքենաներ, ոչ երկաթուղային կամ տրամվայ | 5.80 | 0.00 | 22.00 | 240 | 12,205,976.556 | Գերմանիա |
| | | | | | | | Ֆրանսիա |
| 39 | Պլաստիկ նյութեր և դրանցից ապրանքներ | 5.98 | 0.00 | 6.50 | 265 | 8,799,587.512 | Իտալիա |
| | | | | | | | Գերմանիա |
| | | | | | | | Բելգիա |
| 71 | Բնական կամ աճեցրած մարգարիտներ, թանկարժեք քարեր | 0.60 | 0.00 | 4.00 | 72 | 5,906,098.458 | Շվեյցարիա |
| | | | | | | | Հարավային Աֆրիկա |
| 29 | Օրգանական քիմիական նյութեր | 4.27 | 0.00 | 6.50 | 625 | 3,709,883.273 | Իտալիա |
| | | | | | | | Գերմանիա |
| | | | | | | | Հնդկաստան |
| 30 | Դեղագործական ապրանքներ | 0.51 | 0.00 | 6.50 | 81 | 3,521,750.509 | ԱՄՆ |
| | | | | | | | Գերմանիա |
| | | | | | | | Ֆրանսիա |
| 74 | Պղինձ և դրանից ապրանքներ | 3.28 | 0.00 | 5.20 | 69 | 3,152,312.609 | Շվեյցարիա |
| | | | | | | | Ղազախստան |
| | | | | | | | Չիլի |
| | | | | | | | Ուզբեկստան |

Աղյուսակ 26, Հայաստանի հիմնական արտահանումները և դրանց հիմնական շուկաները, 2007 թ.

| ՆՅ-2 | Ապրանքախմբի անվանում | Արտահանումները (\$ '000) | Դեպի | Դրույթ. միջին. Թուրքիայում |
|------|---|--------------------------|---------------------------|----------------------------|
| 72 | Երկաթ և պողպատ | 222,084.653 | Նիդերլանդներ | 3.57 |
| | | | Գերմանիա | |
| | | | Ուկրաինա | |
| 71 | Բնական կամ աճեցրած մարգարիտներ, թանկարժեք քարեր | 162,355.164 | Բելգիա | 0.60 |
| | | | Ռուսաստան | |
| | | | Իզրայել | |
| 26 | Հանքանյութեր և այլն | 106,519.780 | Բուլղարիա | 0.09 |
| | | | Բրիտանական Վիրջին կղզիներ | |

| | | | | |
|----|---|------------|---------------------------------|-------|
| 74 | Պղինձ և դրանից ապրանքներ | 74,104.666 | Իսպանիա | 3.28 |
| | | | Գերմանիա | |
| | | | Ճապոնիա | |
| 76 | Ալյումին և դրանից ապրանքներ | 42,426.488 | Միացյալ Արաբական Էմիրություններ | 6.27 |
| | | | Բուլղարիա | |
| | | | Իրան | |
| 22 | Խմիչքներ, սպիրտեր, քացախ | 41,015.199 | ԱՄՆ | 18.69 |
| | | | Ռուսաստան | |
| | | | Ուկրաինա | |
| 25 | Աղ, ծծումբ, հող և քար և այլն | 31,138.540 | Վրաստան | 0.22 |
| | | | Իրան | |
| | | | Ռուսաստան | |
| 81 | Այլ հիմքային մետղաներ, կերմետներ և այլն | 24,464.910 | Գերմանիա | 3.16 |
| | | | Մալայզիա | |
| 40 | Ռետին և դրանից ապրանքներ | 23,759.114 | Ռուսաստան | 2.47 |
| | | | Լեհաստան | |
| | | | ԱՄՆ | |
| 85 | Էլեկտրական մեքենաներ, սարքավորումներ, մասեր | 13,862.125 | Ֆրանսիա | 2.66 |
| | | | Ռուսաստան | |
| | | | Իրան | |

Աղյուսակ 27, Թուրքիայի հիմնական արտահանումները և դրանց հիմնական շուկաները, 2007 թ.

| ՆՅ-2 | Ապրանքախմբի անվանում | Արտահանումները (\$ '000) | Դեպի | Դրույք. միջին. Հայաստանում |
|------|--|--------------------------|---------------------------------|----------------------------|
| 87 | Տրանսպորտային մեքենաներ, ոչ երկաթուղային կամ տրամվայ | 15,856,902.239 | Ֆրանսիա | 4.88 |
| | | | Իտալիա | |
| | | | Գերմանիա | |
| 84 | Միջուկային ռեակտորներ, բոյլերներ, մեքենաներ և այլն | 8,789,559.140 | Գերմանիա | 0.35 |
| | | | Միացյալ Թագավորություն | |
| | | | Ֆրանսիա | |
| 72 | Երկաթ և պողպատ | 8,372,265.555 | Միացյալ Արաբական Էմիրություններ | 0 |
| | | | Իսպանիա | |
| | | | Ռումինիա | |
| 61 | Հագուստի պարագաներ, գործված | 8,022,460.339 | Գերմանիա | 10 |
| | | | Միացյալ Թագավորություն | |
| | | | Ֆրանսիա | |
| 85 | Էլեկտրական մեքենաներ, սարքավորումներ, մասեր | 7,267,522.715 | Միացյալ Թագավորություն | 3.53 |
| | | | Գերմանիա | |
| | | | Ֆրանսիա | |
| 62 | Հագուստի պարագաներ, չգործված | 5,445,285.739 | Գերմանիա | 10 |
| | | | Միացյալ Թագավորություն | |
| | | | Իսպանիա | |
| 27 | Հանքային | 5,147,932.323 | Իտալիա | 0 |

| | վառելանյութեր, յուղեր և այլն | | Հարավային Աֆրիկա | |
|----|-------------------------------------|---------------|------------------------|------|
| | | | ԱՄՆ | |
| 73 | Երկաթից և պողպատից ապրանքներ | 4,129,748.760 | Գերմանիա | 0.47 |
| | | | Միացյալ Թագավորություն | |
| | | | Ռումինիա | |
| 39 | Պլաստիկ նյութեր և դրանցից ապրանքներ | 2,968,739.058 | Ռուսաստան | 2.29 |
| | | | Ռումինիա | |
| | | | Գերմանիա | |
| 08 | Ուտելի մրգեր, ընկույզներ և այլն | 2,670,618.466 | Իտալիա | 10 |
| | | | Ռուսաստան | |
| | | | Գերմանիա | |

Հայաստանի և Թուրքիայի 10 ամենախոշոր ներմուծումների և 10 ամենախոշոր արտահանումների վիճակագրության համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նախ՝ հիմնական ներմուծումների նկատմամբ գործող դրույթաչափերը երկու երկրների դեպքում էլ շատ բարձր չեն, և ընդհանուր առմամբ Թուրքիայի դրույթաչափերը փոքր-ինչ ավելի բարձր են Հայաստանի դրույթաչափերից:

Մյուս կողմից՝ եթե դիտարկենք մի երկիրը որպես մյուսի հիմնական արտահանումների պոտենցիալ շուկա, ապա Հայաստանի արտահանումները Թուրքիայում չեն բախվի շատ բարձր դրույթաչափերի՝ բացառությամբ խմիչքների ու սպիրտերի: Ինչ վերաբերում է Թուրքիայի արտահանումներին, ապա պետք է նշել, որ արդեն կա բավականչափ հաստատված առևտուր, և Թուրքիան Հայաստանի հիմնական մատակարարների թվում է: Ընդհանուր առմամբ Թուրքիայի հիմնական արտահանումները Հայաստանում նույնպես չեն բախվի շատ բարձր դրույթաչափերի՝ բացառությամբ մանածագործվածքների ու հագուստեղենի և մրգերի ու ընկույզների:

Պետք է նշել, որ այս համեմատությունը չի ժխտում այն փաստը, որ Թուրքիայի դրույթաչափերը բոլոր ապրանքների նկատմամբ միջինով շատ ավելի բարձր են, քան Հայաստանի դրույթաչափերը: Ավելին՝ պետք է նորից ընդգծել, որ Թուրքիան իր հիմնական գործընկերոջ՝ ԵՄ-ի հետ ունի ազատ առևտրի ռեժիմ, ինչը զգալի խոչընդոտ է հայկական արտահանումների համար: Հետևաբար նշված երկկողմ համեմատությունը Թուրքիայի հետ առևտրի համար միայն նվազագույն հիմքեր է տալիս, քանի որ նույնիսկ դրույթաչափերի հավասար պայմանների դեպքում թուրքական արտահանողները հայկական շուկայում չեն բախվի այնպիսի արտոնյալ մրցակցության, որին կբախվեն հայկական արտահանողները թուրքական շուկայում՝ ի դեմս ԵՄ-ի արտահանողների: Արդյունքում Թուրքիայի հետ առնվազն արդյունաբերական ապրանքների ազատ առևտրի շուրջ բանակցումը Հայաստանի համար կլինի ճիշտ ռազմավարություն:

2. Արտահանումների և արտադրության վրա ազդող կարգավորում

2.1. Թուրքիայի արտահանումների և արտադրության վրա ազդող կարգավորում

2.1.1. Գրանցում և փաստաթղթեր

Ներմուծողների և արտահանողների համար գործում են նույն փաստաթղթային պահանջները: Ի լրումն՝ արտահանողները պետք է գրանցվեն Արտահանողների միությունում և իրենց շրջանների առևտրային պալատներում: Նրանցից գանձվում է արտահանման f.o.b. գնի 0.05%-ից մինչև 0.5%՝ որպես ծառայության վճար:

Գրանցում կատարվում է յուրաքանչյուր արտահանման գործարքի համար առանձին՝ գործարքի ժամանակ: Գրանցման պահանջ կա արտահանվող հետևյալ ապրանքների համար.

- որոնք հավակնում են Աջակցության և գնային կայունացման հիմնադրամիից (ԱԳԿՀ) լրավճարներ ստանալուն,
- որոնց համար վճարում է ԱԳԿՀ-ն,
- որոնք գտնվում են վարկերից առաջացած պարտքերի՝ բարտերի միջոցով մարման համար հատուկ հաշիվների շրջանակներում,
- որոնք ներառված են Ռուսաստանի և Թուրքիայի միջև Բնական գազի մասին համաձայնագրում,
- որոնք գտնվում են այն երկրների նկատմամբ կիրառվող սահմանափակումների դաշտում որոնք իրագործում են քանակական սահմանափակումներ թուրքական արտահանումների նկատմամբ,
- որոնք նախատեսված են ՄԱԿ-ի տնտեսական պատժամիջոցների մասին որոշումների տակ ընկնող երկրների համար,
- որոնք հաստատվում են «Օրգանական գյուղատնտեսության հիմնադրույթների և իրագործման մասին» կանոնակարգի³¹ շրջանակներում,
- չմշակված ձիթապտղային յուղ ու մշակված մեծածավալ կամ տակառալցված ձիթապտղային յուղ, glycyrrhiza glabra-ի արմատ, չմշակված meerschautm տեսակի հանքանյութ և դրանից պատրաստված ծխամորձ,
- «Օզոնային շերտի պաշտպանության մասին» Վիենայի համաձայնագրում և կից արձանագրություններում ու փոփոխություններում կարգավորվող ապրանքներ,
- պարկերում կամ տուփերում տեղափոխվող չմշակված ձիթապտուղ, անասուններ, մեծածավալ կոնաձև պղպեղ, չմշակված ձիթապտուղ (չֆերմենտավորած), պղնձի և ցինկի ջարդոն, մարմար, cucumis anguira տեսակի վարունգ և ցեմենտ³²:

ԵՄ-ի հետ մաքսային միության շրջանակներում ընդգրկված և դեպի ԵՄ ուղղված ապրանքների համար Մաքսային հարցերով ենթաքարտուղարությունը կարող է արտահանողներին լիազորել թողարկել տեղաշարժի սերտիֆիկատներ (հայտնի A.TR անունով)՝ առանց դրանք ներկայացնելու պետական կառավարման համապատասխան

³¹ Պաշտոնական տեղեկագիր թիվ 25841, 10.06.2005թ.

³² Այս ապրանքների ցանկը սահմանված է թիվ 2006/7 պաշտոնական հաղորդագրությամբ, Պաշտոնական տեղեկագիր թիվ 26190, 06.06.2006թ.

մարմինների հաստատմանը: Նման իրավունք կարող է տրվել այն արտահանողներին, որոնք կատարում են հաճախակի առաքումներ, չեն կատարել մաքսային կամ հարկային օրենսդրության լուրջ կամ կրկնվող խախտումներ և ունեն համապատասխան գրառումներ, որոնք կարող են ստուգվել մաքսային մարմինների կողմից: Նման իրավունք դեռ գոյություն չունի դեպի Իսրայել, Մակեդոնիա, Խորվաթիա, Բոսնիա և Հերցեգովինա, Մարոկկո, Պաղեստին, Սիրիա, Թունիս և Եգիպտոս արտահանումների համար, քանի որ չկա համապատասխան օրենսդրություն, որը մշակման ընթացքի մեջ է:

2.1.2. Արտահանումներից զանձվող հարկեր

Արտահանվող ապրանքների նկատմամբ Թուրքիայում սահմանված են հետևյալ հարկերը.

- 0.5\$` չմշակված մորթու 1 կգ-ի համար (Ներդաշնակեցված համակարգի 4101, 4102 և 4103 գլուխներ),
- 0.04\$` չկեղևահանած պնդուկի 1 կգ-ի համար,
- 0.08\$` կեղևահանած պնդուկի 1 կգ-ի համար:³³

Նշված բոլոր հարկային մուտքերից ֆինանսավորվում է ԱԳԿՀ-ն:

2.1.3. Արտահանման արգելումներ, վերահսկողություն և լիցենզավորում

Թուրքիայում արգելվում է արտահանել լայն դասակարգմամբ 14 ապրանքախմբեր` պայմանավորված բնապահպանական, առողջապահական և մշակութային պատճառներով կամ ստանձնած միջազգային պարտավորություններով: Այդ ապրանքներն են` անգորայի այծը, խաղային և վայրի բուրբուկները (բացառությամբ վայրի խոզի, շնագայլի, աղվեսի, կզաքիսի, օձի, կրիայի և մողեսի) կամ դրանց միսը և/կամ դրանցից պատրաստված հագուստը կամ դրա տարրերը, բնական ծաղկի սոխուկները, ծխախոտի սերմերն ու բույսերը, հնդկական կանեփը, *Pterocarya carpinifolia*, *Liquidamber orientalis*, ձիթապտղի, թզի, պնդուկի, պիստակի և խաղողի բույսերը, օզոնային շերտը քայքայող նյութերը, ընկույզը, թուփը, բալը, տանձը, սալորը, փայտն ու փայտածուխը, հնէաբանական աշխատանքները և այլն: Երկու նպատակներով /օրինակ` քաղաքացիական և ռազմական/ օգտագործման և «զգայուն» ապրանքները ենթակա են լիցենզավորման Արտաքին առևտրի հարցերով ենթաքարտուղարության կողմից³⁴: Ի լրումն` «Քիմիական զենքերի վերահսկողության մասին» կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հավելվածներում թվարկված քիմիական նյութերը ենթակա են արտահանման լիցենզավորման:

Նավթամթերքներ արտադրող յուրաքանչյուր ընկերության նկատմամբ սահմանված է արտադրության 35%-ի չափով արտահանման քվոտա: Լիցենզիա է պահանջվում 25 ապրանքախմբերի արտահանման համար (աղյուսակ 28): Այդ ապրանքներն արտահանողները պետք է պետական կառավարման համապատասխան մարմնի կողմից ստանան թույլտվություն:

Աղյուսակ 28, Լիցենզավորման ենթակա ապրանքախմբերը

| Ապրանքախմբի նկարագրություն | Պատասխանատու մարմին |
|--|--|
| Պարարտանյութեր (բացառությամբ քիմիական պարարտանյութերի) | Գյուղատնտեսության և գյուղական հարցերի նախարարություն |
| Սերմեր (բացառությամբ անտառային ծառերի սերմերի) | |

³³ Նախարարների խորհրդի որոշում` հրապարակված 1997 թվականի հուլիսի 23-ի թիվ 89/10306 Պաշտոնական տեղեկագրում:

³⁴ 2003 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 2003/12 պաշտոնական հաղորդագրություն:

| Ապրանքախմբի նկարագրություն | Պատասխանատու մարմին |
|--|---|
| Ձկնորսության առնչվող օրենսդրությամբ սահմանափակումներ ունեցող ձկնեղեն (ներառյալ տզրուկներ) | |
| Սպորտային միջոցառումների համար նախատեսված ձիեր | |
| «Անասնակերի մասին» օրենքով կարգավորվող անասնակեր | |
| Գյուղատնտեսական դեղամիջոցներ և սարքավորումներ | |
| Անասնաբուժական նպատակների համար նախատեսված դեղորայք | |
| Քվտավորման կամ որևէ այլ սահմանափակման ենթակա բնական ծաղկի սոխուկ | |
| Սնուցման համար պահվող կենդանիներ | |
| Բնական սունկ (միայն դեպի ԵՂ-ի երկրներ արտահանվող) | |
| Կենդանի թունածուկ (Thynus thynnus) | |
| Վայրի ֆաունայի և ֆլորայի վտանգված տեսակներ | |
| Բնական գազ | Էներգետիկ շուկայի կարգավորման գերատեսչություն |
| Էլեկտրաէներգիա | |
| Հեղուկացված նավթային գազեր | |
| Ռազմական զենք և զինամթերք (բացառությամբ սպորտային և որսորդական հրացանների) | Ազգային պաշտպանության նախարարություն |
| Հրթիռային տեխնոլոգիաների վերահսկողության ռեժիմով կարգավորվող ապրանքներ | Առողջապահության նախարարություն |
| օփիում և կակաչի սերմ | |
| Կախվածություն առաջացնող և հոգեմետ նյութեր | |
| Միջուկային նպատակներով օգտագործվող տեխնոլոգիա և սարքավորումներ | Ատոմային էներգիայի թուրքական գերատեսչություն |
| Վասենաարի կարգավորմամբ և Ավստրալիայի խմբի հավելվածներում թվարկված նյութեր (երկու նպատակներով օգտագործման ապրանքներ և զենք) | Արտաքին առևտրի հարցերով ենթաքարտուղարություն |
| «Քիմիական զենքերի վերահսկողության մասին» կոնվենցիայի հավելվածներում թվարկված քիմիական նյութեր | |
| «Վտանգավոր թափոնների միջսահմանային շարժի և այդ թափոնների վերացման վերահսկողության մասին» Բազելի կոնվենցիայով կարգավորվող ապրանքներ | Շրջակա միջավայրի և անտառային տնտեսության նախարարություն |
| Կենդանի կամ ոչ կենդանի խոզեր, գայլեր, շնագայլեր, աղվեսներ, կզաքիսներ, օձեր, կրիաներ, մողեսներ և դրանցից պատրաստված հագուստ ու հագուստի մասեր | |

Աղբյուր՝ Թուրքական պետական կառավարման մարմինների կողմից տրամադրված տեղեկատվություն

2.1.4. Արտահանման ուղղված լրավճարներ, ֆինանսավորում, աջակցություն և խթանում

Ի լրումն մաքսային և հարկային զիջումների՝ արտահանողների համար կան խթանման մի շարք ծրագրեր, որոնցից մի մասը թերևս կրճատվել է: Առևտրի բազմակողմ բանակցությունների նախորդ փուլի ընթացքում Թուրքիան պարտավորություն էր ստանձնել, սկսած 1995 թվականի հունվարի 1-ից, 10 տարվա ընթացքում գյուղատնտեսական 44 ապրանքների (ԱՀԿ-ի սահմանմամբ) համար արտահանման լրավճարները հավասարաչափ կրճատել 24%-ով՝ արժեքի առումով, և 14%-ով՝ ծավալի առումով: Այժմ գյուղատնտեսական ապրանքների համար արտահանման լրավճարների ծրագրով 16 գյուղատնտեսական և վերամշակված գյուղատնտեսական ապրանքներ ստանում են պարտքի նվազեցումներ՝ հիմնված արտահանվող ապրանքների քանակի տոկոսի վրա:

Թուրքիայի արտահանման վարկավորման բանկը (Թուրքական Էքսիմբանկը) 1987 թվականին հիմնադրված պետական հաստատություն է և Թուրքիայի արտահանման վարկավորմամբ զբաղվող միակ պաշտոնական կառույցը: Էքսիմբանկը գտնվում է Վարչապետարանի կամ վարչապետի կողմից նշանակված այլ նախարարության լիազորության շրջանակում: Դրա ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են Թուրքիայի գանձապետարանի կողմից ուղղակիորեն տրվող միջոցները և առևտրային բանկերից ու միջազգային ֆինանսական շուկաներից պարտքով վերցրած գումարները: Էքսիմբանկի հիմնական նպատակներն են.

- թուրքական արտահանումների ծավալի ավելացումը,
- արտահանման համար նոր շուկաների ձևավորումը,
- միջազգային առևտրում թուրքական արտահանողների տեսակարար կշռի մեծացումը,
- ապրանքների և ծառայությունների արտահանման բազմազանումը և
- թուրքական արտահանողներին, ներդրողներին և արտասահմանյան գործընկերներին աջակցության ցուցաբերումը:

Էքսիմբանկն իր տարեկան ծրագրերը ներկայացնում է Խորհրդատվական և վարկային ուղղորդման գերագույն կոմիտեին, որի նախագահն է բանկի գործունեության համար պատասխանատու Պետնախարարը: Կոմիտեն սահմանում է բանկի կողմից տրամադրվող վարկերի, թողարկվող երաշխավորությունների և ապահովագրական գործարքների համար առավելագույն մակարդակ՝ ընդհանուր գումարով կամ ըստ երկրների, հատվածների և ծրագրերի: Ծրագրերը կարող են վերանայվել, դադարեցվել կամ երկարաձգվել՝ ըստ թուրքական արտահանողների և միջազգային կանոնների պահանջների³⁵: Էքսիմբանկի վարկային ծրագրերի միջոցով ֆինանսական աջակցություն է ստացել Թուրքիայի տարեկան արտահանման ավելի քան 9%-ը³⁶:

Էքսիմբանկն աջակցում է արտահանողներին, արտահանման ուղղվածություն ունեցող արտադրողներին և արտասահմանյան ներդրողներին կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ արտահանման վարկավորման ծրագրերի միջոցով: Ավելին՝ արտահանման սպասվող հասույթի դիմաց ֆինանսավորումը տրվում է ավելի ցածր գնով՝ հետաձգված վճարման պայմաններով վաճառքը խթանելու և արտահանման ծավալն ընդլայնելու համար: Արտահանողների համար կարճաժամկետ ֆինանսական աջակցությունը հասանելի է նախաառաքումային և հետառաքումային փուլերում և տրվում է 360 օրով՝ նոր թուրքական լիրայով վարկերի համար, և 540 օրով՝ արտարժույթով վարկերի համար³⁷: Վարկերը տրամադրվում են թուրքական առևտրային բանկերի կամ անմիջապես Էքսիմբանկի միջոցով: Եթե վարկը տրամադրվում է առևտրային բանկի միջոցով, ապա բանկերը պատասխանատու են վարկառուի ռիսկի համար, իսկ եթե վարկը տրամադրվում է անմիջապես Էքսիմբանկի կողմից, ապա պահանջվում է գրավ կամ երաշխավորություն: Առևտրային բանկերին թույլատրվում է զանձել տարեկան մինչև 1% տարբերավճար (spread)՝ ՆԹԼ-ով վարկերի համար, և 0.5% տարբերավճար՝ արտարժույթով վարկերի համար: 2006 թ. ընդհանուր վարկերի 67%-ը տրվել է առևտրային բանկերի, և 33%-ը՝ Էքսիմբանկի միջոցով: 2006 թվականի վերջի դրությամբ արտահանման կարճաժամկետ վարկերը կազմել էին Էքսիմբանկի ընդհանուր վարկերի 90%-ը: Ըստ ոլորտների տրված վարկերի բաշխվածությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին Էքսիմբանկն առավել շատ վարկ է տվել տեքստիլի բնագավառում գործող կազմակերպություններին, թեպետ այդ թիվն ունի նվազման միտում (գծապատկեր 1): Միևնույն ժամանակ աստիճանաբար աճում է մեքենաներ


³⁵ ԱՅԿ թիվ G/SCM/N/123/TUR փաստաթուղթ, 12.01.2006թ.:

³⁶ 1996 թվականին Էքսիմբանկը վերափոխեց իր կարճաժամկետ վարկային ծրագրերը՝ դրանք «Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին» ԱՅԿ-ի համաձայնագրին համապատասխանեցնելու համար:

³⁷ Նախաառաքումային ֆինանսավորումը պահանջվում է շրջանառու կապիտալը համալրելու համար, մինչդեռ հետառաքումային ֆինանսավորումն անհրաժեշտ է՝ հետաձգված վճարման պայմաններով վաճառք առաջարկելու համար՝ միջազգային շուկաներում մրցակցության պատճառով:

և սարքավորումներ արտադրող/արտահանող կազմակերպություններին տրվող վարկերի թիվը:

Գծապատկեր 1, Էքսիմբանկի կողմից տրված կարճաժամկետ վարկերի բաշխվածությունն ըստ տնտեսության հատվածների, 2003-2007թթ. (%)



Աղբյուր՝ Թուրք էքսիմբանկի ինտերնետային կայք՝ www.eximbank.gov.tr

Էքսիմբանկի ֆինանսական աջակցության միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը մշակվել են հիմնականում կապիտալ ապրանքների արտահանման և այն անմիջական գործարկման ներդրումային նախագծերի համար, որոնք պետք է իրականացվեն թուրքական և Թուրքիայում հաստատված կապալառուների կողմից: Այս ծրագրերի մեծ մասը ֆինանսավորում է տրամադրում Թուրքիայից դուրս գտնվող գնորդների թուրքական ապրանքների կամ ծառայությունների գնումների համար: Բազմաթիվ միջինժամկետ և երկարաժամկետ գործառնությունների (օր.՝ ծրագրի ֆինանսավորման վարկեր) համար էքսիմբանկին ուղղված անկախ երաշխավորությունը եղել է վարկի տրամադրման նախապայման:

Էքսիմբանկը թուրքական արտահանողների, ներդրողների և արտասահմանյան կապալառուների համար առաջարկում է նաև առևտրային և քաղաքական ռիսկերից ապահովագրման մի շարք ծրագրեր: Առևտրային ռիսկերն ապահովվում են էքսիմբանկի սեփական միջոցներով, մինչդեռ քաղաքական ռիսկերը սկզբունքորեն ապահովվում են կառավարության կողմից: Ապահովագրական վճարները տատանվում են 0.19% - 4%-ի սահմանում՝ առևտրային և քաղաքական ռիսկերի համար համատեղ, կամ 0.05% - 4%-ի սահմանում՝ միայն քաղաքական ռիսկերի համար: Ապահովագրական վճարների չափը կախված է գնորդի երկրի ռիսկային խմբից, վճարման ժամկետներից և գնորդի կարգավիճակից (մասնավոր կամ պետական):

Արտահանումների խթանման կենտրոնը, որ գործում է Արտաքին առևտրի ենթաքարտուղարության ենթակայությամբ, արտահանման խթանման հիմնական պետական կազմակերպությունն է: Այն որպես միջնորդ է հանդես գալիս՝ օտարերկրյա ներմուծողների և թուրք արտահանողների միջև գործնական կապեր հաստատելու հարցում: Կենտրոնի գործունեությունը իրականացվում է հինգ հիմնական ուղղություններով՝ հետազոտությունների ու զարգացման վերապատրաստում, առևտրային տեղեկատվություն, հրապարակայնություն ու խթանում, նախագծերի կառավարում և միջազգային հարաբերություններ: Զուգահեռաբար Արտաքին առևտրի ենթաքարտուղարությունը իրականացրել է առևտրային գործուղումներ և գնորդների ծրագրեր՝ սկսած 1995 թվականից: Այս ծրագրերի շուկայական և ուղորտային ընդգրկումը հիմնված է Թուրքիայի արտադրական

և արտահանման կարողությունների, պոտենցիալ շուկաների և առևտրային հնարավորությունների վրա:

ՓՄՁ-ների զարգացման պետական գործակալությունը՝ ստեղծված 1990 թվականին՝ որպես ոչ առևտրային կազմակերպություն, գործում է Արդյունաբերության և առևտրի նախարարությանը կից և ֆինանսավորվում է ընդհանուր բյուջեից: Այն ունի աջակցության մի շարք ծրագրեր՝ ուղղված թուրքական ՓՄՁ-ների մրցունակության բարձրացմանը և դրանց կողմից արտահանման խթանմանը: Գործակալությունը աջակցում է ՓՄՁ-ներին հետևյալ հարցերում՝ ազգային և միջազգային ցուցահանդեսներին մասնակցություն և դեպի արտասահման գործարար այցեր (ֆինանսավորվում է ծախսերի մինչև 50%-ը՝ ընդհուպ մինչև 10,000 ՆԹԼ), արտահանման խթանման վարկեր և սեփական բրենդի ստեղծում: Գործակալությունը ՓՄՁ-ներին տրամադրում է նաև գործարար համապատասխանեցման մոդելներ: Սա մի մեխանիզմ է, որի միջոցով տեղական և արտասահմանյան ՓՄՁ-ները գրանցվում են տվյալների մեկ ընդհանուր բազայում, և այն վարող որակավորված ընկերությունը գնահատում է այդ ՓՄՁ-ների միջև համագործակցության հնարավորությունները:

«Մաքսային միություն ստեղծելու մասին» որոշմամբ ստանձնած պարտավորությունների շրջանակներում Թուրքիան ներդաշնակեցրել է իր օրենսդրությունը ԵՅ-ի օրենսդրությանը՝ պաշտոնական օժանդակություն ստացող արտահանման վարկերի մասով³⁸: Այս նպատակով Թուրքիայում ընդունվել են երկու և ավելի տարի մարման ժամկետով պաշտոնական օժանդակություն ստացող արտահանման վարկերի վերաբերյալ ՏՅՁԿ-ի, այսպես կոչված, «համաձայնեցված» սկզբունքները: Թուրքիայի էքսիմբանկը Բեռնի միության (Արտահանման վարկավորման ապահովագրողների միջազգային միություն) լիիրավ անդամ է և ներկայացնում է Թուրքիան Արտահանման վարկերի և վարկային երաշխավորությունների խմբում և ՏՅՁԿ-ի առևտրի կոմիտեի Մասնակիցների խմբում:

Թուրքիայում կան մի շարք կառույցներ (Արտահանողների միություն, առևտրային պալատներ, Թուրքական էքսիմբանկ, ՓՄՁ-ների զարգացման պետական գործակալություն), որոնց նպատակն է, ի թիվս այլոց, աջակցել արտահանող կամ արտահանման ուղղվածություն ունեցող կազմակերպություններին:

Թուրքական էքսիմբանկի կողմից տրամադրվող վարկերի ծավալն այդքան էլ մեծ չէ, իսկ ըստ ոլորտների բաշխվածությունը վկայում է այն մասին, որ վարկերը տարեցտարի ուղղվում են ավելի տեխնոլոգիական ոլորտներ, այլ ոչ դեպի գյուղատնտեսություն: Ուստի սա չի կարող մեծ վտանգ ներկայացնել Հայաստանի տնտեսության համար:

ՓՄՁ-ների զարգացման պետական գործակալությունն ունի թուրքական ՓՄՁ-ների և արտասահմանյան կազմակերպությունների համագործակցության տվյալների բազա: Այս առումով գործակալության և հայկական համապատասխան պետական կառավարման մարմնի միջև համագործակցությունը կարող է օգտակար լինել նաև Հայաստանում գործող ՓՄՁ-ների սուբյեկտների համար:

2.1.5. Ազատ գոտիներ

Թուրքիայի 20 ազատ գոտիների համար պատասխանատու է Ազատ գոտիների հարցերով գլխավոր տնօրինությունը: Այդ գոտիներում ստեղծված կազմակերպությունները գործում են բազմաթիվ ոլորտներում՝ ներառյալ բարձր տեխնոլոգիական ներդրումները:

Ըստ Ներդրումների ու աշխատատեղերի խրախուսման թիվ 5084 օրենքի՝ մինչև Թուրքիայի ԵՅ-ի անդամ դառնալը եկամտահարկից և կորպորատիվ հարկից ազատվում են միայն արտադրության լիցենզիայի հիման վրա գործող ազատ գոտուց օգտվողները: Ազատ

³⁸ 1995 թվականի դեկտեմբերի 22-ի «Մաքսային միություն ստեղծելու մասին» թիվ 1/95 ԵՅ-Թուրքիա համագործակցության խորհրդի որոշում:

գոտուց այլ օգտվողների համար, որոնք գործունեության լիցենզիա են ստացել նախքան 2004 թվականը, եկամտահարկից ու կորպորատիվ հարկից ազատումը կգործի մինչև նրանց լիցենզիայի գործունեության ավարտը, իսկ աշխատավարձերից եկամտահարկ չի վճարվի մինչև 2009 թվականը: 2004 թվականից հետո գործունեության (ոչ արտադրական) լիցենզիա ստացած ազատ գոտուց օգտվողները չեն ազատվում եկամտահարկից կամ կորպորատիվ հարկից:

Ազատ գոտիների գործունեությունը կարգավորվում է «Ազատ գոտիների մասին» օրենքով³⁹ և «Ազատ գոտիների մասին» կանոնակարգով: Օրենսդրությունը մշակվել է՝ օտարերկրյա ուղղակի ներդրումները և համատեղ ձեռնարկությունների ու արտահանման ուղղվածություն ունեցող կազմակերպությունների ստեղծումը խթանելու, շահավետ պայմաններով հունք ու սարքավորումներ հեշտությամբ ձեռք բերելու համար հնարավորություն ընձեռելու և զբաղվածության մակարդակը բարձրացնելու նպատակով: Ազատ գոտիների ստեղծումը նպաստում է նաև տարածաշրջանային զարգացմանը: Լիցենզիայի ժամկետը կազմում է առավելագույնը 10 տարի՝ վարձակալությամբ աշխատողների համար, և 20 տարի՝ նրանց համար, ովքեր ցանկանում են գոտում իրենց սեփական հիմնարկները կառուցել: Եթե լիցենզիան նախատեսված է արտադրության համար, ապա վարձակալությամբ աշխատողների և ներդրողների համար գործում են համապատասխանաբար 15 և 30 տարի առավելագույն ժամկետները: Տեղական շուկայում վաճառքը թույլատրվում է առանց սահմանափակումների, սակայն դրա նկատմամբ գործում է այն ռեժիմը, որը կիրառվում է նաև միջազգային առևտրի դեպքում (ներառյալ մաքսատուրքերի գանձումը և գործարքի արժեքի 0.5%-ի վճարումը՝ ենթակառուցվածքի ֆինանսավորման համար):

Ազատ գոտիներում գործող կազմակերպությունների համար կան մի շարք ֆինանսական խթաններ: Դրանք ներառում են մաքսատուրքերից ու նման այլ վճարներից, կորպորատիվ հարկից, եկամտահարկից և ավելացված արժեքի հարկից ազատումը, շահույթի փոխանցման նկատմամբ և արտարժույթային գործառնությունների համար սահմանափակումների բացակայությունը: Ներդրողներն ազատ են նաև կառուցելու իրենց անձնական շենքերն ու շինությունները, չնայած ազատ գոտիներում կան գրասենյակային տարածքներ և պահեստներ, որոնք տրվում են վարձակալության մատչելի գներով:

Ըստ «Ազատ գոտիների մասին» կանոնակարգի հոդված 10-ի՝ Պլանավորման գերագույն խորհրդի կողմից պատշաճ համարվող արդյունաբերական, առևտրային և ծառայությունների բոլոր գործառնությունները կարող են իրականացվել ազատ գոտիներում: օֆշորային բանկային և ապահովագրական գործառնությունները, ինչպես նաև մաքսային միջնորդները արգելված են: Ըստ կանոնակարգի հոդված 32-ի՝ հրազենի ու դրա հետ կապված զինամթերքի, ռադիոակտիվ նյութերի, վտանգավոր և թունավոր թափոնների մուտքն ազատ գոտիներ արգելվում է: Մի շարք այլ նյութեր, ինչպիսիք են, օրինակ, պայթուցիկ կամ հրդեհավտանգ նյութերը, կարող են բերվել ազատ գոտիներ միայն այն դեպքում, եթե դրանք անհրաժեշտ են գոտում որևէ շինարարական աշխատանքի համար: Ազատ գոտիներ թմրանյութային, հոգեմետ և նման նյութերի մուտքն ու ելքը կարգավորվում է ազգային և միջազգային օրենքներով, որոնք կիրարկվում են Առողջապահության նախարարության կողմից: Ազգային այն կազմակերպությունները, որոնք ներդրանք կան ծառայություն են մատակարարում ազատ գոտում գործող կազմակերպություններին, չեն օգտվում վերոնշյալ խթաններից:

Ազատ գոտիներում չկա արտասահմանյան կապիտալի մասնակցության որևէ սահմանափակում, և թույլատրվում է կապիտալի 100% հայրենադարձ՝ առանց նախապես դրա համար թույլտվություն ստանալու կամ որևէ հարկ, մաքսատուրք կամ վճար տալու: Չնայած դրան՝ Թուրքիայի ազատ գոտիներում հիմնականում գործում են տեղական կազմակերպություններ: 2007 թ. տվյալներով գոտիներում գործող 3,876 կազմակերպություններից միայն 648-ն են եղել արտասահմանյան (16.7%-ը): Ազատ գոտիների առևտուրը 2002 թ. 11.1\$ մլրդ-ից աճել է մինչև 23.8\$ մլրդ՝ 2006 թ. (աղյուսակ 29): Այս առևտրի զրեթե 40%-ն իրականացվում է ՏՀԶԿ-ի և ԵՅ-ի երկրների հետ:

³⁹ թիվ 3218, 15.06.1985թ.

Աղյուսակ 29, Ազատ գոտիներում առևտուրը, 2002-2006թթ. (մլն \$ ԱՄՆ)

| | 2002 | (%) | 2003 | (%) | 2004 | (%) | 2005 | (%) | 2006 | (%) |
|-------------------------------|---------------|------------|---------------|------------|---------------|------------|---------------|------------|---------------|------------|
| Ազատ գոտիներից տեղական շուկա | 3,729 | 34 | 5,406 | 33 | 7,465 | 34 | 7,888 | 34 | 7,939 | 33 |
| Տեղական շուկայից ազատ գոտիներ | 1,528 | 14 | 2,119 | 13 | 2,882 | 13 | 3,160 | 14 | 3,071 | 13 |
| Այլ երկրներից ազատ գոտիներ | 3,589 | 32 | 5,638 | 34 | 7,520 | 34 | 7,704 | 32 | 7,951 | 34 |
| Ազատ գոտիներից այլ երկրներ | 2,257 | 20 | 3,445 | 21 | 4,243 | 19 | 4,610 | 20 | 4,863 | 20 |
| Ընդհանուր | 11,103 | 100 | 16,608 | 100 | 22,110 | 100 | 23,363 | 100 | 23,824 | 100 |

Ազատ գոտիներում գործող կազմակերպությունների համար սահմանված արտոնությունները կարող են բավականին էժանացնել այդ կազմակերպությունների կողմից թողարկվող արտադրանքը, ինչը կարող է վտանգ ներկայացնել Հայաստանի համար՝ այդ գոտիներից դեպի Հայաստան էժան ապրանքների մեծ հոսքերի դեպքում: Մյուս կողմից՝ Հայաստանի համար լավ հնարավորություն կարելի է համարել այդ գոտիներում արտադրվող ապրանքները, որոնք չեն արտադրվում Հայաստանում:

2.1.6. Այլ միջոցներ

Ըստ թուրքական պետական կառավարման մարմինների ներկայացրած տվյալների՝ Թուրքիան չի մասնակցում արտասահմանյան կառավարությունների կամ կազմակերպությունների առաջարկով կամ խնդրանքով որևէ միջոցառման, որի նպատակն է զսպել կամ վերահսկել դեպի երրորդ երկրներ արտահանումները:

«Թուրքական արժույթի արժեքի պաշտպանության մասին» թիվ 32 որոշման համաձայն՝ արտահանումից ստացված եկամուտները պետք է փոխանցվեն Թուրքիա բանկային համակարգի միջոցով՝ արտահանման պահից 180 օրվա ընթացքում:

Համաձայն «Մրցակցության պաշտպանության մասին» թիվ 4054 օրենքի՝ արտահանման կարտելները բացառություն չեն կազմում կարտելների ընդհանուր արգելումից:

2.1.7. Խթաններ

Խթանման մի շարք ծրագրեր են գործում ներդրումների աջակցության ընդհանուր ծրագրին զուգահեռ: Դրանք ներառում են՝ աջակցություն արտահանողներին (մաքսատուրքերի վճարման արտոնություններ, արտահանման ֆինանսավորում, ապահովագրություն, երաշխավորություն, խթանում և շուկայավարման աջակցություն), աջակցություն գյուղատնտեսական հատվածին, աջակցություն էներգետիկ հատվածին (օրինակ՝ կարծր ածխի արտադրության համար լրավճարներ), աջակցություն ծովային տրանսպորտի հատվածին (հարկային խթաններ) և աջակցություն զբոսաշրջության ոլորտին (ներառյալ ազատում կորպորատիվ հարկից):

Թուրքիայում ներդրումային խթաններ տրվում են Ներդրումների աջակցության ծրագրի (ՆԱԾ) շրջանակներում⁴⁰: ՆԱԾ-ի նպատակն է խրախուսել և ուղղորդել ներդրումները՝ երկրում զարգացման տարածաշրջանային անհամաչափությունները նվազեցնելու և զբաղվածության նոր հնարավորություններ ստեղծելու համար՝ օգտագործելով ավելի բարձր ավելացված արժեքով տեխնոլոգիաներ: ՆԱԾ-ի շրջանակներում աջակցություն ստանալու նպատակով պոտենցիալ ներդրողները պետք է դիմեն ներդրումների խթանման սերտիֆիկատ ստանալու համար: Ի լրումն՝ «Ներդրումների

⁴⁰ 2006թ. օգոստոսի 28-ի թիվ 2006/10921 որոշում, հրապարակված թիվ 26311 պաշտոնական տեղեկագրում, 6.10.2006թ.:

և զբաղվածության խթանման մասին» թիվ 5084 օրենքի համաձայն՝ Թուրքիան էլեկտրաէներգիայի 20-50% ծախսերի չափով աջակցություն է տրամադրում այն ընկերություններին, որոնք հիմնադրվել են մեկ շնչի հաշվով 1 500\$ կամ ցածր ՀՆԱ ունեցող մարզերում և սոցիալապես անապահով զարգացման բացասական ինդեքս ունեցող մարզերում⁴¹:

ՆԱԾ-ով նախատեսված սերտիֆիկատը ստանալու համար ներդրողը պետք է Կենտրոնական բանկի միջոցով 400 ՆԹԼ չափով վճարում կատարի: ՆԱԾ-ով նախատեսված խթանները հետևյալն են.

- սահմանված մաքսատուրքերից և հիմնադրամի վճարներից ազատում ներմուծված այն մեքենաների և սարքավորումների համար, որոնք ներդրումային ծրագրի մաս են կազմում և գտնվում են Գանձապետական ենթաքարտուղարության կողմից հաստատված Մեքենաների և սարքավորումների ցուցակում,
- ներմուծված և զնված տեղական մեքենաների ու սարքավորումների՝ ԱԱՀ-ից ազատում,
- վարկի տոկոսադրույքի որոշ տոկոսային կետերի չափով աջակցություն՝ ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար ներդրողների ստացած առևտրային վարկերի համար,
- էլեկտրաէներգիայի ծախսի աջակցություն՝ զբոսաշրջության բնագավառում ներդրումների և հաստատությունների համար:

ՓՄՁ-ների ներդրումները նույնպես կարող են օգտվել ՆԱԾ-ով նախատեսված խթանման միջոցառումներից⁴²: «Արտահանմանը վերաբերող պետական աջակցության մասին» Նախարարների խորհրդի որոշման⁴³ համաձայն՝ Թուրքիան ունի պետական աջակցության ինը ծրագիր, որոնցից մի քանիսը միայն ՓՄՁ-ների համար են: Այդ ծրագրերն իրականացվում են պետական կառավարման տարբեր մարմինների և կազմակերպությունների կողմից (աղյուսակ 30):

Աղյուսակ 30, Պետական աջակցության ծրագրերի հիմնական բնութագրիչները, 2007 թ.

| Ծրագիր | Նպատակ և շահառուներ | Աջակցություն | Իրագործող կառույցներ |
|---|---|--|---|
| Հետազոտական և զարգացման ծրագրերի համար պետական աջակցություն: | Աջակցել հետազոտական և զարգացման ծրագրեր իրականացնող կազմակերպություններին՝ անկախ դրանց չափից: Համակարգչային ծրագրեր արտադրող բոլոր ընկերությունները: | 1) Հետազոտական և զարգացման գործունեության համար 3 տարով 50% դրամաշնորհ, կամ 2) 2 տարով ցածր տոկոսադրույքով վարկ՝ կապիտալ աջակցության համար (մարվում է ԱՄՆ դոլարով, Լիբոր տոկոսադրույքով՝ գումարած հավելյալ տոկոսը): | Գիտական և տեխնիկական հետազոտության թուրքական խորհուրդ, Տեխնոլոգիաների դիտանցման և գնահատման խորհուրդ, Տեխնոլոգիաների զարգացման թուրքական հիմնադրամ Արտահանողների միություններ |
| Շրջակա միջավայրի պաշտպանության միջոցառումների համար պետական աջակցություն: | ՓՄՁ-ների որակի ապահովման սերտիֆիկացման, բնապահպանական կառավարման համակարգերի և ՇԷ մակնշման հետ կապված ծախսերի ֆինանսավորում: Բոլոր արդյունաբերական և համակարգչային ծրագրերի ՓՄՁ: | Համապատասխան սերտիֆիկացման ծախսերի 50%: | |
| Ցուցահանդեսներին մասնակցելու համար պետական աջակցություն: | Բարձրացնել արտասահմանում ցուցահանդեսներին մասնակցության աստիճանը և խթանել թուրքական արտահանումները: Ընկերություններ, արտաքին ոլորտային առևտրի ընկերություններ, արտադրողների | 1) մասնակցության վճարի 50% (ազգային մասնակցության դեպքում), 2) դատարկ ստենդի վարձակալության և տրանսպորտային ծախսերի 50% (անհատական մասնակցության դեպքում) | Արտահանողների միություններ |

⁴¹ Տե՛ս ԱՀԿ թիվ G/SCM/N/123/TUR փաստաթուղթ, 12.01.2006թ.:

⁴² ՓՄՁ-ները բնորոշվում են որպես կազմակերպություններ, որոնք ունեն 250-ից պակաս աշխատող և 25 ՆԹԼ մլն-ը չզերազանցող տարեկան զուտ վաճառք կամ ակտիվների տարեկան հաշվեկշիռ (2005թ. նոյեմբերի 19-ի թիվ 2005/9617 որոշում):

⁴³ 1994 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 6401 որոշում:

| Ծրագիր | Նպատակ և շահառուներ | Աջակցություն | Իրագործող կառույցներ |
|--|--|--|--|
| Միջազգային մասնակցությամբ տեղական ցուցահանդեսներ կազմակերպելու համար պետական աջակցություն: | կազմակերպություններ: Խթանել մուրքիայում միջազգային ցուցահանդեսների կազմակերպումը և նպաստել միջազգային մասնակցությամբ: Թուրքիայում միջազգային ցուցահանդեսներ կազմակերպող ընկերությունները: | Խթանման միջոցառումների 50%, արտասահմանյան ընկերությունների ներկայացուցիչների տրանսպորտային ծախսերի 50%, ցուցահանդեսների ժամանակ միջոցառումների ծախսերի 50%: | Արտահանողների միություններ: |
| Շուկայի ուսումնասիրության համար պետական աջակցություն: | Ստեղծել արտահանման նոր շուկաներ: Ընկերություններ, արտաքին ոլորտային առևտրի ընկերություններ, արտադրողների կազմակերպություններ: | Շուկաների ուսումնասիրության նախագծերի, հաշվետվությունների և վիճակագրության գնումներ: Արտասահմանում առևտրական առաքելությունների մասնակցող ընկերությունների համար և արտասահմանում ապրանքների շուկայահանման նպատակով B2B ինտերնետային կայքերի անդամ դառնալու համար Ֆինանսական աջակցություն: | Արտահանման խթանման կենտրոն և արտահանողների միություններ: |
| Արտասահմանում խանութներ գործարկելու համար պետական աջակցություն: | Խթանել արտասահմանում խանութ ունեցող ընկերություններին: Ընկերություններ և արտաքին ոլորտային առևտրի ընկերություններ: | Արտասահմանում խանութ ունեցող ընկերությունների գովազդի, վարձակալության, գրասենյակային գույքի և ձևավորման ծախսերի 50%: | Արտահանողների միություններ: |
| Արտաքին ոլորտային առևտրի ընկերություններում զբաղվածությունը խթանելու համար պետական աջակցություն: | Խթանել զբաղվածությունը: Արտաքին ոլորտային առևտրի ընկերություններ: | Մեկ կառավարչի և երկու մասնագիտացված աշխատողի չհարկված աշխատավարձի 75%, մեկ տարով: | Արտաքին առևտրի հարցերով ենթաքարտուղարություն: |
| Մասնագիտական վերապատրաստման համար պետական աջակցություն: | Աջակցել միջազգային առևտրական գործարարությամբ զբաղվող ընկերություններին՝ առևտրային վերապատրաստման և խորհրդատվության հարցերում: | 1) Թեմաներն են՝ որակ, արտադրողականություն, կառավարում, դիզայն, միջազգային շուկայաբանություն և միջազգային առևտրային գործառնություններ 2) Մինչև 6 ամիս տևողությամբ ծրագրերի ծախսերի 90% 3) Մինչև 1 տարի խորհրդատվական ծառայությունների ծախսերի 75%: 4) Ընտրված դիզայներների մեկ տարվա ուսման ծախսեր | Արտահանման խթանման կենտրոն և արտահանողների միություններ: |
| Թուրքական ապրանքանիշերը խթանելու և թուրքական ապրանքների հեղինակությունը բարձրացնելու համար պետական աջակցություն: | Աջակցել բրենդի ստեղծմանը և շուկայական դիրքի հաստատման միջոցառումներին, ինչպես նաև արտասահմանում շուկայավարման գործունեությանը: Ընկերություններ և արտաքին ոլորտային առևտրի ընկերություններ: | խորհրդատվական վճարների, վարձակալության, գովազդի, սերտիֆիկացման ծախսերի և ապրանքանիշերի գրանցման համար վճարների 50%: | Արտահանողների միություններ և Արտաքին առևտրի հարցերով ենթաքարտուղարություն: |

Թուրքիան առաջարկում է նաև աջակցության հինգ լրացուցիչ ծրագրեր: Տարածաշրջանների զարգացման նպատակով կազմակերպված արդյունաբերական գոտիներին առաջարկվում է սուբսիդավորված արդյունաբերական տարածքներ, ենթակառուցվածքներ՝ նարառյալ տրանսպորտային ու հաղորդակցման միջոցները, և սուբսիդավորված վարկեր: «Կազմակերպված արդյունաբերական գոտիների մասին» օրենքով⁴⁴ սահմանվում են այդ գոտիների ստեղծման, կառուցվածքի և կառավարման հիմնադրույթները: Արդյունաբերական տարածքների չափերը տատանվում են 4 000-ից 70 000 քառակուսի մետրի միջև: Դրանք վաճառվում են արդյունաբերողներին հողի և ենթակառուցվածքի գնով՝ առանց շահույթ հետապնդելու: Պետք է կատարվի նախնական վճարում՝ արդյունաբերական տարածքի 10%-25%-ի չափով, իսկ մնացած գումարը պետք է վճարվի չորսից տասը տարվա ընթացքում: Արդյունաբերության և առևտրի

⁴⁴ Թիվ 4562 օրենք՝ հրապարակված 2000 թվականի ապրիլի 15-ի պաշտոնական տեղեկագրում:

նախարարությունը վճարում է ենթակառուցվածքի վրա կատարվող ծախսերի մինչև 99%-ը՝ պայմանավորված տարածաշրջանի զարգացման մակարդակով: Վարկային տոկոսադրույքը տատանվում է 10% - 20%-ի միջև, իսկ ժամկետայնությունը՝ 9-ից 15 տարի՝ նույնպես պայմանավորված տարածաշրջանի զարգացման աստիճանով: 1962 թվականին դրանց հիմնադրումից ի վեր ստեղծվել են կազմակերպված արդյունաբերական 93 գոտիներ: 2003-2006 թվականների ընթացքում տրված վարկերի ընդհանուր ծավալը կազմել էր 175,9\$ մլն:

1965 թ. մեկնարկած փոքրամասշտաբ արդյունաբերական շենքերի/շինությունների ծրագրով 2003-2006 թթ. ընթացքում տրամադրվել է 103,9\$ մլն վարկ՝ ուղղված սանիտարական պայմաններով ժամանակակից արհեստանոցների կառուցմանը: 2006 թվականի վերջի դրությամբ կառուցվել էին 403 շենքեր/շինություններ և 88025 արհեստանոցներ: Հիմնական ոլորտներն են՝ ավտոմեքենաների վերանորոգման աշխատանքները, մետաղի հետ կապված արտադրությունը և փայտամշակման արդյունաբերությունը: Տարածաշրջանային զարգացման անհրաժեշտությունից ելնելով՝ այդ շինություններին կարող են տրամադրվել նաև ենթակառուցվածքային միջոցներ և սուբսիդավորված վարկեր: Վարկերի տոկոսադրույքը տատանվում է 10% - 20%-ի միջև, իսկ մարման ժամկետը 11 տարի է՝ մեկ տարի արտոնյալ ժամանակահատվածով:

ՓՄՁ-ների արդյունավետությունը բարձրացնելու և ընդհանուր արտադրության մեջ դրանց ծավալը մեծացնելու նպատակով ՓՄՁ-ների զարգացման պետական գործակալությունը մատուցում է ծառայություններ՝ կապված արտադրության, շուկայաբանության, որակի վերահսկողության, մեքենաների և սարքավորումների հետ առնչվող աջակցության, տեխնոլոգիական զարգացման, վերապատրաստման և տեղեկատվության հետ: Գործակալությունն ունի նաև մի շարք ծրագրեր՝ ուղղված թուրքական ՓՄՁ-ների արտահանումների բարելավմանը:

«Տեխնոլոգիական զարգացման գոտիների մասին» օրենքը⁴⁵ խթանում է տեխնոլոգիական զարգացման գոտիներում բարձր/առաջատար տեխնոլոգիաների օգտագործումը և տեխնոլոգիաների կամ համակարգչային ծրագրերի մշակումն ու արտադրությունը, ինչպես նաև հետազոտական և զարգացման հարակից կարողությունները՝ համալսարանների, հետազոտական ինստիտուտների և արտադրողների միջև համագործակցության միջոցով: Ի թիվս այլոց՝ Ֆինանսական աջակցություն է տրվում հողի զմնան, ենթակառուցվածքի և վարչական շենքերի կառուցման համար: Մինչև 2013 թ. գործում են եկամտահարկից և կորպորատիվ հարկից ազատումներ: Գոտիներում աշխատող հետազոտողները, համակարգչային ծրագրերի ճարտարագետները և հետազոտական ու զարգացման աշխատակազմը ևս ազատված են բոլոր տեսակի հարկերից մինչև 2013 թ.:

«Արդյունաբերական գոտիների մասին» օրենքը⁴⁶ նպատակ ունի խրախուսել տեղական և օտարերկրյա ներդրումները՝ առաջարկելով մի շարք խթաններ և ներդրողների համար վերացնելով բյուրոկրատական քաջքշուկները: Արդյունաբերական գոտիները ստեղծվում են Նախարարների խորհրդի կողմից՝ Արդյունաբերության և առևտրի նախարարության առաջարկության հիման վրա: Դրանք ստեղծվում են Արդյունաբերական գոտիների հարցերով համակարգող կոմիտեի սահմանած վայրերում: Նախարարությունը ֆինանսավորում է հողատարածքի ձեռքբերումը և արդյունաբերական գոտիների կառուցման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի նախապատրաստումը: Նախարարների խորհուրդը, հիմնվելով ներդրումների խթանման մասին որոշումների վրա, սահմանում է այն խթանները, որոնք կկիրառվեն արդյունաբերական գոտիներում:

⁴⁵ 2001 թվականի հունիսի 26-ի թիվ 4691 օրենք:

⁴⁶ Թիվ 4737 օրենք՝ հրապարակված 2002 թ. հունվարի 19-ի պաշտոնական տեղեկագրում:

Թուրքիայում կան ներդրումների խթանման բազմաթիվ ծրագրեր, որոնց զգալի մասը ուղղված է արտահանման ուղղվածություն ունեցող ընկերությունների զարգացմանը: Դրանցով տրամադրվող հնարավորություններից արդյունավետ կերպով օգտվելու դեպքում թուրքական կազմակերպությունները (հատկապես ՓՍՁ-ները) կարող են զգալիորեն նվազեցնել իրենց գործառնական ծախսերը և, հետևաբար, ավելի մրցունակ լինել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:

Ավելին՝ ներդրումային մի շարք ծրագրեր ուղղված են տարածաշրջանային անհամաչափ զարգացումը հարթելուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիայի արևելյան շրջաններն իրենց զարգացման մակարդակով բավականին զիջում են արևմտյան շրջաններին, ուրեմն պետական աջակցության և արտոնությունների զգալի մասը կուղղվի նաև Հայաստանի հետ սահմանամերձ շրջաններին:

2.1.8. Պետական սեփականություն հանդիսացող կազմակերպություններ և մասնավորեցում

Վերջին տարիներին Թուրքիայում նվազել է պետական հատվածի ազդեցությունը տնտեսության վրա՝ հիմնականում պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների (ՊՍՁ) մասնավորեցման միջոցով: Թուրքիայում ոչ ֆինանսական ՊՍՁ-ները բաժանվում են երկու խմբի՝ պետական տնտեսական ձեռնարկություններ, որոնք գործում են այնպիսի հատվածներում, որտեղ հնարավոր է մրցարցություն, և պետական տնտեսական հաստատություններ՝ մենաշնորհային կազմակերպություններ, որոնք ունեն որոշակի հատուկ իրավունքներ դրանց գործունեության բնագավառում: Որոշ ՊՍՁ-ներ (աղյուսակ 31) բազմաթիվ ոլորտներում դեռ ունեն մենաշնորհի կարգավիճակ կամ բացառիկ իրավունք (օր.՝ բանկային գործունեություն, տրանսպորտ, գյուղատնտեսական վերամշակում և էներգետիկա) և աշխատում են վնասով, որը հատուցվում է բյուջետային փոխանցումներով: Այդ պատճառով Թուրքիան իրականացնում է մասնավորեցման ընդգրկում ծրագիր՝ նպատակ ունենալով նվազեցնել ՊՍՁ-ների ֆինանսական բեռը բյուջեի վրա, խթանել զբաղվածությունը, ապահովել կայուն զարգացումը և շուկայական սզբունքների վրա գործող և մրցակցային արտադրական համակարգը՝ մինևույն ժամանակ ապահովելով ԵՀ-ի նախաանդամակցային տնտեսական չափանիշներին համապատասխանությունը:

Աղյուսակ 31, Պետական սեփականությամբ որոշ կազմակերպություններ, 2007թ.

| Պետական կազմակերպություն | Գործունեության ոլորտ | Պետական մասնակցություն |
|-------------------------------|--------------------------------|------------------------|
| Արդյունաբերություն | | |
| MKEK | Մեքենաներ և քիմիական արտադրանք | 100.00% |
| DMO | Գրասենյակային իրեր | 100.00% |
| SUMER HALI | Չեռագործ խալիներ | 100.00% |
| SUMER HOLDING | Տեքստիլ | 100.00% |
| TDCI | Երկաթե հունք | 100.00% |
| Հանքարդյունաբերություն | | |
| ETI MADEN ISLETMELERI | Հանքարդյունաբերություն | 100.00% |
| TTK | Ածխի արդյունաբերություն | 100.00% |
| TKI | Լիգնիտի արդյունաբերություն | 100.00% |
| KBI | Պղինձ | 100.00% |
| Էլեկտրաէներգիա | | |
| TEIAS | Էլեկտրաէներգիայի փոխանցում | 100.00% |
| EUAS | Էլեկտրաէներգիայի արտադրություն | 100.00% |

| Պետական կազմակերպություն | Գործունեության ոլորտ | Պետական մասնակցություն |
|---|--|------------------------|
| TETAS | Էլեկտրաէներգիայի պայմանագրում և մեծածախ վաճառք | 100.00% |
| TEDAS | Էլեկտրաէներգիայի բաշխում և մանրածախ վաճառք | 100.00% |
| TEMSAN | Էլեկտրամեխանիկական սարքավորումներ | Դուստր ձեռնարկություն |
| YENIKÖY ELEKTRİK ÜRETİM | Էլեկտրաէներգիայի արտադրություն | 100.00% |
| KEMERKÖY ELEKTRİK ÜRETİM | Էլեկտրաէներգիայի արտադրություն | 100.00% |
| YATAĞAN ELEKTRİK ÜRETİM | Էլեկտրաէներգիայի արտադրություն | 100.00% |
| Նավթամթերք | | |
| TPAO | Հանքային նավթի որոնողական աշխատանքներ և արտադրություն | 99.98% |
| BOTAS | Հանքային նավթի փոխադրում և բնական գազի ներմուծում, փոխադրում, բաշխում և վաճառք | 100.00% |
| PETKİM | Նավթային քիմիական արտադրանք | 61.32% |
| Գյուղատնտեսություն | | |
| TSFAS | Շաքարի վերամշակում | 99.99% |
| TMO | Հողային ապրանքներ | 100.00% |
| CAYKUR | Թեյի վերամշակում | 100.00% |
| TEKEL | Ծխախոտ | 100.00% |
| EBK | Մսեղենի, ձկնեղենի վերամշակում | 100.00% |
| Տրանսպորտ | | |
| TCDD | Երկաթուղային ծառայություններ | 100.00% |
| TUDEMİSAS | Երկաթուղային փոխադրման սարքավորումներ | Դուստր ձեռնարկություն |
| TULOMİSAS | Երկաթուղային փոխադրման սարքավորումներ | Դուստր ձեռնարկություն |
| TUVASAS | Երկաթուղային փոխադրման սարքավորումներ | Դուստր ձեռնարկություն |
| DHMI | Օդանավակայանների վարչարարություն | 100.00% |
| KIYEM | Մերձափնյա անվտանգություն | 100.00% |
| TDI | Նավահանգիստների վարչարարություն | 100.00% |
| THY | Օդային ուղիներ | 49.12% |
| Հաղորդակցություն | | |
| PTT | Փոստ, հեռագիր | 100.00% |
| TURK TELEKOM | Հեռահաղորդակցություն | 45.00% |
| TURKSAT | Վրբանյակային հեռահաղորդակցություն և մալուխային հեռուստատեսություն | 100.00% |
| Բանկային ոլորտ | | |
| TC ZIRAAT BANKASI | Բանկային գործունեություն (գյուղատնտեսության աջակցության վարկեր) | 100.00% |
| T. HALKBANKASI A.S. | Բանկային գործունեություն | 74.98% |
| T.KALKINMA.BANKASI A.S. | Բանկային գործունեություն (զարգացում) | 99.08% |
| T. İHRACAT KREDİ BANKASI A.S. (T. EXİMBANK) | Բանկային գործունեություն (արտահանման վարկեր) | 100.00% |
| T. VAKIFLAR BANKASI T.A.O. | Բանկային գործունեություն | 58.64% |

Թուրքիայի մասնավորեցման ծրագիրը, որը մեկնարկել է 1984 թվականին, ներառում է ոչ միայն կազմակերպությունների վաճառքը, այլև դրանց նախապես վերակառուցումը՝ «Մասնավորեցման մասին» օրենքի⁴⁷ համաձայն: Մասնավորեցման համար պատասխանատու հիմնական երկու մարմիններն են Մասնավորեցման բարձրագույն խորհուրդը (նախագահում է վարչապետարանը), որը որոշում է մասնավորեցման ցուցակում ընդգրկվող կազմակերպությունները, և Մասնավորեցման վարչարարությունը, որն

⁴⁷ Թիվ 4046 օրենք

իրականացնում է ծրագիրը: Այնուամենայնիվ, պետական որոշ կազմակերպությունների մասնավորեցումն իրականացվում է համապատասխան նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների հետ համատեղ: Բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության գործակալությունը մասնակցում է պետական բանկերի մասնավորեցմանը, և Մրցութային անկախ կոմիտեն մասնակցում է թուրքտելեկոմի մասնավորեցմանը: Ի լրումն՝ մասնավորեցման որոշ գործընթացներ դիտանցվում են նաև Մրցակցության պաշտպանության մարմնի կողմից:

1984-2007 թվականների ընթացքում 244 կազմակերպությունների պետական բաժնեմասը ներառվել է մասնավորեցման փաթեթի մեջ: 2007 թվականից այս կողմ 22 անավարտ կայաններ, 6 վճարովի ավտոճանապարհներ, Բոսֆորի նեղուցի 2 կամուրջներ, 6 նավահանգիստներ, 393 միավոր անշարժ գույք և 29 էլեկտրակայաններ ներառվել են մասնավորեցման փաթեթի մեջ: Պետությունը այլևս չի մասնակցում մի շարք այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ցեմենտը, անասնակերը, կաթի վերամշակումը և օդանավակայաններում սպասարման ծառայությունները: Մասնավորեցված բաժնեմասի ավելի քան 50%-ը եղել է տուրիզմի, երկաթի և պողպատի, տեքստիլի, ծովային փոխադրումների և մսի վերամշակման ոլորտներում⁴⁸:

Խոշոր հաստատությունների մասնավորեցումը սկսվել է 2004-2005 թվականներին: Այդ ժամանակից սկսած՝ մասնավորեցված հիմնական պետական կազմակերպություններն են եղել Թուրքտելեկոմը (բաժնեմասի 55%-ը վաճառվեց 5.5€ մլրդ-ով), TUPRAS-ը (51%-ը՝ 3.5€ մլրդ-ով), Erdemir-ը (49.29%-ը՝ 2.5€ մլրդ-ով), Ataturk օդանավակայանը (15.5 տարվա օգտագործման իրավունքը՝ 2.5€ մլրդ-ով), Vakiflar Bankasi-ն (25.18%-ը՝ 1.1€ մլրդ-ով), Eti Aluminium-ը (99.99%-ը՝ 255€ մլն-ով), Petkim-ը (34.5%-ը՝ 234€ մլն-ով) և THY-ը (28.75%-ը՝ 173€ մլն-ով): Մասնավորեցման եկամուտները, ըստ պարտավորությունների, 2005 և 2006 թվականներին կազմել են համապատասխանաբար 10.4€ և 6.7€ մլրդ՝ 1986-2002 թվականների 10€ մլրդ փաստացի եկամուտների համեմատությամբ:

Չորս դեղորայքային ապրանքներ (Ներդաշնակեցված համակարգի 4 նիշ մակարդակով)՝ քինակեդևը, potassium iodide-ը, քինայի ալկալոյիդներն ու դրանցից ստացված ածանցյալ նյութերը (quinidine) և primaquine diphosphate-ը շարունակում են ներմուծվել միայն Թուրքիայի Կարմիր Կիսալունսի կողմից, որը Թուրքիայում գործող երկու պետական առևտրային ձեռնարկություններից մեկն է, իսկ մյուսը TEKEL-ն է⁴⁹:

Թուրքիան նախաձեռնել է մասնավորեցման լայնածավալ և ընդգրկուն ծրագիր: Վերջին տարիներին մասնավորեցման տեմպերը կտրուկ աճել են: Սա բխում է նաև Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցության շրջանակներում ստանձնած պարտավորություններից: Մասնավորեցման նման ընթացքը ենթադրում է, որ պետության միջամտությունը Թուրքիայում շուկայական գործընթացներին շուտով կտրուկ կնվազի, ինչը կարելի է դրական երևույթ համարել հայ-թուրքական սահմանի վերաբացման համատեքստում: Սակայն մյուս կողմից՝ որոշ ոլորտներում (օր.՝ տեքստիլ, գյուղատնտեսություն) մասնավորեցվող կազմակերպությունների՝ թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկաներում մրցունակության բարձրացումը կարող է մտահոգիչ լինել հայկական արտադրողների համար:

2.1.9. Մրցակցության պաշտպանության քաղաքականություն և գնային կարգավորում

«Մրցակցության պաշտպանության մասին» օրենքը⁵⁰ ապրանքների և ծառայությունների շուկայում մրցակցության պաշտպանության վերաբերյալ հիմնական իրավական ակտն է: Դրա հիմնական նպատակն է Թուրքիայում ստեղծել արդյունավետ մրցակցային միջավայր:

⁴⁸ Մասնավորեցման վարչարարության ինտերնետային կայք - <http://www.oib.gov.tr/yayinlar/publications.htm>.

⁴⁹ ԱՂԿ թիվ G/STR/N/11/TUR փաստաթուղթ, 15.12.2006թ.:

⁵⁰ Թիվ 4054 օրենք՝ հրապարակված 1994 թվականի դեկտեմբերի 12-ի պաշտոնական տեղեկագրում:

Մրցակցության պաշտպանության վերաբերյալ թուրքական օրենսդրությունը կարգավորում է խնդիրների երեք հիմնական խումբ.

- համաձայնություններ, որոշումներ և գործելակերպ, որոնք կամ խոչընդոտում են մրցակցությանը, կամ խաթարում, կամ սահմանափակում են այն,
- գերիշխող դիրքի չարաշահում և
- համակենտրոնացումներ և կազմակերպությունների ձեռքբերումներ, որոնք խաթարում են շուկայի մրցակցային կառուցվածքը:

Համաձայն օրենքի հոդված 4-ի՝ բոլոր համաձայնությունները, որոնք խաթարում, սահմանափակում կամ կանխում են մրցակցությունը, արգելված են՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Մրցակցության պաշտպանության խորհուրդը բացառություն է շնորհում: Բացառությունները շնորհվում են խորհրդի կողմից, եթե համաձայնությունները՝

- տեխնիկական կամ տնտեսական իմաստով խթանում կամ ընդլայնում են որոշ ապրանքների կամ ծառայությունների արտադրությունը,
- շահավետ են սպառողի համար,
- չեն վերացնում մրցակցությունը շուկայի նշանակալի հատվածում,
- չեն սահմանափակում մրցակցությունն ավելի, քան անհրաժեշտ է՝ առաջին երկու նպատակներին հասնելու համար⁵¹:

Ցանկացած գործելակերպ, որն ազդում է Թուրքիայի շուկայի վրա, հանդիսանում է այս օրենքի կարգավորման առարկա՝ ներառյալ թուրքական և օտարերկրյա ընկերությունների միջև և, նույնիսկ, օտարերկրյա ընկերությունների միջև համաձայնությունները, անգամ եթե դրանք կայացվել են Թուրքիայից դուրս: Բացառությամբ բանկային ոլորտում որոշ տեսակի համակենտրոնացումների կարգավորմանը՝ բոլոր հատվածներն այս օրենքով կարգավորվում են նույն կերպ:

1997 թվականից օրենքի կիրարկման համար պատասխանատու է Մրցակցության պաշտպանության մարմինը (ՄՊՄ): ՄՊՄ-ում որոշումները կայացվում են յոթ հոգուց բաղկացած խորհրդի կողմից: ՄՊՄ-ի բյուջեն ձևավորվում է ընկերությունների կապիտալի ավելացման 0.04% տուրքերից: ՄՊՄ-ն կարող է տեղեկատվություն պահանջել բոլոր պետական մարմիններից, ձեռնարկություններից և ձեռնարկությունների միություններից, կատարել ստուգումներ ձեռնարկություններում և ձեռնարկությունների միություններում, իրականացնել քննություններ և սահմանել տույժեր:

Թեպետ հակամրցակցային համաձայնությունները Թուրքիայում արգելված են, Մրցակցության պաշտպանության մարմնի խորհուրդն իրավասու է մի շարք դեպքերում թույլատրել այդ համաձայնությունները, ինչը կարող է չարաշահումների առարկա հանդիսանալ և վտանգավոր լինել հայ տնտեսվարող սուբյեկտների համար:

Մրցակցության պաշտպանության մարմինը մեծ դեր է ունեցել թուրքական տնտեսությունը մրցակցության վրա հիմնված և սպառողների բարեկեցության կողմնորոշում ունեցող շուկայական մեխանիզմներին մոտեցնելու գործում⁵²: Ավելին՝ մրցակցության պաշտպանության մարմինը ձգտում է բարելավել Թուրքիայի կարգավորող այլ մարմինների, օրինակ՝ Հեռահաղորդակցության մարմնի և էներգետիկ շուկայի կարգավորման մարմնի հետ համակարգումը (ադյուսակ 32): Մրցակցության պաշտպանության մարմինը համագործակցել է նաև Մասնավորեցման վարչության հետ՝ պետական սեփականություն հանդիսացող մի շարք ձեռնարկությունների մասնավորեցման ուղղությամբ⁵³: Թուրքիայում մրցակցության պաշտպանության օրենսդրության և քաղաքականության առավել կարևոր

⁵¹ Competition Authority online information. Viewed at: <http://www.rekabet.gov.tr/word/ekanun.doc>.

⁵² OECD (2005b).

⁵³ Մասնավորեցման վարչության ինտերնետային կայք - <http://www.oib.gov.tr/yayinlar/publicatio ns.htm>:

խնդիրներն են պետական աջակցության վերահսկողության մեխանիզմի բացակայությունը և այն հանգամանքը, որ մի շարք ՊՍԿ-ների մենաշնորհային կարգավիճակ կամ հակամրցակցային առավելություններ են շնորհված⁵⁴:

Աղյուսակ 32, Թուրքիայում գործող անկախ կարգավորող մարմիններ

| Հաստատություն | Հատված | Խնդիր |
|---|--|---|
| Կապիտալի շուկայի խորհուրդ | Կապիտալի շուկաներ | Պաշտպանել և վերահսկել կապիտալի շուկաները և պաշտպանել ներդրողների իրավունքներն ու շահերը: |
| Ռադիոյի և հեռուստատեսության գերագույն խորհուրդ | Ռադիո և հեռարձակում | Կարգավորել ռադիո և հեռահաղորդակցության ոլորտը: |
| Մրցակցության պաշտպանության մարմին | Վարանքների և ծառայությունների շուկաներ (բոլոր հատվածները) | Արգելել մրցակցությունը սահմանափակող համաձայնությունների, որոշումների ու համաձայնեցված գործելակերպի և մեկ կամ մեկից ավելի ձեռնարկությունների կողմից գերիշխող դիրքի չարաշահումը, կարգավորել համակենտրոնացումներն ու ձեռքբերումները, ձևավորել մրցակցային մշակույթ՝ որպես մրցակցության պաշտպանության դերի մի մաս: |
| Բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության գործակալություն | Բանկային ոլորտ | Պաշտպանել ավանդատուների իրավունքներն ու շահերը, սահմանել սկզբունքներ բանկերի հիմնադրման, կառավարման, գործունեության, ձեռքբերման, համակենտրոնացման, լուծարման և վերահսկողության վերաբերյալ՝ վարկային համակարգի արդյունավետ գործունեության ապահովման համար՝ հաշվի առնելով տնտեսական զարգացման տարրերը և ֆինանսական շուկայում վստահությունն ու կայունությունը: |
| Հեռահաղորդակցության մարմին | Հեռահաղորդակցություն | Ձևավորել արդար մրցակցության վրա հիմնված դիմամիկ և հզոր շուկա, նպաստել հատվածային քաղաքականության մշակման գործընթացին, ձեռնարկել միջոցառումներ՝ սպառողների իրավունքները պաշտպանելու ուղղությամբ, ապահովել ոլորտում սակավաթիվ ռեսուրսների (ինչպիսիք են հաճախականություններն ու համարները) արդյունավետ օգտագործումը: |
| Էներգետիկ շուկայի կարգավորման մարմին | Էլեկտրաէներգիա Բնական գազ Նավթ Հեղուկացված նավթային գազ (ՀՆԳ) | Ձևավորել էլեկտրաէներգիայի ֆինանսապես ամուր, կայուն և թափանցիկ շուկա, որը կգործի մրցակցային միջավայրում՝ բավարար, կատարելագործված, շարունակական և շրջակա միջավայրին վնաս չհասցնող էլեկտրաէներգիա և բնական գազ մատակարարելու համար: Ապահովել շուկայում անկախ կարգավորումն ու վերահսկողությունը: Կարգավորել նավթի և ՀՆԳ-ի մատակարարման հարցում ուղղորդման, դիտանցման և վերահսկողության միջոցառումները՝ տեղական և արտասահմանյան ռեսուրսներից սպառողներին թափանցիկ, ոչ խտրական և կայուն մատակարարում ապահովելու համար՝ ուղղակիորեն կամ քիչ ծախսատար եղանակով վերամշակելուց հետո: |
| Շաքարի համար պատասխանատու մարմին | Շաքար, օսլայի հիմքով քաղցրացուցիչներ | Կարգավորել շաքարի վերաբերյալ ռեժիմը՝ շաքարի արտադրության համար ընթացակարգերի ու սկզբունքների և շուկայահանման պայմանների ու մեթոդների մշակման միջոցով: |
| Ծխախոտի, ծխախոտային ապրանքների և ալկոհոլային խմիչքների շուկայի կարգավորման մարմին | Ծխախոտ, ծխախոտային ապրանքներ և ալկոհոլային խմիչքներ | Կարգավորել ծխախոտի և ծխախոտային ապրանքների արտադրության, տեղական և արտաքին առքի ու վաճառքի հետ կապված ընթացակարգերն ու սկզբունքները |
| Պետական գնումների մարմին | Բոլոր պետական հաստատությունները | Հատկորոշել պետական գնումներում կիրառվող ընթացակարգերն ու սկզբունքները, դիտարկել պետական գնումներին առնչվող բոլոր բողոքները |

⁵⁴ OECD (2005b).

2000-ից 2006 թթ. Մրցակցության պաշտպանության մարմնի կողմից դիտարկվել են 1,633 դեպքեր, որոնցից 99%-ը լուծվել են (աղյուսակ 33): Համակենտրոնացումներն ու ձեռքբերումները կազմել են լուծված դեպքերի 54.1%-ը, որոնց հետևել են մրցակցության խախտումները (29.9%) և բացառություններն /տվյալ գործելակերպը թեև խախտում է օրենքի որևէ դրույթ, սակայն որոշվում է, որ այդ դրույթը կիրառելի չէ տվյալ դեպքի համար/ ու հերքումները /հաստատվում է, որ տվյալ գործելակերպը չի խախտում օրենքի որևէ դրույթ/ (16%):

Աղյուսակ 33, Մրցակցության պաշտպանության մարմնի կողմից դիտարկված դեպքերը

| | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | Ընդհ. |
|--|------|------|------|------|------|------|------|--------------|
| Մրցակցության խախտումներ | | | | | | | | |
| Քննություններ | 43 | 44 | 55 | 70 | 78 | 84 | 108 | 482 |
| Լուծված դեպքեր | 40 | 40 | 53 | 54 | 91 | 97 | 108 | 483 |
| Համակենտրոնացումներ/ձեռքբերումներ | | | | | | | | |
| Քննություններ | 102 | 81 | 110 | 113 | 118 | 164 | 199 | 887 |
| Լուծված դեպքեր | 100 | 86 | 103 | 106 | 122 | 170 | 186 | 873 |
| Հերքում/բացառություն | | | | | | | | |
| Քննություններ | 27 | 21 | 29 | 44 | 62 | 45 | 36 | 264 |
| Լուծված դեպքեր | 11 | 27 | 26 | 36 | 76 | 50 | 33 | 259 |
| Ընդհանուր | | | | | | | | |
| Քննություններ | 172 | 146 | 194 | 227 | 258 | 293 | 343 | 1,633 |
| Լուծված դեպքեր | 151 | 153 | 182 | 196 | 289 | 317 | 327 | 1,615 |

Որոշ ապրանքներ, ինչպիսիք են էներգիան և ծառայությունները (հիմնականում կոմունալ ծառայությունները), ենթակա են գնային վերահսկողության: Էլեկտրաէներգիայի հաղորդման, բաշխման և մեծածախ վաճառքի (պետական սեփականություն հանդիսացող մեծածախ վաճառքի ընկերություն TETAS-ի), ինչպես նաև «ոչ իրավասու սպառողների» համար մանրածախ վաճառքի սակագները ենթակա են էներգետիկ շուկայի կարգավորման մարմնի (ԷՇԿՄ) խորհրդի կողմից հաստատման: ԷՇԿՄ-ի կանոնակարգով սահմանված գնադրման մեթոդները են՝ «հասույթի շեմ»՝ հաղորդման սակագնի համար, «խառը»՝ բաշխման սակագնի համար, և «ծախսերի վրա հիմնված»՝ TETAS-ի սակագների համար: «Ոչ իրավասու սպառողներին» մանրածախ վաճառքի սակագնի համար կիրառվում է «գնային շեմ» մեթոդը: Բնական գազի դեպքում մեծածախ և մանրածախ վաճառքի, փոխանցման, պահեստավորման և քաղաքում բաշխման սակագները ենթակա են ԷՇԿՄ-ի խորհրդի հաստատմանը: Որոշվում է «գնային շեմ»՝ ԷՇԿՄ-ի սկզբունքների և ընթացակարգերի համաձայն: Նավթի և ՀՆԳ-ի գները որոշվում են ազատ՝ համաշխարհային գներին համապատասխան: Այնուամենայնիվ, մրցակցության չարաշահման դեպքում ԷՇԿՄ-ն իրավասու է երկու ամսով վերահսկել գինը: Ածխի գները սահմանվում են արտադրողների կողմից: Տեղական արտադրության ծխախոտի աճուրդի բացման գինը որոշվում է TAPDK-ի կողմից: Թուրքիան ունի նաև գնային վերահսկողություն որոշ դեղորայքային ապրանքների և հեռահաղորդակցության ծառայությունների համար:

2.1.10. Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանություն

Մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ Թուրքիայի օրենսդրությունը հիմնականում ներառում է հետևյալ ակտերը.

- «Պատենտով նախատեսված իրավունքների պաշտպանության մասին» թիվ 551 որոշում,
- «Արդյունաբերական նախագծի մասին» թիվ 554 որոշում,
- «Աշխարհագրական տեղանունների մասին» թիվ 555 որոշում,
- «Ապրանքանիշերի պաշտպանության մասին» թիվ 556 որոշում,

- «Մտավոր և ստեղծագործական աշխատանքների մասին» թիվ 5846 օրենք,
- «Ֆիլմերի գնահատման, դասակարգման և աջակցության մասին» թիվ 5224 օրենք,
- «Թուրքիայի պատենտավորման ինստիտուտի հիմնադրման և դրա գործառույթների մասին» թիվ 5000 օրենք,
- «Սելեկցիոներների՝ բույսերի նոր տեսակների հետ կապված իրավունքների պաշտպանության մասին» թիվ 5042 օրենք:

Մտավոր սեփականության հետ կապված խնդիրների համար պատասխանատու մարմինները հետևյալն են.

- Թուրքիայի պատենտավորման ինստիտուտը, որը պատասխանատու է պատենտների, ապրանքանիշերի, աշխարհագրական տեղանունների, արդյունաբերական նախագծերի և միկրոսխեմաների տոպոգրաֆիաների համար,
- Մշակույթի և զբոսաշրջության նախարարության Յեդիմակային իրավունքի և կինոյի հարցերի գլխավոր տնօրինությունը, որը պատասխանատու է հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների համար,
- Մաքսային ենթաբարտուղարության Մաքսային հարցերով գլխավոր տնօրինությունը, որը պատասխանատու է սահմանին առկա խնդիրների համար,
- Գյուղատնտեսության նախարարությունը, որը պատասխանատու է բույսերի սելեկցիոներների իրավունքների պաշտպանության համար, և
- Արդարադատության նախարարությունը, որը պատասխանատու է դատարաններում կիրարկման համար:

Պատենտների, ապրանքանիշերի, արդյունաբերական նախագծերի, աշխարհագրական տեղանունների և բույսերի նոր տեսակների վերաբերյալ օրենսդրության խախտումները կարող են բողոքարկվել տեղական դատարանում: Օտարերկրացիները նույնպես կարող են դատական հայց հարուցել Թուրքիայի դատարաններում: Գոյություն ունեն մտավոր սեփականության իրավունքների մասնագիտացված 21 դատարան Ստամբուլում, Իզմիրում և Անկարայում: Ի լրումն՝ ընդհանուր իրավասության քաղաքացիական և քրեական դատարանները նույնպես իրավասու են զբաղվել մտավոր սեփականության իրավունքների հարցերով այն դեպքում, երբ տվյալ քաղաքում չկա մասնագիտացված դատարան:

Այն անձինք, ովքեր ներկայացնում են կեղծ փաստաթղթեր արդյունաբերական սեփականության իրավունք շնորհելու գործընթացում, կամ նրանք, ովքեր առանց թույլտվության ջնջում կամ վերացնում են ապրանքի վրա արդյունաբերական իրավունքի մասին վկայող նշանը, կամ կեղծ ձևով ներկայացնում են իրենց որպես արդյունաբերական սեփականության իրավունքի սեփականատեր, ենթակա են առավելագույնը 27 000 ՆԹԼ տուգանքի և/կամ մինչև 2 տարի ազատազրկման: Պատենտների, ապրանքանիշերի, արդյունաբերական նախագծերի և աշխարհագրական տեղանունների դեպքում տուգանքի առավելագույն չափը կազմում է 46 000 ՆԹԼ և/կամ մինչև 4 տարի ազատազրկում, բիզնեսի փակում առնվազն 1 տարով և նույն ժամանակահատվածով որևէ առևտրային գործունեության կասեցում:

Թուրքիայի սահմանադրությամբ նախատեսված է, որ դատական վարույթները պետք է իրականացվեն հնարավորինս նվազագույն ծախսերով: Վարույթում պարտվող կողմը վճարում է բոլոր ծախսերը: Պետությունը կրում է քրեական վարույթների ծախսերը, բայց դատապարտյալ կողմը վճարում է ամբողջ գումարը վարույթի վերջում: Մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ օրենսդրության շրջանակում սահմանված պատժամիջոցների քանակը 2001 թվականին եղած 4 318-ից աճել է մինչև 6 504-ի՝ 2006 թվականին: Այդ օրենսդրության շրջանակում նախաձեռնված քաղաքացիական միջոցառումների քանակը նվազել է 2 558-ից մինչև 2 117-ի՝ նույն ժամանակահատվածի համար: Դեպքերի մոտավորապես կեսը տեղի է ունեցել Ստամբուլում:

Համաձայն Եվրոպական հանձնաժողովի կողմից տրված գնահատականի⁵⁵ Թուրքիայի օրենսդրությունը մեծ մասամբ ներդաշնակեցված է Եվրոմիության օրենսդրության հետ, սակայն Թուրքիայում կան բազմաթիվ խնդիրներ՝ կապված օրենսդրության կիրարկման հետ: Այդ խնդիրները շտկելու համար Թուրքիայից պահանջվում են զգալի ջանքեր և ներդրումներ՝ ներառյալ դատական համակարգի բարելավման գործում:

Թեպետ Թուրքիայի օրենսդրությունը, որը հիմնականում համապատասխանում է Եվրոմիության օրենսդրությանը, նախատեսում է մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության բավարար մակարդակ, այնուամենայնիվ դրա կիրարկման համար անհրաժեշտ վարչական կարողությունները բավարար չեն, ինչը հանգեցնում է խախտումների, ներառյալ՝ կեղծ ապրանքների բավականին բարձր մակարդակի: Սա նշանակում է, որ Հայաստանում մտավոր սեփականության ոլորտում արդյունավետ օրենսդրության և ինստիտուցիոնալ համակարգի առկայությունը հնարավորություն կտա կանխել մտավոր սեփականության իրավունքները խախտող թուրքական ապրանքների ներհոսքը հայկական շուկա:

Նշենք նաև, որ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ոչ բավարար մակարդակը կարող է հանգեցնել դեպի թուրքական շուկա արտահանվող ապրանքների նկատմամբ անօրինական մրցակցության:

2.2. Արտահանումների և արտադրության վրա ազդող կարգավորումը Հայաստանում

2.2.1. Արտահանման խթանում

Հայաստանում արտահանման խթանման քաղաքականությունը, ի թիվս այլ գործառույթների, իրականացնում է «Զարգացման հայկական գործակալությունը» /ԶԳՀ/, որը, համաձայն կանոնադրության, ունի հետևյալ նպատակները.

1. Ընկերության հիմնական նպատակը Հայաստանում և դրա սահմաններից դուրս հայ բիզնեսի մրցունակությանն օժանդակելն է:

2. Ընկերության նպատակներն են՝

- Հայաստանի տնտեսական զարգացման ռազմավարության ձևավորմանն օժանդակելը,
- հայ բիզնեսի մրցունակությանը նպաստող և այն ապահովող միջավայրի ձևավորմանն ու զարգացմանն օժանդակելը,
- զարգացման, մասնավորապես ներդրումային և արտահանման ծրագրերի մշակմանն ու իրականացմանն օժանդակելը:

Գործակալության հետ կապված խնդիրներից մեկն այն է, որ դրա գործունեության թափանցիկությունը բավականին ցածր է, ինչն անհնարին է դարձնում Գործակալության աշխատանքի արդյունավետության պատշաճ գնահատումը⁵⁶:

⁵⁵ European Commission, “Screening report, Turkey, Chapter 7 – Intellectual Property Law, 19 October 2006:

⁵⁶ Ինստիտուցիոնալ իրավիճակի գնահատումը ձեռնարկությունների զարգացման և արդյունաբերական քաղաքականության բնագավառներում, AEPLAC, դեկտեմբեր 2007թ.:

Արտահանման խթանման գործում մեծապես կարևորվում է Ջարգացման հայկական գործակալության արդյունավետ աշխատանքը: Անհրաժեշտ է մշակել արտահանման խթանման ծրագրեր՝ մասնավորապես կապված արտահանման վարկավորման և ապահովագրության հետ, որի իրականացման համար պատասխանատու կլինի Ջարգացման հայկական գործակալությունը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է բարելավել Գործակալության աշխատանքների արդյունավետությունն ու թափանցիկությունը, հանրամատչելի դարձնել ՋՀԳ-ի գործունեության վերաբերյալ հաշվետվությունները:

Բացի ՋՀԳ-ից՝ արտահանման խթանման նպատակներ ունի նաև ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնը, որի գերակայությունների շարքին են պատկանում արտահանող և արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների աջակցության ծրագրերը:

Արտահանման խթանման գործում կարևոր նշանակություն կարող են ունենալ դիվանագիտական ծառայություններին կից ստեղծվող առևտրական ներկայացուցիչներն ու ներկայացուցչությունները: 2004թ. դեկտեմբերի 23-ին ՀՀ կառավարության որոշմամբ⁵⁷ հաստատվեց ՀՀ առևտրական ներկայացուցիչների և առևտրական ներկայացուցչությունների կանոնադրությունը, ինչպես նաև 2005թ. փետրվարի 17-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեց Առևտրի համաշխարհային կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցչի կանոնադրությունը⁵⁸:

Հայ-թուրքական սահմանի վերաբացումից և երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո Թուրքիայում հայկական դիվանագիտական ծառայությանը կից առևտրական ներկայացուցիչը կամ ներկայացուցչությունը կարող է մեծապես օգտակար լինել թե՛ հայկական արտահանողների, թե՛ Հայաստանի պետական մարմինների գործունեության համար:

2.2.2. Արտադրության խթանում և պետական աջակցություն

Հաշվի առնելով, որ տնտեսության կարևոր մաս են կազմում փոքր և միջին ձեռնարկությունները /ՓՄՁ/, արտադրության խթանման հիմնական օղակներից մեկն է ՓՄՁ-ների զարգացման ազգային կենտրոնը /ՓՄՁ ՋԱԿ/: Համաձայն ՓՄՁ ՋԱԿ-ի կանոնադրությանը՝ դրա նպատակները մասնավորապես ներառում են.

- ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացումը.
- ՓՄՁ-ի սուբյեկտներին տեխնիկական և ֆինանսական աջակցության տրամադրումը:

Հիմնադրամի վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիրը հնարավորություն է ընձեռում վարկունակ ձեռնարկատերերին վարկավորվել գրավի անբավարարության կամ ցածր լիկվիդայնության պայմաններում: Երաշխավորությունների առավելագույն ժամկետը կազմում է երեք տարի, առավելագույն չափը կազմում է վարկային պարտավորության 70%-ը, և առավելագույն ծավալը կազմում է 10 միլիոն դրամ:

2006թ. ընթացքում այս ծրագրի շրջանակներում տրամադրված երաշխավորությունների ծավալը կազմել է 342.2 միլիոն դրամ՝ պետական բյուջեով նախատեսված գումարի ավելի քան 97%-ը, մինչդեռ 2005թ. այս ցուցանիշը կազմել է 65.1%,

⁵⁷ 2004թ. դեկտեմբերի 23-ի «ՀՀ առևտրական ներկայացուցիչների (կցորդների) և առևտրական ներկայացուցչությունների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1935-Ն որոշում:

⁵⁸ 2005թ. փետրվարի 17-ի «Առևտրի համաշխարհային կազմակերպությունում ՀՀ մշտական ներկայացուցչի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 173-Ն որոշում:

իսկ 2004թ.՝ 11.1% (տե՛ս Աղյուսակ 4): ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից պետական բյուջեով նախատեսված միջոցների բաշխման իրականացումը բարելավվել է⁵⁹:

Ի լրումն նշված կառույցի կողմից տրամադրվող աջակցության՝ ՓՄՁ-ների համար վերջին շրջանում սկսվել են նաև մի շարք վարկային ծրագրեր, որոնք ֆինանսավորվում են Համաշխարհային բանկի և KFW բանկային խմբի կողմից և տրվում են ՀՀ առևտրային բանկերի միջոցով:

ՓՄՁ-ներին պետական աջակցությունից բացի՝ Հայաստանում պետական աջակցություն է տրամադրվում նաև գյուղատնտեսությանը, ազգային հեռուստաընկերությանը, առողջապահությանը, կրթությանը, տպագիր մամուլին: ԵՄ-ի երկրների համեմատ, որտեղ պետական աջակցությունը կազմում է ընդհանուր ՀՆԱ-ի 0.6%-ը, Հայաստանում այդ ցուցանիշը 2006 թվականին⁶⁰ կազմել է 6.6%, ինչը մեծապես պայմանավորված է գյուղատնտեսությանը տրամադրած պետական աջակցության ծավալներով: Աղյուսակ 34-ում ներկայացված են ՀՀ-ում պետական աջակցության ծավալները՝ ըստ ուղղությունների⁶¹:

Աղյուսակ 34, ՀՀ-ում պետական աջակցության ծավալներն ըստ ուղղությունների (2006թ.)

| Ոլորտ | Ծավալ (մլն. դրամ) |
|---------------------------------|----------------------|
| ՓՄՁ | 350,0 |
| Գազի մատակարարում | 17 858,1 |
| Գյուղատնտեսություն | 111 900,0 |
| Պետական հեռուստաընկերություն | 2 317,7 |
| Հրատարակչություն | 26,4 |
| Ընդամենը | 132 452,2 |
| ՀՆԱ-ի % | 4,9 |
| Կրթական համակարգ | 3 328,5 |
| Առողջապահություն | 39 436,0 |
| Ընդամենը | 42 764,5 |
| ՀՆԱ-ի % | 1,6 |
| Ընդհանուր աջակցություն | 175 216,7 |
| ՀՆԱ-ի % | 6,6 |

Ինչպես երևում է աղյուսակ 102-ից, ՓՄՁ-ներին ցուցաբերվող աջակցությունը կազմում է ընդհանուր աջակցության ընդամենը 0.2%-ը: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ մնացած ուղղություններով տրամադրվող պետական աջակցությունը կրում է մեծ մասամբ սոցիալական բնույթ, ապա կարելի է փաստել, որ գործարարության զարգացմանն ուղղվող պետական աջակցության ծավալները չնչին են:

Հայաստանում չկա արտադրության խթանմանն ուղղված բավարար պետական աջակցություն: Տրամադրվող աջակցության գերակշիռ մասը կրում է սոցիալական բնույթ: Թեպետ ՓՄՁ ՁԱԿ-ի միջոցով տրամադրվող վարկային երաշխավորությունները բաշխվում են գրեթե ամբողջությամբ, սակայն դրանց համար պետական բյուջեով նախատեսված գումարը շատ ցածր տոկոս է կազմում՝ աջակցության այլ ուղղությունների համեմատությամբ: Նշենք նաև, որ գյուղատնտեսությանը տրվող լրավճարների ծավալը զգալիորեն մեծ է ՓՄՁ-ներին տրվող աջակցության չափից:

⁵⁹ Ինստիտուցիոնալ իրավիճակի գնահատումը ձեռնարկությունների զարգացման և արդյունաբերական քաղաքականության բնագավառներում, AEPLAC, դեկտեմբեր 2007թ.:

⁶⁰ 2006 թվականին պետական աջակցություն էր տրամադրվում նաև գազի մատակարարմանը, որը ներկայումս դադարեցվել է:

⁶¹ Ինստիտուցիոնալ իրավիճակի գնահատումը մրցակցության և պետական աջակցության բնագավառներում, AEPLAC, հուլիս 2007թ.:

2.2.3. Մրցակցության պաշտպանության քաղաքականություն

Հայաստանի «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքը կանոնակարգում է տնտեսական մրցակցության պաշտպանությունը հակամրցակցային համաձայնությունների, գերիշխող դիրքի չարաշահման, համակենտրոնացումների և անբարեխիղճ մրցակցության բնագավառներում: Հայաստանում տնտեսական մրցակցության պաշտպանության համար պատասխանատու լիազոր մարմնի՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի առավել արդյունավետ աշխատանքին խոչընդոտող խնդիրների շարքում պետք է նշել ցածր աշխատավարձը և բարձրակարգ մասնագետների ու համակարգչային համապատասխան ծրագրերի պակասը⁶²:

Մրցակցության պաշտպանության արդյունավետ համակարգն ունի խիստ կարևոր նշանակություն՝ հայ-թուրքական սահմանի վերաբացման պարագայում: Հայ-թուրքական սահմանի վերաբացման դեպքում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը պետք է պարբերաբար դիտարկի թուրքիայից ներմուծվող ապրանքների գները՝ հնարավոր մեծաշնորհային դիրքի չարաշահումները կանխելու համար: Բացի դրանից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանում ներքին շուկայի պաշտպանության, հակազնազցման և փոխհատուցման միջոցների համար պատասխանատու կառույցը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, չունի բավարար ռեսուրսներ՝ այդ գործառույթն արդյունավետ կերպով իրականացնելու համար, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ռեսուրսները կարող են նաև օգտագործվել՝ այդ միջոցների կիրառման համար անհրաժեշտ ուսումնասիրությունների իրականացման ընթացքում:

2.2.4. Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանություն

ԱՀԿ-ին անդամակցության ժամանակ Հայաստանը պարտավորվեց կիրառել «Առևտրին առնչվող մտավոր սեփականության իրավունքների մասին» համաձայնագրի դրույթները՝ առանց անցումային ժամանակահատվածի: Այդ նպատակով ՀՀ կառավարությունն սկսեց իրականացնել համընդգրկուն օրենսդրական բարեփոխումներ՝ նպատակ ունենալով համապատասխանեցնել մտավոր սեփականության իրավունքների ոլորտը կարգավորող օրենսդրությունն ու ինստիտուցիոնալ շրջանակը միջազգային (մասնավորապես ԱՀԿ-ի և Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության) կանոններին և Եվրոպական համայնքների հետ կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի շրջանակներում ստանձնած պարտավորություններին: Նշված բարեփոխումների շնորհիվ Հայաստանում ձևավորվեց միջազգային կանոններին հիմնականում համապատասխանող իրավական դաշտ:

Այնուամենայնիվ գոյություն ունեն բազմաթիվ խնդիրներ՝ կապված օրենսդրությամբ սահմանված պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացման հետ: Այսպես՝ 2005-2006 թթ. ընթացքում ՀՀ կ/ա Ոստիկանության կողմից գրանցվել է մտավոր սեփականության իրավունքների խախտման ընդամենը 20 դեպք: Նույն ժամանակահատվածում վճռաբեկ դատարանի կողմից ուսումնասիրվել է մտավոր սեփականության իրավունքների խախտման միայն 4 դեպք: Ոլորտի վերաբերյալ հասարակության իրազեկության ցածր մակարդակը և Ոստիկանությունում համապատասխան գիտելիքներ ունեցող աշխատակիցների պակասը համարվում են ոլորտում վերահսկողության անարդյունավետ իրականացման հիմնական պատճառը⁶³:

⁶² Ինստիտուցիոնալ իրավիճակի գնահատումը մրցակցության և պետական աջակցության բնագավառներում, AEPLAC, հուլիս 2007թ.:

⁶³ Economic Feasibility, General Economic Impact and Implications of a Free Trade Agreement Between the European Union and Armenia, Center for Social and Economic Research, Global Insight, 8 May 2008.

Հայաստանում մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության արդյունավետ համակարգը կարող է մեծապես նպաստել թուրքիայից կեղծված ապրանքների ներմուծման կանխմանը: Այս առումով կարևորվում է թե՛ շուկայում և թե՛ սահմանի վրա վերահսկողության արդյունավետ իրականացումը և այդ վերահսկողությունն իրականացնող մարմինների միջև համագործակցությունը:

2.3. Արտահանումների և արտադրության վրա ազդող կարգավորման համեմատություն

Հայ-թուրքական սահմանի վերաբացման դեպքում կարևոր է քննարկել նաև երկրներում ընդհանուր գործարարությանը նպաստող կամ խաթարող միջավայրի առկայության հարցը: Մասնավորապես էական է կոռուպցիայի մակարդակը, քանի որ վերջինիս առկայությունը կարող է բազմաթիվ հարցերի թվում վկայել նաև շուկայում ոչ արդյունավետ վերահսկողության, օրինական գործելակերպի խախտումների, (մտավոր սեփականության իրավունքի խախտումներ, հակամրցակցային գործելակերպ, տեխնիկական պահանջներին անհամապատասխանություն և այլն), ուստի նաև օրենսդրությանը չհամապատասխանող ապրանքների շուկայահանման մասին: Այս խնդրի համեմատական գնահատման համար ստորև բերված աղյուսակում ներկայացված են պետական պաշտոնյաներին տրվող ոչ պաշտոնական վճարումներ կատարող կազմակերպությունների մասնաբաժինները՝ կազմակերպությունների ընդհանուր թվում:

Աղյուսակ 35, Պետական պաշտոնյաներին տրվող ոչ պաշտոնական վճարումներ (ընդհանուր կազմակերպությունների %)

| Երկիր/խումբ | 2005թ. |
|-------------|--------|
| Հայաստան | 24.57 |
| Թուրքիա | 45.69 |
| Վրաստան | 11.11 |
| Ադրբեջան | 37.84 |

Տարածաշրջանի երկրներից այս ցուցանիշն ամենաբարձրն է Թուրքիայում: Հետևաբար կարելի է ենթադրել, որ երկիրը խնդիրներ ունի արդյունավետ վերահսկողության իրականացման հարցում: Բացի դրանից՝ սա նշանակում է, որ Թուրքիայում գործող որոշ տնտեսվարող սուբյեկտներ կարող են բավականին լուրջ առավելություն ունենալ մրցակիցների նկատմամբ թե՛ ներքին և թե՛ արտասահմանյան շուկաներում: Ուշագրավ է Վրաստանի բավականին ցածր ցուցանիշը, ինչը, կարծում ենք, կարող է պայմանավորված լինել երկրում վերջին տարիներին ինստիտուցիոնալ համակարգի պարզեցմամբ, հարկային բեռի թեթևացմամբ, ինչպես նաև պետական պաշտոնյաների և տնտեսվարող սուբյեկտների միջև շփումների նվազեցմամբ: Այս փորձը կարող է օգտակար լինել նաև Հայաստանի համար, որի ցուցանիշը թեև ցածր է Թուրքիայի և Ադրբեջանի համապատասխան ցուցանիշներից, սակայն Վրաստանի համեմատությամբ բավականին բարձր է:

Թուրքիայում պետական պաշտոնյաներին տրվող ոչ պաշտոնական վճարումների բարձր մակարդակը վկայում է մասնավորապես այն մասին, որ երկրի շուկայում առկա են օրենսդրությանը չհամապատասխանող մեծ թվով ապրանքներ: Սա հերթական անգամ կարևորում է սահմանի վրա Թուրքիայից Հայաստան ներմուծվող ապրանքների նկատմամբ խիստ և արդյունավետ վերահսկողության ահրաժեշտությունը՝ մտավոր սեփականության իրավունքների խախտումների, տեխնիկական պահանջներին անհամապատասխանության և օրինական գործելակերպի այլ խախտումների վաղ բացահայտման համար:

Բացի դրանից՝ երկրներում ստվերայնության բարձր մակարդակը կարելի է համարել ազգային տնտեսվարող սուբյեկտներին լրացուցիչ ոչ պաշտոնական աջակցություն: Հաջորդ աղյուսակը ներկայացնում է այն ընկերությունների կշիռը ընկերությունների ընդհանուր թվի մեջ, որոնք իրենց վաճառքի ծավալները ամբողջությամբ չեն ներկայացնում հարկային մարմիններին: Այդ ցուցանիշի բարձր լինելը վկայում է երկրում ստվերայնության և, հետևաբար, լրացուցիչ ոչ պաշտոնական աջակցության բարձր մակարդակի մասին:

Աղյուսակ 36, Հարկային նկատառումներով վաճառքի ծավալներն ամբողջությամբ չներկայացնող կազմակերպություններ (ընդհանուր կազմակերպությունների %)

| Երկիր/խումբ | 2005թ. |
|-------------|--------|
| Հայաստան | 26.15 |
| Թուրքիա | 63.05 |
| Վրաստան | 35.98 |
| Ադրբեջան | 38.68 |

Թուրքիայում վերոնշյալ կազմակերպությունների դիտարկված մասնաբաժինը անհամեմատ բարձր է Հայաստանի և տարածաշրջանի մնացած երկրների այդ ցուցանիշից:

Թուրքիայի տնտեսությունում ստվերի խիստ բարձր մակարդակը կարող է զգալիորեն դժվարացնել ապագայում հայկական արտահանողների՝ թուրքական շուկայում արդյունավետ մրցակցելու հնարավորությունը: Այն կարող է նաև բարձրացնել դեպի Հայաստան արտահանվող թուրքական ապրանքների մրցունակությունը: Ուստի անհրաժեշտություն է առաջանում բարձրացնել ներքին շուկայի պաշտպանության, հակազնազցման և փոխհատուցման համար պատասխանատու մարմնի, ինչպես նաև ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կարողությունները և վերջինիս ու Թուրքիայի մրցակցության պաշտպանության կառույցի միջև ստեղծել համագործակցության և տվյալների փոխանակման մեխանիզմ:

Հայ-թուրքական սահմանի վերաբացման պարագայում կարևոր է դիտարկել նաև հեռանկարային զարգացումները՝ կապված տնտեսությունում բարձր տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների բարձրացման հետ: Սա հատկապես կարևորվում է Հայաստանի համար՝ հաշվի առնելով, որ կառավարությունը բազմիցս նշել է գիտելիքահեն տնտեսության կառուցման անհրաժեշտությունը: Նշված խնդիրը գնահատելու համար կարևոր ցուցանիշ է հետազոտությունների և զարգացման վրա կատարվող ծախսերի հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (աղյուսակ 37):

Աղյուսակ 37, Հետազոտությունների և զարգացման վրա կատարվող ծախսեր (% ՀՆԱ-ի նկատմամբ)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 0.25 | 0.24 | 0.21 | 0.21 | .. |
| Թուրքիա | 0.66 | 0.61 | 0.67 | 0.79 | 0.76 |
| Վրաստան | .. | 0.22 | 0.24 | 0.18 | .. |
| Ադրբեջան | 0.30 | 0.32 | 0.30 | 0.22 | .. |
| Վերին միջին եկամուտ | 0.70 | 0.71 | 0.71 | 0.74 | .. |
| Բարձր եկամուտ | 2.42 | 2.40 | 2.35 | 2.39 | 2.48 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 0.94 | 0.93 | 0.92 | 0.91 | 0.86 |
| Աշխարհ | 2.14 | 2.13 | 2.08 | 2.14 | 2.30 |

Թեև Հայաստանի ցուցանիշը 2005 թ. համեմատելի է Հարավային Կովկասի այլ երկրների հետ, սակայն այն գրեթե 4 անգամ ցածր է Թուրքիայի ցուցանիշից և մոտ 11 անգամ ցածր է բարձր եկամտային խմբի երկրների ցուցանիշից:

Հայաստանի համեմատ Թուրքիայում գիտության և տնտեսությունում դրա արդյունանքերի օգտագործման բավականին բարձր մակարդակի մասին է անուղղակիորեն վկայում նաև գիտական և տեխնիկական ամսագրերում հրապարակվող հոդվածների քանակը (աղյուսակ 38): 10 000 հոգու հաշվով Թուրքիայում հրապարակվող հոդվածների քանակը գրեթե 2 անգամ մեծ է, քան Հայաստանի համապատասխան ցուցանիշը:

Աղյուսակ 38, Գիտական և տեխնիկական ամսագրերում հոդվածների քանակ (բնակչության 10 000 հոգու հաշվով)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 0.57 | 0.61 | 0.63 | 0.60 |
| Թուրքիա | 0.75 | 0.85 | 1.04 | 1.08 |
| Վրաստան | 0.28 | 0.25 | 0.33 | 0.32 |
| Ադրբեջան | 0.10 | 0.13 | 0.13 | 0.14 |
| Իրան | 0.20 | 0.27 | 0.31 | 0.38 |
| Ստորին միջին եկամուտ | 0.13 | 0.15 | 0.18 | 0.20 |
| Վերին միջին եկամուտ | 0.64 | 0.65 | 0.69 | 0.70 |
| Բարձր եկամուտ | 5.30 | 5.41 | 5.52 | 5.59 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 0.77 | 0.78 | 0.82 | 0.82 |
| Աշխարհ | 1.02 | 1.05 | 1.08 | 1.10 |

Հետազոտությունների և զարգացման վրա կատարվող ավելի մեծածավալ ծախսերը, ինչպես նաև գիտության ավելի բարձր մակարդակը կարող են երկարաժամկետ հեռանկարում շատ ավելի արդյունավետ դարձնել Թուրքիայի տնտեսությունը: Այս հանգամանքն անհրաժեշտություն է առաջացնում Հայաստանում գործող կազմակերպությունների համար ստեղծել բարենպաստ պայմաններ՝ հետազոտությունների և զարգացման ուղղությամբ դրանց կողմից ներդրումների ծավալների մեծացման համար:

Հայաստանում մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ցածր մակարդակի մասին է վկայում նաև ընդհանուր պատենտների թվում ոչ ռեզիդենտների կողմից պատենտների մասնաբաժինը: Հայաստանի այս ցածր ցուցանիշը ցույց է տալիս, որ օտարերկրացիների կողմից չկա վստահություն Հայաստանում մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության համակարգի նկատմամբ (աղյուսակ 39): Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ցածր մակարդակի մասին է վկայում նաև Սեփականության իրավունքի միջազգային ինդեքսը, համաձայն որի՝ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության առումով 2008 թ. Հայաստանը 115 պետությունների շարքում զբաղեցրել է 92-րդ տեղը⁶⁴:

⁶⁴ Մտավոր սեփականության իրավունքների միջազգային ինդեքս - www.internationalpropertyrightsindex.org:

Աղյուսակ 39, Ոչ ռեզիդենտների պատենտների քանակը ընդհանուր պատենտների թվում

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | .. | 3.82 | .. | 0.96 | .. |
| Թուրքիա | 78.94 | 45.17 | .. | .. | .. |
| Վրաստան | 56.50 | 51.86 | 45.85 | .. | 55.89 |
| Ադրբեջան | .. | .. | .. | .. | .. |
| Իրան | .. | .. | .. | .. | .. |
| Ստորին միջին եկամուտ | 45.30 | 41.71 | 48.53 | 47.11 | 44.05 |
| Վերին միջին եկամուտ | 56.44 | 50.38 | 55.84 | 45.55 | 55.40 |
| Բարձր եկամուտ | 32.92 | 32.49 | 30.42 | 33.69 | 35.84 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 33.13 | 28.17 | 34.06 | 32.60 | 26.99 |
| Աշխարհ | 35.32 | 34.39 | 33.96 | 35.97 | 37.15 |

Բերված տվյալները ևս մեկ անգամ վկայում են այն մասին, որ Հայաստանում մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության մակարդակը բավականին ցածր է: Մինչդեռ այս ոլորտում օրենսդրության արդյունավետ իրականացումը սահմանի վրա և շուկայի ներսում հնարավորություն կտա կրճատել Թուրքիայից կեղծված ապրանքների ներմուծումը, ինչպես նաև դրանց շուկայահանումը Հայաստանում:

3. Գյուղատնտեսություն

3.1. Թուրքիայի գյուղատնտեսության ոլորտ

3.1.1. Ընդհանուր նկարագիր

Թուրքիայի մյուս ոլորտների հետևողական զարգացման հետ մեկտեղ գյուղատնտեսությունը մնում է որպես երկրի տնտեսության կարևոր ոլորտ: Չնայած իրական ՀՆԱ-ի մեջ նրա կշիռը նվազել է՝ հասնելով մոտ 11%-ի, այն աշխատանքով է ապահովում երկրի բնակչության շուրջ 30%-ին: Միջին ֆերմերային տնտեսությունն ունի մոտ 6 հեկտար տարածք, և վարելահողը յուրաքանչյուրում ընդհանուր առմամբ բաժանված է մեծ թվով հողակտորների: Չնայած այն բանին, որ վերջերս առաջ են եկել ավելի գործարար ուղղվածությամբ տնտեսություններ, դրանց գերակշիռ մասը մնացել է փոքր, հանդիսանում է ընտանիքների սեփականություն, խիստ մասնատված է և ունի կապիտալի ցածր ներգրավվածություն: Այն շարունակում է օգտագործել միայն տարրական տեխնոլոգիաներ: Ոլորտի մեծամասնությունը ոչ ֆորմալ է. չի վերահսկվում կառավարության կողմից: Չնայած ինքնաշխատ սոցիալական ապահովության ծրագրում մասնակցությունը պարտադիր է՝ ֆերմերների 91%-ը չի մասնակցում, և միայն փոքրամասնությունն է եկամտահարկ վճարում⁶⁵:

Թուրքիայում գյուղատնտեսական ոլորտի վերահսկողության ցածր մակարդակը զգալի հիմնախնդիր է ներմուծողների համար: Մասնավորապես ներքին գյուղատնտեսական արտադրանքի չհարկման արդյունքում այն ավելի բարենպաստ վիճակում է ներմուծումների համեմատությամբ: ԱԱՀ-ի չհարկման արդյունքում տեղի է ունենում միջազգային առևտրի հիմնարար սկզբունքի՝ ազգային վերաբերմունքի խախտում: Եկամտահարկի չհարկման արդյունքում ըստ էության ոլորտին տրամադրվում է համարժեք լրավճար, որը կարող է զգալիորեն գերազանցել ներքին աջակցության թույլատրվող չափը (10%):

Թուրքիան ինքն իրեն ապահովում է սննդով և ավելացրել է որոշ գյուղմթերքների արտահանումները: Այն կարևոր արտահանող է իր ավանդական մթերքների մասով (պնդուկ, արևելյան ծխախոտ, չիր) և որոշ նոր ուղղություններով (լուլիկ, կարտոֆիլ, ձմերուկ): Այնուամենայնիվ, համաշխարհային գյուղատնտեսական շուկաներում նրա մասնաբաժինը միայն մոտ 1% է՝ բավական ցածր իր ներուժից՝ հաշվի առնելով, որ այն ունի ավելի շատ վարելահող, քան որևէ արևմտաերոպական երկիր, և ունի բարեխառն կլիմա: Մշակաբույսերը կազմում են ամբողջ գյուղատնտեսական արտադրանքի շուրջ 65%-ը: Հիմնական մշակաբույսերն են հացահատիկային կուլտուրաները (ցորենը, գարին, եգիպտացորենը), ուղղակի վաճառքի համար նախատեսված կուլտուրաները (շաքարի ճակնդեղը, բամբակը) և մրգերն ու բանջարեղենը (խաղող, ցիտրուսային մրգեր, խնձոր, ձմերուկ, լուլիկ, կարտոֆիլ, չոր սոխ): Գյուղատնտեսությունն ունի ամենացածր արտադրողականությունը՝ Թուրքիայի տնտեսական ոլորտների համեմատությամբ: Գյուղատնտեսական աշխատուժի արտադրողականությունը կազմում է ամբողջ տնտեսության միջինի մոտ 1/3-ը⁶⁶:

⁶⁵ OECD (2006), *Economic Surveys: Turkey*, Paris.

⁶⁶ OECD (2003), *Agricultural Policies in OECD Countries – Monitoring and Evaluation 2003*, Paris.

Թուրքիայի գյուղատնտեսական ոլորտի զգալի ներուժը ենթադրում է ապագայում ներքին արտադրության շարունակվող զարգացում: Սա կարող է ուղեկցվել ինչպես հնարավոր ներմուծումների ներքին արտադրանքով փոխարինմամբ, այնպես էլ արտաքին շուկաների անընդհատ ընդլայնմամբ և արտահանման ծավալների աճով:

Թերևս, հաշվի առնելով թուրքական գյուղատնտեսության ցածր արտադրողականությունը, դեպի Թուրքիա գյուղատնտեսական արտադրանք արտահանողները կարող են մրցունակություն ապահովելու հույս ունենալ միայն անհամեմատ ավելի բարձր արտադրողականությունն ապահովելու շնորհիվ:

Անասնապահական ենթաոլորտը, բաղկացած հիմնականում խոշոր եղջերավոր անասուններից՝ կովեր ու գոմեշներ, ոչխարներ և այծեր, ներառում է տրադիցիոն և առևտրային գործունեություն: Թուրքիան կիրառում է կենդանիների իդենտիֆիկացիայի համակարգ. գրանցված է եղել 10 միլիոն խոշոր եղջերավոր անասուն: Հիմնական նպատակն է ավելացնել անասնապահական արտադրությունը՝ բնակչության համար բավարար և հավասարակշռված սննդամթերք ապահովելու համար: Առանց հաշվի առնելու շրջաններում սպառված միսը՝ ամբողջ մսի արտադրության միջինը 2000-2006 թթ. կազմել է մոտ 430 000 տոննա, իսկ կաթի արտադրությունը մնացել է հաստատուն՝ շուրջ 10 միլիոն տոննա:

Զնայած Թուրքիայում ձկնորսական գործունեության մեծ ներուժին՝ դա կազմում է տնտեսության փոքր մասը՝ հիմնականում ժամանակակից նավերի բացակայության և ոչ արդյունավետ որսալու ու մշակելու մեթոդների պատճառով: Ձկան արտադրության միջինը 2000-2006 թթ. կազմել է 640 000 տոննա: Սա ներառում է նաև ձկնաբուծությունը: Ձկան արտադրությունը հիմնականում բաղկացած է ծովային ձկներից՝ ամբողջի մոտ 70%-ը 2006 թ., ձկնաբուծությունից՝ 15%, քաղցրահամ ջրերի ձկներից՝ 8%, և այլ ծովային մթերքներից՝ 7%: Սև ծովը արտադրական հիմնական տարածքն է, որին հաջորդում է Սիջերկրական ծովը: Բաց ծովային ջրերում ձկնորսությունը զգալիորեն նվազել է աղտոտման, էկոլոգիական փոփոխությունների և ռեսուրսների անկայուն օգտագործման պատճառով:

Թուրքիայի ձկնարտադրության զգալի ներուժը նույնպես ենթադրում է ապագայում ներքին արտադրության շարունակվող զարգացում: Սա կարող է ուղեկցվել ինչպես հնարավոր ներմուծումների ներքին արտադրանքով փոխարինմամբ, այնպես էլ արտաքին շուկաների անընդհատ ընդլայնմամբ և արտահանման ծավալների աճով:

Թերևս, հաշվի առնելով թուրքական ձկնարտադրության մեթոդների ցածր արդյունավետությունը, դեպի Թուրքիա ձկնային արտադրանք արտահանողները կարող են մրցունակություն ապահովելու հույս ունենալ միայն անհամեմատ ավելի բարձր արդյունավետությունն ապահովելու շնորհիվ:

Անտառները ծածկում են 20,7 միլիոն հեկտար կամ Թուրքիայի ամբողջ տարածքի 26,9%-ը: Անտառափայտը անտառային հիմնական արտադրանքն է: Փշատերև ծառերը կազմում են անտառների 54,4%-ը, մնացածը՝ լայնատերև ծառեր են: Անտառները Թուրքիայում դասակարգված են ըստ որակի և նպատակի՝ պահպանվող անտառներ, ազգային պարկեր և արտադրական անտառներ: Կենսաբանական բազմազանությունը բարձր է. կան 9 000 բուսական տեսակներ, որոնցից 3 000-ը տարածված են: Անտառային հողերի և ռեսուրսների մոտ 99,9%-ը պատկանում է պետությանը, մասնավոր անտառների տարածքը մոտ 20 000 հեկտար է: Անտառների շուրջ 9%-ը ոչնչացել էր 2001-2005 թթ. հրդեհների ժամանակ: Ենթաոլորտի հիմնական խնդիրները ներառում են թերի կադաստրային աշխատանքը, մասնագիտացված տեխնիկական աշխատողների պակասը, ազգային պարկերի և նմանատիպ պաշտպանված տարածքների սահմանափակ թիվը, տարեկան անտառատնկման ցածր մակարդակը՝ էրոզիայից խուսափելու և փայտի առաջարկի ու պահանջարկի երկարաժամկետ հավասարակշռությունը ապահովելու համար,

կառավարման նպատակակետերի անորոշությունները, նորացման աշխատանքների ուշացումները և ոչ բավարար ֆինանսավորումը⁶⁷:

Թուրքիայի անտառային արտադրության ներուժը կարող է ծառայել որպես աշխարհագրական մոտ հեռավորության առումով բարենպաստ պայմաններով անտառային արտադրանքի ներկրման հնարավորություն:

3.1.2. Քաղաքականության ուղղությունները

Գյուղատնտեսության և գյուղական հարցերի նախարարությունը իրավասու է ոլորտի ընդհանուր կառավարման համար, ներառյալ՝ հետազոտությունների ու առնչվող ծառայությունների համակարգումն ու իրականացումը, գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցումը և ենթակառուցվածքների տրամադրումը: Գյուղատնտեսության համար Թուրքիայի քաղաքականության հիմնական նպատակներն են՝ արտադրողների կենսամակարդակի բարձրացումը, շրջանների զարգացման խթանումը, սննդի ապահովության ու անվտանգության ապահովումը և արդյունավետության, արտադրողականության, որակի ու մրցունակության բարելավումը: 2007-2013 թթ. իններորդ զարգացման պլանով նախատեսված Թուրքիայի գյուղատնտեսությունում արդյունավետության բարելավված համար հիմնական նպատակակետերը մասնավորապես նրառում են.

Աղյուսակ 40, Գյուղատնտեսության կառուցվածքը 2006 և 2013 թթ.

| Գյուղատնտեսության կառուցվածքը | 2006 | 2013 |
|---|----------------------|------|
| | <i>Տոկոս</i> | |
| Ամբողջ գյուղատնտեսական արտադրության մեջ կենդանական արդյունաբերության բաժինը | 28.0 | 37.0 |
| Արտոնագրված հացահատկի (ցորեն, գարի) սերմերի օգտագործման տոկոսը | 30.0 | 50.0 |
| Խոշոր եղջերավորների ողջ գլխաքանակում բուծվածի և խաչասերվածի բաժինը | 67.0 | 77.0 |
| Ամբողջ գյուղատնտեսական հողերում օրգանականի բաժինը | 1.0 | 3.0 |
| | <i>Միլիոն հեկտար</i> | |
| Ոռոգվող տարածք (զուտ գումարային) | 2.55 | 3.00 |
| Մասնատված հողերի միացման գործունեություն (գումարային) | 0.60 | 1.27 |
| Արդյունաբերական և հողի պաշտպանության ծառատունկ (գումարային) | 2.60 | 3.30 |

Աղբյուրը՝ Պետական պլանավորման կազմակերպություն (2006), 2007-2013 թթ. իններորդ զարգացման պլան, Անկարա

⁶⁷ Պետական պլանավորման կազմակերպություն (2006), 2007-2013 թթ. իններորդ զարգացման պլան, Անկարա:

Թուրքիայի հետ գյուղատնտեսության ոլորտում հետագա արդյունավետ առևտրատնտեսական հարաբերությունների կայացման համար անհրաժեշտ է մշակել և հետևողականորեն իրականացնել բոլոր ուղղություններով արդյունավետության, արտադրողականության, որակի ու մրցունակության համարժեք բարելավման ռազմավարություն:

Վերջին տարիներին քաղաքականության հիմնական զարգացումները ներառել են Գյուղատնտեսական բարեփոխումների իրականացման նախագիծը (2001-2005 թթ.՝ երկարաձգված մինչև 2008 թ. վերջը), Շրջանների զարգացման ներդրումների աջակցության ծրագիրն ու Գյուղի ներգրավվածությամբ ներդրումների ծրագիրը, Սասնատված հողերի միացումը, Բնապահպանական ռեզերվային վճարումները, 2006-2010 թթ. Գյուղատնտեսական ռազմավարության փաստաթղթի ընդունումը և վերջինիս իրագործման ու Թուրքիայի գյուղատնտեսական քաղաքականությունը Եւրոմիության քաղաքականությանը ավելի մոտեցնելու համար 2006 թ. նոր Գյուղատնտեսական օրենքի (թիվ 5488) ընդունումը:

Թուրքիայի արտաքին առևտրատնտեսական քաղաքականության հանգույցային մաս է կազմում այն Եւրոմիության քաղաքականության հետ համապատասխանեցնելը: Եւրոմիության, ինչպես նաև Թուրքիայի հետ գյուղատնտեսության ոլորտում հետագա արդյունավետ առևտրատնտեսական հարաբերությունների կայացման համար անհրաժեշտ է մշակել և հետևողականորեն իրականացնել քաղաքականության համարժեք համապատասխանեցման ռազմավարություն:

Գյուղատնտեսական բարեփոխումների իրականացման նախագծով միջոցառումներ են իրականացվել չորս հիմնական ուղղություններով.

1. Գնային աջակցության և վարկային լրավճարների աստիճանական վերացում՝ դրանք փոխարինելով ավելի քիչ աղավաղող Ուղղակի եկամտային աջակցության համակարգով՝ հիմնված ոչ թե ներդրանքի կամ արտադրանքի վրա, այլ ըստ հեկտարի համընդհանուր վճարման (մոտ 90 ԱՄՆ դոլար/հա) սկզբունքի վրա և 2001 թ. ստեղծված Ազգային ֆերմերների գրանցման համակարգի վրա: Ավելի քան 2,75 միլիոն ֆերմերներ (ամբողջի 89%-ը) և 17 միլիոն հեկտար (ամբողջ գյուղատնտեսական հողերի 80%-ը) գրանցվել են համակարգի կողմից՝ այդ վճարումները ստանալու համար: Համակարգից օգտվում է մոտ 10 միլիոն մարդ: Նշված վճարումները դարձել են Թուրքիայի գյուղատնտեսության աջակցության հիմնական գործիքը՝ կազմելով գյուղատնտեսական արտադրողներին տրված դրամով արտահայտված ամբողջ աջակցության մոտ 80%-ը⁶⁸:
2. Պետության դուրս բերում մշակաբույսերի արտադրության, մշակման ու շուկայահանման մեջ ուղղակի ներգրավվածությունից:
3. Արտադրանքի բյուջեից ֆինանսավորվող միջամտական գնումների նվազեցում, որը հանգեցնում է գների իջեցման: Ապրանքների մեծամասնության համար գների նպատակակետային իջեցումները եղել են մինչև 20-30%: Հիմնական մթերքի՝ ցորենի համար երկու տարվա ընթացքում միջամտական գները պետք է նվազեցվեին 45%-ով:
4. Միանվագ դրամաշնորհների տրամադրում այն ֆերմերներին, որոնք անցնում են այլ կուլտուրաների մշակման այն կուլտուրաներից, որոնց առաջարկը չափից ավելի է, ինչպիսիք եղել են պնդուկն ու ծխախոտը: Նպատակն է նրանց օգնել անցումային ծախսերը փակելու հարցում և հեշտացնել նրանց անցումը արդյունավետ արտադրական ձևերի: Պնդուկի և ծխախոտի մշակման տարածքները պետք է նվազեցվեին համապատասխանաբար շուրջ 16 000 և 9 000 հեկտարով մինչև 2007 թ.

⁶⁸ OECD (2006), *Agricultural Policies in OECD Countries: At a Glance*, Paris

վերջը: 2001-2005 թթ. համար անցումային վճարումների ֆինանսավորումը եղել է 298 միլիոն նոր թուրքական լիրա⁶⁹:

Թուրքիայի ներքին գյուղատնտեսական արտադրողները բարեփոխումների շնորհիվ ստանում են զգալի պաշտպանություն: Մի կողմից՝ դա արտահայտվում է պաշտոնական ուղղակի ներքին զգալի աջակցությամբ: Մյուս կողմից՝ միջամտական գնումների նվազեցումը թեև այդ առումով նվազեցնում է աջակցությունը, սակայն արդյունքում ներքին շուկայում ձևավորվող ցածր գները նվազեցնում են այդ շուկայի մատչելիությունը ներմուծումների համար:

Շրջանների զարգացման ներդրումների աջակցության ծրագրի և Գյուղի ներգրավվածությամբ ներդրումների ծրագրով արտադրողները աջակցություն են ստանում որոշ ներդրումային նախագծերի համար (օրինակ՝ ոռոգման և ենթակառուցվածքային շինություններ): Առաջին ծրագիրը ֆինանսավորվում է բյուջեից և իրագործվում է 65 շրջաններում, իսկ երկրորդ ծրագիրը օժանդակություն է ստանում Համաշխարհային բանկի կողմից և իրագործվում է 16 շրջաններում:

Բնապահպանական ռեզերվային վճարումներով Թուրքիան նպատակ ունի խոցելի շրջաններում (օրինակ՝ որտեղ առկա են թունավոր թափոններ, էրոզիա և ջրի ու շրջակա միջավայրի աղտոտում) ապահովել ճիշտ գյուղատնտեսական քաղաքականություն և ավելացնել ֆերմերների եկամտի մակարդակները: Ծրագրի ամբողջական արժեքը 2005-2008 թթ. համար կազմել է 9 միլիոն ԱՄՆ դոլար (ամբողջությամբ ֆինանսավորված Համաշխարհային բանկի կողմից) և օգտագործվել է չորս տարբեր շրջաններում՝ հողի ընդհանուր 5 000 հեկտար մակերեսով: 2006-2010 թթ. Գյուղատնտեսական ռազմավարության փաստաթուղթը ոլորտի համար հատկացվող բյուջետային ֆոնդերի չափը հաստատում է ՀԱԱ-ի շուրջ 1%-ի չափով և 2010 թ. այս ֆոնդերի բաշխումը պլանավորել է հետևյալ կերպ. 45%՝ ուղղակի եկամտային աջակցության վճարումների համար, 13%՝ կանխատեսվածից ցածր գների փոխհատուցման վճարումների համար, 12%՝ անասնապահության աջակցության համար, 10%՝ շրջանների զարգացման աջակցության համար, 5%՝ փոխհատուցման վճարումների համար, 5%՝ բնապահպանական ռեզերվային վճարումների համար, 5%՝ մշակաբույսերի ապահովագրության աջակցության համար և 5%՝ այլ աջակցությունների համար:

Թիվ 5488 Գյուղատնտեսության օրենքը շեշտը դնում է արտադրողականության բարձրացման ու սննդի պաշարի ապահովման վրա և գերակայություն է համարում ոլորտի մրցունակությունն ու մոդեռնիզացիան: Այն նաև իրավական հիմքեր է ստեղծում որոշ կառավարման համակարգերի համար (Միասնական վարչական վերահսկողության համակարգ, Ֆերմերային տնտեսությունների հաշիվների տվյալների ցանց), որոնք անհրաժեշտ են ԵՄ-ի օրենսդրության իրագործման համար: Սակայն օրենքն ավելի է հեռացնում Թուրքիային ԵՄ-ի բարեփոխված Ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության սկզբունքներից՝ սահմանելով աջակցությունը փոխկապակցված արտադրության հետ՝ որպես գյուղատնտեսական քաղաքականության հիմնական գործիք⁷⁰: Թուրքիայում առավել շուկայական գյուղատնտեսական ոլորտի համար առանձնահատուկ ուշադրություն է պետք տեխնոլոգիաների փոխանցման, ոռոգման, մասնատված հողերի միացման, մրցակցության, ֆինանսավորման և վերափոխման սոցիալական ծախսերի նվազեցման հարցերում⁷¹:

⁶⁹ OECD (2005), *Agricultural Policies in OECD Countries – Monitoring and Evaluation 2005*, Paris.

⁷⁰ European Commission (2006), *Turkey 2006 Progress Report*, Brussels.

⁷¹ OECD (2006), *Economic Surveys: Turkey*, Paris.

Թեև Թուրքիան աստիճանական անցում է կատարում ուղղակի եկամտային աջակցության վճարումների, այն օրենքի ուժով դեռևս պահպանում է արտադրության հետ կապված աջակցության հնարավորությունը: Այսպիսի աջակցության կիրառումը կարող է զգալի աղավաղումներ մցնել շուկայում, իսկ այդպիսի հնարավորության պահպանումը զգալի անկանխատեսելիություն է ստեղծում պայմանավորված շուկայի հետագա զարգացումներով:

2004 թ. Գյուղատնտեսական արտադրողների միությունների օրենքը (թիվ 5200) նպատակ ունի բարելավել ֆերմերային կազմակերպությունները: 2005 թ. Գյուղատնտեսական ապահովագրությունների օրենքը (թիվ 5363) պաշտպանում է ֆերմերներին և նրանց արտադրության մակարդակները ռիսկերից: 2005 թ. Շրջանային ծառայությունների ընդհանուր տնօրինության ամփոփումը ի հայտ բերեց լրացուցիչ միջոցառումների անհրաժեշտություն՝ մասնատված հողերի միացման, դրենաժի, հողի պաշտպանության և ստորգետնյա ջրերով ոռոգման ներդրումների իրականացման համար⁷²:

Ամենամեծ գնող գործակալությունները՝ Թուրքական հացահատիկային խորհուրդը (TMO), Թուրքական շաքարի գործարանների կորպորացիան (TSFAS), Թեյի ձեռնարկությունների գլխավոր տնօրինությունը (CAYKUR) և ծխախոտային ընկերություն TEKEL-ը դեռևս պետական են: TEKEL-ը սեփականաշնորհման փաթեթի մեջ է: 2002 թ. կառավարվող գների մեծ մասը վերացվել էին, սակայն նշված գործակալությունները շարունակում են գնման գործողությունից առաջ գներ սահմանել: 2003-2004 թթ. գնման գները աճեցին մոտ 23%-ով՝ սպիտակ գարու համար, և 14%-ով՝ ցորենի (սպիտակ ու կարմիր անատոլիական) համար: Դա ավելի բարձր է եղել, քան ինֆլյացիայի ընդհանուր մակարդակը: Ըստ իշխանությունների՝ հաջորդ տարիներին գնման գները բարձրացել են ինֆլյացիայի մակարդակին համապատասխան:

Գնման գների սահմանման հնարավորությունը Թուրքիայում անորոշության ու անկանխատեսելիության միջավայր է ստեղծում: Որպեսզի ներքին արտադրողի եկամտի մակարդակը ապահովվելու հետ մեկտեղ պահպանվի նաև իր իսկ շուկայում նրա գնային մրցունակությունը, բարձր են պահվում ներմուծման մաքսատուրքերը: Այս ամենը խոսում է Թուրքիայում ներքին արտադրողի/շուկայի խիստ պաշտպանվածության մասին:

Ֆերմերները դեռևս օգտվում են արտոնյալ ցածր տոկոսադրույքներով տրամադրվող վարկերից: Ստեղծվել է մի վարկային ֆոնդ, որն անընդհատ շարունակում է օգտագործել իր եկամուտը վարկավորման համար՝ 13,125% տոկոսադրույքով և կարող է օգտագործվել Գյուղատնտեսական վաճառքների կոոպերատիվների և նրանց Միությունների կողմից՝ արտադրողներից որոշ մշակաբույսեր և հացահատիկ գնելու համար: Ֆոնդի ամբողջական չափը մոտ 640 միլիոն նոր թուրքական լիրա է (ներառյալ տրված վարկերը): Վարկերը ուղղորդվում են պետական Ziraat բանկի միջոցով (պնդուկի, բամբակի, արևածաղկի սերմերի, արմավի, չամիչի, ձիթապտղի, ձիթապտղի յուղի և այլնի համար): Ի լրումն՝ Ziraat բանկը ձկնարտադրության և անտառային արտադրության գործունեության համար տրամադրում է վարկեր:

Արտոնյալ վարկային մեխանիզմը, որն աշխատում է արտադրանքի գնման վրա, վերջինիս համար պահանջարկ է ավելացնում՝ արդյունքում ավելացնելով դրա գինը: Սա նույնպես վկայում է ներքին արտադրողի պաշտպանության հետևանքով անկանխատեսելիության միջավայրի ձևավորման մասին:

⁷² Պետական պլանավորման կազմակերպություն (2006), 2007-2013 թթ. իններորդ զարգացման պլան, Անկարա:

2004 թ. Պետական հիդրավիկ աշխատանքների կողմից կառավարվող ոռոգման ծրագրերում ընդգրկված 26 168 հեկտար տարածքը փոխանցվել է ֆերմերների կոոպերատիվներին ու ջրօգտագործողների ասոցիացիաներին, որոնք այժմ կառավարում են ամբողջ ոռոգվող տարածքի ավելի քան 40%-ը: Օգտագործողները Պետական հիդրավիկ աշխատանքների կողմից ոռոգման ծրագրերի կառավարման և պահպանման համար չնչին տարեկան գումար են վճարում: Քանի որ կարևորվում է ոռոգման արդյունավետությունն ու ջրի օպտիմալ օգտագործումը, ոռոգման լրավճարները սահմանափակվում են ոռոգման համակարգում ներդրումներով: Սասնավորապես Ziraat բանկը տրամադրում է արտոնյալ վարկեր, որոնց մի մասը տրվում է առանց տոկոսի՝ ոռոգման նոր մեթոդների համար, իսկ մյուս մասը տրվում է 7%-ով (վարկավորման առկա 17,5% տոկոսադրույքի դիմաց): Շրջանների զարգացման ներդրումների աջակցության ծրագրի շրջանակներում նույնպես տրամադրվում է նոր մեթոդներով ոռոգման համակարգերում ներդրումների աջակցություն՝ շինարարության, մեքենաների ու սարքավորումների համար (ամբողջ ծավալի 75%-ը դրամաշնորհ է) և նոր սարքավորումների համար (ամբողջ ծավալի 50%-ը դրամաշնորհ է)⁷³:

Այն ֆերմերները, որոնք գրանցված են Ուղղակի եկամտային աջակցության վճարման ռեգիստրում, նաև ստանում են «դիզելային վառելիքի վճարում» ըստ հեկտարի (առավելագույնը մինչև 50 հեկտարի համար)՝ երկրի ֆերմերների վառելիքի միջին ծախսի (80 լիտր/հա) 35%-ը ծածկելու համար: Որպես «դիզելային վառելիքի վճարում» 2003-2005 թթ. ֆերմերներն ստացել են 39 նոր լիտր/հա: 2006 թ. վճարում չի կատարվել, իսկ 2007 թ. վճարումները տարբերվել են ըստ ապրանքների՝ 54 նոր լիտր/հա յուղային և սերմային բույսերի համար, 28,8 նոր լիտր/հա՝ հացահատկային, կերային, լոբազգի բույսերի համար, 18 նոր լիտր/հա՝ բանջարեղենի, մրգերի, հատուկ անտառների, դաշտերի և խոտհարքների համար: Ֆերմերներն ստանում են նաև պարարտանյութի համար վճար՝ տարածքի համապատասխան: Գյուղատնտեսությունում (ներառյալ թռչնաբուծական և ձկնաբուծական արտադրողները) օգտագործվող էլեկտրաէներգիան այլևս չի սուբսիդավորվում: Ընդհանուր առմամբ 80-ականների 30%-ի համեմատությամբ 2003-2005 թթ. ներդրանքային լրավճարները ավելի են նվազել, քան ամբողջ գյուղատնտեսական լրավճարների 2%-ը⁷⁴:

Թեյ աճեցնողներին տրվող էտման և որակի վճարներն (ըստ կիլոգրամի) սկսվել են 2005 թ.: Լիցենզավորված թեյի պլանտացիաները ենթակա են էտման վճարի 7 տարվա ընթացքում (տարեկան այգու 1/7-ի չափով)՝ պահպանման և տերևի արտադրության կանոններին համապատասխան որակավորված թեյի տերևների արտադրության համար: Որակի վճարումը որոշվում է ամեն տարի՝ Նախարարների խորհրդի որոշումներով: Որակի վճարումներ կատարվում են այն թեյ արտադրողներին, որոնց պլանտացիաները լիցենզավորված են: Էտման վճարումը կախված միջին տերևահավաքից. նախատեսված է թեյի պլանտացիաների էտման պատճառով ֆերմերների եկամտի կորստի 70%-ի փոխհատուցման համար: 2006 թ. էտման և որակի վճարները կազմել են համապատասխանաբար 39 միլիոն նոր լիտր և 82 միլիոն նոր լիտր: 2004 թ. առաջին անգամ ընդհանուր 4 միլիոն նոր լիտր փոխհատուցման վճարներ են շնորհվել շաքարի ճակնդեղ աճեցնողներին՝ արտադրական քվոտայի հետ կապված վնասների համար, որը 2002 թ. սկսած եղել է 2,2 միլիոն տոննա: Այս վճարումն ստանալու համար նրանք պարտավոր էին աճեցնել որոշ մշակաբույսեր⁷⁵: Միս արտադրողներին առաջին անգամ գնային հավելավճար է շնորհվել 2004 թ.:

Անասնապահության խթանման վճարումները, ինչպիսիք են արհեստական բեղմնավորման հավելավճարը և կաթի խթանման հավելավճարը, վճարվում են ֆերմերներին՝ անասնապահական արտադրության աջակցության, արտադրանքի որակի բարձրացման, տեխնոլոգիաների բարելավման, սննդի անվտանգության պայմանների բարելավման և սպառողներին ավելի լավ որակի արտադրանք առաջարկելու համար: Արհեստական բեղմնավորման համար 15,8 միլիոն նոր լիտր է վճարվել 2005 թ. և 25,4 միլիոն

⁷³ Agricultural Irrigation Subsidies: Turkey's experience, 2008, <http://www.ifap.org/en/regions/documents/IrrigationSubsidiesTurkey.pdf>

⁷⁴ OECD (2006), *Economic Surveys: Turkey*, Paris.

⁷⁵ OECD (2005), *Agricultural Policies in OECD Countries – Monitoring and Evaluation 2005*, Paris.

Նոր լիրա՝ 2006 թ.: Կաթի խթանման հավելավճարը կազմել է 115,7 միլիոն նոր լիրա 2005 թ. և 161,7 միլիոն նոր լիրա՝ 2006 թ.:

Կանխատեսվածից ցածր գների փոխհատուցման վճարումներ (այսինքն՝ գնային աջակցություն. տարբերությունն է շուկայական գնի և արտադրական ծախսերի միջև) շնորհիվ է բազմաթիվ գյուղատնտեսական արտադրանքների համար, օրինակ՝ ձիթապտղի յուղի, բամբակի, յուղային սերմերի, ցորենի և կոնոլայի: Ի լրումն՝ ուղղակի վճարումներ են տրվում մետաքսի շերամաբուծության և մոխերի արտադրության համար:

Արտադրության խթանմանն ուղղված ներդրանքային, փոխհատուցման և ուղղակի վճարումների աջակցության գործիքները լրացվում են գնային աջակցության հնարավորությամբ՝ սպառելով թուրքիայում ներքին արտադրողի պաշտպանության բոլոր ձևերը: Այս հանգամանքներում թուրքիայում գյուղատնտեսական ներքին արտադրանքը գտնվում է առավել բարենպաստ վիճակում՝ հնարավոր ներմուծումների համեմատությամբ:

Արտահանման լրավճարների մասով թուրքիայի ԱՀԿ պարտավորությունները ներառում են 44 գյուղատնտեսական արտադրանքի խմբեր: Բյուջեի սղության պատճառով թուրքիան ընդհանուր առմամբ արտահանման հատուցում է տալիս միայն 16 արտադրանքների/խմբերի: Արտահանման լրավճարները սահմանված են արտահանման արժեքի 10%-ից մինչև 20%՝ ենթակա արտադրանքների արտահանումների 14%-ից մինչև 100%-ի համար (աղյուսակ 41): Արտահանման լրավճարները վերացվել են կարտոֆիլի և չոր սոխի համար և սկսվել են մեղրի ու թռչնի՝ ուտելի ներքին օրգանների համար: Ըստ իշխանությունների՝ արտահանման լրավճարների հիմնական նպատակն է զարգացնել վերամշակված գյուղատնտեսական մթերքների արտահանման ներուժը:

Այն դեպքում, երբ միջազգային առևտրային համակարգում գյուղատնտեսական մթերքների արտահանման լրավճարներն արդեն վաղուց պետք է աստիճանական վերացման ավարտական փուլում գտնվեին, թուրքիայի արտահանման լրավճարները սահմանափակված են բյուջեի սղությամբ: Խիստ անբարենպաստ վիճակում կարող են լինել այն գործընկեր երկրները, որոնք ոչ միայն չունեն համարժեք լրավճարներ կիրառելու թույլտվություն/հնարավորություն, այլև չունեն իրենց իսկ շուկաները պաշտպանելու բավարար թույլտվություն/հնարավորություն:

Աղյուսակ 41, Արտահանման լրավճարներն ըստ գյուղարտադրանքի, 2007 թ.

| Արտադրանք | Չափը (ԱՄՆ դոլար/տոննա) | Լրավճարի ենթակա արտահանվող քանակի բաժինը (%) |
|--|------------------------|--|
| Կտրած ծաղիկներ (թարմ) | 205 | 37 |
| Սառեցրած բանջարեղեն | 79 | 27 |
| Չեղուկազրկված բանջարեղեն | 370 | 20 |
| Սառեցված մրգեր | 78 | 41 |
| Պահածոյացված բանջարեղեն և մրգեր, տոմատի մածուկ | 75 | 51 |
| Մեղր | 65 | 32 |
| Չոնոգենացված մրգային | 63 | 35 |

| Արտադրանք | Չափը (ԱՄՆ դոլար/տոննա) | Լրավճարի ենթակա արտահանվող քանակի բաժինը (%) |
|---|-------------------------|--|
| պատրաստություններ | | |
| Մրգահյութ (կոնցենտրացված) | 150 | 15 |
| Ձիթապտուղ և ձիթապտղի յուղ | 125 | 100 |
| Պատրաստված կամ պահածոյացված ձուկ | 200 | 100 |
| Թռչնի միս | 186 | 14 |
| Պահածոյացված թռչնամսի արտադրանք | 250 | 40 |
| Ձուկ | 15ԱՄՆդոլար/ 1000 հատ | 78 |
| Շոկոլադե և շոկոլադե պարունակող այլ սննդային պատրաստություններ | 119 | 48 |
| Թխվածքաբլիթներ, վաֆլի | 119 | 18 |
| Մակարոնեղեն | 66 | 32 |

Աղբյուրը՝ ԱՐԿ G/SCM/N/123/TUR/Add.1 փաստաթուղթ (2006) և Որոշում թիվ 1/2007

Արտահանողները պետք է Արտաքին առևտրի ենթաքարտուղարության կողմից լիազորված Արտահանողների ասոցիացիաներին ներկայացնեն անհրաժեշտ փաստաթղթեր՝ հատուցման դիմումի համար (օրինակ՝ մաքսային հայտարագիր, ինվոյս): Ապրանքները պետք է լքեն Թուրքիայի մաքսային տարածքը Որոշման գործողության ժամկետի ընթացքում: Որոշումը հրատարակվում է ամեն տարի կամ որոշակի ժամանակահատվածի համար: Ապրանքները պետք է ունենան թուրքական ծագում: Արտահանման հատուցումները չեն տարբերակվում՝ անկախ այն բանից, թե ուր են գնում ապրանքները: Ապրանքները պետք է ունենան բարձր և շուկայահանման համապատասխան որակ՝ արտահանման հատուցման համար ենթակա լինելու համար: Եթե արտահանված ապրանքները վերադարձվում են Թուրքիա կամ որևէ պատճառով մերժվում են ներմուծող երկրների կողմից, ապա հատուցումները հետ են վերցվում⁷⁶:

Ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)՝ արտադրողների լրավճարների համարժեքները (PSE), որոնք ընդգրկում են գյուղատնտեսական քաղաքականության շրջանակներում փոխանցումների տարեկան արժեքը, որպես արտադրության ամբողջական արժեքի տոկոսներ ավելացել են 80-ականների համեմատությամբ: Սպառողների համար թաքնված հարկը, որը չափվում է սպառողների լրավճարների համարժեքներով (CSE) և ցույց է տալիս գյուղատնտեսական քաղաքականության շրջանակներում սպառողներին փոխանցումների տարեկան արժեքը՝ որպես սպառման ամբողջական արժեքի տոկոսներ, նույնպես աճել է (բացարձակ իմաստով): Մինչդեռ ընդհանուր ծառայությունների լրավճարների համարժեքը (GSE), որը գնահատում է գյուղատնտեսությանը հատկացված ընդհանուր ծառայություններին (հետազոտություններ, ենթակառուցվածքներ, տեսչություն, շուկայավարում և խթանում) համախառն փոխանցումների տարեկան դրամային արժեքը՝ որպես ամբողջական փոխանցումների տոկոս, նվազել է⁷⁷: Գյուղատնտեսության աջակցության հետ կապված ամբողջական փոխանցումները (TSE), որպես ՀՆԱ-ի տոկոս, որը ցույց է տալիս ամբողջական բեռն տնտեսության համար, աճել է (աղյուսակ 42):

⁷⁶ Որոշում թիվ 2007/1, Գյուղատնտեսական մթերքների համար արտահանման լրավճարների ծրագիր, հրատարակված պաշտոնաթերթում, 2007:

⁷⁷ OECD (undated), *Methodology for the Measurement of Support and Use in Policy Evaluation*, Paris.

| Փոխանցումներ | | 1986-88 | 2003-05 | 2003 | 2004 | 2005 |
|---|------------------|---------|---------|---------|---------|---------|
| PSE | միլիոն եւրո | 2,873 | 9,593 | 9,862 | 9,055 | 9,862 |
| | միլիոն ԱՄՆ դոլար | 3,169 | 11,550 | 11,142 | 11,250 | 12,257 |
| | (%) | 16 | 26 | 28 | 25 | 25 |
| CSE | միլիոն եւրո | -2,224 | -7,152 | -7,825 | -6,395 | -7,237 |
| | միլիոն ԱՄՆ դոլար | -2,446 | -8,593 | -8,840 | -7,946 | -8,994 |
| | (%) | -16 | -23 | -26 | -21 | -21 |
| GSE | միլիոն եւրո | 277 | 916 | 871 | 534 | 1,341 |
| | միլիոն ԱՄՆ դոլար | 309 | 1,105 | 984 | 664 | 1,667 |
| | (%) | 10 | 9 | 8 | 6 | 12 |
| Ամբողջական փոխանցումներ | միլիոն եւրո | 3,149 | 10,509 | 10,734 | 9,589 | 11,203 |
| | միլիոն ԱՄՆ դոլար | 3,478 | 12,655 | 12,126 | 11,914 | 13,924 |
| | (ՀՆԱ-ի %) | 4.0 | 4.2 | 5.1 | 3.9 | 3.8 |
| Ամբողջական փոխանցումներ բոլոր ՏՀԶԿ երկրների համար | միլիոն եւրո | 276,039 | 308,139 | 309,969 | 304,464 | 309,983 |
| | միլիոն ԱՄՆ դոլար | 303,771 | 371,243 | 350,183 | 378,281 | 385,264 |
| | (ՀՆԱ-ի %) | 2.3 | 1.1 | 1.1 | 1.1 | 1.1 |

Աղբյուրը՝ OECD (2006), *Agricultural Policies in OECD Countries: At a Glance*, Paris

Թուրքիայի գյուղատնտեսական քաղաքականության իրականացման արդյունքները ցույց են տալիս, որ երկրում գյուղատնտեսական աջակցությունը իրականացնում է սպառողների և ընդհանուր ծառայությունների հաշվին: Սա նշանակում է, որ այդ աջակցությունը կրում է առավելապես ներքին արտադրողին պաշտպանելու բնույթ: ՏՀԶԿ-ի երկրների համեմատությամբ Թուրքիայում աջակցության ամբողջական փոխանցումները ՀՆԱ-ում տոկոսի հաշվով մոտ չորս անգամ ավելի շատ են:

Մինչև 2000 թ. Թուրքիայի արտադրողների աջակցության համարյա 100%-ը այնպիսի օգնություն էր, որը կարող էր ունենալ ամենաշատ արտադրության աղավաղման հետևանքներ (շուկայական գնի աջակցություն, արտադրանքի վրա հիմնված վճարումներ և ներդրանքային լրավճարներ), օգուտ էին տալիս հիմնականում ավելի մեծ ֆերմերային տնտեսություններին և ավելացնում էին բնական ռեսուրսների (ինչպես ջուրը) օգտագործման վրա ճնշումը: 2003-2005 թթ. այս բաժինը նվազել է մինչև 83%՝ այսպիսով ավելացնելով ֆերմերների շփումը համաշխարհային շուկայի ազդանշանների հետ: Մինչդեռ նույն ժամանակահատվածում ֆերմերների ստացած գները մոտ 32%-ով ավելի բարձր էին, քան համաշխարհային շուկայի գները⁷⁸:

Գյուղատնտեսական հողի հարկը 0% է: Բոլոր ֆերմերները ենթակա են 2% հարկման՝ անասնապահական ապրանքների վաճառքի արժեքից, և 4%՝ այլ գյուղատնտեսական ապրանքների վաճառքի արժեքից: Երբ գյուղատնտեսական ապրանքը վաճառվում է արժեթղթերի առջ ու վաճառքով, ապա այդ տոկոսադրույքները կիսվում են: Արտահանման հարկեր են կիրառվում պնդուկի միջուկի վրա՝ 0,04 ԱՄՆ դոլար/կիլոգրամ չափով, և կեղևով պնդուկի վրա՝ 0,08 ԱՄՆ դոլար/կիլոգրամ չափով:

Գյուղատնտեսության համար մաքսատուրքերով պաշտպանությունը մնում է հարաբերականորեն բարձր: Գյուղատնտեսությունում Առավել բարենպաստ ազգի

⁷⁸ OECD (2006), *Agricultural Policies in OECD Countries: At a Glance*, Paris.

մաքսատուրքերի պարզ միջինը 46,7% է: Վերջին տարիներին ավելացել են հացահատկայինների և բուսական յուղերի մաքսատուրքերը: Այնպիսի գյուղատնտեսական ապրանքների ներմուծումը, ինչպիսիք են խաչասերման նպատակով կենդանի անասունները, կատարվում է 0-ական մաքսատուրքով: Մաքսատուրքերը որոշ մշակված մսային ապրանքներից հասնում են մինչև 225%, մինչդեռ որոշ կաթնամթերքներ (թան, սերուցք) ենթակա են մաքսատուրքերի՝ մինչև 170%: Ավելին՝ հատուկ, բարդ և փոփոխական մաքսատուրքերը կիրառվում են հիմնականում գյուղատնտեսական ապրանքների համար

Թուրքիան պարտավորվել է նվազեցնել 44 ապրանքների խմբերի համար արտահանման լրավճարների համար իր բյուջետային հատկացումները 24%-ով և սուբսիդավորված արտահանումների ծավալը 14%-ով՝ տաս տարվա ընթացքում հավասար չափաբաժիններով՝ սկսած 1995 թ.: Թուրքիան պարտավորություն չի ստանձնել գյուղատնտեսական արտադրողներին ֆինանսական աջակցության կրճատման համար, որովհետև իշխանությունները գնահատել են, որ աջակցությունը, չափված Աջակցության համախառն չափով, ցածր է առավելագույն 10% մակարդակից, որի համար նվազեցման պարտավորություններ չեն պահանջվում:

Թուրքիան դեռ շարունակում է կիրառել արտահանման լրավճարներ՝ չնայած այդ լրավճարները դադարեցնելու պարտավորությանը: Թուրքիայի ներքին աջակցության չափը, հաշվի առնելով նաև ոլորտի չհաշվառվող զգալի մասը, հնարավոր է, որ գերազանցի առավելագույն թույլատրվող մակարդակը: Վերջինս երկու անգամ բարձր է Հայաստանի պարտավորություններով ամրագրված աջակցության առավելագույն հինգ տոկոս մակարդակից:

ԱՀԿ-ի անդամ որոշ երկրներ մտահոգություն են հայտնել Թուրքիայի բրնձի ներմուծման նոր կարգի և Թուրքական պաշտոնագրքում հրատարակված 2005 ու 2006 թթ. մաքսատուրքերի չափերին առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ: Վերջին տարիներին Թուրքիայից հաճախակիորեն բացատրություն է պահանջվել կենդանիների հիվանդությունների վերահսկման միջոցառումների մասին:

Տարածաշրջանային մակարդակով Թուրքիան և Երոմիությունը համաձայնել են աշխատել երկկողմ ազատ առևտրի ուղղությամբ: Ըստ Մաքսային միության որոշման՝ ԵՄ-ից Թուրքիա ներմուծված վերամշակված գյուղատնտեսական ապրանքները ենթակա են մաքսատուրքերի, որոնք բաղկացած են արդյունաբերական և գյուղատնտեսական բաղադրիչներից: Բոլոր արդյունաբերական բաղադրիչներն ունեն 0-ական մաքսատուրքեր, և գյուղատնտեսական բաղադրիչների վրա կիրառվող մաքսատուրքերը ցածր են Առավել բարենպաստ ազգի դրույքաչափերից: Մի խումբ վերամշակված գյուղատնտեսական ապրանքներ ենթակա են 0 մաքսատուրքի, բայց քվոտայով Գյուղատնտեսական ապրանքների սահմանափակ ընդգրկումը ԵՄ-ի հետ արտոնյալ առևտրի և Թուրքիայի այլ երկկողմ համաձայնագրերով հետաձգում է դրանց բախումը ավելի մեծ մրցակցության հետ: Ապրանքները հիմնականում ենթակա են արտոնյալ սակագնային քվոտաների:

3.2. Հայաստանի գյուղատնտեսության ոլորտ

Հայաստանի գյուղատնտեսական հատվածը հանդիսանում է երկրի տնտեսության նշանակալի բաղադրիչներից մեկը՝ կազմելով ՀՆԱ-ի մոտ 16%-ը, թեև տնտեսության այլ մասերի աճող կարևորությունը նվազեցրել է այդ բաժինը: 2008 թ. հատվածի աճը զգալիորեն նվազել է նախորդ տարվա համեմատությամբ՝ հասնելով ընդամենը 1,3%-ի, այն դեպքում, երբ 2007 թ. գյուղատնտեսական ընդհանուր արտադրության աճը կազմել էր 10,2%: 2008 թ. առաջին կիսամյակում հատվածի աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմել էր 8,3%, որը պայմանավորված էր եղանակային բարենպաստ պայմանների շնորհիվ մրգի ու

բանջարեղենի արտադրության կտրուկ աճով: Սակայն հողի մշակման ամբողջ արտադրությունը, որը կազմում է գյուղատնտեսական արտադրության երկու երրորդը, 2008 թ. ընթացքում չի աճել՝ խաղողի, ցորենի և այլ չոռոզվող մշակաբույսերի աշնանային վատ բերքի պատճառով: Հատվածի համեստ աճը հնարավոր է եղել միայն մասնաբերքի ու կաթնամթերքի արտադրության նախորդ տարվա համեմատությամբ 3,5% աճի շնորհիվ:

2008 թ. պատրաստված սննդամթերքի ու տարբեր գյուղատնտեսական մթերքների (ներառյալ՝ ցորեն, միս և յուղ/ձեթ) Հայաստանի ամբողջ ներմուծումները կազմել են \$755 միլիոն: Նախորդ տարվա համեմատությամբ այս ներմուծումները դրամական արտահայտությամբ աճել են ավելի քան 40%-ով, ինչը մեծ մասամբ կարող է պայմանավորված լինել այս մթերքների աճող համաշխարհային գներով: Չնայած գյուղատնտեսության հատվածի վերջին տարիների որոշակի աճին՝ Հայաստանը դեռևս խիստ կախված է սննդի ներմուծումից: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հիմնականում լեռնային երկիր լինելով՝ Հայաստանն ունի քիչ վարելահող:

Մյուս կողմից՝ պատրաստված սննդամթերքի ու գյուղատնտեսական մթերքների արտահանումները 2008 թ. երկնիշ աճ են գրանցել՝ կազմելով \$208 միլիոն: Սպասվում է, որ այս ցուցանիշը կշարունակի աճել՝ սնունդ արտահանողների համար ազատ տնտեսական գոտու ստեղծման շնորհիվ, որը Ջվարթնոց օդանավակայանի շուրջը ստեղծվող հարկերից ազատված գոտում նախատեսվում է արտահանողների ապրանքների փաթեթավորում ու պահեստավորում և բոլոր անհրաժեշտ փաստաթղթային աշխատանքի կատարում: Վերջին տարիներին նաև սփյուռքից ներդրումներ են կատարվել Հայաստանի գյուղատնտեսական գործարարության ոլորտում:

Հայաստանի համար գյուղատնտեսության հատվածը շարունակում է պահպանել իր սոցիալական խիստ կարևորությունը: Բնակչության մոտ 36%-ը ապրում է գյուղական շրջաններում, որի զգալի մասը ունի չափազանց ցածր եկամուտ և զբաղված է տարրական գոյատևման համար վարվող գյուղատնտեսությամբ: Շատ ընտանիքներ շարունակում են իրենց սպառման կարիքները հոգալու համար հույսը դնել տեղական գյուղատնտեսական արտադրության վրա՝ արտասահմանում աշխատող ազգականների մասնավոր դրամափոխանցումների հետ մեկտեղ: Ի լրումն՝ սննդի ապահովության ծրագրերի միջազգային դոնոր կազմակերպությունները Հայաստանի որոշ մասերում սկսել են շրջանների զարգացման ծրագրեր, որոնք ուշացումով են սկսում ազդեցություն գործել՝ մասամբ, ըստ որոշ վերլուծական աղբյուրների, ֆինանսավորման անարդյունավետ օգտագործման պատճառով: Ջարգացմանը ուղղված միջոցառումների թվում է նաև սփյուռքի ֆինանսավորմամբ գյուղական ներդրումային ծրագիրը, որը նախատեսվում է բարելավել 50 սահմանամերձ գյուղերի պայմանները: Ի լրումն՝ ԱՄՆ Հազարամյակի մարտահրավերի կորպորացիայի 2006-2010 թթ. ծրագիրը Հայաստանում նախատեսվում է գյուղերի զարգացում՝ տրանսպորտային ենթակառուցվածքի ու ոռոգման ցանցի բարելավման միջոցով:

Հատվածի զարգացման կառուցվածքային սահմանափակում է հանդիսանում մասնավոր գյուղացիական տնտեսությունների փոքր չափը: Մյուս կողմից՝ Հայաստանի գյուղատնտեսության հատվածի արդյունքը մեծ մասամբ կախված է կլիմայից: Ոռոգման ցանցը ծածկում է երկրի վարելահողերի միայն մի մասը, և եղանակային վատ պայմանները նշանակալի ազդեցություն ունեն գյուղատնտեսական արտադրանքի վրա: Վերջին տարիներին ցուրտ ձմեռները, քրիեղեղները և երաշտը բացասական ազդեցություն են ունեցել արտադրանքի վրա: Սակայն գյուղարտադրողների համար վաճառքների բարելավված հնարավորությունները (ներառյալ՝ մշակող ձեռնարկությունների հետ կանոնավոր պայմանագրերի կնքումը, որը նրանց հնարավորություն է տալիս ավելի լավ շուկայահանել իրենց բերքը) և ոռոգման ցանցի վերանորոգման աշխատանքները նպաստել են երկրի գյուղատնտեսական հատվածի մինչև 2005 թ. գրանցած աճին: Այնուամենայնիվ, 2006 թ. ընդհանուր հատվածը մեծ մասամբ աճ չի ունեցել՝ ամռան խիստ երաշտի ու դրան հաջորդած վատ բերքի պատճառով: Շոգ եղանակից հատկապես շատ էին տուժել հացահատիկային մշակաբույսերը: Հայաստանի գյուղատնտեսական հատվածի արդյունքը խաթարվում է նաև սարքավորումների ու կարևոր ներդրանքների (ինչպես, օրինակ, պարարտանյութը) պակասի և մեծածախ վաճառքի շուկայի ու հողի շուկայի բացակայության պատճառով:

Հայաստանի գյուղատնտեսության ամենալուրջ խնդիրներից է ջրի պաշարների աղտոտվածությունը: Վնասված ու վատ պահպանվող ջրագծերը հանգեցնում են աղտոտման ու փոխադրման զգալի կորուստների: Ոռոգման ջրերը հաճախ պարունակում են նավթային ածանցյալների, քլորիդների, նիտրատների, ծանր մետաղների և այլ աղտոտիչների բարձր մակարդակներ: Համաշխարհային բանկը օժանդակում է ջրի պաշարների ու ոռոգման համակարգերի վերականգնման միջոցառումներին, թեև բանկի նախկին ծրագիրը, ըստ որոշ վերլուծական աղբյուրների, եղել է հակասական՝ վատ կառավարման մեղադրանքներով: ԱՄՆ Հազարամյակի մարտահրավերի կորպորացիայի հինգ տարվա ֆինանսավորման ծրագրի մի մասը նույնպես օգտագործվում է ոռոգման ցանցի վերանորոգման համար: Ջրի ու ոռոգման օգտագործման սակագները աստիճանաբար բարձրացվում են, բայց դեռևս ծախսածածկման մակարդակին չեն հասել:

Հայկական գյուղատնտեսությունը, իր կարևորությամբ հանդերձ, ունի բազմաթիվ խնդիրներ, որոնք համակարգված լուծում են պահանջում: Օգտագործելով թույլատրելի բոլոր հնարավոր միջոցները՝ պետք է նվազագույնի հասցնել հատվածի արդյունքի բնակլիմայական պայմաններից կախվածությունը, ստեղծել ու զարգացնել շուկայահանման նոր համակարգեր և վերանայել սարքավորումներով ու պարարտանյութով ապահովման հնարավորությունները:

Ոռոգման մեխանիզմը պետք է վերանայվի ամբողջությամբ. ջրօգտագործողին աջակցելու փոխարեն պետք է միջոցներն ուղղվեն ոռոգման մատակարարման արդյունավետության բարձրացմանն ու սակագների նվազեցմանը: Այս առումով ջրամատակարարողին աջակցելու հետ մեկտեղ պետք է դիտարկվի նաև ոլորտում մրցակցություն ստեղծելու անհրաժեշտությունը:

Ըստ Հայաստանի ԱՀԿ պարտավորությունների՝ գյուղատնտեսական հատվածում պետք է հաղթահարվեն նոր մարտահրավերներ: Տեղական արտադրողների արտոնությունները պետք է վերացվեն, և նեքին շուկայում գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ պետք է ավելացված արժեքի հարկ կիրառվի: Սակայն Հայաստանը պետք է դրա դիմաց որոշ գյուղատնտեսությունների համար համապատասխան փոխհատուցման միջոց կիրառի: Ավելին՝ գյուղական տնտեսությունների միայն մոտ 1%-ը պետք է ԱԱՀ վճարի, քանի որ այդ տնտեսությունների մեծ մասի եկամուտները ավելի քիչ են, քան հարկի կիրառման համար սահմանված շեմը:

ԱՀԿ-ի պարտավորություններով Հայաստանը սահմանափակ աջակցություն է ցուցաբերում գյուղատնտեսության հատվածին: Հիմնական աջակցությունը բաղկացած է անսահմանափակ կերպով թույլատրվող ծրագրերից, ինչպիսիք են ընդհանուր ծառայությունները, հետազոտություններն ու զարգացումը, աղետների հասցրած վնասների հատուցումը և այլն: Հայաստանը կարող է նաև հատվածին տալ հատուկ լրավճարներ՝ առավելագույնը գյուղատնտեսական արտադրության 5%-ի չափով, սակայն այդ հնարավորությունը դեռևս ամբողջությամբ չի օգտագործվում:

Նույնիսկ եթե Հայաստանը գյուղատնտեսությանը աջակցի արտադրության 5%-ի չափով, միևնույն է, դա երկու անգամ քիչ է, քան հարևանի 10%-ը: Հայկական արտադրողների՝ ԱԱՀ-ից ազատվող մոտ 99%-ի համար այդ տարբերությունը ավելի քան կհատուցվի ներմուծումների նկատմամբ ԱԱՀ-ի կիրառմամբ: Հայկական այն արտադրողները, որոնց նկատմամբ կկիրառվի ԱԱՀ, կարող են մասամբ ետ ստանալ այն՝ գները նվազեցնելու խիստ պայմանով, քանի որ ԱԱՀ-ն փաստացի վճարում են սպառողները: Մյուս կողմից՝ այս արտադրողները, լինելով մեծ, կարող են մրցակցել նաև բարձր արդյունավետությամբ, արտադրողականությամբ և մասշտաբից տնտեսումով:

3.3. Գյուղատնտեսության ոլորտների համեմատություն

Նախ՝ երկու երկրների գյուղատնտեսական հատվածների հարաբերական կարևորությունը գնահատելու համար դիտարկենք դրանց արդյունքների և կարևոր ներդրանքի՝ պարարտանյութի օգտագործման ցուցանիշները (աղյուսակներ 43-46):

Աղյուսակ 43, Գյուղատնտեսության ավելացված արժեք (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 25.96 | 23.68 | 24.66 | 20.80 | 19.64 | 18.26 |
| Թուրքիա | 11.71 | 11.39 | 10.92 | 10.80 | 9.52 | 8.86 |
| Վրաստան | 20.61 | 20.55 | 17.92 | 16.69 | 12.82 | 10.92 |
| Ադրբեջան | 15.17 | 13.46 | 11.84 | 9.90 | 7.42 | 6.26 |
| Իրան | 12.04 | 11.97 | 11.23 | 10.40 | 10.40 | 8.98 |
| Ստորին միջին եկամուտ | 14.76 | 14.31 | 14.14 | 13.55 | 13.09 | .. |
| Վերին միջին եկամուտ | 6.76 | 6.88 | 6.63 | 6.14 | 5.73 | 5.15 |
| Բարձր եկամուտ | 1.69 | 1.68 | 1.71 | 1.53 | .. | .. |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 9.06 | 8.60 | 8.48 | 8.06 | 7.28 | 6.74 |
| Աշխարհ | 3.48 | 3.45 | 3.42 | 3.17 | .. | .. |

Աղյուսակ 44, Գյուղատնտեսության ավելացված արժեք (տարեկան աճ, %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 3.80 | 4.14 | 14.18 | 11.17 | 0.42 | 2.50 |
| Թուրքիա | 8.75 | -2.00 | 2.83 | 7.18 | 1.36 | -6.82 |
| Վրաստան | -1.40 | 10.30 | -7.86 | 12.01 | -9.30 | 4.00 |
| Ադրբեջան | 6.40 | 5.60 | 4.60 | 7.50 | 0.95 | 4.46 |
| Իրան | 11.36 | 7.11 | 2.17 | 7.08 | 5.29 | 4.00 |
| Ստորին միջին եկամուտ | 0.71 | 4.84 | 3.70 | 4.31 | 4.74 | 3.71 |
| Վերին միջին եկամուտ | 3.39 | 3.28 | 3.70 | 2.86 | 3.37 | 0.65 |
| Բարձր եկամուտ | 0.45 | -1.23 | 4.89 | 0.93 | .. | .. |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 4.19 | 1.10 | 6.39 | 3.53 | 2.80 | -0.51 |
| Աշխարհ | 0.99 | 2.14 | 4.19 | 2.88 | 3.09 | .. |

Աղյուսակ 45, Գյուղատնտեսական ավելացված արժեքը մեկ աշխատողի հաշվով (2000թ հաստատուն \$)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---------------------------|----------|----------|----------|----------|
| Հայաստան | 2973.95 | 3170.41 | 3707.83 | 4198.44 |
| Թուրքիա | 1814.75 | 1773.49 | 1819.40 | 1945.94 |
| Վրաստան | 1544.85 | 1760.63 | 1673.86 | 1936.63 |
| Ադրբեջան | 1032.50 | 1085.85 | 1132.32 | 1212.23 |
| Իրան | 2362.86 | 2491.38 | 2503.63 | 2632.39 |
| Ստորին միջին եկամուտ | 471.30 | 492.21 | 507.73 | 527.88 |
| Վերին միջին եկամուտ | 2692.04 | 2817.04 | 2960.13 | 3085.75 |
| Բարձր եկամուտ | 22926.14 | 23475.89 | 25582.56 | 27309.34 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 1923.20 | 1971.10 | 2125.25 | 2229.33 |
| Աշխարհ | 864.73 | 878.76 | 915.39 | 937.76 |

Աղյուսակ 46, Պարարտանյութի օգտագործում (100գ՝ մշակվող հողի 1 հա հաշվով)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 |
|---------------------------|---------|---------|---------|---------|
| Հայաստան | 317.33 | 211.45 | 276.12 | 208.65 |
| Թուրքիա | 704.91 | 862.25 | 793.27 | 852.38 |
| Վրաստան | 330.41 | 307.00 | 272.31 | 377.77 |
| Ադրբեջան | 104.34 | 91.09 | 137.26 | 174.01 |
| Իրան | 707.97 | 702.60 | 247.89 | 762.18 |
| Ստորին միջին եկամուտ | 1519.50 | 1523.41 | 1594.78 | 1728.60 |
| Վերին միջին եկամուտ | 579.03 | 665.70 | 748.23 | 681.02 |
| Բարձր եկամուտ | 1236.22 | 1315.90 | 1268.85 | 1189.55 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 318.39 | 310.70 | 365.32 | 379.85 |
| Աշխարհ | 1074.02 | 1123.48 | 1146.52 | 1166.30 |

Պետք է նորից ընդգծել, որ գյուղատնտեսական հատվածի արդյունքը էականորեն կախված է պետական աջակցությունից: Սակայն այդ աջակցության չափը ԱՀԿ-ի շրջանակներում սահմանափակվում է առավելագույն չափի պարտավորությամբ: ԱՀԿ-ի մեկ այլ պահանջ պարտադրում է ընդհանրապես չտրամադրել արտահանումների լրավճարներ: Այս պարտավորությունները երկու երկրների համար ամփոփվում են հետևյալ կերպ (աղյուսակ 47)՝

Աղյուսակ 47, Գյուղատնտեսության ԱՀԿ պարտավորություններ

| ԱՀԿ պարտավորություն | Հայաստան | Թուրքիա |
|--|----------|---------|
| Գյուղատնտեսական ներքին աջակցության առավելագույն չափ (արտադրության մաս) | 5% | 10% |
| Գյուղատնտեսական արտահանման լրավճարների արգելում | այո | ոչ |

Հայաստանի գյուղատնտեսությունը վերջին տարիներին ցուցաբերել է աճի հարաբերականորեն ավելի կայուն տեմպեր: Հատվածը, որպես ՀՆԱ-ի մաս, ավելի քան 2 անգամ մեծ է Թուրքիայի այդ ցուցանիշից: Սակայն հաշվի առնելով, որ մեկ շնչի հաշվով թուրքական ՀՆԱ-ն ավելի քան 2 անգամ մեծ է Հայաստանի այդ ցուցանիշից՝ գյուղատնտեսական հատվածը երկու երկրների համար ունի հարաբերականորեն հավասար կարևորություն: Դրա հիմքում ընկած է այն, որ մի կողմից՝ հայ գյուղատնտեսական աշխատողի արտադրողականությունը առնվազն 2 անգամ բարձր է իր թուրք գործընկերոջ արտադրողականությունից: Սյուս կողմից՝ Թուրքիայում ավելի շատ են օգտագործվում այլ միջոցներ, մասնավորապես մշակվող հողի միավորի հաշվով Թուրքիայում ավելի քան 4 անգամ ավելի շատ է պարարտանյութ օգտագործվում, քան Հայաստանում: Վերջինս ուղղակիորեն պայմանավորված է այն հանգամանքով, որ ըստ ԱՀԿ-ի պարտավորությունների՝ թուրքական գյուղատնտեսական հատվածը իրավասու է 2 անգամ ավելի շատ արտադրության աջակցություն ստանալ: Բազմակողմ կանոնների թույլատրված խախտումով այն ստանում է նաև արտահանման լրավճարներ:

Հայաստանի և Թուրքիայի գյուղատնտեսության հատվածների արտաքին առևտուրը գնահատելու համար դիտարկենք դրանց արտահանումների և ներմուծումների տեսակարար կշիռները բոլոր ապրանքների արտահանումներում և ներմուծումներում (համապատասխանաբար աղյուսակներ 48 և 49):

Աղյուսակ 48, Գյուղատնտեսական հումքի արտահանումներ (ապրանքների արտահանումների %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|---------------------------|------|------|------|------|------|
| Հայաստան | 1.77 | 0.87 | 1.71 | 0.97 | 2.98 |
| Թուրքիա | 0.81 | 0.80 | 0.66 | 0.52 | 0.27 |
| Վրաստան | 2.58 | 3.12 | 2.53 | 2.38 | 2.24 |
| Ադրբեջան | 1.26 | 1.51 | 1.15 | 1.03 | 0.71 |
| Իրան | 0.40 | 0.42 | 0.30 | 0.29 | 0.35 |
| Ստորին միջին եկամուտ | 1.84 | 2.00 | 1.96 | 1.85 | 2.08 |
| Վերին միջին եկամուտ | 2.32 | 2.45 | 2.15 | 1.98 | 1.85 |
| Բարձր եկամուտ | 1.69 | 1.68 | 1.66 | 1.55 | 1.51 |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 2.82 | 2.80 | 2.51 | 2.22 | 2.03 |
| Աշխարհ | 1.80 | 1.82 | 1.77 | 1.64 | 1.60 |

Աղյուսակ 49, Գյուղատնտեսական հումքի ներմուծումներ (ապրանքների ներմուծումների %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|---------------------------|------|------|------|------|------|
| Հայաստան | 1.15 | 1.03 | 1.04 | 0.84 | 0.84 |
| Թուրքիա | 4.16 | 3.68 | 3.12 | 2.78 | 2.23 |
| Վրաստան | 0.90 | 0.40 | 0.46 | 0.37 | 0.48 |
| Ադրբեջան | 1.16 | 0.95 | 0.85 | 1.02 | 0.99 |
| Իրան | 1.87 | 2.05 | 2.19 | 1.92 | 0.64 |
| Ստորին միջին եկամուտ | 3.31 | 3.20 | 3.08 | 2.77 | 2.84 |
| Վերին միջին եկամուտ | 1.71 | 1.73 | 1.63 | 1.49 | 1.39 |
| Բարձր եկամուտ | 1.73 | 1.64 | 1.57 | 1.46 | 1.37 |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 2.24 | 2.09 | 1.93 | 1.76 | 1.52 |
| Աշխարհ | 1.87 | 1.79 | 1.73 | 1.58 | 1.48 |

Արտահանվող այլ ապրանքների համեմատությամբ Հայաստանի գյուղատնտեսական հումքի արտահանումների կարևորությունը ավելի մեծ է, քան Թուրքիայինը: Հակառակ պատկերն է ներմուծումների դեպքում. ներմուծվող այլ ապրանքների համեմատությամբ Թուրքիայի գյուղատնտեսական հումքի ներմուծումների կարևորությունը ավելի մեծ է, քան Հայաստանինը: Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով Թուրքիայի ապրանքների ներմուծումների զգալի մակարդակը, եկիրը նաև զգալի քանակությամբ գյուղատնտեսական հումք է ներմուծում: Իհարկե, Թուրքիան նախ իր մանածագործվածքների ու հագուստի ոլորտի կարիքների համար առեւտլի քանակությամբ բամբակ է ներմուծում (\$2,8 միլիարդ): Երկիրը նաև զգալի քանակությամբ ներմուծում է սոյա, արևածաղկի սերմեր ու ՆՉ 12 ապրանքախմբի մեջ մտնող այլ յուղային սերմեր (\$1 միլիարդ), տարբեր հացահատիկ (ՆՉ 10, մոտ \$1 միլիարդ), տարբեր կենդանական ու բուսական ճարպեր ու յուղեր (ՆՉ 15, մոտ \$0,8 միլիարդ), բուրդ ու այլ կենդանական մազ (ՆՉ 51, մոտ \$0,5 միլիարդ), ծխախոտ և այլն:

4. Սանիտարական և բուսասանիտարական կարգավորում

4.1. Սանիտարական և բուսասանիտարական կարգավորումը Թուրքիայում

4.1.1. Ոլորտի կարգավորումը ԱՅԿ-ում

1994 թ. Ուրուգվայի փուլի ժամանակ ընդունված ԱՅԿ-ի Սանիտարական և բուսասանիտարական միջոցների մասին համաձայնագիրն ընդհանուր հիմք է սահմանում Սանիտարական և բուսասանիտարական միջոցների համար՝ բոլոր ԱՅԿ-ի անդամ պետություններում: Այս համաձայնագրով սանիտարական և բուսասանիտարական միջոցները սահմանվում են որպես «բոլոր տեսակի առևտրային կանոններ, որոնք նպատակ ունեն պաշտպանելու մարդկանց, կենդանիների և բույսերի կյանքը և առողջությունը»: Դրանք ներառում են բոլոր այն միջոցները, որոնք կիրառվում են.

- 1) կենդանիների կամ բույսերի կյանքը կամ առողջությունը վնասատուների և հիվանդությունների մուտքի, հաստատման և տարածման հետևանքով ծագող վտանգներից պաշտպանելու համար,
- 2) մարդու կամ կենդանիների կյանքը կամ առողջությունը սննդամթերքում, խմիչքներում կամ անասնակերերում եղած հավելումներից, աղտոտող և/կամ թունավոր նյութերից կամ հիվանդություն հարուցող մարմիններից ծագող վտանգներից պաշտպանելու համար,
- 3) մարդու կյանքը կամ առողջությունը կենդանիների, բույսերի կրած կամ դրանցից պատրաստված արտադրանքներում եղած հիվանդություններից պաշտպանելու համար,
- 4) կամ վնասատուների մուտքի, հաստատման և տարածման հետևանքով ծագող այլ վնասները կանխելու կամ սահմանափակելու համար:

Նպատակ ունենալով, որ նշված միջոցները հնարավորինս փոքր խոչընդոտ հանդիսանան անդամ պետությունների միջև առևտրի համար, ԱՅԿ-ի նշված համաձայնագրով նախատեսված է, որ այդ միջոցները պետք է հիմնված լինեն միջազգային ստանդարտների և ուղեցույցների վրա: Նույն համաձայնագրով առաջարկվում են սանիտարական և բուսասանիտարական հետևյալ միջազգային ստանդարտները.

- 1) Սննդամթերքի անվտանգություն. Codex Alimentarius-ի հանձնաժողով (CAC),
- 2) Կենդանիների առողջություն. Կենդանիների առողջության հարցերով համաշխարհային կազմակերպություն (OIE),
- 3) Բույսերի առողջություն. Բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիա (IPPC):

Վերոնշյալ ստանդարտներից յուրաքանչյուր շեղում դեպի ավելի խիստ ազգային ստանդարտներ պետք է արդարացված լինի ռիսկի գնահատմամբ⁷⁹:

Դիտարկենք նշված ոլորտներում ԱՅԿ-ի պահանջներին թուրքական կողմի համապատասխանության աստիճանը: Այսպես՝ գյուղատնտեսության ոլորտում Թուրքիան ունի 1519 ստանդարտ, որից միայն 259-ն են համապատասխանում միջազգային ստանդարտներին (համապատասխանության աստիճանը կազմում է 17.1%), իսկ սննդի արտադրության ոլորտում գոյություն ունեցող 1793 ստանդարտներից միայն 546-ն են մշակվել՝ հիմնվելով միջազգային ստանդարտների վրա (համապատասխանության աստիճանը կազմում է 30.5%) (աղյուսակ 50):

⁷⁹ Սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման մասին համաձայնագիր, «Առևտրի բազմակողմ բանակցությունների Ուրուգվայի փուլի արդյունքները, իրավական տեքստեր», թարգմանությունը՝ AEPLAC, 2002թ.:

| Ոլորտ (համաձայն ISIC դասակարգման) | Թուրքական ստանդարտների քանակը միտքով | Միջազգային ստանդարտներին համընթաց թուրքական ստանդարտների քանակը միտքով | Թուրքական ստանդարտների համընթացությունը (%) միտքով |
|---|--------------------------------------|--|--|
| Ռազմական ոլորտ | 131 | 1 | 0,8 |
| Սոցիոլոգիա, ծառայություններ, ընկերության գործունեության կազմակերպում, կառավարում, վարչարարություն | 1,075 | 110 | 10,2 |
| Գյուղատնտեսություն | 1,519 | 259 | 17,1 |
| Երկաթուղային ոլորտ | 183 | 45 | 24,6 |
| Հագուստեղենի արդյունաբերություն | 169 | 47 | 27,8 |
| Նավթային և հարակից տեխնոլոգիաներ | 930 | 283 | 30,4 |
| Սննդի արտադրության տեխնոլոգիաներ | 1,793 | 546 | 30,5 |
| Ճանապարհային ավտոմեքենաներ | 701 | 218 | 31,1 |
| Քաղաքաշինություն | 459 | 145 | 31,6 |
| Ինքնաթիռային և տիեզերագնացության ոլորտ | 1,441 | 519 | 36,0 |
| Առողջապահության տեխնոլոգիաներ | 1,106 | 444 | 40,1 |
| Էլեկտրոնիկա | 846 | 354 | 41,8 |
| Քիմիական տեխնոլոգիաներ | 1,332 | 578 | 43,4 |
| Այլ ոլորտներ (27 ոլորտ) | 20,383 | 10,746 | 52,7 |
| Ընդհանուր | 32,068 | 14,295 | 44,6 |

Ե՛ւ սննդի արտադրության, և՛ հատկապես գյուղատնտեսության ոլորտներում թուրքական ստանդարտների համապատասխանությունը միջազգային ստանդարտներին բավականին ցածր է, ինչը վկայում է այն մասին, որ Հայաստանում այդ ոլորտներին առնչվող միջազգային ստանդարտների ներդրումը կարող է կրճատել Թուրքիայից անորակ գյուղատնտեսական ապրանքների ներմուծումը Հայաստան՝ հայ-թուրքական սահմանի վերաբացման դեպքում:

2005 թ. հոկտեմբերի 3-ին Եւրոմիությունն սկսեց բանակցություններ վարել Թուրքիայի հետ՝ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության ուղղությամբ: Եւրոմիության անդամ դառնալու համար Թուրքիան պետք է իրականացնի մի շարք բարեփոխումներ, որոնք պետք է ներառեն նաև թուրքական օրենսդրության, ներառյալ՝ սննդի անվտանգության և սանիտարական ու բուսասանիտարական խնդիրներին առնչվող իրավական ակտերի համապատասխանեցումը Եւրոմիության օրենսդրությանը: Այսպիսով՝ համապատասխանեցնելով այս ոլորտներում գործող օրենսդրությունը Եւրոմիության օրենսդրությանը՝ Թուրքիան ձգտում է դրանով իսկ ապահովել իր իրավական ակտերի համապատասխանությունը նաև ԱՀԿ-ի սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման մասին համաձայնագրով նախատեսված միջազգային ստանդարտներին: Բացի դրանից՝ ԵՄ իրավական ակտերին Թուրքիայի օրենսդրության համապատասխանության աստիճանի գնահատումը կարևոր է Հայաստանի՝ Եւրոմիության հետ ինտեգրման զարգացումների համատեքստում:

4.1.2. Սննդի անվտանգության կարգավորումը ԵՄ-ում

Սննդի անվտանգության բնագավառում ԵՄ-ի հիմնական օրենսդրությունը հետևյալն է.

- 1) 2002 թ. հունվարի 28-ի՝ «Սննդին առնչվող օրենսդրության ընդհանուր դրույթներն ու պահանջները սահմանելու, Սննդի անվտանգության Երրոպական մարմին ստեղծելու և սննդի անվտանգությանն առնչվող ընթացակարգեր սահմանելու մասին» Երրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 178/2002 կանոնակարգ, որի վրա հիմնված են այս ոլորտի ԵՄ-ի մնացած բոլոր իրավական ակտերը:
- 2) 2004 թ. ապրիլի 29-ի՝ «Կենդանիների առողջության և բարեկեցության վերաբերյալ կանոններին, անասնակերին և սննդին առնչվող օրենքներին համապատասխանության ապահովմանն ուղղված պաշտոնական վերահսկողության մասին» Երրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 882/2004 կանոնակարգ, որով սահմանվում են ԵՄ-ի՝ սննդի անվտանգության մասին օրենքի կիրարկումն ապահովող վերահսկողության կանոնները, ընթացակարգերը, սկզբունքներն ու պահանջները:
- 3) 2004 թ. ապրիլի 29-ի՝ «Սննդամթերքի հիգիենայի մասին» Երրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 852/2004 կանոնակարգ, որը լրացնում է թիվ 178/2002 կանոնակարգը: Այն սահմանում է սննդամթերքի հիգիենայի ընդհանուր կանոններ՝ սննդի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների համար: Այս կանոնակարգի հավելվածները սահմանում են հիգիենայի հետ կապված ընդհանուր և հատուկ տեխնիկական պահանջներ այն վայրերի, տարածքների, շինությունների համար, որտեղ սննդամթերք է պատրաստվում և մշակվում:
- 4) 2004 թ. ապրիլի 29-ի՝ «Կենդանական ծագում ունեցող սննդի համար հիգիենայի հատուկ կանոններ սահմանելու մասին» Երրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 853/2004 կանոնակարգ:
- 5) 2004 թ. ապրիլի 29-ի՝ «Մարդկանց սպառման համար նախատեսված կենդանական ծագում ունեցող ապրանքների նկատմամբ պաշտոնական վերահսկողության կազմակերպման վերաբերյալ հատուկ կանոններ սահմանելու մասին» Երրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 854/2004 կանոնակարգ:

Ի լրումն վերոնշյալ հիմնական կանոնակարգերի՝ ԵՄ-ի օրենսդրության մեջ կան մոտ 300 իրավական ակտեր, որոնք կարգավորում են անասնակերի, դեղամիջոց պարունակող անասնակերի, սննդի և անասնակերի հիգիենայի, մնացորդների և աղտոտիչների, հանրային առողջությանը սպառնացող կենդանական հիվանդությունների վերահսկողության և վերացման, անասնակերի և սննդի պիտակավորման, պեստիցիդների, հավելումների, վիտամինների, սննդի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի որակի և պարունակության վերաբերյալ պահանջների, խմելու ջրի, իոնացնող ճառագայթման, գենետիկորեն փոփոխված օրգանիզմների հետ կապված խնդիրներ:

4.1.3. Սննդի անվտանգության կարգավորումը Թուրքիայում

Սննդի անվտանգության բնագավառի համար պատասխանատու պետական մարմինը Գյուղատնտեսության և գյուղական հարցերի նախարարությունն է (ԳԳՀՆ): Նախարարության կազմում գործող Պաշտպանության և վերահսկողության գլխավոր վարչությունը (ՊՎԳՎ) պատասխանատու է սննդի անվտանգության քաղաքականության իրականացման համար: Բնական և հանքային ջրերի, ինչպես նաև հատուկ բժշկական նշանակություն ունեցող սննդի և նշված ապրանքների հաստատման, գրանցման և վերահսկողության համար պատասխանատու է Առողջապահության նախարարությունը:

Սննդի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների գրանցումն ու լիցենզավորումը իրականացվում է ԳԳՀՆ-ի ՊՎԳՎ-ի կողմից՝ պետական մակարդակով, և

տեղական ինքնակառավարման ու մարզային կառավարման մարմինների կողմից՝ տեղական մակարդակով: Ի լրումն՝ ԳԳՀՆ-ը շնորհում է արտադրության լիցենզիա (թույլտվություն նախքան շուկայահանումը) ապրանքների համար: Վերահսկողության գործառույթը բաշխված է անասնաբույժների և սննդի տեսուչների միջև: Տեղական կառավարման մարմինները նույնպես մասնակցում են սննդի վերահսկողությանը: Ինչ վերաբերում է լաբորատոր ստուգումներին, ապա դրանց մասնակցում են ինչպես ԳԳՀՆ-ի, այնպես էլ մասնավոր լաբորատորիաներ: Բացի դրանից՝ տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես իրավասու են հիմնել սննդի լաբորատորիաներ: Համաձայն ԳԳՀՆ-ի տվյալների՝ 2004թ. Թուրքիայում սննդի արտադրության ոլորտում գործում էին 25425 գրանցված կազմակերպություններ:

Թուրքիան չի կիրառում սննդի և անասնակերի մշակման հաստատություններում հիգիենայի վերաբերյալ ԵՄ-ի կողմից սահմանված կանոնները: Սննդի վերամշակումը կարգավորվում է առաջնային օրենսդրությամբ, որը ներառում է «Սննդի մասին» թիվ 5179, «Կենդանիների առողջության վերահսկողության մասին» թիվ 3285, «Անասնակերի մասին» թիվ 1734 և «Ձկնորսության մասին» թիվ 1380 օրենքները, որոնք մեծ մասամբ հիմնված են ԵՄ-ի կողմից սահմանված հնացած կանոնների վրա: Կիրարկող կանոնակարգերով սահմանվում են ոլորտի համար պատասխանատու մարմինների պարտականությունները, գրանցման ընթացակարգերը, ստուգումների և սննդամթերքի շուկայահանման հետ կապված խնդիրները: Նշված հարցերով ԳԳՀՆ-ի գործառույթներից են.

- ձկնեղենի արտադրությամբ, կարմիր մսի և թռչնամսի վերամշակմամբ զբաղվող կազմակերպությունների, կենդանիների սպանդի վայրերի հաստատումն ու գրանցումը, ինչն իրականացվում է «աշխատանքային լիցենզիաներ» և «Սննդի ոլորտում գործունեությամբ զբաղվելու գրանցման համարներ», ինչպես նաև սննդամթերքի համար «Արտադրության լիցենզիաներ» շնորհելու միջոցով («Արտադրության լիցենզիա» ունեցող հաստատություններում ստուգում իրականացվում է տարեկան առնվազն երկու անգամ՝ առանց նախապես ծանուցման),
- սննդի ոլորտում գործող կազմակերպություններում նվազագույն տեխնիկական և հիգիենիկ պահանջների կատարման ապահովմանն ուղղված վերահսկողության ու ստուգումների իրականացումը,
- մանրածախ ու մեծածախ առևտրի և սպառման վայրերի գրանցումը և դրանց կողմից նվազագույն տեխնիկական և հիգիենիկ պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը,
- սննդամթերքի և սննդի հետ շփման մեջ մտնող նյութերի՝ ռիսկերի գնահատման վրա հիմնված վերահսկողության իրականացումը:

Սննդի և անասնակերի մշակման հաստատություններում հիգիենայի վերաբերյալ թուրքական օրենսդրությունը հիմնված է Եւրոմիության կողմից սահմանված հին կանոնների վրա, մինչդեռ թիվ 852/2004, 853/2004 և 854/2004 ԵՄ-ի կանոնակարգերը՝ այսպես կոչված «հիգիենայի վերաբերյալ օրենսդրական փաթեթը», սահմանում են սննդի անվտանգության ոլորտում ԵՄ-ի հիմնական և կարևորագույն պահանջները: Բացի դրանից՝ բանակցությունների ընթացքում Թուրքիան նշել է, որ չի հասցնի համապատասխանեցնել իր օրենսդրությունն այս փաթեթին: Նշված հարցերը վկայում են այն մասին, որ Թուրքիան խնդիրներ ունի օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացման հետ, ինչն իր հերթին կարող է պոտենցիալ վտանգ հանդիսանալ հայ սպառողների համար:

«Շուկայի դիտանցման, վերահսկողության և շուկայում ստուգումների մասին» կիրարկող կանոնակարգով սահմանվում են սննդի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների համար հիգիենայի ընդհանուր կանոններ, սննդամթերքի հետազոտելիության վերաբերյալ դրույթներ և պաշտոնական վերահսկողության սկզբունքներն ու ընթացակարգերը: Այս ակտով կարգավորվում են նաև սննդի արտադրության շղթայի

առաջնային օղակները՝ սահմանելով նաև սկզբնական փուլերում արտադրության համար հիգիենայի պահանջները և առաջնային օղակներում արտադրողների պարտականությունները: Սննդի անվտանգությունը ապահովելու համար պատասխանատու է սննդի ոլորտում գործող հաստատությունները:

Մսի, մսից պատրաստված ապրանքների, ձկան և ձկնեղենի վերաբերյալ որոշ կիրարկող կանոնակարգեր պարունակում են նշված ապրանքների արտադրության մեջ ներգրավված կազմակերպությունների գործունեությունը կարգավորող դրույթներ, որոնք չեն համապատասխանում ԵՄ-ի չափանիշներին: Այդ կանոնակարգերով սահմանվում են պատասխանատու պետական մարմինը, հաստատման ընթացակարգերը, տեխնիկական և հիգիենիկ պահանջները, ինչպես նաև արտադրության մեջ ներգրավված անձնակազմի համար հատուկ հիգիենիկ պահանջները:

Ինչ վերաբերում է կաթնամթերքին, ապա հարկ է նշել, որ թուրքական օրենսդրությամբ թույլատրվում է չմշակված կաթի փոքրածավալ վաճառք վերջնական սպառողին: Սրա պատճառը կաթի ֆերմանների փոքրածավալ լինելն ու դրանց աշխարհագրական ցրվածությունն է: Ուստի ԵՄ-ի կողմից սահմանված կաթի որակի սահմանները պահպանվում են միայն կաթնամթերքի խոշոր ֆերմանների կողմից, որոնք բավականին քիչ են Թուրքիայում: 2005 թ. Թուրքիայում մեկնարկել է չմշակված կաթի որակի բարձրացման ծրագիր: Ծրագիրը ներառում է բակտերիաների ընդհանուր քանակի, սոմատիկ բջիջների, սառեցման կետի և պերոքսիդազայի նկատմամբ վերահսկողության սահմանումը: Փորձաքննության արդյունքները գնահատվում են խոշոր հաստատություններում՝ հիմնվելով «Չմշակված կաթի և ջերմամշակված կաթի մասին» թիվ 2000/6 պաշտոնական հաղորդագրության վրա:

Սննդի ոլորտում գործող հաստատություններում ստուգումներն իրականացվում են սննդի տեսուչների կամ դրանց օգնականների կողմից, որոնք ներգրավված են ԳԳՀԵ-ի 81 մարզային վարչություններում: Վերահսկողության և ստուգումների գործընթացներում ընդհանուր առմամբ ներգրավված է մոտ 4800 աշխատող: Ձկնեղենի մշակմամբ զբաղվող այն հաստատություններում, որոնք իրենց արտադրանքն արտահանում են դեպի Եվրոմիություն, ստուգում է իրականացվում յուրաքանչյուր ամիս: Ոլորտում գործող մնացած հաստատություններում ստուգում է անցկացվում տարին երկու անգամ: Այս ոլորտում ստուգումների իրականացման համար պատասխանատու է 190 տեսուչ:

Դեպի Եվրոմիություն արտահանվող ձկնեղենը ենթակա է ավելի խիստ վերահսկողության, քան դեպի այլ երկրներ արտահանումը: Հնարավոր է, որ նշված պատճառով դեպի երրորդ երկրներ արտահանվող ձկնեղենը լինի ավելի ցածր որակի, ինչը հայ-թուրքական սահմանի վերաբացման դեպքում կարող է վտանգ ներկայացնել:

Թուրքիան ներդրել է Սննդի և անասնակերի համար արագ ծանուցման համակարգ⁸⁰ սննդի անվտանգության հետ կապված խնդիրների արդյունավետ դիտանցման համար: Այնուամենայնիվ ծանուցված խնդիրների քանակը շատ է, և դրանք հաճախ վերաբերում են նույն կազմակերպություններին, ինչը ևս վկայում է այն մասին, որ սննդի անվտանգության բնագավառում Թուրքիայի վերահսկողության համակարգը լավ չի գործում:

«Սննդի մասին» թիվ 5179 օրենքով նախատեսված են պատժամիջոցների ձևեր: Այսպես՝ օրենքը նախատեսում է հետևյալ պատժամիջոցները.

- տուգանքներ,
- մարդկանց կյանքին սպառնացող վտանգի դեպքում՝ դատական վարույթ,
- արտադրության կասեցում,
- լիցենզիայի դադարեցում,
- շուկայից ապրանքների դուրս հանում,

⁸⁰ Rapid Alert Food and Feed System (RAFFS)

- ապրանքների ոչնչացում:

Սպանդանոցները պետք է պարտադիր ունենան անասնաբույժներ: Պաշտոնատար անասնաբույժները պարբերաբար ստուգում են նշված հաստատությունները՝ օրենսդրությանը համապատասխանությունը ստուգելու համար: Դեպի Եւրոմիություն թռչնամսի արտահանման համար ԳԳՀՆ-ի կողմից ժամանակավոր թույլտվություն ստացած հաստատություններում պաշտոնատար անասնաբույժներն իրականացնում են ամենօրյա ստուգում: Ֆերմաները վերահսկվում են ԳԳՀՆ-ի տեղական կառույցների պաշտոնատար անասնաբույժների կողմից:

Եւրոմիության գնահատականներով մարդկային և ֆինանսական ռեսուրսների ցածր մակարդակը թույլ չի տալիս իրականացնել արդյունավետ վերահսկողություն սննդի ոլորտում գործող բավականին մեծ թիվ կազմող հաստատություններում:

Սննդամթերքի միկրոկենսաբանական չափանիշները սահմանված են Սննդի մասին օրենսգրքի «Միկրոկենսաբանական չափանիշների մասին» թիվ 2001/19 պաշտոնական հաղորդագրությամբ: Որոշ հատուկ ապրանքների (ինչպիսիք են հացը, համեմունքները, թարմ միսն ու մսամթերքը, չմշակված և ջերմամշակված կաթը, ինչպես նաև երեխաների սնունդը) միկրոկենսաբանական չափանիշները կարգավորվում են առանձին հաղորդագրություններով: Միկրոկենսաբանական չափանիշներին համապատասխանությունը ապահովվում է տարեկան վերահսկիչ ծրագրերի միջոցով: Պատժամիջոցներ են սահմանվում «Սննդի մասին» թիվ 5179 օրենքով այն ապրանքների համար, որոնք չեն համապատասխանում միկրոկենսաբանական չափանիշներին:

Սննդամթերքի պիտակավորումը կարգավորվում է Սննդի մասին օրենսգրքի և «Սննդամթերքի ընդհանուր պիտակավորման և սննդային պիտակավորման մասին» թիվ 2002/58 պաշտոնական հաղորդագրությամբ: Նշված ակտերը հիմնականում համապատասխանում են ԵՄ-ի օրենսդրությանը:

Սննդի հավելումներն ու մաքրության չափանիշները սահմանված են Սննդի մասին օրենսգրքով և «Սննդի հավելումների (այլ քան գունային և քաղցրացուցիչ նյութերի) մասին» թիվ 2003/44 պաշտոնական հաղորդագրությամբ, որոնք ևս մեծ մասամբ հիմնված են ԵՄ-ի օրենսդրության վրա: Գունային և քաղցրացուցիչ նյութերը կարգավորվում են առանձին հաղորդագրություններով⁸¹: Մաքրության չափանիշները սահմանված են մի շարք հաղորդագրություններով, որոնք ամբողջությամբ համապատասխանում են ԵՄ-ի չափանիշներին: Լուծիչները կարգավորվում են Սննդի մասին օրենսգրքի «Սննդամթերքի և սննդային բաղադրիչների արտադրության մեջ լուծիչների օգտագործման մասին» պաշտոնական հաղորդագրությամբ՝ նույնպես հիմնված ԵՄ-ի չափանիշների վրա: Համային հավելումները, համաձայն «Սննդի մասին օրենսգրքը կիրարկելու մասին» կանոնակարգի, բաժանվում են հետևյալ խմբերի՝ բնական համային հավելումներ, բնական համարժեք համային հավելումներ, արհեստական համային հավելումներ, համային հավելումների նախապատրաստվածքներ, մշակված համային հավելումներ և ծխային համային հավելումներ: Նշված խմբերի չափանիշներն ու պիտակավորման հետ կապված պահանջները համապատասխանում են ԵՄ-ի չափանիշներին: Արհեստական և բնական համարժեք համային հավելումների ցանկը մշակվել է՝ հիմնվելով Եւրոպայի խորհրդի և Համային հավելումներ և էքստրակտներ արտադրողների միության կանոնների վրա:

Սննդի մասին օրենսգրքի «Սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ մտնող նյութերի և իրերի մասին» թիվ 2002/32 և «Սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ մտնող նյութերի և իրերի վրա նշանի օգտագործման մասին» թիվ 2002/8 պաշտոնական հաղորդագրությունները կազմում են սննդամթերքի հետ շփման մեջ մտնող նյութերի հետ կապված խնդիրները կարգավորող հիմնական իրավական ակտերը: Մի շարք

⁸¹ «Սննդամթերքում օգտագործվող քաղցրացուցիչ հավելումների մասին» թիվ 2002/56 և «Սննդամթերքում օգտագործվող գունային հավելումների մասին» թիվ 2002/55 պաշտոնական հաղորդագրություններ:

հաղորդագրություններով սահմանվում են առանձին նյութերի՝ պլաստիկի (ներառյալ վինիլքլորիդ մոնոմերներ), կերամիկայի և մի շարք այլ նյութերի հետ կապված դրույթներ: Թղթե և մետաղե փաթեթավորման նյութերը կարգավորվում են «Սննդի մասին օրենսգիրքը կիրարկելու մասին» կանոնակարգում: Այս ոլորտը կարգավորող թուրքական օրենսդրությունը գրեթե ամբողջությամբ համապատասխանում է Եւրոմիության չափանիշներին:

Սննդի հավելանյութերը թվարկված են «Սննդի մասին» օրենքում: Դրանք ներառում են վիտամինները, հանքանյութերը, ամինաթթուները, հիմնական յուղաթթուները, մի շարք բույսեր և բուսական էքստրակտներ՝ առանձին կամ խառնուրդի մեջ: Օրենսդրությամբ սահմանվում են դրանց պիտակավորման պահանջներն ու ընդունման օրական թույլատրելի չափաբաժինները: Հատուկ կերակրման համար նախատեսված սննդի հետ կապված հարցերը կարգավորվում են Սննդի մասին օրենսգրքի «Հատուկ կերակրման համար նախատեսված սննդի մասին» պաշտոնական հաղորդագրությամբ, որը գրեթե ամբողջությամբ համապատասխանում է ԵՄ-ի օրենսդրությանը:

Սննդի մասին օրենսգրքի «Արագ սառեցված սննդամթերքի մասին» թիվ 2004/46, «Պահեստավորման, պահպանման և փոխադրման ընթացքում արագ սառեցված և սառեցված սննդամթերքի ջերմաստիճանի դիտանցման մասին» թիվ 2002/7 և «Արագ սառեցված և սառեցված սննդամթերքի ջերմաստիճանի հսկողության համար նմուշառման և փորձաքննության մեթոդների մասին» թիվ 2001/45 պաշտոնական հաղորդագրություններով կարգավորվում են արագ սառեցված սննդամթերքի հետ կապված խնդիրները: Հիգիենայի վերաբերյալ խնդիրները սահմանված են «Միկրոկենսաբանական չափանիշների մասին» թիվ 2001/19, «Թարմ մսի, պատրաստված մսի և մսից պատրաստված խառնուրդների մասին» թիվ 2000/5 պաշտոնական հաղորդագրություններով և «Չկոնսերվացիայի մասին 1995թ. օրենքի կիրարկման մասին» կանոնակարգով: Այս ոլորտում գործող օրենսդրությունը ամբողջությամբ համապատասխանում է Եւրոմիության կողմից սահմանված չափանիշներին:

Աղտոտիչների սահմանները ամրագրված են Սննդի մասին օրենսգրքի «Սննդամթերքում որոշ աղտոտիչների առավելագույն մակարդակները սահմանելու մասին» թիվ 2002/63 պաշտոնական հաղորդագրության մեջ և 2005թ. մայիսի 17-ի «Դիօքսինների մասին» նախարարական որոշման մեջ: Որոշ աղտոտիչների վերաբերյալ դրույթները, ինչպիսիք են աֆլատոքսինները, բակտերիական տոքսինները, մետաղների առավելագույն սահմանները, օտար նյութերն ու բաղադրիչները, ներդաշնակեցված չեն ԵՄ-ի օրենսդրության հետ: Առանձին հաղորդագրություններ վերաբերում են նմուշառման և փորձաքննության մեթոդներին (թիվ 2002/25) և օխրատոքսին Ա-ի (2004/47), կապարի, ծծմբի ու 3-մոնոքլորոպրոպան-1,2-դիոլի (թիվ 2005/35) պարունակությանը: Այս մասով թուրքական օրենսդրությունը մեծ մասամբ հիմնված է ԵՄ-ի իրավական ակտերի վրա:

Ներկա պահին գենետիկորեն փոփոխված օրգանիզմների (ԳՓՕ) արտադրությունն ու ներմուծումը Թուրքիայում չի թույլատրվում: Չկա ԳՓՕ պարունակող ապրանքների կամ նոր տեսակի սննդի վերահսկողության վերաբերյալ որևէ օրենսդրություն: Գոյություն չունի նաև համապատասխան մարմին՝ պատասխանատու վերոնշյալ խնդիրների վերահսկողության համար: Այնուամենայնիվ ԵՄ-ի գնահատականներով լաբորատորիաներն ունեն համապատասխան տեխնիկական ռեսուրսներ՝ այս ոլորտում ստուգումներ իրականացնելու համար: «Կենսաբանական անվտանգության մասին» օրենքը արդեն իսկ մշակվել է, սակայն վերջնականապես չի հաստատվել խորհրդարանի կողմից: Թուրքիան վավերացրել է նաև ՄԱԿ-ի՝ «Կենսաբանական անվտանգության մասին» արձանագրությունը:

Իոնացնող ճառագայթման հետ կապված խնդիրները կարգավորվում են «Սննդամթերքի ճառագայթման մասին» կիրարկող կանոնակարգով, որն ամբողջությամբ հիմնված է ԵՄ-ի օրենսդրության վրա: Միայն մեկ սուբյեկտ է լիազորվել Գյուղատնտեսության և գյուղական զարգացման նախարարության կողմից՝ վերոնշյալ գործունեությամբ զբաղվելու համար, որը գրանցված է նաև Եւրոմիության համապատասխան կառույցներում:

Հանքային ջրերի ոլորտի համար պատասխանատու մարմինը Առողջապահության նախարարության Առաջնային առողջապահության գլխավոր վարչությունն է: Բնական հանքային ջուրը սահմանված է «Բնական հանքային ջրերի մասին» կիրարկող կանոնակարգով, որով կարգավորվում են հանքային ջրերի լիցենզավորման, փաթեթավորման, պիտակավորման և վերահսկողության հետ կապված խնդիրները: Նշված

կանոնակարգը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվներին: «Մարդկանց սպառման համար նախատեսված ջրի մասին» կիրարկող կանոնակարգում տրվում են խմելու ջրի, աղբյուրի ջրի սահմանումները, ինչպես նաև կարգավորվում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են մարդկանց սպառման համար նախատեսված ջրի որակի դիտանցումը, շեղում աղբյուրի ջրի և խմելու ջրի արտադրությունը, փաթեթավորումը, պիտակավորումը, վաճառքը: Նշված խմբերի համար թուրքական օրենսդրությամբ սահմանված են տարբեր պահանջներ: Բնական հանքային ջրերը ստուգվում և հաստատվում են Առողջապահության նախարարության նախաձեռնությամբ ստեղծվող Գնահատման գիտական հանձնաժողովի կողմից՝ հիմնվելով երկրաբանական, հիդրոերկրաբանական, ֆիզիկական, քիմիական, ֆիզիոքիմիական, միկրոկենսաբանական, դեղագիտական և ֆիզիոլոգիական չափանիշների վրա: Բնական հանքային, աղբյուրի և շալցված խմելու ջրերի մեջ հանքանյութերի պարունակության վերաբերյալ նվազագույն պահանջները սահմանված են՝ հիմնվելով ԵՄ-ի պահանջների վրա: Ներկայումս Թուրքիան լիցենզիա է տրամադրել բնական հանքային ջրերով զբաղվող 30 կազմակերպությունների, 174 աղբյուրի ջուր օգտագործողներին և 30 կազմակերպությունների, որոնք զբաղվում են շալցված ջրերի արտադրությամբ:

Սննդամթերքի պիտակավորման, սննդի հավելումների ու մաքրության չափանիշների, սննդամթերքի հետ շփման մեջ մտնող նյութերի, սննդի հավելանյութերի, հատուկ կերակրման համար նախատեսված սննդի, օխրատոքսին Ա-ի, կապարի, ծծմբի ու 3-մոնոքլորոպրոպան-1,2-դիոլի պարունակության, իոնացնող ճառագայթման և բնական հանքային ջրերի վերաբերյալ թուրքական օրենսդրությունը մեծ մասամբ համապատասխանում է Եւրոմիության օրենսդրությանը:

Թուրքական օրենսդրության մեջ հիմնական բացերը վերաբերում են գենետիկորեն փոփոխված օրգանիզմներին և նոր տեսակի սննդին: ԵՄ-ի պահանջներին չի համապատասխանում նաև որոշ աղտոտիչների՝ մասնավորապես աֆլատոքսինի վերաբերյալ թուրքական օրենսդրությունը, ինչը Եւրոմիությունը համարում է սննդի անվտանգությանը վերաբերող օրենսդրության հիմնական խնդիր:

4.1.4. Բուսասանիտարական ոլորտի կարգավորումը ԵՄ-ում

Բուսասանիտարական ոլորտին առնչվող ԵՄ-ի հիմնական օրենսդրությունը ընդգրկում է հետևյալ ոլորտները.

- հավելումներ անասնակերում,
- պեստիցիդների մնացորդներ բույսերում և բուսական ծագման ապրանքներում,
- բույսերի և բուսական ծագման ապրանքների վնասակար օրգանիզմներ,
- բույսերի պաշտպանության ապրանքներ,
- բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիայի (IPPC) ստանդարտներ՝ ներառյալ վնասատուների ռիսկերի վերլուծությունը,
- բույսերի անձնագրեր,
- բուսական ծագման ապրանքների ներմուծում և արտահանում,
- բույսերի և բուսական ծագման ապրանքների տեղաշարժ,
- տեսչական ընթացակարգեր,
- սերտիֆիկացում,
- վայրի ֆաունայի և ֆլորայի ներկայացուցիչների պաշտպանություն:

Այս ոլորտում ԵՄ-ը ունի 21 հիմնական իրավական ակտ, որոնցից առավել կարևոր է նշել հետևյալները.

- 1) 1970 թ. նոյեմբերի 23-ի՝ «Անասնակերում հավելումների մասին» խորհրդի թիվ 70/524/ԵՏՅ դիրեկտիվ,
- 2) 1998 թ. ապրիլի 15-ի՝ «Համայնքում՝ ստուգման այլ կետերում, քան հասցեագրման վայրում, երրորդ երկրներից եկող բույսերի, բուսական ծագման ապրանքների կամ

այլ օբյեկտների՝ բույսերի առողջության ստուգման նվազագույն պայմանների մասին» Հանձնաժողովի թիվ 98/22/ԵՀ դիրեկտիվ,

- 3) 2000 թ. մայիսի 8-ի՝ «Բույսերի և բուսական ծագման ապրանքների համար վնասակար օրգանիզմների՝ համայնք ներկրման և համայնքում տարածման դեմ ուղղված պաշտպանական միջոցառումների մասին» Խորհրդի թիվ 2000/29/ԵՀ դիրեկտիվ:

4.1.5. Բուսասանիտարական ոլորտի կարգավորումը Թուրքիայում

Բուսասանիտարական խնդիրները գտնվում են ԳԳՀՆ-ի ՊՎԳՎ-ի Գյուղատնտեսական կարանտինի և սերմի ծառայության, Բույսերի պաշտպանության ծառայության և Պեստիցիդների, սարքավորումների և անասնաբուժության ծառայության իրավասությունների շրջանակներում: Ի լրումն՝ բույսերի պաշտպանության 81 մարզային կառույցների միջոցով իրականացվում են տեսչական և գրանցման հետ կապված գործառնությունները: ԳԳՀՆ-ի կողմից տարեկան կտրվածքով իրականացվող հարցումների հիման վրա մշակվող ծրագրերի միջոցով վերահսկողություն է սահմանվում երկրում բույսերի առողջության իրավիճակի նկատմամբ:

1957 թ.՝ «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին» թիվ 6968 օրենքը հանդիսանում է այս ոլորտը կարգավորող հիմնական օրենսդրական ակտը: Դրանով սահմանվում է բույսերի կարանտինը, բույսերի պաշտպանության գործողություններն ու միջոցառումները: Մի շարք այլ իրավական ակտեր հիմնված են վերոնշյալ օրենքի վրա: Օրենսդրության նպատակն է կանխարգելել վնասակար օրգանիզմների ներկրումը ու դրանց տարածումը Թուրքիայում և սահմանել կանոններ՝ բույսերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների համար: Վնասակար օրգանիզմների ցանկը վերանայվել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրի աջակցությամբ, որպեսզի ապահովվի ցանկի համապատասխանությունը ԵՄ-ի և Բույսերի պաշտպանության եւրոպական և միջերկրածովյան կազմակերպության ցանկերին: Ներմուծման ժամանակ իրականացվող ստուգումները ներառում են փաստաթղթային ստուգումը, նույնականացման ստուգումը և բուսասանիտարական ստուգումը (վիզուալ և/կամ լաբորատորային): Բույսերի տարածման նյութերի տեղաշարժի համար անհրաժեշտ է հատուկ սերտիֆիկատ:

Բույսերի պաշտպանության ապրանքները կարգավորվում են «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին» թիվ 6968 օրենքով, որը սահմանում է թույլտվությունների և գրանցման, շուկայահանման և շուկայից դուրս բերման, ներմուծման և արտահանման, օգտագործման և վերահսկողության հետ կապված խնդիրները: Նշված ապրանքները պետք է գրանցվեն և ստուգվեն ԳԳՀՆ-ի կողմից: Մնացորդների առավելագույն սահմանները մասամբ են ներդաշնակեցված ԵՄ-ի նորմերի հետ: Ներկա դրությամբ ԳԳՀՆ-ը գրանցել է բույսերի պաշտպանության ապրանքներում օգտագործվող 405 նյութեր: Դրանցից 79-ը թվարկված են նաև 1991 թ. հուլիսի 15-ի՝ «Բույսերի պաշտպանության, ապրանքների շուկայահանման մասին» Խորհրդի թիվ 91/414/ԵՏՀ դիրեկտիվում: Մնացած 326-ը գտվում են Եւրոմիության կողմից փորձաքննության ընթացքում:

Սերմերի որակի և բույսերի տարածման նյութերի ոլորտը կարգավորող օրենսդրությունը ներառում է «Գրանցման, վերահսկողության և սերմերի սերտիֆիկացման մասին» թիվ 308 օրենքը, «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի մասին» թիվ 6968 օրենքը և «Բույսերի նոր տեսակների հետ կապված սելեկցիոներների իրավունքների պաշտպանության մասին» թիվ 5042 օրենքը: Թուրքիան 1968 թ. սկսած կիրառում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)⁸² սերմերի սերտիֆիկացման համակարգը շաքարի ճակնդեղի, յուղային բույսերի, հացահատիկի, յուղային սերմերի, եգիպտացորենի և սորգոյի համար: Թուրքիան կիրառում է նաև Սերմերի փորձաքննության միջազգային Ասոցիացիայի (ՄՓՄԱ)⁸³ կանոնները՝ նմուշառման և լաբորատոր փորձաքննության համար: Ինչ վերաբերում է անտառային տնտեսությանը, ապա

⁸² Organisation for Economic Cooperation and Development (OECD).

⁸³ International Seed Testing Association (ISTA).

այն գտնվում է Շրջակա միջավայրի և անտառային տնտեսության նախարարության իրավասությունների շրջանակներում:

«Բույսերի նոր տեսակների հետ կապված սելեկցիոներների իրավունքների պաշտպանության մասին» թիվ 5042 օրենքը՝ հիմնված էՄ-ի թիվ 2100/94/ԵՀ ու թիվ 1768/95/ԵՀ դիրեկտիվների և «Բույսերի նոր տեսակների պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիայի⁸⁴ վրա, ինչպես նաև մի շարք կիրարկող կանոնակարգեր կազմում են բույսերի նոր տեսակների իրավունքները սահմանող հիմնական իրավական ակտերը: Ոլորտի համար պատասխանատու պետական մարմինը ԳԳՀ-ի ՊՎԳԿ-ն է: Թուրքիայի քաղաքացիները, Թուրքիայի տարածքում գործող ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև UPOV կոնվենցիայի անդամ պետությունների քաղաքացիները կամ այնտեղ գործող ֆիզիկական ու իրավաբանական անձինք կարող են դիմել բույսերի տեսակների գրանցման համար: Բույսերի գրանցված տեսակները պաշտպանվում են 25 տարի (ծառերի, խաղողի և կարտոֆիլի համար՝ 30 տարի): 2006 թ. Թուրքիայում գրանցվել էր բույսերի 31 տեսակ (ցորենի 12, գարու 7, բանջարեղենի 6 և արևածաղկի, կարտոֆիլի ու եգիպտացորենի 1-ական տեսակներ):

Բույսերի առողջության ոլորտում Թուրքիան ստորագրել է 17 համաձայնագիր՝ վնասատուների ներթափանցումն ու տարածումը կանխելու և վնասատուների նկատմամբ վերահսկողությունը բարելավելու նպատակով⁸⁵: Կուբայի հետ ստորագրվել է նաև «Բույսերի հետ կապված հետազոտությունների մասին» համաձայնագիր՝ բույսերի առողջության ոլորտում տեխնիկական համագործակցությունը խթանելու համար: Բուլղարիայի հետ կնքված «Նյութերի փոխանցման մասին» համաձայնագրով սահմանվում են կանոններ՝ բույսերի զենետիկայի ոլորտում համագործակցության վերաբերյալ: Ի լրումն՝ Թուրքիան 46 երկրների հետ կնքել է տեխնիկական, գիտական և տնտեսական համագործակցության համաձայնագրեր՝ տեղեկատվության և զենետիկ ու կենսաբանական նյութերի փոխանակումը դյուրինացնելու նպատակով:

Բացի այդ՝ մի շարք ապրանքների մասով Թուրքիան կնքել է նաև երկկողմ համաձայնագրեր⁸⁶, որոնք վերաբերում են սանիտարական և բուսասանիտարական սերտիֆիկատների օգտագործմանը:

Թուրքիան հետևյալ միջազգային կազմակերպությունների անդամ է. ՍՈՆԻ և գյուղատնտեսության կազմակերպություն,⁸⁷ Բույսերի պաշտպանության եվրոպական և միջերկրածովյան կազմակերպություն, Կենսաբանական վերահսկողության միջազգային կազմակերպություն, Սերմերի փորձաքննության միջազգային Ասոցիացիա, Բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիա: Թուրքիան անդամակցության համար դիմել է նաև Բույսերի պաշտպանության Մերձավոր Արևելքի կազմակերպությանը: Թուրքիայի՝ սերմերի հարցերով զբաղվող կազմակերպությունները անդամ են նաև Սերմերի միջազգային ֆեդերացիային: Թուրքիան անդամակցել է նաև Բույսերի նոր տեսակների պաշտպանության միությանը:

Թեպետ Թուրքիան ունի բույսերի առողջության և բույսերի կարանտինի վերաբերյալ լայն օրենսդրություն, սակայն այն մասամբ է համապատասխանում Եւրոմիության պահանջներին: Այս ոլորտում ԵՄ-ի օրենսդրությանը համապատասխանելու նպատակով նախատեսվում էր 2008 թ. ընթացքում ընդունել «Բույսերի առողջության և բույսերի կարանտինի մասին» նոր օրենք, սակայն այդ օրենքը դեռ մշակման փուլում է:

⁸⁴ Union Internationale pour la protection des obtentions vegetables (UPOV) (International Convention on the Protection of New Varieties of Plants).

⁸⁵ Արգենտինա, Բելարուս, Բուլղարիա, Ալժիր, Չեխիա, Մարոկո, Խորվաթիա, Իրան, Իսրայել, Կուբա, Մակեդոնիա, Մոլդովա, Լեհաստան, Ռումինիա, Սիրիա, Թունիս, Յունաստան

⁸⁶ Բելգիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Նիդեռլանդներ, Նոր Զելանդիա, Սիացյալ Թագավորություն և ԱՄՆ:

⁸⁷ Food and Agriculture Organisation (FAO).

4.1.6. Անասնաբուժության ոլորտի կարգավորումը ԵՄ-ում

Անասնաբուժության ոլորտին առնչվող ԵՄ-ի օրենսդրությունը վերաբերում է հետևյալին.

- կենդանիների առողջության հետ կապված խնդիրներ,
- կենդանիների հիվանդության դիտանցում,
- առողջության հետ կապված խնդիրներ, որոնք ազդում են նախ քան պատրաստված ապրանքների առևտրի վրա,
- կենդանիների և նախ քան պատրաստված ապրանքների ներմուծում և արտահանում,
- ստուգումների հետ կապված ընթացակարգեր,
- կենդանիների սնուցում,
- անասնաբուժական դեղորայքի մնացորդներ,
- հորմոնների մնացորդներ,
- պեստիցիդների մնացորդներ,
- դիոքսիններ և դիոքսինանման պոլիքլորացված դիֆենիլներ,
- սերտիֆիկացում,
- կենդանիների առողջության հարցերով համաշխարհային կազմակերպություն (OIE),
- կենդանիների բարեկեցություն,
- համակարգչայնացված անասնաբուժական համակարգեր (Traces & Animo),
- մարդկանց սպառման համար նախատեսված կենդանական ծագում ունեցող ապրանքների նկատմամբ պաշտոնական վերահսկողություն:

Այս ոլորտում Եւրոմիությունն ունի 21 հիմնական իրավական ակտ:

4.1.7. Անասնաբուժության ոլորտի կարգավորումը Թուրքիայում

Պատասխանատու անասնաբուժության ոլորտում քաղաքականություն իրականացնող հիմնական կառույցը ԳԳՀՆ-ի ՊՎԳՎ-ն է: Բացի դրանից՝ ոլորտի կարգավորման գործընթացում մասնակցում են նաև Գյուղատնտեսական արտադրանքի և զարգացման վարչությունը, որը զբաղվում է կենդանիների, դրանց սաղմի, սերմնահեղուկի, ձվաբջիջների ներհամայնքային առևտրի, կենդանիների և կենդանական ծագման ապրանքների ներմուծումների նկատմամբ պահանջների և զոոտեխնիկայի հետ կապված խնդիրների կարգավորմամբ, և Գյուղատնտեսական հետազոտությունների գլխավոր վարչությունը, որը զբաղվում է հետազոտական գործունեությամբ՝ ներառյալ ԳՓՕ-ների ոլորտը, ինչպես նաև իր որոշ լաբորատորիաների միջոցով մասնակցում է սննդի, անասնակերի, կենդանական հիվանդությունների և բուսասանիտարական խնդիրների վերահսկողությանը:

Պետական մակարդակով գործող ՊՎԳՎ-ի կառույցները պատասխանատու են օրենսդրության մշակման և դրա կիրարկման համակարգման համար: Տեղական մակարդակով լիազորությունները բաշխված են մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների միջև: ՊՎԳՎ-ը գործում է բոլոր 81 մարզերում:

Ոլորտը կարգավորող հիմնական օրենսդրական ակտն է «Կենդանիների առողջության վերահսկողության մասին» թիվ 3285 օրենքը: Համաձայն նշված օրենքի՝ նույն շրջանում խոշոր եղջերավոր անասունների, խոզերի, ձիերի և թռչունների փոխադրման համար անհրաժեշտ է ունենալ ծագման սերտիֆիկատ, որը շնորհվում է գյուղապետի կողմից: Եթե փոխադրումն իրականացվում է շրջանների կամ մարզերի միջև, ապա ծագման սերտիֆիկատը պետք է շնորհվի մարզային կառույցների կողմից: Ի լրումն՝ ԳԳՀՆ-ի տեղական ստորաբաժանումների կողմից վերոնշյալ դեպքերում տրվում են կենդանիների անձնագրեր: Նախքան փոխադրումը կենդանիները պետք է պատվաստվեն ընդդեմ ոտքի և բերանի հիվանդության, իսկ ձիերի դեպքում պարտադիր է նաև մալեիանի փորձաքննություն: Ի թիվս այս փաստաթղթերի՝ անհրաժեշտ է ունենալ նաև ստուգումների արդյունքում անասնաբույժի կողմից շնորհված առողջության վերաբերյալ հաշվետվություն:

Ներմուծման վերահսկողության հարցում Թուրքիան կիրառում է անհատական լիցենզիաների ռեժիմը: Սովորաբար, ներմուծման պայմանները սահմանված են յուրաքանչյուր ներմուծվող խմբաքանակի համար տրված լիցենզիայում: Ոլորտը կարգավորող հիմնական օրենսդրական ակտերն են «Կենդանիների առողջության վերահսկողության մասին» թիվ 3285, «Զկնորսության մասին» թիվ 1380 և «Սննդի արտադրության, սպառման և ստուգման մասին որոշումը հաստատելու մասին» թիվ 5179 օրենքները, «Կենդանիների առողջության վերահսկողության մասին» կիրարկող կանոնակարգը, «Զկնորսության մասին» կիրարկող կանոնակարգը, ինչպես նաև մի շարք պաշտոնական հաղորդագրություններ: Այն երկրների ցանկը, որոնցից թույլատրվում է ներմուծում իրականացնել, հիմնված է Կենդանիների առողջության հարցերով համաշխարհային կազմակերպության կողմից հիվանդությունների ծանուցումների և երրորդ երկրներում թուրքական ներկայացուցչությունների կողմից տրամադրված տեղեկատվության վրա: Ներմուծումը թույլատրված է միայն հատուկ մաքսակետերից, որոնք հաստատված են ԳԳՅԼ-ի, Ֆինանսների նախարարության և Մաքսային հարցերով ենթաքարտուղարության կողմից: Թուրքիայում կա 29 մաքսակետ՝ հաստատված կենդանիների, և 58 մաքսակետ՝ հաստատված կենդանական ծագման ապրանքների ներմուծման համար: Ներմուծման անասնաբուժական ստուգումները ներառում են փաստաթղթային, նույնականացման և ֆիզիկական ստուգումները: Նշված ստուգումները կարող են իրականացվել մուտքի ժամանակ և հասցեագրման վայրում: Կենդանիների նկատմամբ կարանտինը կարող է կիրառվել մուտքի կետերում, հասցեագրման վայրում դրա համար նախատեսված տեղերում և հատուկ կարանտինային կենտրոններում: Ներկայումս Թուրքիան ներդնում է անասնաբուժական տեղեկատվական նոր համակարգ՝ ԵՄ-ի ֆինանսավորմամբ:

«Կենդանիների առողջության վերահսկողության մասին» թիվ 3285 օրենքը և «Խոշոր եղջերավոր կենդանիների նույնականացման, գրանցման և դիտանցման մասին» կիրարկող կանոնակարգով սահմանվում են խոշոր եղջերավոր անասունների գրանցման և Թուրքիայում դրանց տեղաշարժի հետ կապված հիմնական կանոնները: Թուրքիայում գործում է համակարգչայնացված տվյալների բազա, որը համապատասխանում է ԵՄ-ի չափանիշներին: Մնացած կենդանիների համար համապատասխան տվյալների բազան մշակման փուլում է:

Կենդանիների հիվանդությունների հետ կապված միջոցառումները սահմանված են «Կենդանիների առողջության վերահսկողության մասին» թիվ 3285 օրենքով, «Կենդանիների առողջության մասին» կիրարկող կանոնակարգով և մի շարք պաշտոնական հաղորդագրություններով: Օրենքով սահմանված են ծանուցման ենթակա 33 հիվանդությունների վերահսկողության, վերացման և դիտանցման միջոցները: Վերահսկողությունը ներառում է պատվաստման, շրջանների ձևավորման (zoning), կարանտինի, կենդանիների շարժի վերահսկողության, ստուգման, դեզինֆեկցիայի, ինչպես նաև վերացման ենթակա կենդանիների համար փոխհատուցման հետ կապված միջոցառումներ: Թուրքիան կամավոր մասնակցում է նաև Կենդանիների հիվանդությունների ծանուցման համակարգին:

Թուրքիան ստորագրել է այս ոլորտին առնչվող 29 միջազգային համաձայնագիր⁸⁸ և 4 արձանագրություն⁸⁹ կենդանիների և կենդանական ծագման ապրանքների տեղաշարժը դյուրինացնելու, կենդանիների հիվանդությունների տարածումը կանխարգելելու և այս ոլորտում համագործակցության դաշտ ձևավորելու նպատակով: Թուրքիան նաև այս ոլորտում գործող հետևյալ միջազգային կազմակերպությունների անդամ է. Սննդի և գյուղատնտեսության կազմակերպություն, Ութի և բերանի հիվանդության վերահսկողության եւրոպական հանձնաժողով:

⁸⁸ Իրաք, Լիբիա, Սիրիա, Եգիպտոս, Բուլղարիա, Լեհաստան, Նիդեռլանդներ, Ալբանիա, Ղազախստան, Ուկրաինա, Գերմանիա, Ռումինիա, Իսրայել, Մոնղոլիա, Թունիս, Ալժիր, Մակեդոնիա, Խորվաթիա, Ռուսաստան, Հունգարիա, Չեխիա, Հունաստան, Մոլդովա, Կուբա, Բելարուս, Արգենտինա, Մարոկո, Իրան և Ադրբեջան:

⁸⁹ Ղասախստան, Հունաստան, Նիդեռլանդներ և Սաուդյան Արաբիա:

Եւրոմիության հետ այս ոլորտում Թուրքիայի հիմնական անհամապատասխանությունը կենդանիների և կենդանական ծագման ապրանքների ներմուծման համար տրվող անհատական լիցենզիաների համակարգն է: Թուրքիան պարտավորվել է վերացնել այն՝ փոխարենը ներդնելով լիցենզիայի ընդհանուր, այլ ոչ թե անհատական պայմաններ: Բացի դրանից՝ Եւրոմիության գնահատականներով Թուրքիայում այս ոլորտում առկա վարչական կարողությունները բավարար չեն օրենսդրությամբ և քաղաքականության փաստաթղթերով սահմանված պահանջների ու միջոցառումների կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար:

4.2. Սանիտարական և բուսասանիտարական կարգավորումը Հայաստանում

Սննդամթերքի անվտանգության, բուսասանիտարական և անասնաբուժական ոլորտները կարգավորող ՀՀ-ի հիմնական օրենսդրությունն առկա է: Այդ օրենսդրության համաձայն՝ ՀՀ-ի Առողջապահության նախարարությունը պատասխանատու է մարդու առողջության, ՀՀ-ի Գյուղատնտեսության նախարարությունը՝ կենդանիների և բույսերի առողջության, և ՀՀ-ի Էկոնոմիկայի նախարարությունը՝ որակի ստանդարտների համար:

Հայաստանում կա սանիտարական և բուսասանիտարական միջոցների լավ ծնավորված օրենսդրական ու ինստիտուցիոնալ համակարգ: Այնուամենայնիվ այդ համակարգում դեռևս կան որոշ խնդիրներ: Նախ՝ երկրում գործում են սանիտարական կանոններով ու նորմերով սահմանվող պարտադիր պահանջներ, որոնք արժանացել են Եւրոպական հանձնաժողովի կողմից որոշ քննադատության: Ինչպես արդեն նշվել է, ԱՀԿ-ի սահմանմամբ տեխնիկական կանոնակարգը փաստաթուղթ է, որի նպատակներն են, այլոց թվում, ազգային անվտանգության պահանջները, շփոթեցնող գործելակերպի կանխարգելումը, մարդու առողջության կամ անվտանգության, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության կամ շրջակա միջավայրի պաշտպանությունը: Սա նշանակում է, որ սանիտարական նորմերն ու կանոնները կարգավորում են այնպիսի ոլորտ, որը ենթակա է տեխնիկական կանոնակարգերի միջոցով կարգավորմանը: Բացի դրանից՝ այդ կանոններն ու նորմերը սահմանվում են նախարարի հրամանով, մինչդեռ դա հակասում է Եւրոմիության փորձին և ԵՄ-ում ընդունված գործելակերպին, համաձայն որոնց՝ նախարարի կողմից ընդունվող որոշումներն ու հրամանները պետք է վերաբերեն միայն նախարարության և դրա ստորաբաժանումների գործունեությանը և չպետք է սահմանեն վարքագծի պարտադիր կանոններ⁹⁰:

Հայաստանում սանիտարական կանոնների և նորմերի միջոցով սահմանվում են տեխնիկական կանոնակարգերի կարգավորմանը բնորոշ պարտադիր պահանջներ, ինչը կարող է հայտնվել Թուրքիայի կառավարության ուշադրության կենտրոնում և դառնալ քննարկումների ու պարզաբանումների առարկա:

Ավելին՝ տարածաշրջանում ԵՄ-ի չափանիշներին անցնելու միտումների առնչությամբ պետք է նշել, որ ԵՄ-ՀՀ օրենսդրությունների համեմատական վերլուծության արդյունքում հայտնաբերվել է, որ ՀՀ օրենսդրության համապատասխանությունը ԵՄ-ի իրավական ակտերին բավականին ցածր է⁹¹: Մասնավորապես սննդամթերքի անվտանգության ոլորտում

⁹⁰ Economic Feasibility, General Economic Impact and Implications of a Free Trade Agreement between the European Union and Armenia, Centre for Social and Economic Research, Global Insight, 8May 2008.

⁹¹ Օրենսդրական և ինստիտուցիոնալ համապատասխանության ներկա իրավիճակ, Տնտեսական քաղաքականության և իրավական հարցերով հայ-եւրոպական խորհրդատվական կենտրոն (AEPLAC), հուլիս, 2005թ.:

ներառված ԵՄ-ի 29 իրավական ակտերի 2 623 նորմերին ամբողջությամբ համապատասխանում էին 33 օրենսդրության միայն 7 նորմ: Մնացածը կամ համապատասխանում էին մասամբ (272 նորմ), կամ բացակայում էին ընդհանրապես (2344 նորմ): Եւ թեպետ 33-ի և Եւրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման Ազգային ծրագրով նախատեսվել էր 33 օրենսդրության համապատասխանեցում ԵՄ-ի մի շարք իրավական ակտերին, այնուամենայնիվ համապատասխանության աստիճանը մնում է խիստ ցածր՝ ոլորտի ընդգրկունության և ԵՄ-ի իրավական ակտերի մեծ թվի պատճառով:

Թեպետ սննդի անվտանգության, բուսասանիտարական և անասնաբուժական ոլորտը կարգավորող օրենսդրությունն առկա է, սակայն Եւրոմիության իրավական ակտերին դրա համապատասխանությունը ցածր է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիայում ակտիվորեն ընթանում է օրենսդրության՝ ԵՄ-ի չափանիշներին համապատասխանեցման գործընթացը, և բազմաթիվ ակտեր արդեն իսկ ներդաշնակեցվել են ԵՄ-ի օրենսդրության հետ, Հայաստանից արտահանումները դեպի Թուրքիա կարող են հանդիպել բազմաթիվ տեխնիկական խոչընդոտների:

Այս առումով կարևոր է 33-ի առնչվող օրենսդրության ԵՄ-ի հետ աստիճանական ներդաշնակեցումը, ինչը կբարձրացնի սննդի հայկական արտադրողների համար Թուրքիայի և ԵՄ-ի շուկաների մատչելիությունը:

Սանիտարական և բուսասանիտարական միջոցների բնագավառում տեսչական ստուգումները ներկայումս իրականացվում են սահմանի վրա: Ներմուծողները պարտավոր չեն փոխադրել ներմուծված բույսերն ու կենդանական ծագում ունեցող ապրանքները Երևան՝ ստուգման համար: Այնուամենայնիվ սահմանների վրա կատարվող ստուգումները հիմնականում կրում են փաստաթղթային բնույթ, քանի որ մաքսակետերը զինված չեն համապատասխան սարքավորումներով, և լիարժեք ստուգում չի կարող իրականացվել: Սանիտարական և բուսասանիտարական ստուգումների անարդյունավետ համակարգի մասին է վկայում նաև շուկայում կեղծ եւրոպական սննդամթերքի առկայությունը՝ առանց համապատասխան պիտակների⁹²:

Սահմանի վրա սանիտարական և բուսասանիտարական ստուգումների անարդյունավետ իրականացումը կարող է լուրջ վտանգ ներկայացնել հայկական սպառողների համար՝ հայ-թուրքական սահմանի վերաբացման պարագայում: Ուստի, անհրաժեշտ է հայ-թուրքական սահմանում գտնվող մաքսակետը զինել նորագույն սարքավորումներով և բարձրակարգ մասնագետներով՝ վերոնշյալ ստուգումներն արդյունավետ կերպով իրականացնելու համար: Սա թույլ կտա կանխել անորակ սննդամթերքի մուտքը դեպի հայկական շուկա՝ պաշտպանության և անվտանգության բավարար մակարդակ ստեղծելով հայ սպառողների համար:

⁹² Economic Feasibility, General Economic Impact and Implications of a Free Trade Agreement between the European Union and Armenia, Centre for Social and Economic Research, Final Report 8 May 2008.

5. Արդյունաբերություն

5.1. Թուրքիայի արդյունաբերության ոլորտ

5.1.1. Ընդհանուր նկարագիր

Թուրքիայի արդյունաբերական ապրանքների արտադրության ավելացված արժեքն ամբողջապես աճել է՝ 1980 թ. 15 միլիարդ ԱՄՆ դոլարից հասնելով մոտ 45 միլիարդ ԱՄՆ դոլարի 2004 թ.: 2001-2004 թթ. հատվածի տարեկան միջին աճը կազմել է 7,9%՝ 1990-ականների 4,2%-ի դիմաց: Արդյունաբերական ապրանքների արտադրության մեջ կարողությունների օգտագործման մակարդակը միջինը կազմել է 80,3% 2005 թ.՝ ամենաբարձրը դրան նախորդող տաս տարիների ընթացքում⁹³: Արդյունքում հատվածը կազմել է իրական ՀԱԱ-ի 25,3%-ը 2006 թ. (2002-ին՝ 24,7%) և աշխատանք է ապահովել ֆորմալ աշխատուժի մոտ մեկ հինգերորդի համար: Մասնավոր ներդրողներն աստիճանաբար տեղափոխվել են ավելի բարձրակարգ ոլորտներ, ինչպիսիք են սպառողների էլեկտրոնիկան ու ավտոմեքենաշինության արդյունաբերությունը: Հատկապես հիմնական խնդիրներից են՝ որակավորված աշխատուժի ու տեխնոլոգիաների պակասը, բարձր ավելացված արժեքի ապրանքների մասով սահմանափակ արտադրական կարողությունները և նոր ստեղծվող ենթահատվածներում ոչ բավարար ներդրումները⁹⁴:

Նախորդ մի քանի տարիների ընթացքում թուրքական արդյունաբերական ապրանքների արտադրության հատվածի արտահանումների կառուցվածքը որոշ չափով փոփոխվել է (աղյուսակ 51): Թուրքական արդյունաբերական ապրանքների արտադրության ավելացված արժեքի համարյա մեկ երրորդը գալիս է մանածագործության ու հագուստի, կաշվեղենի, սննդի ու ընպելիքների և ծխախոտագործության ոլորտներից: Արտահանումները կազմում են ապրանքների ամբողջ արտահանումների մոտ 80%-ը, և հիմնական շուկաներն են Երոպական համայնքներն (ԵՀ) ու Միջին Արևելքը: Ներմուծումները կազմում են ապրանքների ամբողջ ներմուծումների ավելի քան 60%-ը և կենտրոնացված են կապիտալի մեծ ներգրավվածությամբ ոլորտներում, ինչպիսիք են մեքենաշինությունն ու տրանսպորտային սարքավորումները և քիմիական ապրանքները:

Թուրքական արդյունաբերությունը աչքի է ընկնում ոչ բարձր տեխնոլոգիական արտադրությամբ, որը կազմում է երկրի ապրանքների արտահանումների զերակշիռ մասը՝ կենտրոնանալով հարևան երկրների շուկաների վրա: Մյուս կողմից՝ Թուրքիան հարաբերականորեն ավելի քիչ է ներմուծում արդյունաբերական ապրանքներ, որոնք հիմնականում բարձր տեխնոլոգիական ապրանքներ են: Սա Թուրքիայի առևտրային գործընկեր որևէ երկրի համար, որը չունի բարձր տեխնոլոգիական արտադրության/արտահանումների ներուժ, երկկողմ առևտրի առումով կարող է միայն ենթադրել ոչ բարձր տեխնոլոգիական արդյունաբերական ապրանքների զգալի ներհոսք:

Նախորդ մի քանի տարիների ընթացքում տարբեր արդյունաբերական ապրանքներ արտադրող և պետական սեփականություն հանդիսացող ընկերություններ սեփականաշնորհվել կամ լուծարվել են՝ ներառյալ ծանր արդյունաբերության ոլորտի որոշ ընկերություններ (օրինակ՝ բենզինի վերամշակում, ոչ երկաթային հիմնական մետաղներ, քիմիական ապրանքներ և երկաթ ու պողպատ): Առաջիկայում նախատեսված է

⁹³ Արդյունաբերության և առևտրի նախարարություն (2006), *Տնտեսական և արդյունաբերական հեռանկարներ*, Անկարա:

⁹⁴ Պետական պլանավորման կազմակերպություն (2006), *2007-2013 թթ. իններորդ զարգացման պլան*, Անկարա:

սեփականաշնորհել նաև այլ ընկերություններ, ինչպես TEKEL ծխախոտային ընկերությունը: Չնայած օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքերը արդյունաբերական ապրանքների արտադրության մեջ աճեցին 2002 թ. 110 միլիոն ԱՄՆ դոլարից մինչև 1,867 միլիոն ԱՄՆ դոլար 2006 թ., արդյունաբերական ապրանքների արտադրության բաժինը ամբողջ օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքերի մեջ նույն ժամանակահատվածում իջել է 29%-ից մինչև 10,4%: Հատվածում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքերը հիմնականում բաշխված են եղել քիմիական, ըմպելիքների ու ծխախոտագործության, էլեկտրական սարքավորումների, ավտոմեքենաշինական և մանածագործության ոլորտներում:

Աղյուսակ 51, Արդյունաբերական ապրանքների արտադրության կառուցվածքը, 2002 և 2005 թվականներ

| Տեխնոլոգիական ներգրավվածություն | Արտադրություն | | Արտահանումներ | |
|---------------------------------|---------------|-------|---------------|-------|
| | 2002 | 2005 | 2002 | 2005 |
| Բարձր | 5.1 | 6.3 | 6.2 | 6.0 |
| Միջին-բարձր | 18.2 | 25.3 | 24.3 | 28.5 |
| Միջին-ցածր | 26.7 | 27.0 | 22.8 | 26.9 |
| Ցածր | 50.0 | 41.4 | 46.8 | 38.7 |
| Ամբողջը | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |

Աղբյուրը՝ Պետական պլանավորման կազմակերպություն (2006), 2007-2013 թթ. իններորդ գարգացման պլան, Անկարա

5.1.2. Քաղաքականության ուղղությունները

Արդյունաբերական ապրանքների արտադրության մեջ թուրքիայի հիմնական երկարաժամկետ նպատակը մրցունակության ու արտադրողականության բարձրացումն է հետևյալ միջոցներով.

1. նվազեցնել պետության ուղղակի միջամտությունն ու սեփականաշնորհել պետական տնտեսական ձեռնարկությունները (որոնք գործում են այն հատվածներում, որտեղ մրցակցություն հնարավոր է՝ ի տարբերություն մենաշնորհների):
2. Կատարել ներդրումներ տեխնոլոգիական զարգացման ու նորարարության մեջ: Տեխնոլոգիական զարգացումն ու նորարարությունը թուրքիայի արդյունաբերական քաղաքականության ամենակարևոր բաղադրիչներից են: Մշակվել է ռազմավարական գործողությունների պլան՝ արտահանման ուղղվածությամբ, տեխնոլոգիական բարձր ներգրավվածությամբ և բարձր ավելացված արժեքով արտադրության խթանման համար⁹⁵:
3. Աջակցել փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ): Արդյունաբերության և առևտրի նախարարությունը «ՓՄՁ-ների Ջարգացման համար հասարակական գործակալության» միջոցով տրամադրում է տարբեր ծառայություններ և աջակցության ծրագրեր: Ներդրումային խթաններ են շնորհվում նաև ներդրումների աջակցության ծրագրով⁹⁶:

Արդյունաբերական ապրանքների արտադրությունը տեղական արտադրողներին տրվող պետական աջակցության հիմնական շահառուն է: 2006 թ. հատվածին շնորհվել է ամբողջ ներդրումային խթանման սերտիֆիկատների 52%-ը (2002 թ. 65%-ի դիմաց): Դրանց մեծամասնությունը եղել է մանածագործության ու հագուստի համար, որոնց հաջորդել են սնունդն ու ըմպելիքները: Նշված ենթաօլորտները հիմնականում բաղկացած են ՓՄՁ-ներից,

⁹⁵ Արդյունաբերության և առևտրի նախարարություն (2006), *Տնտեսական և արդյունաբերական հեռանկարներ*, Անկարա:

⁹⁶ Երոպական Հանձնաժողով (2006), *Թուրքիայի 2006 թվականի առաջընթացի հաշվետվություն*, Բրյուսել:

և արդյունքում հարաբերականորեն մեծ թվով խթանման սերտիֆիկատներ են շնորհվում այդ ենթաոլորտներին՝ չնայած դրանց ներդրումային ցածր ծախսերին: Արդյունաբերական ապրանքների արտադրությունը նաև ստանում է արտահանումների համար մաքսատուրքերի զիջումների մեծ մասը, ինչպես նաև արտահանման վարկեր և երաշխավորություններ⁹⁷:

Թուրքիայի արդյունաբերության պետական աջակցությունը հասնում է զգալի չափերի: Թեև այն ուղղված է հիմնականում ՓՄՁ-ների աջակցությանը, արդյունքում աջակցություն են ստանում առանձին ճյուղեր, որոնցում գերակշռում են ՓՄՁ-ները, և հետևաբար այդպիսի աջակցությունը կարող է դիտվել որպես հատուկ: Ներդրումներում աջակցության նպատակայնության առումով չնայած երկարաժամկետ նպատակների թվում են բարձր տեխնոլոգիական ներդրումները, ներդրումային աջակցություն է ստանում հիմնականում թեթև արդյունաբերությունը, ինչը մոտ ապագայում չի ենթադրում բարձր տեխնոլոգիական արտադրության/արտահանումների կշիռի փոփոխություն:

Արդյունաբերական ապրանքների համար Առավել բարենպաստ ազգի մաքսատուրքերի միջինը 4,8% է, և մաքսատուրքերով ամենաշատ պաշտպանված ենթաոլորտը սննդի արդյունաբերությունն է (առավելագույնը 225%): Հատուկ մաքսատուրքեր են կիրառվում ալկոհոլային ըմպելիքների համար: Խառը մաքսատուրքերը կիրառվում են գորգերի, ապակու ու ապակյա ապրանքների և ժամացույցների վրա: Փոփոխական մաքսատուրքեր կիրառվում են որոշ արդյունաբերվող ապրանքների համար, ներառյալ՝ շաքարի քաղցրավենիքը, շոկոլադը, գարու հունքից մթերքները և պատրաստված կարտոֆիլը: Չնայած մի կողմից խթանման տարբեր ծրագրերը (հատկապես մաքսատուրքերի և հարկերի զիջումները) կարող են խթանել ներդրումներ, սակայն մյուս կողմից գործող մաքսատուրքերի կառուցվածքը ներդրումներ չի քաջալերում որոշ կիսապատրաստ ապրանքների այնպիսի ենթաոլորտներում, ինչպիսիք են քիմիական և պլաստմասային ապրանքները, որտեղ գործող մաքսատուրքերը ցածր են (ինչը ենթադրում է ցածր պաշտպանություն այդ ենթաոլորտներում ներդրողների համար):

Առավել բարենպաստ ազգի մաքսատուրքերի քվոտաներ կիրառվել են 2007 թ. հեռուստացույցների համար: Ներմուծման լիցենզավորում կիրառվում է որոշ արդյունաբերական ապրանքների համար, ինչպիսիք են՝ ավտոմեքենաները, հեռարձակման սարքավորումները և քիմիական ապրանքները⁹⁸: Երոմիության և Թուրքիայի միջև Մաքսային միության որոշմամբ Թուրքիան քվոտաներ է կիրառել մանածագործական և հագուստի որոշ ապրանքների վրա: Թուրքիայի հակազնագցման միջոցառումները մեծ մասամբ վերաբերել են մանածագործությանն ու հագուստին, հիմքային մետաղներին, պլաստմասային ապրանքներին, ռետինին և այլ արդյունաբերական ապրանքների, ինչպիսիք են վառիչներն ու մատիտները⁹⁹:

Թուրքիան կիրառում է շուկայի զգալի պաշտպանության տարբեր գործիքներ: Բավական բարձր են մաքսատուրքերը, իսկ բազմաթիվ հատուկ, խառը և փոփոխական մքսատուրքերը ստեղծում են բարդություն ու անորոշություն՝ ամրագրված մաքսատուրքերը գերազանցելու հնարավորությամբ: Ներմուծման լիցենզավորումը կարող է բարդացնել ու սահմանափակել ապրանքների հոսքը, իսկ քանակական սահմանափակումները համարվում են շուկայի պաշտպանության խիստ միջոցներ: Ակտիվորեն կիրառվում են հակազնագցման միջոցներ, որոնց ընթացակարգերը բարդ են ու երկարատև և արդյունքում կարող են շուկայից դուրս մղել ներմուծողին:

⁹⁷ Ներդրումների աջակցության ծրագրի և արտահանումների աջակցության ծրագրերի գործիքները կդիտարկվեն առանձին:

⁹⁸ Ներմուծման լիցենզավորման խնդիրները կդիտարկվեն առանձին:

⁹⁹ Հակազնագցման միջոցները կդիտարկվեն առանձին:

5.1.3. Մանածագործություն և հագուստ

Չնայած 2000-2005 թթ. ընթացքում մանածագործության և հագուստի ենթադրություն տարեկան միջին աճը զգալիորեն ավելի ցածր է եղել (1%), քան նույն ժամանակահատվածում արդյունաբերական հատվածի գրանցած 5,4% աճը, այս ենթադրությունը դեռևս հանդիսանում է թուրքիայի ամենամեծ արդյունաբերական ճյուղը: Այն տալիս է ՀՆԱ-ի 4,2%-ը, արդյունաբերական արտադրանքի 13,3%-ը և ներգրավում է արդյունաբերության աշխատուժի մոտ 22%-ը: Ճյուղի հաջող արդյունքների հիմնական գործոնը տեղական բամբակի բավարար պաշարն է: Թուրքիան աշխարհում չնշակված բամբակի վեցերորդ ամենամեծ արտադրողն է: Մյուս գործոններն են՝ չնշակված բամբակի մշակաբույսերի շատ բարձր որակը, ոլորտում ընդգրկված աշխատողների ցածր աշխատավարձը, հմուտ աշխատուժը և մանածագործության ու հագուստի ճյուղերի միջև ուժեղ ինտեգրացումը: Այս ճյուղը հիմնականում բաղկացած է մասնավոր հատվածից, մասնավորապես ՓՄՉ-ներից: Առավել բարենպաստ ազգի մաքսատուրքերը մանածագործական ապրանքների, հագուստի և կաշվե ապրանքների համար միջինը կազմում են 7,8%, իսկ առավելագույնը հասնում են մինչև 17%-ի:

Մանածագործական ու հագուստի ապրանքները 2006 թ. կազմել են թուրքիայի ապրանքների ամբողջ արտահանումների 22,7%-ը (2002 թ. 34,4%-ի դիմաց), և արտահանումների բաղադրության մեջ շարունակել է աճել ավելի բարձր ավելացված արժեքով վերջնական ապրանքների ու պատրաստի հագուստի կշիռը: 2004 թ. աշխարհում հագուստ արտահանողների թվում թուրքիան եղել է 4-րդը՝ 4,3% մասնաբաժնով, և 9-երորդը մանածագործական ապրանքների արտահանողների թվում՝ աշխարհում 3,3% մասնաբաժնով¹⁰⁰: ԵՄ-ն ավանդապես եղել է թուրքիայի ամենամեծ արտաքին շուկան մանածագործվածքների ու հագուստի համար, որին հաջորդել է ԱՄՆ-ը: 2005 թ. թուրքիան եղել է ԵՄ մանածագործվածքների և հագուստի երկրորդ ամենամեծ մատակարարը՝ համապատասխանաբար 13,1% և 15,4% մասնաբաժիններով: Նույն տարում թուրքիան եղել է նաև մանածագործվածքների և հագուստի ԱՄՆ-ի 11-րդ և 19-րդ մատակարարը:

Վերջին հինգ տարիների ընթացքում թուրքիայի մանածագործվածքների և հագուստի ճյուղում նոր ներդրումների մոտ 56%-ը ուղղվել է դեպի Հարավարևելյան Անատոլիայի նախագծի շրջան: Սա թուրքիայում երբևիցե նախածեռնված շրջանների զարգացման ամենահամապարփակ նախագիծն է և նպատակ ունի ավելի քան կրկնապատկել չնշակված բամբակի արտադրությունը, երբ նախագիծը սկսի գործել: Նախագծի արժեքը գնահատվում է մոտ 32 միլիարդ ԱՄՆ դոլար և բաղկացած է հողային ու ջրային ռեսուրսների զարգացումից և կառավարումից՝ ոռոգման և արդյունաբերական ու քաղաքային օգտագործման համար, հողի օգտագործման բարելավումից՝ մշակաբույսերի ճիշտ ընտրությամբ և գյուղատնտեսական լավ գործելակերպերով, գյուղարդյունաբերության և այլ ճյուղերի հետագա զարգացումից՝ հիմնականում հիմնվելով տեղում առկա ռեսուրսների վրա, և սոցիալական, կրթական ու աշխատանքային պայմանների բարելավումից՝ տարածաշրջանում որակավորված աշխատուժի ներգրավման համար:

Մանածագործվածքների, հագուստի ու կաշվի ճյուղերը չեն ստանում որևէ հատուկ խթաններ: Սակայն այս ճյուղերը ներդրումների աջակցության ծրագրի շրջանակներում տրվող խթանների երկրորդ ամենակարևոր շահառուներն են: Այդ խթանները ներառում են ներկրված մեքենաների ու սարքավորումների վրա մաքսատուրքերից ու մասսայական բնակարանային հիմնադրամի հարկից ազատումը, ներկրված և տեղում գնված մեքենաների ու սարքավորումների՝ ԱԱՀ-ից ազատումը և ներդրումային նախագծերի օգտին վարկային տոկոսադրույքի աջակցությունը: Վերջինիս դեպքում հատուցումը կազմում է 5 տոկոսային կետ՝ նոր լիրայով վարկերի և 2 տոկոսային կետ՝ արտարժույթով վարկերի համար: 2006 թ. մանածագործվածքների և հագուստի ճյուղերում ներդրումները կազմել են ներդրումային խթանների սերտիֆիկատների 11,6%-ը, որը ցածր է 2002 թ. 26,1%-ից: Թուրքական էքսիմբանկի վարկային ու երաշխավորությունների ծրագրերը նույնպես մանածագործվածքների ու հագուստի ներդրողներին տրվող առավել կարևոր խթանների թվում են:

¹⁰⁰ Արդյունաբերության և առևտրի նախարարություն (2006), *Տնտեսական և արդյունաբերական հեռանկարներ*, Անկարա:

Ինչպես նշվել է, Թուրքիայի արդյունաբերության հատկապես այս ճյուղում պետական աջակցությունը մեծ է՝ ուղղված է հիմնականում ՓՄՁ-ներին, որոնք գերակշռում են այս ճյուղում, և հետևաբար այդպիսի աջակցությունը կարող է դիտվել որպես հատուկ: Սա նշանակում է ներքին շուկայի զգալի պաշտպանություն, և պատահական չէ, որ ճյուղը գրանցել է և կգրանցի արտադրության ու արտահանումների հետևողական աճ:

Մանածագործվածքների և հագուստի ճյուղերի արդյունքները տուժել են նախորդ տարիներին չնշակված բամբակի ներքին անկայուն գներից: Թուրքիան չնշակված բամբակի զուտ ներկրող է, որի տարեկան ներմուծումները կազմում են մոտ 50 000 տոննա, իսկ տեղական արտադրությունը՝ 90 000 տոննա: Աշխարհի չնշակված բամբակի գները, լինելով շատ անկայուն, ազդել են տեղական բամբակի գների վրա, որն էլ արդյունքում ազդել է մանածագործվածքների և հագուստի ճյուղի արտադրական ծախսերի վրա: Այս խնդրին դիմակայելու համար մասնավոր հատվածն աշխատում է կառավարության հետ՝ ֆյուչերսային շուկայի հաստատման համար այս գները կայունացնելու նպատակով: Այս և Թուրքիայում ուրիշ շատ ճյուղերի համար մեկ այլ խնդիր էլեկտրաէներգիայի հաճախակի անջատումները, ինչպես նաև միջազգային գների համեմատությամբ էլեկտրաէներգիայի բարձր գինը¹⁰¹:

ԱՅԿ-ի Մանածագործվածքների և հագուստի համաձայնագրով Թուրքիան հաստատել է, որ 2005-ից այն պետք է ՄԱԳՅ 1994-ից նախկինում դուրս թողնված բոլոր ապրանքները միավորեր ՄԱԳՅ 1994-ի մեջ (պետք է վերացներ քվոտաները): ԱՅԿ-ի Ապրանքների առևտրի խորհրդում Թուրքիան աշխատանքային ծրագիր է պահանջել մանածագործվածքների և հագուստի ճյուղում արտադրության, ներդրումների և առևտրի վրա քվոտաների աստիճանական վերացման ազդեցությունը ուսումնասիրելու համար՝ պնդելով, որ ծրագիրը պետք է վերահարմարեցման ռազմավարությունների կարիք զգացող ցածր մաշտաբի արտադրողներին տրամադրի քաղաքական տարբերակներ, տեխնիկական խորհուրդներ և գործնական աջակցություն: Թուրքիան պահպանել է Մանածագործվածքների և հագուստի համաձայնագրի դրույթներով (հոդված 6) անցումային պաշտպանական մեխանիզմի օգտագործման իր իրավունքը, բայց չի օգտագործել դա: Թուրքիան ներգրավված է եղել ԱՅԿ-ի վեճերի կարգավորման համակարգում՝ ՅՈՒՆԿՈՒԴ, ՅՈՒՆԿՈՒԴԿԵՄԻՍ և Թաիլանդից մանածագործվածքների ու հագուստի ապրանքների ներմուծումների վրա իր սահմանափակումների առնչությամբ:

Թուրքիան ներմուծման քվոտաներ է սահմանել որոշ մանածագործվածքների ու հագուստի ապրանքների համար՝ Եւրոմիության և Թուրքիայի միջև Մաքսային միության որոշմամբ: Այն քվոտաներ է կիրառում նաև ԱՅԿ-ի ոչ անդամ երկրներից (Բելառուս, Կորեայի Դեմոկրատական Ժողովրդական Հանրապետություն, Սոնտենեգրո և Ուզբեկիստան) ներմուծվող ապրանքների տարբեր խմբերի համար: Ավելին՝ Թուրքիան ունի քվոտաներ Չինաստանից մանածագործվածքների ու հագուստի ապրանքների 44 խմբի համար, օրինակ՝ վերնաշապիկներ, ձեռնոցներ և այլն: Այս քվոտաները կիրառվում են Չինաստանի՝ ԱՅԿ-ի անդամակցության Աշխատանքային խմբի հաշվետվության 242 պարբերությամբ, որը պաշտպանական մեխանիզմ է սահմանում չինական ծագումով մանածագործվածքների ու հագուստի ապրանքների ներմուծումների համար¹⁰²: Թուրքիան իր քվոտաների համար աճուրդ չի կատարում. աճուրդները կփոխանցվեն քվոտաների տերերի ստացած եկամտի մի մասը կառավարությանը՝ որպես պետական հասույթ: Փոխարենը քվոտաների մեծ մասը բաշխվում է այն ընկերությունների միջև, որոնք արտահանել են նույն ապրանքախումբը նախորդ տարի, իսկ մնացածը բաշխվում է տվյալ ապրանքախմբի նոր արտահանողների միջև:

¹⁰¹ Էներգետիկայի հարցերը կդիտարկվեն առանձին:

¹⁰² Հաղորդագրություն թիվ 2006/6, հրապարակված պաշտոնաթերթում, թիվ 26386 (24 դեկտեմբեր 2006 թվական) և ԱՅԿ WT/ACC/CHN/49 փաստաթուղթ (2001):

Թուրքիան պետք է ԱՅԿ-ի անդամ երկրների համար վերացնի բոլոր քվոտաները, ինչի ամենաառաջինը նա մտահոգություն է արտահայտել և պահպանական մեխանիզմով սահմանափակումներ սկսելու հնարավորություն է պահպանել: Թուրքիան հաճախ է այս ճյուղում ներմուծումների տարբեր վիճահարույց սահմանափակումներ կատարել: Հետաքրքրական է Չինաստանից այս ապրանքների ներմուծումների սահմանափակումը, որի հնարավորությունը ամրագրվել է Չինաստանի՝ ԱՅԿ-ին անդամակցության պայմանների մեջ: Քվոտաների դեպքում դրանց բաշխման առումով պահպանվել է անարդարացի բաշխման որոշակի հնարավորություն:

5.1.4. Երկաթ և պողպատ

Երկաթի և պողպատի ճյուղը եղել է Թուրքիայի արդյունաբերականացման հիմքը, որը աշխարհի չմշակված պողպատի 11-րդ արտադրողն է (աշխարհի արտադրության մոտ 2%-ը 2006 թ.)¹⁰³: Երկուսը 2006 թ. արտադրել է 23,3 միլիոն տոննա չմշակված պողպատ (2002 թ. 16,5 միլիոն տոննայի դիմաց): Երկուսի գնահատված կարողությունը մոտ 27,7 միլիոն տոննա է (22 միլիոն տոննա 2002 թ.): Չմշակված պողպատի արտադրությունը բաժանված է երկար պողպատի (ամբողջ արտադրության 84,5%-ը 2006 թ.), հարթ պողպատի (13,5%) և հատուկ պողպատյա ապրանքների (2%): Երկուսը այժմ ամբողջությամբ ղեկավարվում է մասնավոր հատվածի կողմից: Երկաթի ու պողպատի ապրանքների վրա մաքսատուրքերի միջինը կազմում է 4,6%, իսկ առավելագույն մաքսատուրքերը հասնում են 23,4%-ի:

Երկաթի և պողպատի արտահանումները կազմել են Թուրքիայի ամբողջ ապրանքային արտահանումների 8,5%-ը 2006 թ., հիմնական շուկաները ԵՄ-ն ու Միջին Արևելքն են: Թուրքիայի վերջնական պողպատի սպառումը աճել է 2001 թ. 8,7 միլիոն տոննայից մինչև 20,8 տոննա 2006 թ.՝ հիմնականում այդ ժամանակահատվածում շինարարության մեծ աճի պատճառով: Թուրքիան ներմուծում է հարթ պողպատե ապրանքներ (մոտ 4 միլիարդ ԱՄՆ դոլարի 2006 թ.) և հատուկ պողպատ (1,3 միլիարդ ԱՄՆ դոլարի) և հանդիսանում է երկաթի մանր ջարդոնի ամենամեծ ներմուծողներից մեկը (3,8 միլիարդ ԱՄՆ դոլարի 2006 թ.): Թուրքիան աշխատում է հավասարակշռել երկար պողպատ/հարթ պողպատ հարաբերակցությունը՝ ավելի շատ հարթ պողպատե ապրանքներ արտադրելու համար վերակառուցելով առկա գործարանները: Երկաթի ու պողպատի ճյուղի վերակառուցման համար մոտ 4 միլիարդ ԱՄՆ դոլարի ներդրումներ են անհրաժեշտ:

Երրոպական համայնքների Աժխի ու պողպատի համաձայնագրի ժամկետի ավարտի հետ Թուրքիայի պողպատի ճյուղի վերակառուցման կամ վերանորոգման համար լրավճարներ չնորհելու հինգ տարվա ժամանակահատվածը ավարտվել է 2001 թ.: Սակայն Թուրքիան խնդրել է ԵՄ-ին՝ հինգ տարի երկարաձգման համար, որպեսզի իր պողպատի ընկերություններին վերակառուցման նպատակներով թույլ տա օգտվել պետական աջակցությունից (ներդրումներ՝ կապված առկա արտադրական տարածքների վերանորոգման ու արդիականացման հետ, որոնք չեն հանգեցնի կարողությունների ավելացման): 2006 թ. ԵՄ ուղարկված Թուրքիայի պողպատի արդյունաբերության Ազգային վերակառուցման ծրագիրը դեռևս վերլուծվում է Երրոպական հանձնաժողովի կողմից: Սակայն որոշ թուրքական ընկերություններ արդեն արդիականացնում են իրենց արտադրական տարածքները՝ ըստ ծրագրում սահմանված կառուցվածքի:

Երկաթի և պողպատի ճյուղերը չեն ստանում որևէ հատուկ խթաններ: Երրոպական աժխի ու պողպատի համայնքների համաձայնագրով ներդրումային խթաններ նույնպես չեն տրվում երկաթի ու պողպատի ապրանքների արտադրության համար: Սակայն ճյուղը ստանում է ներդրումների աջակցության ծրագրով տրվող ներդրումների խթանների մի փոքր մասը: Երկաթի և պողպատի արդյունաբերողները 2006 թ. ստացել են Թուրք Էքսիմբանկի վարկերի 9%-ը (2002 թ. 10%-ի դիմաց):

¹⁰³ Արդյունաբերության և առևտրի նախարարություն (2006), *Տնտեսական և արդյունաբերական հեռանկարներ*, ԱՆկարա:

Թուրքիայի երկաթի և պողպատի կայացած արդյունաբերությունը մոտ հարևանությամբ կարող է դիտարկվել որպես արդյունավետ մատակարարման լավ հնարավորություն: Սակայն այն ունի ընթացիկ վերակառուցման ու արդիականացման և, հետևաբար, որակի խնդիրներ: Այս ուղղությամբ լրավճարների տրամադրումը նույնպես կարող է դիտվել որպես լավ առաջխաղացում, թեև այս ճյուղում արտահանող մրցակից երկրների համար այդ լրավճարների տրամադրման իրավական հիմքերը կարող են վիճահարույց լինել:

5.1.5. Ավտոմեքենաշինություն

Թուրքիայում ավտոմեքենաշինական արդյունաբերությունը բաղկացած է 15 հավաքողներից ու արդյունաբերողներից (մի մասը օտարերկրյա սեփականությամբ կամ համատեղ ձեռնարկություններ են), որոնք հիմնականում գործում են լիցենզիաներով և ուղղակիորեն աշխատեցնում են ավելի քան 40 000 մարդ: Ի լրումն՝ կան մոտ 700 ավտոմեքենաշինական մատակարարներ, որոնք զբաղեցնում են մոտ 150 000 աշխատողների: 1978 թ. ստեղծված Ավտոմեքենաշինական մասերի արդյունաբերողների ասոցիացիան ներկայացնում է նրանց և ունի 189 անդամ՝ հիմնականում մեծ ընկերություններ: Առևտրային մեքենաների ճյուղում 12 ընկերություններ գործում են օտարերկրյա լիցենզիայով և ունեն 400 000 միավորից ավելի արտադրական կարողություն (2006 թ.): Ուղևորային մեքենաների ճյուղը շատ ավելի մեծ է և ընդարձակվում է՝ ներկա 796000 միավոր արտադրական կարողությամբ: Ռենոն (համատեղ ձեռնարկություն Oyak-ի հետ), Տոյոտան և Ֆիատը (համատեղ ձեռնարկություն Koc Com-ի հետ) 2006 թ. տվել են մեքենաների արտադրանքի մոտ 89%-ը (2002 թ. 93%-ից ցածր) և գերիշխող դիրք են ունեցել ներմուծված լիցենզավորված մասերի շուկայում¹⁰⁴: Հարաբերականորեն ցածր աշխատուժի ծախսերը և առանց մաքսատուրքի մուտքը ԵՄ-ի ավտոմեքենաշինական շուկա հիմնական առավելություններից են այն օտարերկրյա ընկերությունների համար, որոնք ներդրումներ են կատարում Թուրքիայի ավտոմեքենաշինական մասերի ենթադրատում: Այնուամենայնիվ, ինչպես տնտեսության մնացած մասում, ճյուղում օտարերկրյա ուղղակի ներդրումները մնում են ցածր, չնայած աճում են:

Ավտոմեքենաների արտադրությունը Թուրքիայում աճել է 2002 թ. 347 000 միավորից մինչև մոտ 988 000 միավոր 2006 թ.: Ամբողջ ավտոմեքենաշինական արտահանումները նույնպես աճել են հետևողականորեն. դրանք 2005 թ. հասան 11,7 միլիարդ ԱՄՆ դոլարի (2002 թ. 4,3 միլիարդ ԱՄՆ դոլարից) և դարձան Թուրքիայի երկրորդ ամենամեծ արդյունաբերական արտահանումը: Մասերի բաժինը ամբողջ ավտոմեքենաշինական արտահանումներում 2005 թ. եղել է 31,6% (47,8% 2002 թ.): Ավտոմեքենաշինական արտահանումների ավելի քան 70%-ը գնում է ԵՄ-ի շուկա՝ հիմնականում Գերմանիա, Իտալիա և Միացյալ Թագավորություն:

Ավտոմեքենաների վրա մաքսատուրքերի միջինը կազմում է 6,4%, առավելագույնը՝ 22%: Այլ սահմանային միջոցները ներառում են ներմուծման լիցենզավորման համակարգը: Ավտոմեքենաների մեծ մասը կարող է ներմուծվել միայն Արդյունաբերության և առևտրի նախարարության կողմից վավերացված նախնական հաշիվ-ապրանքագրով: Ըստ իշխանությունների՝ նախնական հաշիվ-ապրանքագրով վերահսկողության նպատակն է ապահովել ներմուծվող ավտոմեքենաների համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվներին:

Մաքսատուրքերից բացի՝ տեղական շուկայում վաճառված ներմուծված կամ տեղական արտադրության ավտոմեքենաները ենթակա են ամենաբարձր ԱԱՀ-ի՝ 18%: Ավտոմեքենա գնելու և շրջակա միջավայրի ֆոնդի հարկերը վերացվել են 2002 թ.:

Ուղևորային ավտոմեքենաներ արտադրողները չեն ստանում որևէ հատուկ խթաններ, սակայն, ինչպես բոլոր ներդրողները, նրանք ևս ունեն ներդրումների ընդհանուր

¹⁰⁴ Արդյունաբերության և առևտրի նախարարություն (2006), *Տնտեսական և արդյունաբերական հեռանկարներ*, Անկարա

աջակցության ծրագրի և արտահանումների խթանման ծրագրով (ազատ գոտիներ) խթանների հնարավորություն:

Թուրքիայի ավտոմեքենաշինության զարգացող արդյունաբերությունը մոտ հարևանությամբ կարող է դիտարկվել որպես արդյունավետ մատակարարման լավ հնարավորություն: Ներքին արտադրողի պաշտպանությունն ու արտահանումների աջակցությունը նույնպես կարող է դիտվել որպես լավ առաջխաղացում՝ ճյուղի հետագա զարգացման տեսանկյունից, թեև արտահանող մրցակից երկրների համար այդ աջակցության իրավական հիմքերը կարող են վիճահարույց լինել:

5.1.6. Հանքարդյունաբերություն և էներգետիկա

Թուրքիայում հանքարդյունաբերության հատվածը 2006 թ. կազմել է իրական ՀԱԱ-ի 1,1%-ը: Երկիրն ունի նավթի ու բնական գազի սահմանափակ պաշարներ, բայց ունի լիզնիտի (շագանակագույն քարածուխ) հաստատված զգալի պաշարներ, ինչպես նաև բորակ, բոր, քրոմիտ, մագնեզիտ և մարմար: Վերականգնվող վառելանյութերը, մասնավորապես փայտը, և երկրի ջրային ուղիները նույնպես էներգիայի կարևոր ռեսուրսներ են: Պետական հատվածի մասնաբաժինը հանքարդյունաբերության ենթաոլորտի ավելացված արժեքում կազմում է մոտ 70%, մինչդեռ մասնավոր հատվածի դերը ավելացել է էներգետիկայի միջոցների կառավարման ու գործունեության մեջ, հատկապես էլեկտրաէներգիայի շուկայի արտադրության սեգմենտում: Թուրքիայում էներգիայի արտադրությունը բավարարում է պահանջարկի մոտ 29%-ը¹⁰⁵:

Ինչ վերաբերում է հանքարդյունաբերության ենթաոլորտում պատասխանատու հաստատություններին, էներգետիկայի ու հանքարդյունաբերության առնչությամբ քաղաքականության հիմնախնդիրներով զբաղվում է էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարությունը: Հանքարդյունաբերության հարցերով գլխավոր տնօրինությունը նախարարության անունից կիրառում է «Հանքարդյունաբերության մասին» օրենքը, մինչդեռ էներգետիկայի շուկայի կարգավորող մարմինը (EMRA) էներգետիկայի շուկայի միակ կարգավորողն է: Վերջինս ունի իրավասությունների լայն շրջանակներ, որը ներառում են երկրորդային օրենսդրության (կանոնակարգերի) մշակում ու իրագործում, շուկայի մասնակիցներին լիցենզիաների շնորհում, դրույքաչափերի հաստատում ու հրապարակում, շուկայի մասնակիցների վերահսկում ու ղեկավարում, տեխնիկական, իրավական ու ֆինանսական աուդիտների կատարում, վեճերի կարգավորում, գործունեության չափանիշների հաստատում, փոփոխում ու կիրարկում և, ըստ անհրաժեշտության, պատժամիջոցների կիրառում: Ինչ վերաբերում է Թուրքիայի էներգիայի ընդհանուր կարիքներին, դրանք գնահատում է Պետական պլանավորման կազմակերպության ենթաբարտուղարությունը: Հանքարդյունաբերության ու էներգետիկայի գործունեության մեջ ներգրավված են բազմաթիվ պետական հաստատություններ, ինչը հատվածի համակարգումը դարձնում է ոչ արդյունավետ և երբեմն դժվարացնում է խնդիրների լուծումը: Սակայն հատվածում պատասխանատվություն ունեցող մարմինները համագործակցում են՝ համակարգումն ու արդյունավետությունը բարելավելու նպատակով:

Թուրքիայի հանքարդյունաբերությունը կազմում է երկրի տնտեսության չնչին մասը, այն նաև չի առանձնանում բարձրարժեք բնական ռեսուրսների զգալի պաշարներով: Արտադրության մեջ պետական հատվածի մեծ ներգրավվածությունը վկայում է ոլորտում մրցակցության, արտադրողականության և արդյունավետության հնարավոր խնդիրների մասին: Ավելին՝ ոլորտի պետական կարգավորման ու վերահսկման ոչ արդյունավետ համակարգումը խոսում է այդպիսի խնդիրների լուծման հնարավորությունների սահմանափակության մասին: Երկիրը մեծ մասամբ հանդիսանում է էներգակիրներ ներմուծող:

¹⁰⁵ էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն (<http://www.enerji.gov.tr>):

Հանքարդյունաբերության մաքսատուրքերի միջինը 0.3% է: Մաքսատուրքերը փոփոխվում են զրոյից՝ ծծմբի, հանքանյութերի ու կոնցենտրատների, քարածխի, լիգնիտի, չնշակված նավթի, բնական աղամանդի և թանկարժեք քարերի համար, մինչև 20%՝ աղի և մաքուր կերակրի աղի համար: Էլեկտրաէներգիայի նկատմամբ սահմանված մաքսատուրք չկա, սակայն գանձվում է 18% ԱԱՀ: Էլեկտրաէներգիայի արտահանումներ կատարում է Էլեկտրաէներգիայի առևտրի ու պայմանագրման թուրքական ընկերությունը (TETAS), որի համար Արտահանողների միությանը վճարվում է 0,05% ծառայության վճար:

ա. Հանքարդյունաբերություն

Թուրքիան ունի հանքարդյունաբերության բազմազան ու գործունե ենթաուլորտ: Գնահատված է, որ երկրում կան ավելի քան 4 400 հանքավայրեր¹⁰⁶ և մոտ 77 տնտեսապես արդյունահանվող հանքանյութեր՝ չհաշված նավթն ու քարածուխը¹⁰⁷: 2005 թ. 53 տարբեր հանքանյութեր են արտադրվել¹⁰⁸: Թուրքիան ունի աշխարհի բոլոր պաշարների երկու երրորդը և բոլոր հանքանյութի ամենամեծ արտադրողն է¹⁰⁹, ունի աշխարհի քրոմիտի պաշարների 6%-ը և աշխարհի մարմարի պաշարների 40%-ը: Թուրքիայի հայտնի հանքային պաշարները գնահատվել են մոտ 2 տրիլիոն ԱՄՆ դոլար¹¹⁰: 2003-2004 թթ. ընթացքում 1 136 նոր հանքարդյունաբերական ընկերություններ են ստեղծվել¹¹¹: 2002-2006 թթ. հանքարդյունաբերության արտահանումները աճել են միջինը 31%-ով և 2006 թ. կազմել Թուրքիայի ապրանքների ամբողջ արտահանումների 2,4%-ը¹¹²:

Հանքարդյունաբերության մեջ Թուրքիայի հիմնական նպատակներն են՝ արտադրել մրցունակ ու անվտանգ չնշակված նյութեր և մշակումով բարձրացնել ավելացված արժեքը: Ըստ օրենքի՝ ստորգետնյա ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են ու ենթակա են միայն պետության տնօրինմանը և չեն համարվում այն հողի մի մասը, որում դրանք գտնվում են: Պետությունը կարող է լիցենզիաներ տրամադրել մասնավոր հաստատություններին՝ որոշակի ժամանակահատվածներում ու նպատակներով հանքերի արդյունահանման ու գործարկման համար, և դրա համար պետությանը վճարումներ պիտի կատարվեն:

Թուրքիայի հանքարդյունաբերությունը, իր տարատեսակ արդյունահանվող հանքանյութերով և կայուն զարգացման միտումներով, մոտ հարևանությամբ կարող է դիտարկվել որպես լավ հնարավորություն: Հաշվի առնելով նաև նպատակադրված մրցունակության բարձրացման գնային ու որակական կողմը՝ ոլորտի արտադրանքը կարող է առկա արդյունաբերական տարբեր ճյուղերում անհրաժեշտ հումքի մատակարարման մոտ այլընտրանք հանդիսանալ: Ավելին՝ չնշակված տարատեսակ հումքային նյութերի առկայությունը կարող է հնարավորություն ստեղծել՝ դրանք մշակող արդյունաբերության տարբեր ճյուղերի ստեղծման ու զարգացման համար:

Թուրքիան հանքարդյունաբերության ենթաուլորտում նախաձեռնել է մի շարք բարեփոխումներ: 2003 թ. խորհրդարանն ընդունել է օտարերկրյա ներդրողի մասին նոր օրենք, որպեսզի քաջալերի տեղական ու օտարերկրյա ներդրումները, ներառյալ՝

¹⁰⁶ Արտաքին առևտրի վարչապետարանի ենթաքարտուղարություն (http://www.igeme.org.tr/eng):

¹⁰⁷ Ստամբուլի տեխնիկական համալսարան:

¹⁰⁸ Արտաքին առևտրի վարչապետարանի ենթաքարտուղարություն (http://www.igeme.org.tr/eng):

¹⁰⁹ United States Geological Survey report on boron production (http://minerals.usgs.gov):

¹¹⁰ Արտաքին առևտրի վարչապետարանի ենթաքարտուղարություն (http://www.igeme.org.tr/eng):

¹¹¹ United States Geological Survey report on mineral industry of Turkey (http://minerals.usgs.gov):

¹¹² Արտաքին առևտրի վարչապետարանի ենթաքարտուղարություն (http://www.igeme.org.tr/eng):

հանքարդյունաբերությունում¹¹³: Օտարերկրացիները կարող են հանքարդյունաբերության ենթադրարտում ներդրումներ կատարել միայն տեղական բաժնետիրական ընկերությունների միջոցով: Սակայն բորի, ուրանի և թորիումի որոնումներն ու արդյունահանումը վերապահված են միայն կառավարությանը:

2004 թ. «Հանքարդյունահանման մասին» Թուրքիայի թիվ 5177 օրենքը հանքանյութերը դասակարգում է հինգ խմբերի՝ (1) ավազ և խիճ, (2) մարմար և այլ նմանատիպ դեկորատիվ քարեր, (3) աղեր՝ լուծույթային ձևով, որ կարելի է ստանալ ծովի, լճի ու աղբյուրի ջրերից, (4) էներգետիկայի, մետաղական ու արդյունաբերական հանքանյութեր և (5) կիսաթանկարժեք քարեր ու թանկարժեք քարեր:

Հանքարդյունաբերական գործունեությունը կարգավորվում է Հանքարդյունաբերության հարցերով գլխավոր տնօրինության կողմից, որը տրամադրում է նաև հանքարդյունաբերության լիցենզիաներ: Կա լիցենզիաների երեք տեսակ՝ որոնումների լիցենզիա/հավաստագիր, գործունեության լիցենզիա և գործունեության թույլտվություն: Որոնման լիցենզիաները ուժի մեջ են երեք տարի: Հանքարդյունահանման լիցենզիաները (կամ հավաստագրերը կիսաթանկարժեք/թանկարժեք քարերի համար) կարող են շնորհվել թուրքական կամ Թուրքիայում հաստատված որևէ օտարերկրյա ընկերության: Վերջիններս համարվում են թուրքական ընկերություններ: Մինչ որոնման լիցենզիայի դադարելը դրա տերը պետք է ստանա գործունեության լիցենզիա: Այս լիցենզիան կարող է շնորհվել հինգ տարվա համար՝ որոշ հանքանյութերի համար, և առնվազն տաս տարով՝ այլ հանքանյութերի դեպքում, թեև այս ժամկետները կարող են երկարաձգվել: Որոնման լիցենզիա ունեցողները նաև պարտավորվում են Հանքարդյունաբերության հարցերով գլխավոր տնօրինությունից ստանալ գործունեության թույլտվություն: Սա ստանալուց հետո ընկերություններն ունեն մինչև մեկ տարի ժամանակ՝ հանքարդյունահանման գործունեություն սկսելու համար, որի ձախողման դեպքում նրանք ենթակա են նախնական դիմումի մեջ հայտարարագրված տարեկան արտադրության արժեքի 10%-ի չափով վճարման՝ չգործելու յուրաքանչյուր տարվա համար: Գործունեության լիցենզիաները շնորհում են լիցենզավորված տարածքը օգտագործելու օրինական իրավունք, մինչդեռ գործունեության թույլտվությունները հանդիսանում են որևէ հանքի գործարկման թույլտվության վկայություն: Թույլտվությունները ուժի մեջ են նույն ժամանակահատվածում, ինչ որ լիցենզիաները: Հանքարդյունահանման լիցենզիաները կարող են փոխանցվել թիվ 5177 օրենքով իրավասուններին, և փոխանցումը պետք է գրանցվի նույն տնօրինությունում¹¹⁴:

Ենթադրարտում ամբողջ գործունեությունը ենթակա է Շրջակա միջավայրի ու անտառային տնտեսության նախարարության կողմից վերահսկողության: Կախված գործունեության վայրից՝ կարող է թույլտվություն պահանջվել Առողջապահության, Գյուղատնտեսության ու գյուղական հարցերով և Մշակույթի ու զբոսաշրջության նախարարություններից: Թիվ 5177 օրենքը սահմանում է տարբեր վճարներ՝ հանքանյութերի արդյունահանման տարբեր կատեգորիաների համար: Ընդհանուր առմամբ հանքանյութերի առաջին ու հինգերորդ խմբերի և շինարարության մեջ (օրինակ՝ ծածկաքար) ու կոպիտ շինարարական աշխատանքներում (ամբարտակներ, ավազաններ, նավահանգիստներ ու ճանապարհներ) օգտագործվող ցանկացած տեսակի հանքանյութերի արտադրության համար պետությանը վճարվում է հանքավայրի կետում այդ հանքանյութերի վաճառքի արժեքի 4%-ը: Հանքանյութերի մյուս խմբերի համար պետությանը վճարվում է 2%¹¹⁵: Այն հանքարդյունաբերական ընկերությունները, որոնք օգտագործում են իրենց արտադրած հանքանյութը իրենց մշակման գործունեության մեջ, մշակված հանքանյութի չափով ստանում են պետական վճարումների 50% համընդհանուր նվազեցում: Այն դեպքում, երբ հանքարդյունահանումը կատարվում է պետական սեփականություն հանդիսացող հողի վրա, լիցենզիաների տերերը պետք է լրացուցիչ վճարեն 30%, քանի որ նրանք չպետք է վճարեն պետական սեփականություն հանդիսացող հանքարդյունահանման գույքի վարձակալության համար:

¹¹³ Պետական պլանավորման կազմակերպություն (2006), *2007-2013 թթ. իններորդ զարգացման պլան*, Անկարա:

¹¹⁴ Onder, S. (2006), *Turkey's mining regime*, Ankara.

¹¹⁵ Onder, S. (2006), *Turkey's mining regime*, Ankara.

Էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարության ղեկավարության ներքո գործող Հանքարդյունահանման ֆոնդը տրամադրում է վարկեր՝ որոնումների, տեխնիկական հետազոտությունների, զարգացման, նախագծերի պատրաստման, տեղակայման, շինարարության, արտադրության և արտահանման գործունեության համար: Այն ֆինանսավորվում է միայն ընդհանուր բյուջեից¹¹⁶: Հինգ ծրագրեր ներկայունս տրամադրում են շուկայականից բավական ցածր տոկոսադրույքներով վարկեր (աղյուսակ 52): Այս վարկերը պահանջում են բանկային երաշխավորագիր, որը ծածկում է վարկային գումարի 130%-ը:

Աղյուսակ 52, Վարկային ծրագրերը 2007 թ.

| Ծրագիրը | Ընդհանուր հատկանիշները | Նոմինալ տոկոսադրույք |
|--|---|----------------------|
| Հանքերի հետազոտություն ու զարգացում | Առավելագույնը՝ երեք տարով, չկա մայր գումարի վճարում առաջին տարվա ընթացքում, առավելագույնը ծախսերի 50%-ի չափով, իսկ երբ որոնումը կատարում է Հանքանյութերի հետազոտությունների ու որոնումների ընդհանուր տնօրինությունը՝ 75%: | 11% |
| Տեղակայումներ, ընդարձակում ու զարգացում | Առավելագույնը՝ հինգ տարով, չկա մայր գումարի վճարում առաջին երկու տարվա ընթացքում, առավելագույնը ամբողջ ֆինանսավորման 50%-ի չափով, եթե խթանման հավաստագիր է տրվել՝ 60%: | 13% |
| Կառավարման վարկ | Առավելագույնը՝ երեք տարով, չի կարող գերազանցել աշխատանքային կապիտալի չափը, չկա մայր գումարի վճարում առաջին տարվա ընթացքում: | 15% |
| Արտահանումներ | | 20% |
| 1. Արտահանման վարկ | Մեկ տարով, ամբողջ ծախսերի 50%-ի չափով (չհաշված տրանսպորտային ծախսերը): | 13% |
| 2. Վարկային նամակ կամ արտահանման հավաստագրի վարկ | Վեց ամսով, առավելագույնը՝ վարկային նամակի 50%-ի չափով: | 13% |
| Պահեստավորման վարկ | Առավելագույնը՝ պահեստավորման արժեքի 20-40%-ի չափով: | 25% |
| 1. Արտահանման պահեստավորման վարկ | Առավելագույնը՝ պահեստավորման արժեքի 40%-ի չափով: | 13% |
| 2. Ներքին պահեստավորման վարկ | Առավելագույնը՝ պահեստավորման արժեքի 20%-ի չափով: | 15% |

Աղբյուրը՝ ԱՀԿ Քարտուղարություն, ըստ Թուրքական իշխանությունների տրամադրած տեղեկության

Թուրքիայի հանքարդյունաբերության մեջ ներդրումների խթանումն ու ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ուղղություններով վարկային լրավճարների տրամադրումը հիմք կարող է հանդիսանալ ոլորտի կայուն զարգացման համար: Սա հետագայում կապահովի մոտ հարևանությամբ տարատեսակ հանքարդյունաբերական հումքի մատակարարման լավ հնարավորություն:

¹¹⁶ Օրենք թիվ 5177 և 2002 թվականի հունիսի 14-ի հաղորդագրություն, հրապարակված պաշտոնական տեղեկագրում, թիվ 24785:

բ. Էներգետիկա

Թուրքիայի էներգետիկայի շուկան աշխարհում ամենաարագ աճողներից է. 2006 թ. վերջում հիմնական էներգիայի ամբողջ սպառումը հասել է 92,6 միլիոն տոննա նավթի համարժեքի, և սպասվում է, որ կբարձրանա մինչև 126 միլիոն տոննա՝ 2010 թ. և 222 միլիոն տոննա՝ 2020 թ.: Ըստ իշխանությունների՝ Թուրքիայի կախվածությունը էներգիայի ներմուծումներից մոտ 71% է: Նավթը կազմում է էներգիայի զուտ ամբողջ ներմուծումների 46%-ը, որին հաջորդում են գազը (37%) և քարածուխը (16%): Ներքին արտադրությունը բավարարում է պահանջարկի 29%-ը: Ենթադրույալ օտարերկրյա ուղղակի ներդրումների կարիքները գնահատվում են տարեկան մոտ 4,5 միլիարդ ԱՄՆ դոլար՝ մինչև 2010 թ.: 2006 թ. Թուրքիայում էլեկտրաէներգիայի պահանջարկը կազմել է 174,6 գիգավատ ժամ և սպասվում է, որ այն կհասնի 406-ից մինչև 499 գիգավատ ժամի մինչև 2020 թ.:

Թուրքիայի էներգետիկայի քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել անխափան մատակարարումը: Ի լրումն՝ իշխանությունները նպատակ ունեն՝ (1) բարեփոխել ու ազատականացնել ենթակառուցվածքը՝ այն ավելի արտադրողական, արդյունավետ ու թափանցիկ դարձնելու համար, (2) էներգիայի տեղական ռեսուրսները արդյունահանել կայուն ու շրջակա միջավայրի համար անվնաս ձևով (ներառյալ նոր ու վերականգնելի աղբյուրներից), (3) նվազեցնել ենթակառուցվածքի գործող պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկություններին ուղղված պետական փոխանցումները և (4) օգտվել երկրի աշխարհաքաղաքական դիրքից ու այն դարձնել առանցքային տարանցիկ տարածաշրջան՝ նավթի ու գազի միջազգային առևտրի համար (արևելք-արևմուտք էներգետիկայի միջանցք): Թուրքիան գերակայություն է տվել հիմնականում երկու խողովակաշարային նախագծերի՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան չնշակված նավթի խողովակաշարը, որը ավարտվել է 2006 թ. ու կարող է փոխադրել տարեկան 50 միլիոն տոննա նավթ, և Բաքու-Թբիլիսի-Էրզրում բնական գազի խողովակաշարը, որը վառելիքի պաշարների տարածաշրջանային համագործակցության համար է և պետք է ունենա տարեկան 20 միլիարդ խորանարդ մետր փոխադրելու կարողություն: Ավելին՝ Թուրքիան ունի այլ երկրների հետ ընթացիկ նախագծեր, ինչպիսիք են Թուրքիա-Բուլղարիա-Ռումինիա-Յունգարիա-Ավստրա բնական գազի խողովակաշարը (Նաբուկո) և Հարավկովկասյան խողովակաշարը:

Թուրքիան ունի էներգիայի անընդհատ աճող սպառման և ներմուծումների զգալի հավակնություններ: Դա երկրի աշխարհագրական դիրքի հետ մեկտեղ այն դարձնում է էներգակիրների միջազգային առևտրի հոսքերի կարևոր նպատակակետ կամ տարանցիկ տարածք: Սա ենթադրում է համապատասխան հետևություններ բոլոր հարևանների համար, որոնք կարող են լինել թե պոտենցիալ մատակարար և թե տարանցիկ տարածքի հարևան օղակ: Այստեղ շոշափելի են տարածաշրջանային տարանցիկ նախագծերից դուրս մնալու նախկին մտահոգությունները: Սակայն, ապագա նախագծերի արդյունավետ իրականացման առումով կարող է լինել մասնակցության հնարավորություն:

Պետական սեփականություն հանդիսացող տարբեր ձեռնարկություններ շարունակում են գերիշխել ենթակառուցվածքում: Դրանցից են էլեկտրաէներգիայի արտադրության ընկերությունը (EUAS), էլեկտրաէներգիայի բաշխման թուրքական ընկերության (TEDAS) սեփականություն հանդիսացող տեղային բաշխման ընկերությունները, էլեկտրաէներգիայի Թուրքական հաղորդման կորպորացիան (TEIAS), էլեկտրաէներգիայի առևտրի ու պայմանագրման թուրքական ընկերությունը (TETAS), Թուրքական նավթային ընկերությունը (TPAO) և Նավթային խողովակաշարային կորպորացիան (BOTAS) (աղյուսակ 53): Այս ընկերություններից որոշները գտնվում են սեփականաշնորհման ցուցակում, իսկ մյուսները սեփականաշնորհվել են վերջին տարիների ընթացքում: Դրանցից են Թուրքիայի բենզինի հիմնական մանրածախ վաճառող ընկերությունն ու Բենզինի վերամշակման Թուրքական կորպորացիան, որը մենաշնորհ է բենզինի վերամշակման ճյուղում:

| Պետական տնտեսական ձեռնարկություն | Շուկայի բաժինը | Գնային կարգավորումը | Այլ |
|--|--|---|--|
| <p>Նավթ և գազ TPAO՝ արտադրություն, որոնում, հորատում, բնական գազի պահեստավորում, խողովակաշարեր, նավթի առևտուր և փոխադրում BOTAS՝ բնական գազի ներմուծում, փոխադրում, վաճառք և չմշակված նավթի փոխադրում: Նախատեսված է BOTAS-ի մասնատում, ըստ օրենքի մասնավոր հատվածը իրավունք ունի բնական գազի շուկայի գործունեություններում ներգրավվելու:</p> | <p>Արտադրում է թուրքական նավթի 70%-ը, ունի ու գործարկում է 18 գազի հանքավայր՝ ընդհանուր 36-ից BOTAS-ի մենաշնորհը դադարեցվել է:</p> | <p>Չմշակված նավթի գինը սահմանվում է ըստ օրենքի: Դրույքաչափերի տեսակներն են՝ մաիցման, փոխադրման ու դրա կառավարման, մեծածախ վաճառքի և մանրածախ վաճառքի: Որոշվում են EMRA-ի կողմից՝ մինչև կլիմի բավարար մրցակցություն:</p> | <p>Նավթի արտադրողները միայն կարող են արտահանել ցամաքում չմշակված նավթի արտադրության մինչև 35%-ը և 45%-ը՝ ծովում:</p> |
| <p>Քարածուխ Թուրքական քարածխի ձեռնարկություններ (TTK) EUAS</p> | <p>Քարածխի միակ արտադրող:</p> | <p>Գները սահմանվում են TTK-ի կողմից:</p> | <p>Չգալի լրավճարներ են տրվում:</p> |
| <p>Թուրքական լիզնիտի ձեռնարկություններ (TKI)</p> | <p>Արտադրում է թուրքական լիզնիտի 26%-ը Արտադրում է թուրքական լիզնիտի 45.8%-ը:</p> | <p>Գները սահմանվում են EUAS-ի կողմից: Գները սահմանվում են TKI-ի կողմից:</p> | |
| <p>Էլեկտրաէներգիա EUAS</p> | <p>Ունի էլեկտրաէներգիայի տեղակայված կարողության 58.5%-ը:</p> | <p>Գները սահմանվում են EUAS-ի կողմից:</p> | <p>Մասնավոր հատվածը կարող է մասնակցել շուկայի բոլոր սեզմենտներում՝ բացի հաղորդումից՝ լիցենզիա ստանալով EMRA-ից: Արտադրության սեփականաշնորհումը նախատեսված է:</p> |
| <p>TEIAS</p> | <p>Ունի ու գործարկում է հաղորդման համակարգը և նաև գործում է որպես շուկայի վարող:</p> | <p>Դրույքաչափերը հաշվարկվում են ըստ օրենքի և ներկայացվում են EMRA-ին հաստատման համար</p> | <p>TEIAS-ը կմնա որպես միակ երկարաժամկետ հաղորդման համակարգի վարող և միջոցների սեփականատեր:</p> |
| <p>TETAS</p> | <p>Ավելի քիչ քան ընդհանուր արտադրության 50%-ի առևտրի ու մեծածախ վաճառքի պատասխանատու:</p> | <p>TETAS-ը ներկայացնում է մեծածախ վաճառքի գների առաջարկություններ EMRA-ին՝ հաստատման համար</p> | <p>TETAS-ը կատարում է պետական հատվածի գնումների բոլոր պարտավորությունները: Այն չի կարող վաճառել նոր սպառողների: Նրա դերը պետք է ժամանակի ընթացքում նվազի:</p> |

| Պետական տնտեսական ձեռնարկություն | Շուկայի բաժինը | Գնային կարգավորումը | Այլ |
|--|---|---|---|
| պետական սեփականության 20 շրջանային բաշխման ընկերություններ, որ ստեղծվել են TEDAS-ի վերակառուցմանը և մեկ մասնավոր շրջանային բաշխման ընկերություն: | TEDAS-ին է պատկանում բաշխման համակարգը, բայց բաշխումն ու մանրածախ վաճառքը կատարում են շրջանային բաշխման ընկերությունները: | Շրջանային բաշխման ընկերությունները ներկայացնում են բաշխման և մանրածախ վաճառքի գների առաջարկություններ EMRA-ին՝ հաստատման համար: | Բաշխման սեփականաշնորհումը նախատեսված է: |

Աղբյուրը՝ ԱՀԿ Քարտուղարություն, ըստ Թուրքական իշխանությունների տրամադրած տեղեկության

Վերջին շրջանում ենթադրուի վերաբերյալ ընդունվել են հետևյալ օրենքները. (1) «Նավթի շուկայի մասին» օրենքը (թիվ 5015), որը նպատակ ունի այդ ճյուղում դադարեցնել պետական վերահսկողությունը, ազատականացնել նավթի ու նավթամթերքների գները (նաև՝ տեղական ծագման գնումների պահանջները), դադարեցնել ուղղահայաց ինտեգրման սահմանափակումները և ինտեգրել խողովակաշարային, մշակման ու բաշխման գործունեությունները, (2) «Հեղուկացված նավթային գազի մասին» շուկայի օրենքը (թիվ 5307), որը կազմակերպում է հեղուկ գազի մատակարարումը, բաշխումը, փոխադրումը, պահեստավորումը և առևտուրը, (3) «Էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման մասին» օրենքը (թիվ 5346), որը նախատեսում և խրախուսում է վերականգնվող աղբյուրներից (քամի, արևային, երկրաջերմային, կենսազանգված, կենսազազ, ալիքներ, հոսանքներ, մակընթացություններ և առավելագույնը 15 քառակուսի կմ մակերես ունեցող ավազանով հիդրոկայաններ) էլեկտրականության արտադրությունը. EMRA-ն այս ճյուղում ներգրավված հաստատություններին շնորհում է հատուկ հավաստագիր, որը նրանց հնարավորություն է տալիս օգտվել այս օրենքով սահմանված խթաններից, (4) «Էներգախնայողության մասին» օրենքը (թիվ 5627), որը նպատակ ունի քաջալերել էներգիայի արդյունավետ օգտագործումը, (5) «Երկրաջերմային ռեսուրսների ու բնական հանքային ջրերի մասին» օրենքը (թիվ 5686), որը նպատակ ունի քաջալերել երկրաջերմային ու բնական հանքային ջրի ռեսուրսների՝ շրջակա միջավայրի համար անվնաս ձևով որոնումը, հետազոտումը, զարգացումը և արտադրությունը, (6) «Էլեկտրաէներգիայի շուկայի մասին» օրենքը (թիվ 4628) և (7) «Բնական գազի շուկայի մասին» օրենքը (թիվ 4646):

Էլեկտրաէներգիայի, հեղուկ գազի ու բնական գազի արտահանումներին ու նարմոնումներին վերաբերող լիցենզիաները կարգավորվում են համապատասխանաբար թիվ 4628, 5307 ու 4646 օրենքներով և EMRA-ի կողմից ընդունված երկրորդային օրենսդրությամբ: Ըստ թիվ 5015 օրենքի՝ լիցենզիա է հարկավոր նաև նավթի, լուծիչների և որոշ նավթամթերքների ներմուծման համար: Էլեկտրաէներգիայի շուկայում լիցենզիաները տրվում են մինչև 49 տարի ժամկետով, նվազագույնը 10 տարով՝ արտադրության, հաղորդման և բաշխման համար: Բնական գազի շուկայի լիցենզիաները տրվում են նվազագույնը 10, առավելագույնը 30 տարով: Լիցենզիաները կարող են նորացվել, եթե դրանք բավարարում են օրենքներով ու երկրորդային օրենսդրությամբ սահմանված պահանջները: Էլեկտրաէներգիայի արտահանումները դեպի այն երկրներ, որոնք կատարում են միջազգային փոխկապվածության պահանջը, կատարվում են մեծածախ վաճառքի լիցենզիա ունեցողների կողմից, եթե այդպես նշված է նրանց լիցենզիաներում: Մեծածախ վաճառքի լիցենզիայի վճարները հայտարարվում են EMRA-ի խորհրդի կողմից ամեն տարի: 2007 թ. Էլեկտրաէներգիայի շուկայի մեծածախ վաճառքի միանվագ լիցենզիայի վճարը եղել է 250 000 նոր լիրա, դրան ավելացված տարեկան լիցենզիայի վճար՝ 0,00003 նոր լիրա վաճառված մեկ կիլովատ ժամի դիմաց: Բնական գազի մեծածախ վաճառքի լիցենզիայի վճարը եղել է 50 000 նոր լիրա, դրան ավելացված տարեկան լիցենզիայի վճար՝ 0,000005 նոր լիրա վաճառված մեկ կիլովատ ժամի դիմաց: Բնական գազի ներմուծման լիցենզիայի վճարը եղել է 75 000 նոր լիրա, դրան ավելացված տարեկան լիցենզիայի վճար՝ 0,000005

նոր լիրա ներմուծված մեկ կիլովատ ժամի դիմաց: Բնական գազի արտահանման լիցենզիայի վճարը եղել է 10 000 նոր լիրա, և տարեկան լիցենզիայի վճարը արտահանված մեկ կիլովատ ժամի դիմաց եղել է զրո:

Էլեկտրաէներգիայի մեծ կորուստները, ներառյալ գողությունը, շարունակվում են Թուրքիայում, չնայած որոշ կրճատմանը: Բավարար ներդրումների պակասը էներգիայի մեծ վատնման հետ մեկտեղ նույնպես դառնում է լուրջ խնդիր և կարող է էլեկտրաէներգիայի պակասի պատճառ դառնալ: Երկրի էլեկտրաէներգիայի արտադրության կարողության բարձրացումը շարունակվում է կառավարության համար մնալ մեծ գերակայություն, որը դառնում է դեպի մասնավոր հատվածը՝ նոր ներդրումների ու ենթադրույթի վերակառուցման համար: Բնական գազի միացված ցիկլով էլեկտրակայանների տասներկու նախագծեր՝ մոտ 14 000 մեգավատ ընդհանուր կարողությամբ, ընթացքի մեջ են: Մեկ ջերմային էլեկտրակայանի և մեկ հիդրոէլեկտրակայանի գործարկման իրավունքները փոխանցվել են մասնավոր հատվածին՝ համապատասխանաբար 20 և 26 տարով: Թուրքիան հայտարարել է մինչև 2015 թ. 5 000 մեգավատ կարողությամբ միջուկային էլեկտրակայանի շինարարության ծրագրի մասին¹¹⁷:

գ. Նավթ և բնական գազ

Նավթի ու բնական գազի ճյուղում կան երկու հիմնական պետական սեփականության ձեռնարկություններ՝ BOTAS-ը և TPAO-ն: BOTAS-ը 2009 թվականից հետո պետք է բաժանվի երեք պետական սեփականության ձեռնարկությունների: Առևտրի ու պահեստավորման համար պատասխանատու ձեռնարկությունները պետք է սեփականաշնարհվեն, իսկ հաղորդմանը՝ ոչ: BOTAS-ի սեփականության երկու տեղական բաշխող ձեռնարկությունները դարձել են բաժնետիրական ընկերություններ ու սեփականաշնորհվել են: Ըստ թիվ 4646 օրենքի՝ BOTAS-ին պարտադրվել է իր բնական գազի գնումների ու վաճառքի առկա պայմանագրերի փոխանցման համար սկսել մրցույթներ՝ մինչև որ իր ներմուծումները նվազեն մինչև ամբողջ տարեկան սպառման 20%: Բենզինի վերամշակման թուրքական կորպորացիան սեփականաշնորհված է և բենզինի վերամշակման միակ ընկերությունն է՝ չորս վերամշակման մասնաճյուղերով և 27,6 միլիոն տոննա տարեկան ամբողջ կարողությամբ: Կան 49 բաշխող ընկերություններ:

Նավթային ռուրսները պատկանում են պետությանը, որը որոնումների ու արտադրության համար լիցենզիաներ է շնորհում: Օրենսդրական քայլեր են կատարվում նավթի ու գազի որոնումների գործունեության արագացման համար: 2007 թ. դրությամբ նավթի արդյունահանման ճյուղում կային 39 ընկերություններ և 107 նավթի ու 36 գազի հանքավայրեր: 67 նավթի ու 18 գազի հանքավայրեր պատկանում ու գործարկվում են TPAO-ի կողմից, որը արտադրում է տեղական նավթի 70%-ը: TPAO-ն ներգրավված է նաև բնական գազի պահեստավորման մեջ: Ծովում, հատկապես Սև ծովում, TPAO-ի կողմից նավթի ու բնական գազի որոնումները վերջին տարիներին աճել են՝ ներառյալ օտարերկրյա բաժնետերերի (Petrobras, Chevron) հետ միասին որոնումները:

Ինչպես էներգետիկայի միջազգային գործակալության անդամ որոշ այլ երկրներում, պետք է ստեղծվի պաշարների գործակալություն՝ արտակարգ իրադրություններում նավթի բավարար պաշար պահպանելու համար¹¹⁸: Ըստ թիվ 5015 օրենքի՝ բենզինի պաշարները պետք է համարժեք լինեն նախորդ տարվա միջին զուտ ներմուծումների 90 օրվան: Բաշխման և վերամշակման ընկերությունները նույնպես պարտավոր են պաշարներ պահել՝ առնվազն 20 օրվա մատակարարմանը համարժեք, մինչդեռ մեծ սպառողները, որ տարեկան սպառում են 20 000 տոննա կամ ավելի հեղուկ վառելիք, պետք է պահեն իրենց 15 օրվա սպառմանը համարժեք պաշարներ (սա համարվում է բենզինի ազգային պաշարների մի մասը): Վերջիններս այն լիցենզավորված սպառողներն են, որոնց տարեկան սպառումը ավելին է, քան EMRA-ի սահմանած շենը, և ոչ պակաս, քան տարեկան 5 000 տոննա նավթ, ցեռուցման վառելիք և դիզելային վառելիք: Բենզինի ազգային պաշարների մնացած մասը

¹¹⁷ European Commission (2006), *Turkey 2006 Progress Report*, Brussels.

¹¹⁸ Պետական պլանավորման կազմակերպություն (2006), *2007-2013 թթ. իններորդ զարգացման պլան*, Անկարա:

պետք է պահվի վերամշակող ընկերությունների կողմից: Ենթադրուհով բոլոր ապրանքների համար առավելագույն զները սահմանվում են EMRA-ի կողմից, և մանրածախ վաճառողները ազատ են՝ իրենց զները համապատասխանաբար սահմանելու համար: Բնական գազի շուկայում բոլոր դրույքաչափերը, բացառությամբ սեղմված բնական գազի վաճառքի դրույքաչափերից, հաստատվում են EMRA-ի կողմից, մինչև որ կլինի բավարար մրցակցություն:

Նավթի ու բնական գազի ենթադրուհով օտարերկրյա ձեռնարկությունները կարող են առանց սահմանափակումների ներդրումներ կատարել շուկայավարման ու վաճառքների գործունեության մեջ: Օտարերկրյա պետությունների կողմից վերահսկվող կամ դրանց պատկանող ընկերությունները կարող են ներդրումներ կատարել արդյունահանման գործունեության մեջ՝ միայն Նախարարների խորհրդի թույլտվությամբ: EMRA-ի խորհրդի թույլտվությունը պարտադիր է վերամշակման, խողովակաշարերով փոխադրման և պահեստավորման մեջ ներդրումներ կատարելու համար: Նավթային ամբողջ գործունեության համար լիցենզիաները տրվում են EMRA-ի կողմից: 2006 թ. այն մի մասնավոր ընկերության լիցենզիա է տրամադրել Նախարարների խորհրդի որոշումով: EMRA-ն քննարկել է նաև որոշ մասնավոր վերամշակման լիցենզիաների դիմումներ:

EMRA-ն մրցույթներ է անցկացնում բնական գազի բաշխման համար: Առանձին լիցենզիա է պահանջվում շուկայական յուրաքանչյուր գործունեության համար (մեծածախ վաճառք, բաշխում, ներմուծում, արտահանում, պահեստավորում), իսկ որտեղ գործունեությունը իրականացվում է մեկից ավելի վայրում, ապա՝ յուրաքանչյուր վայրի համար: 2002-2007 թթ. ընթացքում բնական գազի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շնորհվել է 155 լիցենզիա:

դ. Քարածուխ

Պետական սեփականություն հանդիսացող երկու հիմնական ձեռնարկություններ՝ Լիզնիտի թուրքական ձեռնարկությունները (TKI) և Քարածխի թուրքական ձեռնարկությունները (TTK), գերիշխում են ածխի ճյուղում: Թուրքական շագանակագույն քարածուխն ունի ցածր ջերմային արժեք և ծծմբի ու փոշու բարձր պարունակություն: Դրա ամբողջ արտադրության մոտ 46%-ը կատարում է TKI-ն, իսկ TTK-ն ունի փաստացի մենաշնորհի քարածխի արտադրության, վերամշակման ու բաշխման մեջ: Այս ձեռնարկությունները սահմանում են քարածխի ու լիզնիտի տեղական զները՝ հաշվի առնելով համաշխարհային զները: Կառավարությունը կարող է սոցիալտնտեսական պատճառներով ազդել զների վրա: Գները թույլ չեն տալիս TTK-ին փակել իր ծախսերը. այն աշխատում է շարունակական վնասով, մինչդեռ TKI-ն ունի շահութաբերություն:

Թուրքական գանձապետարանից TTK-ին կատարված ամբողջ ֆինանսական փոխանցումները 2006 թ. կազմել են 571 միլիոն նոր լիրա: TKI-ն չի ստանում որևէ ուղղակի լրավճարներ: Կառավարությունը միշտ ցանկացել է քարածխի ճյուղում բարձրացնել արտադրողականությունը և նվազեցնել աշխատողների քանակը: Նախատեսվում է, որ նշված ձեռնարկությունները կսեփականաշնորհվեն միջին և երկարաժամկետ պլանով: Մինչ այժմ միայն մեկ էլեկտրակայան է սեփականաշնորհվել՝ գործարկման իրավունքների փոխանցման ընթացակարգով: Այլ քայլեր նույնպես կատարվում են սեփականաշնորհման ուղղությամբ, օրինակ՝ TKI-ում մակերեսային հանքարդյունահանման պատրաստությունների մեծ մասը կատարում են մասնավոր ընկերությունները:

ե. Էլեկտրաէներգիա

Երեք ընկերություններ պատասխանատու են ճյուղի տարբեր սեգմենտների՝ արդտադրության (EUAS), հաղորդման (TEIAS) ու մեծածախ առևտրի (TETAS) համար: Էլեկտրաէներգիայի բաշխման Թուրքական ընկերության TEDAS-ի վերակառուցմամբ ստեղծված շրջանային բաշխման ընկերությունները պատասխանատու են բաշխման ու հաճախորդներին մանրածախ վաճառքի համար: TEDAS-ին են պատկանում բաշխման

միջոցները, իսկ այդ միջոցների գործարկման իրավունքները փոխանցվել են շրջանային բաշխման ընկերություններին: Բացի հաղորդումից՝ բոլոր սեզնեցություններում թույլատրվում է ուղղակի մասնավոր մասնակցություն: Ըստ թիվ 4628 օրենքի՝ մասնավոր մասնակցության կարգը անցում է կատարել կոնցեսիոն համակարգից դեպի կողմերի միջև երկկողմ պայմանագրեր՝ վեճերի կարգավորման մեխանիզմով:

Նախորդ կարգից մնացած պայմանագրերը հետևյալ տեսակների են՝ կառուցել-գործարկել-հաղորդել, գործարկման իրավունքների փոխանցում և կառուցել-գործարկել-սեփականատիրել: Դրանք 15-20 տարիների համար են և ենթակա են նախապես որոշված քանակներով ու գների բանաձևերով էլեկտրաէներգիայի գնումների պայմանագրերի՝ գանձապետարանի երաշխավորությամբ: Այս պայմանագրերին առնչվող տեղակայված կարողությունը կազմում է 9 200 մեգավատ: Այս համակարգը հանգեցրել է պարտավորությունների զգալի կուտակման և արդեն իսկ անարդյունավետ ճյուղի ոչ բացահայտ սուբսիդավորման: TETAS-ը ստանձնել է այս պայմանագրերից բխող գնման բոլոր պարտավորությունները, և EUAS-ի ցածր ծախսերով արդտադրության օգուտները ուղղվում են ծախսային բեռի հատուցման համար:

Ցանցի և «ոչ իրավասու հաճախորդների» դրույքաչափերը, ինչպես նաև TETAS-ի մեծածախ վաճառքի գները կարգավորվում են: Իրավասու են այն հաճախորդները, որոնց տարեկան սպառումը գերազանցում է 3 գիգավատ ժամ շեմը (2007 թ.), որոնք բնական գազ են գնում էլեկտրաէներգիայի արտադրության համար և որոնք տեղական բնական գազ արտադրողներ են: Նրանք ձեռք են բերել իրենց մատակարարին ընտրելու իրավունք: Ըստ «էլեկտրաէներգիայի շուկայի դրույքաչափերի մասին» կանոնակարգի և առնչվող հաղորդագրությունների՝ դրույքաչափերը պետք է արտացոլեն ծախսերը և հաշվարկվեն նախապես որոշված մեթոդաբանությունների հիման վրա: Շուկայական գործողությունների հետ ուղղակիորեն չկապված ծախսերը չպետք է հաշվի առնվեն: Էլեկտրականության ճյուղում խաչաձև լրավճարները թույլատրվում են մինչև 2010 թ.: Ընդհանուր առմամբ, արդյունաբերական սպառողները սուբսիդավորում են բնակչությանը, և Թուրքիայի արևելյան շրջանները սուբսիդավորվում են այլ շրջանների կողմից: Ընկերությունների կողմից որոշվելուց հետո կարգավորվող դրույքաչափերը ենթակա են EMRA-ի քննությանն ու հաստատմանը: Բոլոր դրույքաչափերը հրապարակվում են պաշտոնաթերթում և EMRA-ի ինտերնետային կայքում՝ թափանցիկության ապահովման համար:

2002 թ. սկսած էլեկտրաէներգիայի վաճառքի գները չեն աճել՝ չնայած նավթի ու գազի ներմուծման աճող գների: Սպառողի կողմից վճարվող էլեկտրաէներգիայի գինը ենթակա է չորս տարբեր հարկումների՝ 1% էներգիայի ֆոնդի բաժին, 2% Ռադիոյի ու հեռուստատեսության թուրքական կորպորացիայի հավելավճար, այնուհետև նախորդ երկու հարկումների ընդհանուր գումարը ենթակա է քաղաքապետարանի սպառման հարկի (5% բնակչության համար և 1% արդյունաբերական օգտագործողների համար), և 18% ԱԱՀ:

Թուրքիայի համար էլեկտրաէներգիայի արտադրության կարողության բարձրացումը բարձր գերակայություն է, և նոր ներդրումների ու ենթաուղրտի վերակառուցման համար ներգրավվում է նաև մասնավոր հատվածը: Ներկայումս Թուրքիան ունի բազմաթիվ էլեկտրակայանների կառուցման և գործարկման նախագծեր, այդ թվում՝ մոտ ապագայում միջուկային էլեկտրակայանի շինարարությունը: Երկարաժամկետ հեռանկարում երկիրը կարող է հասնել էլեկտրաէներգիայի ինքնաապահովման:

5.2. Հայաստանի արդյունաբերության ոլորտ

5.2.1. Ընդհանուր նկարագիր

Հայաստանի արդյունաբերական ենթակառուցվածքի արդյունքները տարբեր են եղել վերջին ժամանակաշրջանում: Որոշ արդյունաբերական ճյուղեր արդեն կրում են համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը: Մասնավորապես մետալուրգիան, որը կազմել է ամբողջ արդյունաբերական արտադրանքի 14%-ը, մի քանի տարիների արագ աճից հետո 2008 թ. կրճատվել է 9,6%-ով՝ Հայաստանի արտահանման ամենամեծ բաղադրիչը հանդիսացող ոչ երկաթային մետաղների միջազգային գների նվազման պատճառով: Մետալուրգիական ընկերությունների հարյուրավոր աշխատողներ ազատվել են աշխատանքից կամ ուղարկվել են անժամկետ արձակուրդի: Վերջին տարիներին, երբ միջազգային գները շատ բարձր էին, այդ ընկերությունները մեծ շահույթներ են ստացել և կարող են այժմ դիմակայել ճգնաժամին: Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, որ վերջերս պետական կարճաժամկետ վարկ էր ստացել, աշխատողներին չի կրճատել և հայտարարել է 2009 թ. ընթացքում արտադրությունը 30%-ով ավելացնելու պլանների մասին: Արարատի ոսկու արդյունահանման ընկերությունը մոտ երկու տարվա ընդմիջումից հետո վերսկսել է իր գործունեությունը:

Թեև մինչև 2008 թ. արդյունաբերության հատվածը աճել է, սակայն հատվածի վերակառուցման գործընթացը դանդաղ է եղել: Արդյունաբերական ընկերությունների գործունեությունը դեռևս դժվար է: Ներքին պահանջարկը դեռևս թույլ է և նրանց ապրանքները մրցունակ չեն գնի, որակի և շուկայավարման խնդիրների պատճառով: Հատվածի աճը ընդհանուր առմամբ եղել է ոչ կանոնավոր և կախված մի քանի հանգուցային ճյուղերի միտումներից: Ծյուղային արդյունքը եղել է անհավասարաչափ: Մինչև 2008 թ. ծանր արդյունաբերության արտադրանքը աճի միտում է ունեցել՝ պայմանավորված սեփականաշնորհման ու վերակառուցման որոշ հաջողված ծրագրերով: Սակայն դա միայն կենտրոնացած է եղել մետաղների ճյուղում. տարիների դադարից հետո ճյուղի արտադրանքը սկսեց աճել, երբ մետաղների վերամշակման գործարանները գործարկվեցին: Սկսած 2005 թ.՝ մետալուրգիան, որպես աճի հիմնական ճյուղ, փոխարինել է ադամանդագործությանը:

Տարիներ առաջ ադամանդի մշակման գերիշխող ճյուղը շարունակել է կտրուկ նվազել 2008 թ.: Այն այժմ կազմում է ամբողջ արդյունաբերական արտադրանքի 2%-ից քիչ և հետ է մնում նույնիսկ քիմիական ճյուղից, որը 2008 թ. նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել է մոտ 15%-ով: Երկրի երկու ամենամեծ քիմիական ձեռնարկություններն ընդհանուր առմամբ կանգ են առել՝ սինթետիկ ռետինի և այլ քիմիական ապրանքների համաշխարհային պահանջարկի անկման պատճառով: Ինչ վերաբերում է ադամանդագործությանը, 2008 թ. հայկական ընկերությունները արտադրել են 100 945 կարատ ադամանդ՝ նախորդ տարվա համեմատությամբ 14%-ով ավելի քիչ: Ռուսաստանից չմշակված ադամանդի՝ դեպի Հայաստան մատակարարումը, որ դադարեցվել էր ռուսական մաքսային ծառայության հետ հարկային վեճի պատճառով, դեռևս չի վերականգնվել: Կառավարությունը ադամանդագործության համար նախատեսում է հարկային դադար կիրառել՝ դեռևս մոտ 2 000 աշխատող ունեցող այդ ճյուղի փրկության համար:

Արտադրության նշված բոլոր նվազումները մասամբ հատուցվել են ամենամեծ արդյունաբերական ճյուղի՝ սննդի մշակման նախորդ տարվա համեմատությամբ 7% աճով: Սննդի մշակման ճյուղը 2008 թ. տվել է արդյունաբերական արտադրանքի մոտ մեկ երրորդը: Նախորդող տարիներին գյուղատնտեսական վերամշակումն ու փաթեթավորումը շահել են որոշ օտարերկրյա ներդրումներից՝ պայմանավորված ճյուղի ցածր կապիտալ ծախսերով: Ալկոհոլային խմիչքների արտադրության աճող բաժինը արտահանվում է: Սննդի վերամշակման այլ ճյուղերը՝ հատկապես պահածոյագործությունը, ունեն արտահանման միայն սահմանափակ հնարավորություններ՝ որովհետև հնացած տեխնոլոգիան արտադրողներին հիմնականում հնարավորություն չի տալիս բավարարել միջազգային ավելի խիստ ստանդարտները:

2008 թ. Հայաստանի ներմուծումների կտրուկ աճը հիմնականում պայմանավորված է արդյունաբերական և տրասնպորտային սարքավորումների ներմուծումների աճով, որը կազմել է \$1,2 միլիարդ: Սա արտացոլել է ինչպես տնտեսության կապիտալի բարձր ներգրավվածությամբ ճյուղերի աճը, այնպես էլ ներմուծվող ավտոմեքենաների զգալի պահանջարկը: Նախորդ տարվա համեմատությամբ ավելի քան 50%-ով ավելացել են նաև այնպիսի հումքային նյութերի ներմուծումները, ինչպիսիք են թուղթը, փայտը և կաշին: Մետաղների և պատրաստված մետաղյա իրերի ներմուծումները կազմել են \$413 միլիոն՝ ամբողջ ներմուծումների 9%-ը:

Հայաստանի արտահանման ամենամեծ բաղադրիչի՝ ոչ երկաթային մետաղների արտահանումները, նվազել են 11%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ 16%-ով նվազել են նաև ադամանդների և այլ ոսկերչական զարդերի արտահանումները՝ հասնելով \$175 միլիոնի, ինչը համարժեք է արտահանված մետաղների դրամական արժեքի մոտ կեսին:

Կան արդյունաբերական ճյուղերի աջակցության մի շարք ծրագրեր: Այս տարվա սկզբին կառավարությունը իր պատրաստակամությունն է հայտնել օգնելու երկրի սննդի մշակման արդյունաբերությանը՝ ոչ միայն արտասահմանում վերջինիս վաճառքների խթանման, այլև ներքին շուկայում ավելի մեծ բաժին ձեռք բերելու հարցում: Արտահանողները կշահեն նաև հարավային Վրաստանում պլանավորված նոր ավտոճանապարհի կառուցումից, որը զգալիորեն կկրճատի Հայաստանի և Հայաստանից դուրս ու ներս բեռնափոխադրումների ավելի քան 70%-ը իրականացնող վրացական սևծովյան նավահանգիստների միջև հեռավորությունը:

Տեղական ծխախոտի ու ալկոհոլի արտադրողներին աջակցելու համար խորհրդարանը բարձրացրել է Հայաստան ներմուծվող ծխախոտից ու ալկոհոլային խմիչքներից գանձվող ակցիզային հարկերը:

Համաշխարհային բանկի տրամադրած ֆինանսավորմամբ և տեղական առևտրային բանկերի միջոցով ՓՄՁ-ներին պետք է տրվեն վարկեր, որոնց համար վերջիններս պետք է ներկայացնեն իրագործելի գործարար պլաններ և իրագործման համար ստանան կառավարության աջակցությունը: Նախապատվություն պետք է տրվի այն արդյունաբերական ընկերություններին, որոնց արտադրանքը կարող է ներքին շուկայից դուրս մղել ներմուծվող համապատասխան ապրանքները:

ՓՄՁ-ների զարգացման ազգային կենտրոնը վարում է ՓՄՁ-ներին աջակցության տրամադրման ավելի ընդգրկուն գործունեություն, ինչը մասնավորապես ներառում է՝ վարկային երաշխավորությունների տրամադրում, սկսնակ ձեռներեցության սատարում, շուկայում թողարկվող արտադրանքի առաջնորդում և տեղեկատվության ու խորհրդատվության տրամադրում: Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ 2006 թ. ՓՄՁ-ների տեսակարար կշիռը Հայաստանի ՀՆԱ-ում կազմել է 40,3%, ինչը տնտեսության մեջ մասնավոր հատվածի տեսակարար կշռի մոտ կեսն է (84%), իսկ ՓՄՁ-ներում աշխատողների տեսակարար կշիռը երկրում զբաղվածների ընդհանուր թվաքանակում կազմել է 35,1%: Այս ցուցանիշները խորհրդանշում են Հայաստանում ՓՄՁ-ների զարգացման դեռևս ցածր մակարդակից այն դեպքում, երբ փոքր և մշին ձեռնարկատիրությունն է հանդիսանում տնտեսության մեջ արտադրողականության, արդյունավետության, մրցունակության և առնչվող նորարարությունների ու նորանվտայությունների շարժիչ ուժը:

Համաշխարհային ճգնաժամի հետևանքները հաղթահարելու հետ մեկտեղ անհրաժեշտ է համակարգված լուծում տալ դրա հետ կապ չունեցող նախկին խնդիրներին: Արդյունաբերական հատվածի տարերային զարգացման փոխարեն պետք է ստեղծել համընդհանուր խթանող միջավայր, որտեղ կբացահայտվեն հին ու նոր ճյուղերի ներուժը և դրանց զարգացման մոտեցումները: Հատվածին տրվող աջակցությունը պետք է ուղղվի դրա ճյուղերի արդյունավետության ու արտադրողականության բարձրացմանը: Մրցունակության բարձրացումը պետք է ավելի կարևորվի, քան ներմուծումների համար հայկական շուկայի մատչելիության սահմանափակումը:

5.2.2. Հանքարդյունաբերություն և էներգետիկա

Հայաստանի հանքային ռեսուրսները ներառում են մարմար, բազալտ, գրանիտ, մոլիբդեն, պերլիտ, կապար, բոքսիտ (ալյումինի հանքանյութ), ցինկ, պղինձ, ոսկի և արծաթ, բայց բոլորն էլ առկա են հարաբերականորեն սահմանափակ քանակությամբ: Հաջորդելով ոչ երկաթային ճյուղում նոր ներդրումներին՝ 2004-2007 թթ. հանքարդյունաբերության հատվածի տարեկան աճը արագացել է՝ կազմելով միջինը մոտ 6%: Արտադրության մակարդակը կախված է արտաքին պահանջարկից: Ամբողջ արդյունաբերական արտադրության մեջ հատվածի բաժինը կազմել է մոտ 16%: Սպասվում է, որ այն ավելի կընդլայնվի՝ ուրանի պաշարների որոնումներից ու հանքարդյունահանման հնարավոր զարգացումից, ինչպես նաև պղինձի ու մոլիբդենի նոր հանքավայրերի գործարկումից հետո:

2006-2007 թթ. հանքանյութերի արտահանումները աճել են՝ կազմելով Հայաստանի արտահանումներից ստացված ամբողջ հասույթի 14,5%-ը: Հատվածի արտադրության մոտ 80%-ը արտահանվել է: Մյուս կողմից՝ ներմուծումների մասով հանքանյութերի համաշխարհային բարձր գների պատճառով դրանց կշիռը ավելացել է Հայաստանի ներմուծումների կառուցվածքում՝ դառնալով ներմուծման ամենամեծ խումբը:

2008 թ. հատվածի արտահանումների մակարդակը մնացել է նախորդ տարվա համեմատությամբ անփոփոխ՝ համաշխարհային գների նվազման պատճառով: Հանքարդյունաբերական ներմուծումները, սակայն, շարունակել են աճել՝ նախորդ տարվա համեմատությամբ ավելանալով 28%-ով: Դրա հիմնական պատճառը եղել է ռուսական գազի բարձր գինն ու աճող ներքին սպառումը:

Հանքարդյունաբերությունն ունի սահմանափակ հնարավորություններ: Ավելին՝ հատվածի արդյունքը կախված է ներդրումների մակարդակից և համաշխարհային գներից: Սակայն հին ու նոր հանքանյութերի որոնումների ու արդյունահանման լրացուցիչ հնարավորություններ կան: Որոշ նեղ ճյուղերում մոտ հարևանությամբ հանքարդյունահանման առկայությունը կարող է հանքանյութերի մատակարարման կամ վերամշակման համատեղ նախագծերի իրականացման հնարավորություն տալ: Անհրաժեշտ է խստացնել շրջակա միջավայրի պաշտպանությունը՝ կապված առողջության, գյուղատնտեսության ապահովության և զբոսաշրջության որակի հետ:

Էներգետիկայի առնչությամբ պետք է նշել, որ նախատեսվում է ավելացնել էլեկտրաէներգիայի արտադրության կարողությունները: Պետք է դադարեցվի ատոմակայանի գործարկումը (բարդ գործընթաց, որ կսկսվի 2016 թ. ու կարժենա ավելի քան \$300 միլիոն) և 2010-2011 թթ. պետք է կառուցվի նոր ատոմակայան, որի ակնկալվող ծախսերը գնահատվում են առնվազն \$5,2 միլիարդ (\$ինանսավորումը դեռևս անհայտ է, և վատացող համաշխարհային տնտեսությունը խոչընդոտ է դառնում ներդրումներ ներգրավելու համար): Նոր ատոմակայանի հզորությունը կկազմի 1 000 մեգավատ, որը ներկա հզորությունից երկու անգամ ավելի է և կբավարարի Հայաստանի էլեկտրաէներգիայի կարիքները: Ներկայումս գործող գազ օգտագործող ջերմաէլեկտրակայաններից ու հիդրոէլեկտրակայաններից բացի՝ բազմաթիվ մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվում է կառուցել ավելի քան 40 նոր հիդրոէլեկտրակայաններ, որոնք կբարձրացնեն Հայաստանի էլեկտրաէներգիայի արտադրության կարողությունը 12%-ով: Նախատեսվել է նաև բարձրացնել գործող ջերմաէլեկտրակայանների հզորությունը (ներդրումները պետք է կազմեն \$170 միլիոն):

Ռուսական էներգակիրների ներմուծումից կախվածությունը դեռևս շարունակվում է՝ չնայած իրանական նոր գազատարի կառուցմանը, որը նույնպես ռուսական վերահսկողության տակ է: Նախատեսված է, որ իրանական գազի ներմուծումը ներկայիս տարեկան 400 միլիոն խորանարդից (Ռուսաստանից ներմուծվող գազի մեկ երրորդից քիչ) կհասցվի 2,3 միլիարդ խորանարդ մետրի: Նախատեսված է նաև, որ իրանական գազը կօգտագործվի էլեկտրաէներգիայի արտադրության համար, ինչը ամբողջությամբ կարտահանվի: Էներգակիրների համաշխարհային գների անկումից Հայաստանը շատ չի

շահի, քանի որ Ռուսաստանի՝ ԱՅԿ-ին անդամակցությամբ պայմանավորված պարտավորությունների համաձայն ռուսական գազի արտահանումների գները ըստ երկրների հավասարվում են, և համապատասխանաբար ռուսական գազի՝ Հայաստանի ներմուծումների արժեքը ավելանում է 40%-ով:

Ի տարբերություն այլ արդյունաբերական ճյուղերի՝ էներգետիկայի հատվածը 2008 թ. նախորդ տարվա համեմատությամբ 8% աճ է գրանցել (էլեկտրաէներգիայի արտադրությունը աճել է 7%-ով), ինչը զուգորդվել է մեծ օտարերկրյա ներդրումներով: 2009 թ. ընթացքում էլեկտրաէներգիայի ներքին սպառումը կնվազի՝ արդյունաբերական մեծ ձեռնարկությունների գործունեության դադարի պատճառով:

Ինչ վերաբերում է էլեկտրաէներգիայի արտահանումներին, արդեն որոշ աճ է նախատեսվում այս տարվա ընթացքում: Դա կիրականանա, եթե ըստ Թուրքիայի հետ ձեռք բերված նախնական համաձայնության՝ ավարտվեն անհրաժեշտ տեխնիկական պատրաստությունները: Նախատեսվում է, որ Հայաստանը Թուրքիա կարտահանի տարեկան 1,5 միլիարդ կիլովատ ժամ էլեկտրաէներգիա, ինչը համարժեք է 2008 թ. Հայաստանի էլեկտրաէներգիայի արտադրության մոտ 25%-ին, և 2011 թ. ավելի քան կրկնապատկի էլեկտրաէներգիայի մատակարարումը:

Մոտակա տարիներին նախատեսվում է նաև էլեկտրաէներգիայի մեծամասշտաբ արտահանումներ դեպի Իրան, ինչի համար պետք է կառուցվի 400 կիլոմետր երկարությամբ բարձրավոլտ հաղորդման գիծ (կտևի երկու տարի, մեծ մասամբ կֆինանսավորի Իրանը, արժեքը գնահատված է \$100 միլիոն): Էներգակիրների ներմուծումների առնչությամբ պետք է նշել, որ Իրանից դիզելային վառելիքի ներմուծման համար նախատեսվում է երկու տարում կառուցել \$200 միլիոն արժողությամբ 300 կիլոմետր երկարությամբ խողովակաշար:

Էներգետիկայի բնագավառում կա ներուժ, և կուտակվում է զգալի կարողություն: Գտնվելով էներգակիրների միջազգային առևտրի հոսքի տարանցիկ գոտում՝ երկրի համար լավ հնարավորություն կա մասնագիտանալու հումքի վերամշակման ոլորտներում և հասնելու ինքնապահովման ու զարգացնելու արտահանումները: Իրանը, լինելով նավթային երկիր, չունի նավթի վերամշակման ու, մասնավորապես, բենզինի արտադրության բավարար կարողություններ և բենզին է ներմուծում: Ներմուծվող գազից արտահանվող էլեկտրաէներգիայի օրինակով հնարավոր կլինի ներմուծվող նավթից արտահանվող բենզին արտադրել՝ ընդլայնվող հարևան շուկաների համար:

5.3. Արդյունաբերության ոլորտների համեմատություն

Արդյունաբերական հատվածը ներառում է արդյունաբերական ապրանքների արտադրության, հանքարդյունաբերության և էներգետիկայի ոլորտները: Նախ՝ երկու երկրների արդյունաբերական հատվածների հարաբերական կարևորությունը գնահատելու համար դիտարկենք դրանց արդյունքների ցուցանիշները (աղյուսակներ 54 և 55):

Աղյուսակ 54, Արդյունաբերության ավելացված արժեք (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|----------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 35.08 | 38.50 | 37.95 | 42.53 | 43.61 | 43.60 |
| Թուրքիա | 28.67 | 28.62 | 28.52 | 28.51 | 28.67 | 28.29 |
| Վրաստան | 24.36 | 25.65 | 26.42 | 26.85 | 24.86 | 24.08 |
| Ադրբեջան | 50.18 | 52.58 | 54.72 | 63.60 | 70.11 | 61.61 |
| Իրան | 41.39 | 40.95 | 42.74 | 44.60 | 44.60 | 41.51 |
| Ստորին միջին եկամուտ | 38.98 | 39.46 | 39.54 | 40.58 | 40.92 | .. |
| Վերին միջին եկամուտ | 30.87 | 31.17 | 32.37 | 31.95 | 32.44 | 30.89 |
| Բարձր եկամուտ | 26.36 | 26.06 | 25.72 | 26.19 | .. | .. |

| | | | | | | |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 31.26 | 31.38 | 32.05 | 33.25 | 33.53 | 32.82 |
| Աշխարհ | 27.76 | 27.59 | 27.45 | 27.88 | .. | .. |

Աղյուսակ 55, Արդյունաբերության ավելացված արժեք (տարեկան աճ, %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 22.52 | 26.39 | 7.64 | 16.59 | 18.49 | 11.80 |
| Թուրքիա | 4.56 | 7.77 | 11.81 | 8.74 | 10.17 | 5.42 |
| Վրաստան | 14.50 | 16.20 | 14.03 | 14.53 | 14.45 | 5.00 |
| Ադրբեջան | 14.80 | 14.13 | 12.60 | 42.36 | 36.61 | 26.00 |
| Իրան | 9.55 | 9.58 | 6.51 | 4.71 | 5.29 | 7.00 |
| Ստորին միջին եկամուտ | 7.54 | 8.86 | 9.26 | 9.61 | 10.71 | 10.99 |
| Վերին միջին եկամուտ | -0.25 | 4.07 | 8.30 | 4.83 | 6.00 | 5.28 |
| Բարձր եկամուտ | 0.23 | 1.73 | 4.15 | 2.28 | .. | .. |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 3.53 | 7.74 | 9.04 | 6.41 | 8.00 | 6.34 |
| Աշխարհ | 1.17 | 2.96 | 5.33 | 3.69 | .. | .. |

Ձտելով արդյունաբերության հատվածը և հանելով հանքարդյունաբերության ու էներգետիկայի ոլորտները՝ առանձնացնենք միայն արդյունաբերական ապրանքների արտադրության ոլորտը և դիտարկենք երկու երկրների համար վերջինիս արդյունքների ցուցանիշները (աղյուսակներ 56 և 57):

Աղյուսակ 56, Արդյունաբերական արանքների արտադրության ավելացված արժեք (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 20.88 | 21.20 | 20.95 | 20.94 | 16.79 | 15.09 |
| Թուրքիա | 20.25 | 20.35 | 20.02 | 19.93 | 19.82 | 19.03 |
| Վրաստան | 13.72 | 13.88 | 13.36 | 13.67 | 12.73 | 12.34 |
| Ադրբեջան | 8.08 | 9.36 | 8.93 | 7.02 | 5.58 | .. |
| Իրան | 11.39 | 11.25 | 11.27 | 11.76 | 11.76 | 10.55 |
| Ստորին միջին եկամուտ | 23.46 | 23.97 | 24.32 | 24.75 | .. | .. |
| Վերին միջին եկամուտ | 18.68 | 19.25 | 19.71 | 19.31 | 19.11 | 17.93 |
| Բարձր եկամուտ | 17.48 | 17.08 | 17.07 | 16.86 | .. | .. |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 18.05 | 18.77 | 19.39 | 19.13 | 18.98 | 18.89 |
| Աշխարհ | 18.02 | 17.78 | 17.85 | 17.70 | .. | .. |

Աղյուսակ 57, Արդյունաբերական արանքների արտադրության ավելացված արժեք (տարեկան աճ, %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|------|
| Հայաստան | 13.90 | 15.60 | 2.20 | 7.20 | -1.10 | 3.00 |
| Թուրքիա | 2.90 | 8.40 | 11.92 | 8.17 | 8.39 | 5.40 |
| Վրաստան | 8.40 | 7.70 | 5.75 | 10.66 | 16.96 | 5.00 |
| Ադրբեջան | 8.20 | 14.00 | 10.50 | 4.80 | 8.00 | .. |
| Իրան | 11.05 | 9.97 | 12.00 | 4.71 | 5.29 | 6.00 |
| Ստորին միջին եկամուտ | 8.37 | 11.54 | 8.37 | 9.86 | .. | .. |
| Վերին միջին եկամուտ | -0.38 | 3.97 | 9.04 | 4.26 | 5.90 | 4.96 |
| Բարձր եկամուտ | 0.70 | 2.19 | 5.19 | 2.63 | .. | .. |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | .. | .. | .. | .. | .. | .. |
| Աշխարհ | 1.60 | 3.60 | 5.97 | 3.90 | .. | .. |

Հայաստանի արդյունաբերությունը վերջին տարիներին ցուցաբերել է աճի ավելի բարձր տեմպեր: Հատվածը՝ որպես ՀՆԱ-ի մաս, ավելի քան 1,5 անգամ մեծ է թուրքիայի այդ ցուցանիշից: Սակայն հաշվի առնելով, որ մեկ շնչի հաշվով թուրքիայի ՀՆԱ-ն ավելի քան 2 անգամ մեծ է Հայաստանի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ից, թուրքական արդյունաբերական հատվածը ունի հարաբերականորեն ավելի մեծ կարևորություն: Ինչ վերաբերում է Հայաստանի արդյունաբերական ապրանքների արտադրության ոլորտին, այն վերջին տարիներին ցուցաբերել է աճի անկայուն ու ավելի ցածր տեմպեր: Այն կազմում է հայկական արդյունաբերական հատվածի ընդամենը մոտ 1/3-ը, մինչդեռ թուրքական արդյունաբերական ապրանքների արտադրության ոլորտը կազմում է թուրքական ավելի ծավալուն արդյունաբերական հատվածի 2/3-ը: Թուրքական արդյունաբերական ապրանքների արտադրությունը մի քանի անգամ գերազանցում է հայկականին և կարող է զգալի մրցակցային ճնշում հանդիսանալ հայկական արտադրական ճյուղերի վրա ու խոչընդոտել դրանց զարգացմանը:

Հայաստանի և թուրքիայի արդյունաբերական հատվածների արտաքին առևտուրը գնահատելու համար դիտարկենք դրանց առանձին ոլորտների արտահանումների և ներմուծումների տեսակարար կշիռները բոլոր ապրանքների արտահանումներում և ներմուծումներում համապատասխանաբար (աղյուսակներ 58-64):

Աղյուսակ 58, Արդյունաբերական ապրանքների արտահանումներ (ապրանքների արտահանումների %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 60.66 | 62.08 | 57.88 | 71.13 | 56.24 |
| Թուրքիա | 83.93 | 83.71 | 84.55 | 81.57 | 81.56 |
| Վրաստան | 37.16 | 29.83 | 38.99 | 38.48 | 48.37 |
| Ադրբեջան | 5.93 | 6.49 | 10.50 | 13.28 | 8.14 |
| Իրան | 8.80 | 8.96 | 8.50 | 8.81 | 10.09 |
| Ստորին միջին եկամուտ | 69.88 | 69.92 | 70.56 | 69.43 | 69.33 |
| Վերին միջին եկամուտ | 59.27 | 57.81 | 56.89 | 55.14 | 52.05 |
| Բարձր եկամուտ | 80.55 | 79.75 | 79.17 | 77.68 | 76.90 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 47.34 | 47.74 | 47.57 | 45.04 | 39.27 |
| Աշխարհ | 76.80 | 76.02 | 75.79 | 74.32 | 73.50 |

Աղյուսակ 59, Արդյունաբերական ապրանքների ներմուծումներ (ապրանքների ներմուծումների %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 56.71 | 62.86 | 58.87 | 61.68 | 59.70 |
| Թուրքիա | 67.86 | 68.40 | 71.49 | 68.68 | 41.44 |
| Վրաստան | 56.60 | 62.44 | 59.13 | 60.52 | 60.83 |
| Ադրբեջան | 65.06 | 73.98 | 73.59 | 74.19 | 74.31 |
| Իրան | 82.02 | 78.90 | 72.42 | 69.63 | 16.30 |
| Ստորին միջին եկամուտ | 72.34 | 72.08 | 70.17 | 68.13 | 66.48 |
| Վերին միջին եկամուտ | 77.89 | 77.37 | 77.12 | 76.47 | 72.99 |
| Բարձր եկամուտ | 76.36 | 75.15 | 74.22 | 72.02 | 69.77 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 68.86 | 69.66 | 71.08 | 69.75 | 63.67 |
| Աշխարհ | 76.04 | 74.98 | 74.07 | 72.05 | 69.78 |

Աղյուսակ 60, ՍճՆԴԻ արտահանումներ (ապրանքների արտահանումների %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 16.21 | 14.45 | 13.18 | 13.71 | 11.71 |
| Թուրքիա | 10.09 | 10.01 | 9.31 | 10.49 | 6.75 |
| Վրաստան | 30.83 | 34.85 | 28.44 | 36.42 | 24.73 |
| Ադրբեջան | 3.03 | 4.84 | 4.26 | 7.48 | 5.03 |
| Իրան | 3.72 | 4.22 | 3.05 | 3.51 | 4.25 |
| Ստորին միջին եկամուտ | 9.66 | 9.24 | 8.58 | 8.08 | 7.54 |
| Վերին միջին եկամուտ | 10.48 | 10.96 | 10.34 | 9.93 | 9.43 |
| Բարձր եկամուտ | 6.68 | 6.73 | 6.41 | 6.11 | 5.92 |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 5.78 | 5.74 | 5.20 | 5.79 | 5.25 |
| Աշխարհ | 7.47 | 7.53 | 7.16 | 6.80 | 6.50 |

Աղյուսակ 61, ՍճՆԴԻ ներմուծումներ (ապրանքների ներմուծումների %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 20.76 | 17.96 | 22.49 | 18.47 | 15.95 |
| Թուրքիա | 3.81 | 4.18 | 3.28 | 2.91 | 1.82 |
| Վրաստան | 20.53 | 18.08 | 20.93 | 17.42 | 16.37 |
| Ադրբեջան | 14.15 | 11.75 | 11.69 | 10.47 | 10.45 |
| Իրան | 10.67 | 10.50 | 8.93 | 7.90 | 1.86 |
| Ստորին միջին եկամուտ | 7.58 | 7.58 | 7.18 | 6.42 | 6.04 |
| Վերին միջին եկամուտ | 7.70 | 7.85 | 7.16 | 6.43 | 6.07 |
| Բարձր եկամուտ | 7.37 | 7.30 | 6.88 | 6.56 | 6.18 |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 9.45 | 9.31 | 8.34 | 8.11 | 7.35 |
| Աշխարհ | 7.50 | 7.46 | 6.99 | 6.57 | 6.19 |

Աղյուսակ 62, Հանքանյութերի և մետաղների արտահանումներ (ապրանքների արտահանումների %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 17.51 | 20.54 | 23.98 | 11.91 | 24.71 |
| Թուրքիա | 2.00 | 1.99 | 2.17 | 2.46 | 1.32 |
| Վրաստան | 24.47 | 27.60 | 27.40 | 19.15 | 21.51 |
| Ադրբեջան | 0.05 | 1.03 | 1.42 | 1.40 | 1.34 |
| Իրան | 0.84 | 1.08 | 1.02 | 1.16 | 2.42 |
| Ստորին միջին եկամուտ | 2.85 | 2.87 | 3.54 | 3.70 | 4.31 |
| Վերին միջին եկամուտ | 5.24 | 5.49 | 6.35 | 6.23 | 7.37 |
| Բարձր եկամուտ | 2.27 | 2.30 | 2.62 | 2.78 | 3.57 |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 6.00 | 5.60 | 6.15 | 5.75 | 6.44 |
| Աշխարհ | 2.66 | 2.70 | 3.10 | 3.24 | 4.04 |

Աղյուսակ 63, Հանքանյութերի և մետաղների ներմուծումներ (ապրանքների ներմուծումների %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|---------------------------|------|------|------|------|------|
| Հայաստան | 3.05 | 3.14 | 0.71 | 2.72 | 2.10 |
| Թուրքիա | 4.91 | 5.50 | 6.14 | 6.08 | 4.82 |
| Վրաստան | 0.83 | 0.66 | 0.67 | 0.57 | 0.73 |
| Ադրբեջան | 1.69 | 1.94 | 2.31 | 2.24 | 2.41 |
| Իրան | 2.02 | 2.22 | 2.33 | 1.88 | 0.37 |
| Ստորին միջին եկամուտ | 3.72 | 3.85 | 4.86 | 5.35 | 5.85 |
| Վերին միջին եկամուտ | 2.54 | 2.66 | 3.12 | 3.10 | 3.52 |
| Բարձր եկամուտ | 2.79 | 2.73 | 3.13 | 3.24 | 4.16 |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 3.15 | 3.31 | 3.69 | 3.54 | 3.44 |
| Աշխարհ | 2.83 | 2.81 | 3.27 | 3.41 | 4.21 |

Աղյուսակ 64, Ապրանքների առևտուր (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 62.80 | 70.01 | 57.76 | 55.47 | 50.08 | 49.04 |
| Թուրքիա | 37.64 | 38.28 | 40.89 | 39.31 | 42.48 | 42.18 |
| Վրաստան | 33.63 | 40.14 | 48.71 | 52.34 | 60.29 | 63.45 |
| Ադրբեջան | 61.46 | 71.72 | 82.16 | 64.61 | 55.47 | 49.12 |
| Իրան | 38.70 | 43.24 | 45.14 | 50.15 | 52.85 | 47.24 |
| Ստորին միջին եկամուտ | 44.94 | 49.66 | 54.99 | 58.80 | 60.29 | 59.20 |
| Վերին միջին եկամուտ | 49.67 | 50.71 | 53.56 | 52.27 | 53.77 | 53.12 |
| Բարձր եկամուտ | 38.33 | 39.54 | 42.42 | 44.75 | 47.50 | 49.06 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 52.56 | 54.88 | 57.15 | 55.85 | 57.49 | 56.43 |
| Աշխարհ | 39.97 | 41.55 | 44.82 | 47.19 | 49.84 | 51.01 |

Արտահանվող այլ ապրանքների համեմատությամբ Հայաստանի արդյունաբերական ապրանքների արտահանումների կարևորությունը մեծ է, սակայն զգալիորեն զիջում է Թուրքիային: Ներմուծվող այլ ապրանքների համեմատությամբ Հայաստանի արդյունաբերական ապրանքների ներմուծումների կարևորությունը ավելի մեծ է, քան Թուրքիայինը: Այստեղ նորից պետք է ընդգծել Հայաստանում տեղական արտադրության խրախուսման և արտահանումների ներուժի ավելացման անհրաժեշտությունը: Սննդի առնչությամբ Հայաստանի և՛ արտահանումների, և՛ ներմուծումների կարևորությունը ապրանքների առևտրի մեջ ավելի մեծ է, քան Թուրքիայինը: Հայաստանի ապրանքների արտահանումներում շատ կարևոր են հանքանյութերի և մետաղների արտահանումները, մինչդեռ վերջիններիս ներմուծումը հարաբերականորեն ավելի կարևոր է Թուրքիայի ապրանքների ներմուծումներում:

6. Տեխնիկական պահանջներ

6.1. Տեխնիկական պահանջները Թուրքիայում

6.1.1. Ոլորտի կարգավորումն ԱՅԿ-ում

Տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների կիրառումը կարգավորվում է «Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրով, որն ընդհանուր կանոններ է սահմանում ԱՅԿ-ի անդամ պետությունների կողմից տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների ընդունման համար: Սասնավորապես համաձայնագրով նախատեսվում է, որ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ տեխնիկական կանոնակարգերի հետ կապված ցանկացած անդամ պետության տարածքից ներմուծված արտադրանքների նկատմամբ ցուցաբերվի ոչ պակաս բարենպաստ մոտեցում, քան ցուցաբերվում է տեղական ծագում ունեցող նման արտադրանքների և ցանկացած այլ երկրի ծագում ունեցող նման արտադրանքների նկատմամբ (այսպես կոչված՝ ազգային մոտեցում և առավել բարենպաստ ազգի մոտեցում): Ի լրումն՝ համաձայնագրով սահմանված է, որ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ տեխնիկական կանոնակարգերը չմշակվեն, չընդունվեն կամ չկիրառվեն միջազգային առևտրի համար անհիմն խոչընդոտներ ստեղծելու նպատակով կամ այնպես, որ բերեն դրանց ստեղծմանը: Այդ նպատակով տեխնիկական կանոնակարգերը չպետք է առևտուրն ավելի խիստ սահմանափակեն, քան դա անհրաժեշտ է օրինական նպատակն իրագործելու համար՝ հաշվի առնելով այն վտանգները, որոնք կարող են ստեղծվել չիրագործման հետևանքով: Ի թիվս այլոց՝ այդպիսի օրինական նպատակներ են ազգային անվտանգության պահանջները, շփոթեցնող գործելակերպի կանխարգելումը, մարդու առողջության կամ անվտանգության, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության կամ շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Առևտրի համար ավելորդ խոչընդոտներից խոսափելու նպատակով «Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրով սահմանվում է նաև, որ անդամ պետություններն իրենց տեխնիկական կանոնակարգերը մշակելիս պետք է հիմնվեն միջազգային ստանդարտների վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջազգային ստանդարտներն անարդյունավետ կամ անհամապատասխան միջոց կլինեն հետապնդվող օրինական նպատակների իրականացման համար: Նման դեպքերից են, օրինակ, կլիմայական կամ աշխարհագրական գործոնները կամ տեխնոլոգիական խնդիրները:

Համաձայնագրով տրվում են նաև հետևյալ սահմանումները.

- Տեխնիկական կանոնակարգ՝ փաստաթուղթ, որով սահմանվում են արտադրանքի բնութագրերը կամ դրանց հետ կապված գործընթացները և արտադրական եղանակները՝ ներառյալ կիրառվող վարչական դրույթները, որոնք կատարելը պարտադիր է: Այն կարող է նաև բացառապես արտադրանքի, գործընթացի կամ արտադրական եղանակի նկատմամբ կիրառվող հասկացություններ, պայմանանշաններ, փաթեթավորման, մակնշման կամ պիտակավորման պահանջներ ընդգրկել կամ վերաբերել դրանց:
- Ստանդարտ՝ ճանաչված մարմնի հաստատված փաստաթուղթ, որով ընդհանուր ու բազմակի օգտագործման համար նախատեսվում են կանոններ, ուղեցույցներ կամ բնութագրեր՝ արտադրանքների կամ դրանց հետ կապված գործընթացների ու արտադրական եղանակների համար, որոնց պահպանումը պարտադիր չէ: Այն կարող է նաև բացառապես արտադրանքի, գործընթացի կամ արտադրական եղանակի նկատմամբ կիրառվող հասկացություններ, պայմանանշաններ, փաթեթավորման, մակնշման կամ պիտակավորման պահանջներ ընդգրկել կամ վերաբերել դրանց:
- Համապատասխանության հավաստման ընթացակարգեր՝ ցանկացած ընթացակարգ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն օգտագործվում է տեխնիկական

6.1.2. Ոլորտի կարգավորումը Եւրոմիությունում

Ապրանքների ազատ տեղաշարժը Եւրոմիության չորս հիմնական ազատություններից մեկն է: Այն ենթադրում է, որ ապրանքները կարող են փոխադրվել Եւրոմիության մեկ անդամ երկրից դեպի մյուսն՝ առանց որևէ արգելքի: Ապրանքների ազատ տեղաշարժի արգելքները կարող են վերացվել միայն Համայնքի մակարդակով տեխնիկական օրենսդրության համապատասխանեցման միջոցով: ԵՄ-ում նախապես այդ համապատասխանությունն ընթանում էր բավականին դանդաղ՝ երկու հիմնական պատճառով: Նախ՝ օրենսդրությունը դառնում էր խիստ տեխնիկական բնույթի, քանի որ յուրաքանչյուր ապրանքի համար անհրաժեշտ էր սահմանել այդ ապրանքին բնորոշ բազմաթիվ տեխնիկական պահանջներ: Տեխնիկական օրենսդրության համապատասխանեցման դանդաղ ընթացքի երկրորդ պատճառն այն էր, որ յուրաքանչյուր օրենք պետք է միաձայն ընդունվեր Խորհրդի կողմից: Հաշվի առնելով նշված խնդիրները՝ Խորհուրդն առաջարկեց տեխնիկական օրենսդրության համապատասխանեցման և ստանդարտացման Նոր մոտեցում,¹²⁰ որի հիմնական սկզբունքները հետևյալն էին.

- Օրենսդրական ներդաշնակեցման միջոցով պետք է սահմանվեն միայն հիմնական պահանջները, որոնց պետք է համապատասխանեն ԵՄ-ում շուկայահանված ապրանքները, որպեսզի օգտվեն ԵՄ-ում ազատ տեղաշարժի իրավունքից,
- Դիրեկտիվներում սահմանված հիմնական պահանջներին համապատասխանությունը պետք է ապահովվի ներդաշնակեցված ստանդարտների միջոցով,
- ներդաշնակեցված կամ այլ ստանդարտի կիրառումը կամավոր է, և արտադրողը կարող է կիրառել հիմնական պահանջներն ապահովող այլ տեխնիկական միջոցներ,
- Եթե ապրանքն արտադրված է ներդաշնակեցված ստանդարտին համապատասխան, ապա դրանով իսկ ապահովվում են համապատասխան հիմնական պահանջները:¹²¹

Փաստորեն ձևավորվեց տեխնիկական օրենսդրության երկու խումբ, այն է՝ Հին մոտեցման օրենսդրություն, որով սահմանվում են մանրամասն պահանջներ, և Նոր մոտեցման օրենսդրություն, որը սահմանում է ընդհանուր պահանջներ:

Հին մոտեցմամբ տեխնիկական մանրամասն կանոններ են սահմանված հետևյալ ապրանքների համար.

- ավտոմեքենաներ,
- քիմիական ապրանքներ,
- կոսմետիկ ապրանքներ,
- լվացող հեղուկներ,
- պարարտանյութեր,
- տեքստիլ և կոշիկներ,
- բյուրեղապակի,
- դեղորայք և այլն:

Նոր մոտեցման դիրեկտիվները հիմնական պահանջներ են սահմանում հետևյալ ապրանքների համար.

- գազային վառելիքի այրման սարքեր,
- մարդկանց փոխադրման համար նախատեսված ճոպանուղու սարքավորումներ,

¹¹⁹ Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագիր, «Առևտրի բազմակողմ բանակցությունների Ուրուգվայի փուլի արդյունքները, իրավական տեքստեր», թարգմանությունը՝ AEPLAC, 2002թ.:

¹²⁰ 1985 թ. մայիսի 9-ի «Տեխնիկական ներդաշնակեցման և ստանդարտների նոր մոտեցման մասին» Խորհրդի որոշում (85/C 136/01):

¹²¹ Նոր մոտեցման և Գլոբալ մոտեցման վրա հիմնված դիրեկտիվների կիրարկման ուղեցույց, Եւրոպական հանձնաժողով, 2000թ.:

- շինարարական ապրանքներ,
- վերելակներ,
- քաղաքացիական նպատակների համար պայթուցիկ նյութեր,
- ցածր վոլտաժային սարքեր,
- մեքենա-սարքավորումներ,
- չափիչ սարքեր,
- բժշկական սարքեր,
- ոչ ավտոմատ կշռող սարքեր,
- ջրաեռացուցիչներ,
- փաթեթավորում և փաթեթավորման թափոններ,
- ճնշման սարքավորումներ,
- ռադիո և հեռահաղորդակցության սարքավորումներ
- խաղալիքներ և այլն:

6.1.3. Ոլորտի կարգավորումը Թուրքիայում

Ստանդարտների թուրքական ինստիտուտը (ՍԹԻ) պատասխանատու է Թուրքիայում արտադրվող և Թուրքիա ներմուծվող ապրանքների ստանդարտների մշակման համար: Այն անկախ հաստատություն է, այսինքն՝ չի ֆինանսավորվում պետության կողմից: Մշակված ստանդարտները վերաբերում են բոլոր տեսակի նյութերին ու ապրանքներին: Ի լրումն՝ ՍԹԻ-ն զբաղվում է նաև չափագիտության և չափաբերման, ինչպես նաև համապատասխանության գնահատման և սերտիֆիկացման համար լաբորատոր ծառայությունների հարցերով: ՍԹԻ-ը Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ՄՄԿ)¹²² և Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի (ՄԷՅ)¹²³ լիիրավ անդամ է: Այն նաև Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՍԵԿ)¹²⁴ և էլեկտրատեխնիկական ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ԷՍԵԿ)¹²⁵ թղթակից անդամ է: 2008 թ. վերջին Թուրքիան ներդրել էր եվրոպական, այսպես կոչված, EN ստանդարտների 97.4%-ը¹²⁶:

Ընդհանուր առմամբ Թուրքիան ունի 27,512 ստանդարտ, որից 770-ը պարտադիր են և հիմնականում վերաբերում են շինարարական նյութերին: Պարտադիր ստանդարտների ընդամենը 9%-ն է համարժեք միջազգային ստանդարտներին:

Պարտադիր ստանդարտները կիրառվում են ինչպես ներմուծվող (անկախ ծագումից), այնպես էլ Թուրքիայում արտադրվող ապրանքների նկատմամբ: Փորձաքննության և սերտիֆիկացման ընթացակարգերն իրականացվում են.

- Ստանդարտների թուրքական ինստիտուտի կողմից՝ ներմուծվող արդյունաբերական ապրանքների մասով,
- Շրջակա միջավայրի նախարարության կողմից՝ շրջակա միջավայրին առնչվող ապրանքների մասով,
- Առողջապահության նախարարության կողմից՝ բժշկական ու կոսմետիկ ապրանքների և լվացող հեղուկների մասով,
- Գյուղատնտեսության և գյուղական հարցերի նախարարության կողմից՝ կենդանիների, բույսերի, սննդամթերքի, սերմերի և անասնաբուժական ապրանքների մասով,
- Արդյունաբերության և առևտրի նախարարության կողմից՝ մնացած ապրանքների մասով:

¹²² International Organisation for Standardisation (ISO).

¹²³ International Electrotechnical Commission (IEC).

¹²⁴ European Committee for Standardisation (CEN).

¹²⁵ European Committee for Electrotechnical Standardisation (CENELEC).

¹²⁶ Եվրոպական հանձնաժողովից Եվրոպական խորհրդարանին և խորհրդին ուղղված հաղորդագրություն՝ Թուրքիայի վերաբերյալ 2008թ. ընթացիկ հաշվետվություն, Բրյուսել, 5.11.2008թ.:

Ի լրումն՝ որոշ գյուղատնտեսական ապրանքների մասով, ինչպիսիք են թարմ մրգերը, բանջարեղենը, չորացրած մրգերը, ուտելի յուղերը և լոբազգի բույսերը, որակի վերահսկողություն է իրականացվում Արտաքին առևտրի ենթաքարտուղարության (ԱԱԵ) 8 տարածքային վարչությունների 45 տեսչական հաստատությունների կողմից: ԱԱԵ-ն ունի նաև 5 լաբորատորիաներ, որոնք իրականացնում են արտահանման վերահսկողության համար անհրաժեշտ փորձաքննություններ: 2008 թ. սկզբի դրությամբ 200 գյուղատնտեսական ապրանք (Ներդաշնակեցված համակարգի 12 նիշ մակարդակով) արտահանման դեպքում ենթակա են որակի պարտադիր վերահսկողության: Վերահսկողությունն իրականացվում է Միացյալ ազգերի՝ Երոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի¹²⁷ ստանդարտների և ՏՀԶԿ-ի ընթացակարգային սխեմայով:

Արդյունաբերության և առևտրի նախարարության Չափումների և ստանդարտների գլխավոր վարչությունը պատասխանատու է իրավական չափագիտության, ստուգման լաբորատորիաներում չափաբերման համակարգերի ներդրման և մասնավոր լաբորատորիաների գործունեության կարգավորման համար: Այն ունի չափագիտության ոլորտում գործող 7 լաբորատորիաներ և 81 տարածաշրջանային ու տեղական հիմնարկներ: Թուրքիան Քաշերի և չափերի բյուրոյի ու Իրավական չափագիտության միջազգային կազմակերպության լիիրավ և Իրավական չափագիտության երոպական համագործակցության թղթակից անդամ է: Չափագիտության այլ ոլորտներն առանձնացված են իրավական չափագիտությունից: Գիտական չափագիտությունը կարգավորվում է Գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների թուրքական խորհրդի, իսկ արդյունաբերական չափագիտությունը՝ չափաբերման լաբորատորիաների ցանցի կողմից:

Թուրքիայի հավատարմագրման գործակալությունը (ԹՅԳ), որը գործունեությունն սկսել է 2001 թ., պատասխանատու է տեղական և արտասահմանյան հաստատությունների հավատարմագրման և ազգային ու միջազգային ստանդարտներին դրանց գործունեության (լաբորատոր, սերտիֆիկացման և ստուգման հետ կապված մատուցվող ծառայությունների) համապատասխանության ապահովման համար: Թուրքիան ունի մոտ 5000 պետական և մասնավոր լաբորատորիաներ և 120 սերտիֆիկացնող կառույցներ: Ներկա դրությամբ ԹՅԳ-ը հավատարմագրել է 187 փորձաքննության ու 51 չափաբերման լաբորատորիաներ, որակի կառավարման 32 համակարգ, 37 տեսչական մարմին և ապրանքների սերտիֆիկացման 6 ու մասնագետների սերտիֆիկացման 8 կազմակերպություն¹²⁸: ԹՅԳ-ը Հավատարմագրման երոպական համագործակցության (ՀԵՀ)¹²⁹ և Լաբորատորիաների հավատարմագրման միջազգային համագործակցության (ԼՀՄՀ)¹³⁰ լիիրավ անդամ է: 2006 թ. մայիսին ԹՅԳ-ը ստորագրեց ԼՀՄՀ-ի բազմակողմ ճանաչման համաձայնագիրը:

ԵՄ-ի օրենսդրությամբ սահմանվում է, որ այն կազմակերպությունները, որոնք ներգրավված են առանձին շուկաներում վերահսկողության և լաբորատոր փորձաքննության աշխատանքներում, պետք է ծանուցվեն Երոպական հանձնաժողովին: Եւ թեպետ հավատարմագրումը Թուրքիայում պարտադիր չէ ծանուցված մարմինների համար, այնուամենայնիվ պետական կառույցները պահանջում են, որ ծանուցման ենթակա մարմինը համապատասխանի EN 45000 ստանդարտներին: Նախարարությունները իրենց իրավասությունների շրջանակում գտնվող ոլորտների համար իրենք են ընտրում, թե որ լաբորատորիան պետք է ծանուցվի ԵՄ-ին և այդպիսով դառնա ոլորտում գործունեություն իրականացնող ծանուցված մարմին: Այդ հարցում նախարարությունները համագործակցում են ԹՅԳ-ի հետ՝ ծանուցման ենթակա մարմինների կարողությունների գնահատման համար: Մասնավորապես, Արդյունաբերության և առևտրի, Աշխատանքի և սոցիալական ապահովության, Առողջապահության և Պետական աշխատանքների և վճարումների նախարարությունները, Ծովային հարցերով ենթաքարտուղարությունը և Հեռահաղորդակցության գերատեսչությունը ունեն համագործակցության արձանագրություններ ԹՅԳ-ի հետ:

Շուկայի վերահսկողության իրավասությունը պատկանում է պետական մարմիններին: Յուրաքանչյուր նախարարություն կամ այլ գերատեսչություն իր իրավասության շրջանակում

¹²⁷ United Nations Economic Commission for Europe (UN-ECE).

¹²⁸ Թուրքիայի հավատարմագրման գործակալության ինտերնետային կայք www.turkak.org.tr/eng/accredited.htm

¹²⁹ European Cooperation for Accreditation (ECA).

¹³⁰ International Laboratory Accreditation Cooperation (ILAC).

գտնվող շուկայի համար մշակում է համապատասխան ռազմավարություններ և վերահսկողության համակարգեր: Այսպես՝ Հեռահաղորդակցության գերատեսչությունը պատասխանատու է ռադիո և հեռահաղորդակցության համակարգերի, Առողջապահության նախարարությունը՝ կոսմետիկ ապրանքների, խաղալիքների, բժշկական սարքավորումների, դեղորայքի և վլացող հեղուկների համար և այլն: Շուկայի վերահսկողության մեջ ներգրավված մարմինները համակարգվում են կենտրոնական կառույցների և մարզային կամ տարածաշրջանային վարչությունների կողմից: Շուկայի վերահսկողությունը իրականացնող պետական մարմինների համընդհանուր համակարգումն իրականացվում է Շուկայի վերահսկողության հարցերի համակարգող խորհրդի կողմից:

Շուկայի վերահսկողության համար Արդյունաբերության և առևտրի նախարարությունն ունի 740 տեսուչ, ինչպես նաև 600 տեսուչ՝ մարզային ստորաբաժանումներում: Քանի որ նախարարությունները չունեն լաբորատորիաներ, հաճախ դիմում են ՍԹԻ-ին՝ համապատասխան փորձաքննություններ իրականացնելու համար:

Մակնշման, պիտակավորման և փաթեթավորման առումով պետք է նշել, որ այս ոլորտում բոլոր ստանդարտները կամավոր են՝ բացառությամբ երեք ստանդարտի: Դրանք են «Շուկա փաթեթավորված վիճակում մատակարարվող նյութերի և ապրանքների մակնշման, պիտակավորման և փաթեթավորման մասին» TS 4331, «Տեքստիլ արտադրանքի պիտակավորման մասին» TS 1418 և «Էլեկտրոտեխնիկական նպատակներով զույներով կամ այբբենաթվային համակարգով մակնշելու մասին» TS 6429 ստանդարտները: Հստակ ընթեռնելի և տեսանելի պիտակները պետք է փակցվեն մանրածախ ապրանքներին, դրանց փաթեթավորմանը կամ դրանց կոնտեյներներին, և պետք է ներկայացնեն գինը, արտադրության վայրը և տարբերակող բնութագրիչները: Այն դեպքերում, եթե նման պիտակներ փակցնելն անհնարին է, պետք է պատրաստվեն և ներկայացվեն վերոնշյալ տեղեկատվությունը պարունակող ցուցակներ¹³¹:

Բոլոր ներմուծվող ապրանքները պետք է պիտակավորվեն՝ ներառելով ծագման երկրի, գնի և տարբերակող բնութագրիչների մասին տեղեկատվություն: Որոշ չնչին բացառություններով՝ յուրաքանչյուր արդյունաբերական ապրանք ուղեկցող օգտագործման ուղեցույցները պետք է լինեն թուրքերեն: Ավելին՝ շուկայահանված կոշիկների վրա պետք է լինի տեղեկատվություն դրանց մասերի մասին: Այն դեպքերում, երբ որևէ ապրանք կամ ծառայություն կարող է վնաս հասցնել առողջությանը կամ շրջակա միջավայրին, անհրաժեշտ է նախազգուշացնող տեղեկատվություն տեղադրել ապրանքի վրա կամ կից ներկայացվող օգտագործման ուղեցույցներում: Տեղական և ներմուծվող ապրանքների նկատմամբ գործում են մակնշման, պիտակավորման և փաթեթավորման նույն պահանջները և, համաձայն թուրքական պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկատվության, դրանք հիմնված են միջազգային կանոնակարգերի վրա: Մակնշումը, պիտակավորումը և փաթեթավորումը կարող է իրականացվել մաքսակետում¹³²:

Քանի որ թե՛ Թուրքիան և թե՛ Հայաստանը աշխատանքներ են կատարում՝ ԵՄ-ի օրենսդրությանը ազգային օրենսդրությունների համապատասխանեցնելու համար, ուստի կարևոր է գնահատել նաև Թուրքիայի օրենսդրության՝ ԵՄ-ի չափանիշներին համապատասխանության աստիճանը, ինչը հնարավորություն կտա հստակ պատկերացում կազմել Թուրքիայի տեխնիկական օրենսդրության առկա իրավիճակի և զարգացումների մասին և ըստ այդմ թույլ կտա մշակել նաև ՀՀ-ի օրենսդրության՝ ԵՄ-ի չափանիշներին համապատասխանության գերակայությունները հայ-թուրքական սահմանի վերաբացման համատեքստում:

Տեխնիկական օրենսդրության մասով Թուրքիայի համապատասխանությունը ԵՄ-ի պահանջներին բավականին բարձր է, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ դեռևս 1995 թ. Թուրքիան և ԵՄ-ը մաքսային միություն են հիմնել արդյունաբերական ապրանքների համար: Ուստի դեռևս նախքան մաքսային միությունը ստեղծելը Թուրքիան սկսել էր իր օրենսդրության համապատասխանեցումը ԵՄ-ի տեխնիկական պահանջներին:

Այսպես՝ համաձայն Եւրոմիության գնահատականի՝ Նոր մոտեցման դիրեկտիվներին Թուրքիայի օրենսդրության համապատասխանությունը հատկապես բարձր կամ

¹³¹ «Սպառողների պաշտպանության մասին» թիվ 4077 օրենքի հոդված 12:

¹³² Մաքսային օրենքի հոդված 102 և Մաքսային կանոնակարգի հոդված 292:

ամբողջական է ցածր վոլտաժի սարքերի, խաղալիքների, մեքենա-սարքավորումների, վերելակների, ճնշման սարքերի, անհատական պաշտպանության սարքավորումների, ճոպանուղու սարքավորումների, շինարարական նյութերի, իրավական չափագիտության, ռադիո և հեռահաղորդակցության սարքավորումների, սառնարանների, սառցարանների և դրանց համակցումների համար էներգախնայողության պահանջների, ջրաեռացուցիչների, ոչ ավտոմատ կշռող սարքերի ոլորտները կարգավորող օրենսդրության բնագավառներում:

Բավականին բարձր է թուրքական օրենսդրության համապատասխանությունը նաև Հին մոտեցման դիրեկտիվներին: Այսպես՝ 2008 թ. մայիս ամսվա դրությամբ Հին մոտեցման մոտ 280 դիրեկտիվներից 210-ը արդեն իսկ ներմուծվել էին թուրքական օրենսդրության մեջ¹³³, մինչդեռ հիմնական խնդրահարույց ոլորտներն էին սննդամթերքը, վտանգավոր նյութերն ու ակոհոլային խմիչքները:

Թեպետ թուրքական տեխնիկական օրենսդրության մեծ մասն արդեն իսկ համապատասխանում է Եւրոմիության պահանջներին, ինչը նշանակում է, որ թուրքական արտադրողները արդեն իսկ պետք է աշխատեն ԵՄ-ի չափանիշներին համապատասխան, և Հայաստանում ԵՄ-ի տեխնիկական օրենսդրության ներդրումը, փաստորեն, չի կարող մեծ արգելք հանդիսանալ Թուրքիայից Հայաստան անորակ ներմուծումների համար, այնուամենայնիվ ԵՄ-ի կառույցներն ընդգծում են այն հանգամանքը, որ Թուրքիան խնդիրներ ունի շուկայի վերահսկողության հարցում: Այսպես՝ թուրքական շուկայում 2004-2006 թթ. ստուգումների շնորհիվ բացահայտվել են ԵՄ-ի դիրեկտիվներով նախատեսված տեխնիկական պահանջների խախտումներ հետևյալ ոլորտներում (աղյուսակ 65)¹³⁴.

Աղյուսակ 65, ԵՄ դիրեկտիվներին չհամապատասխանող Թուրքիայում շուկայահանված ապրանքների քանակը

| ԵՄ դիրեկտիվ | Կազմակերպված թվերը միլիոնով | Ապրանքների վերադարձված թվերը միլիոնով | Տեղակալված թվերը միլիոնով | Ներմուծված ապրանքների թվերը միլիոնով | Չհամապատասխանող ապրանքների թվերը միլիոնով | Չհամապատասխանող ապրանքների տեսակարար կշիռը |
|---|-----------------------------|---------------------------------------|---------------------------|--------------------------------------|---|--|
| Քաղ. նպատակների համար պայթուցիկ նյութեր | 10 | 47 | 45 | 2 | 20 | 42.6 |
| Ցածր վոլտաժային սարքեր | 2286 | 7803 | 4122 | 3681 | 742 | 9.5 |
| Մեքենա-սարքավորումներ | 511 | 5017 | 717 | 4300 | 107 | 2.1 |
| Աերոզոլի բաշխիչներ | 2 | 120 | 2 | 8 | 66 | 55.0 |
| Ճնշման բալոններ | 470 | 2719 | 1598 | 71 | 1327 | 48.8 |
| Ճնշման փոխադրելի սարքեր | 82 | 243 | 171 | 1 | 127 | 52.3 |
| Գազի սարքավորումներ | 504 | 1777 | 1512 | 191 | 591 | 33.3 |
| Ջրաեռացուցիչներ | 58 | 530 | 329 | 15 | 501 | 94.5 |
| Տեքստիլի, կոշիկների և էներգախնայողության պիտակավորում | 8219 | 30347 | 20691 | 9656 | 3118 | 10.3 |
| Չներդաշնակեցված ոլորտ | | 13 | 13 | 0 | 0 | 0.0 |
| Վերելակներ | 448 | 525 | 521 | 4 | 167 | 31.8 |
| Ավտոմեքենաներ | 5 | 11 | 0 | 11 | 6 | 54.5 |
| Ոչ ավտոմատ կշռող սարքեր | 258 | 1675 | 8 | 1 | 1231 | 73.5 |
| Ընդհանուր | 12853 | 50827 | 29729 | 17941 | 8003 | 15.7 |

Աղբյուր՝ Support to the Quality Infrastructure in Turkey, Country Report 2006-2007

¹³³ Թուրքիայի՝ արտաքին առևտրի ենթաքարտուղարության ինտերնետային կայք - <http://www.dtm.gov.tr/dtmweb/index.cfm?action=detayrk&yayinID=1952&icerikID=2099&dil=EN>

¹³⁴ Աջակցություն որակի ենթակառուցվածքին Թուրքիայում, 2006-2007թթ. հաշվետվություն, Ստանդարտացման եւրոպական կոմիտե, 26 փետրվարի 2007թ.:

Աղյուսակից երևում է, որ ԵՄ-ի դիրեկտիվներին առավել շատ չհամապատասխանող ապրանքներն են ջրաեռացուցիչները, ոչ ավտոմատ կշռող սարքերը, աերոզոլի բաշխիչները և այլն:

Ավելին՝ Եւրոմիության RAPEX համակարգի¹³⁵ միջոցով ԵՄ-ի անդամ պետությունները տեղեկացվել են թուրքական ծագում ունեցող մի շարք ապրանքների մասին, որոնք կարող են վտանգ ներկայացնել սպառողների համար: Ընդհանուր առմամբ թուրքական ապրանքների վերաբերյալ 2008 թ. եղել է 35 ծանուցում, որոնցից 23-ը վերաբերում էին հագուստեղենին, 4-ը՝ ավտոմեքենաներին, 4-ը՝ խաղալիքներին և երեխաների օգտագործման համար նախատեսված այլ սարքերին, 2-ը՝ քիմիական ապրանքներին, 1-ը՝ կոսմետիկ ապրանքներին և ևս 1-ը՝ էլեկտրական սարքերին¹³⁶:

Ընդհանուր առմամբ թուրքական ծագում ունեցող ապրանքները RAPEX համակարգով ծանուցված վտանգավոր ապրանքների ընդհանուր թվի մեջ այդքան էլ շատ չեն: 2007 թ. ընդհանուր ծանուցված 1169 ապրանքներից թուրքական ծագում ունեցողները 16-ն էին (ծանուցումների քանակով 50 երկրի թվում թուրքիան գտնվել է 11-րդ տեղում), մինչդեռ այդ ապրանքների կեսից ավելին ունեցել է չինական ծագում¹³⁷: Սակայն հարկ է նշել, որ Թուրքիայից դեպի Եւրոմիություն արտահանվող ապրանքները հիմնականում ենթակա են ավելի խիստ վերահսկողության, ինչը նշանակում է, որ դեպի երրորդ երկրներ արտահանվող ապրանքների որակը կարող է շատ ավելի ցածր լինել, քան Եւրոպական շուկաներ արտահանվողներինը:

Թեպետ Եւրոմիության պահանջներին թուրքական օրենսդրության համապատասխանության աստիճանը բավականին բարձր է, այնուամենայնիվ Եւրոմիության հիմնական մտահոգությունը շուկայում վերահսկողություն իրականացնելն է: Համաձայն 2004-2006 թթ. ստուգումների արդյունքների՝ ԵՄ-ի չափանիշներին չէին համապատասխանում հատկապես հետևյալ ապրանքախմբերը. ջրաեռացուցիչներ, ոչ ավտոմատ կշռող սարքեր, աերոզոլի բաշխիչներ և այլն: Միևնույն ժամանակ թուրքական հագուստեղենն առավել հաճախ է ընդգրկվում RAPEX համակարգում՝ որպես սպառողների համար վտանգավոր ապրանք:

Նշված ապրանքախմբերը կարող են վտանգ ներկայացնել հայ սպառողների համար ևս: Ուստի նշված ոլորտներում ԵՄ-ի չափանիշների ներդրումը Հայաստանում թույլ կտա կանխել թուրքական անորակ ապրանքների մուտքը հայկական շուկա:

6.2. Տեխնիկական պահանջները Հայաստանում¹³⁸

Հայաստանում կա ստանդարտացման, հավատարմագրման և համապատասխանության հավաստման լավ ձևավորված օրենսդրական ու ինստիտուցիոնալ համակարգ: Այս ոլորտում ՀՀ հիմնական օրենսդրությունը ներառում է.

¹³⁵ RAPEX-ը Եւրոմիության կողմից մշակված արագ նախազուշացման համակարգ է, որի միջոցով ԵՄ-ի անդամ երկրները տեղեկացվում են բոլոր վտանգավոր ապրանքների մասին՝ բացառությամբ սննդի, դեղորայքի և բժշկական սարքերի:

¹³⁶ Եւրոպական հանձնաժողովի Առողջապահության և սպառողների գլխավոր վարչության ինտերնետային կայք –

http://ec.europa.eu/consumers/dyna/rapex/create_rapex_search.cfm?zoek=turkey&vanaf=21&jaartal=2008

¹³⁷ Անվտանգ պահել Եւրոպական սպառողներին, RAPEX համակարգի գործունեության վերաբերյալ 2007թ. համար տարեկան հաշվետվություն, Եւրոպական հանձնաժողով, 2008թ.:

¹³⁸ Սույն գլխում կատարված վերլուծությունները հիմնված են «Ինստիտուցիոնալ իրավիճակի գնահատումը ստանդարտացման, հավատարմագրման, համապատասխանության հավաստման, չափագիտության և շուկայի վերահսկողության բնագավառներում» հաշվետվության վրա, AEPLAC, հունվար, 2007թ.

«Ստանդարտացման մասին» ՀՀ-ի օրենքը¹³⁹, որը սահմանում է իրավական հիմքեր՝ Հայաստանի տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների համակարգի համար:

«Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքը¹⁴⁰, որը սահմանում է համապատասխանության հավաստման համակարգը, որի շրջանակներում ընդունվում են մարդկանց կյանքի, անվտանգության և առողջության, շրջակա միջավայրի և սպառողների շահերի պաշտպանության համար կարևոր տեխնիկական բնութագրեր սահմանող կանոնակարգեր:

«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքը¹⁴¹, որը սահմանում է իրավական շրջանակներ՝ Հայաստանում չափագիտության ոլորտի կարգավորման համար:

Նշված ոլորտներում պատասխանատու ազգային մարմինն է ՀՀ-ի էկոնոմիկայի նախարարությունը՝ ի դեմս Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման վարչության, որը լիազորված է այդ ոլորտներում քաղաքականության մշակման և պետական կառավարման համար:

Ստանդարտների ազգային ինստիտուտը (ՍԱԻ), որը պատասխանատու է ստանդարտացման գործունեության համար, փակ բաժնետիրական ընկերություն է և գործում է ՀՀ-ի էկոնոմիկայի նախարարության կազմում: ՍԱԻ-ն օգտագործում է նաև սննդամթերքի և էլեկտրական սարքավորումների ոլորտներում հավատարմագրված երկու փորձարկման լաբորատորիաներ և սերտիֆիկացման մարմիններ, ինչպես նաև ծառայությունների սերտիֆիկացման մեկ մարմին: ՍԱԻ-ն հավատարմագրված է նաև կառավարման համակարգերի սերտիֆիկացման համար:

Չափագիտության ազգային ինստիտուտը (ՉԱԻ) նույնպես ՀՀ-ի էկոնոմիկայի նախարարության կազմում գործող ՓԲԸ է, որը իրականացնում է ցանկացած տեսակի չափագիտական գործունեություն, պահպանում է չափման ստանդարտները (էտալոնները), իրականացնում է չափման սարքավորումների սերտիֆիկացում (տեսակի հաստատում), կատարում է ստուգաճշտում անցկացնող մարմինների, փորձարկման լաբորատորիաների հավատարմագրման ընթացքում փորձաքննություն, իրականացնում է չափագիտության բնագավառում պետական վերահսկողություն:

Հավատարմագրման գործակալությունը գործում է ՀՀ-ի էկոնոմիկայի նախարարության կազմում՝ որպես առանձնացված ստորաբաժանում և ղեկավարվում է նախարարի կողմից: Գործակալության հիմնական խնդիրն է հավատարմագրման գործունեության իրականացումը, այդ թվում՝ փորձագետների խմբերի կազմակերպումը, ըստ ներկայացված փաստաթղթերի և տեղում անցկացրած ստուգման արդյունքների դիմորդների տեխնիկական իրազեկության գնահատումը, գնահատման արդյունքների ներկայացումը Հավատարմագրման խորհրդին՝ վերջնական որոշում կայացնելու համար: Գործակալության ղեկավարը այդ խորհրդի քարտուղարն է: Գործակալությունը պատասխանատու է նաև հավատարմագրման ամբողջ ժամանակահատվածում (5 տարի) մարմինների և լաբորատորիաների համապատասխանության վերստուգման և գնահատման համար: Հավատարմագրման խորհուրդը կազմված է 15 անդամներից, որոնք ներկայացնում են պետական կառավարման մարմինները, այլ շահագրգիռ կողմեր՝ հասարակական կազմակերպությունները (սպառողների շահերի պաշտպանություն, արտադրողներ, առևտրականների կազմակերպություններ կամ միություններ) և գիտությունը: Ղեկավարվում է ՀՀ-ի էկոնոմիկայի նախարարի կողմից: Ստանդարտացման գործառույթներից բացի՝ ՍԱԻ-ն ունի հավատարմագրված 5 սերտիֆիկացման մարմին՝ հետևյալ ոլորտների համար. սննդամթերքի և հումքի սերտիֆիկացում, ոչ պարենային ապրանքների սերտիֆիկացում, ծառայությունների սերտիֆիկացում, որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացում, շրջակա միջավայրի կառավարման համակարգերի սերտիֆիկացում: ՍԱԻ-ն ունի նաև երկու հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներ՝ ռադիոէլեկտրական սարքավորումների և սննդամթերքի համար:

¹³⁹ ՀՕ-81-Ն, 26.05.2004թ.:

¹⁴⁰ ՀՕ-82-Ն, 26.05.2004թ.:

¹⁴¹ ՀՕ-83-Ն, 26.05.2004թ.:

Որակի պետական տեսչությունը գործում է ՀՀ-ի էկոնոմիկայի նախարարության կազմում՝ որիսես առանձին ստորաբաժանում և ղեկավարվում է նախարարի կողմից: Այն իրավասու է վերահսկել նորմատիվ փաստաթղթերով սահմանված պարտադիր պահանջներին ապրանքների, գործընթացների, աշխատանքների և ծառայությունների համապատասխանությունը, ինչպես նաև համապատասխանության հավաստման պարտադիր կանոնների պահպանումը: Տեսչության առաքելությունն է կանխել տնտեսվարող սուբյեկտների կողմից պարտադիր պահանջների խախտման դեպքերը: Այն նաև ստուգում է համապատասխանության հավաստման մարմինները՝ նորմատիվային փաստաթղթերին համապատասխանելու առումով, ինչպես նաև իրականացնում է պետական վերահսկողություն չափագիտության բնագավառում: Տեսչության կազմում գործում են մեկ կենտրոնական մարմին (Երևան քաղաքում) և 10 տարածքային մարմիններ՝ մարզերում:

Ոլորտում առկա հիմնական խնդիրներից մեկն այն է, որ Ստանդարտների ազգային ինստիտուտի (ՍԱԻ) կառուցվածքը, որը համատեղում է ստանդարտացման և սերտիֆիկացման գործառույթները մեկ մարմնում, չի համապատասխանում ԵՄ-ի պահանջներին և նախադրյալներ է ստեղծում շահերի բախման համար¹⁴²: Ի լրումն՝ ՍԱԻ-ի բյուջետային մուտքերը դիտարկելիս հստակորեն երևում է, որ բյուջեի զգալի մասը՝ մոտ 80%-ը, ստացվում է սերտիֆիկացման և փորձարկման ծառայություններից:

Ստանդարտների ազգային ինստիտուտում ստանդարտացման և սերտիֆիկացման գործառույթների համատեղումը հակասում է «շահերի բախումը» բացառելու վերաբերյալ ԵՄ-ի պահանջին: Մյուս կողմից՝ սերտիֆիկացումից ու փորձարկումից ստացված հասույթներով բավարար բյուջեի ապահովման մտադրությունը կարող է հանգեցնել սերտիֆիկացման գործընթացում չարաշահումների և հետագայում ստեղծել տեխնիկական պահանջներին չհամապատասխանող թուրքական ապրանքներին սերտիֆիկատների շնորհման հնարավորություն:

Բացի դրանից, գոյություն ունեն մի շարք խնդիրներ՝ կապված շուկայում վերահսկողության իրականացման հետ: Սասնավորապես այդ խնդիրների շարքում նշվում է շուկայի վերահսկողության համապարփակ ռազմավարության բացակայությունը, տարբեր տեսչությունների, պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և սպառողների միջև վտանգավոր ապրանքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման համակարգի բացակայությունը, տեսչությունների լիազորությունները սահմանափակող մի շարք օրենսդրական դրույթներ, ինչպես նաև տեսչությունների ցածր կարողությունները:

¹⁴² Նախքան ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությունը՝ սերտիֆիկացման գործունեությունը առանձնացված էր ստանդարտացումից, և կառուցվածքը համապատասխանում էր «շահերի բախումից խուսափելու» վերաբերյալ պահանջին: Սակայն պետության կողմից պատշաճ ֆինանսավորման բացակայության և Հայաստանի արդյունաբերության թերի զարգացման պայմաններում, երբ ստանդարտները պահանջված չէին հասարակության կողմից, ՍԱԻ-ն չէր կարող ունենալ պատշաճ ֆինանսավորում: Այդ իսկ պատճառով ՀՀ-ի կառավարությունը որոշեց տալ սերտիֆիկացման և փորձարկման գործառույթները ՍԱԻ-ին:

Շուկայում արդյունավետ վերահսկողության իրականացումը հայ-թուրքական սահմանի վերաբացման համատեքստում առանցքային խնդիրներից մեկն է: Այն առավել կարևորություն է ստանում՝ հաշվի առնելով փաստը, որ Թուրքիա-ԵՄ հարաբերությունների շրջանակում Թուրքիան պետք է կնքի համապատասխանության հավաստման արդյունքների ճանաչման վերաբերյալ համաձայնագրեր այն պետությունների հետ, որոնց հետ նման համաձայնագրեր ունի Երրոմիությունը: Թեև ԵՄ-ը դեռ չունի նման համաձայնագիր Հայաստանի հետ, սակայն հնարավոր է Հայաստանի կողմից ԵՄ-ի համապատասխանության գնահատման արդյունքների միակողմ ճանաչում:

Սա նշանակում է, որ բանակցությունների ընթացքում Թուրքիան ստիպված կլինի պահանջել նաև համապատասխանության հավաստման իր մարմինների կողմից իրականացված գնահատումների արդյունքները: Հայաստանը պետք է զգուշավորություն ցուցաբերի այս հարցում և ճանաչի Թուրքիայի համապատասխանության գնահատման արդյունքները միայն մեկ այլ զգալի զիջման դիմաց: Ի լրումն՝ եթե Թուրքիայի հետ ձեռք բերվի նման համաձայնություն, ապա թուրքական ապրանքները կկարողանան անարգել մուտք գործել հայկական շուկա՝ առանց սերտիֆիկացման համապատասխան ընթացակարգ անցնելու: Ուստի այս դեպքում և, ընդհանրապես, խիստ կարևոր է ներդնել վերահսկողության արդյունավետ համակարգ, որպեսզի թուրքական անորակ ապրանքները դուրս բերվեն հայկական շուկայից: Կարևոր է նաև ստեղծել համագործակցության համապատասխան մեխանիզմ՝ տեսչությունների և մաքսային մարմինների միջև:

7. Ծառայություններ

7.1. Թուրքիայի ծառայությունների ոլորտ

7.1.1. Ծառայությունների կարգավորումն ԱՀԿ-ում

ԱՀԿ շրջանակներում ծառայությունների ոլորտը կարգավորող հիմնական փաստաթուղթն է Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիրը: Այն ընդգրկում է ծառայությունների առևտրի միևնույն սահմանումը, որը լայնորեն կիրառվում է առևտրի մասին համաձայնագրերում, ԱՀԿ-ի անդամ պետությունների համար մի շարք ընդհանուր և հատուկ պարտավորություններում, ինչպես նաև պարունակում է դրույթներ ծառայությունների առևտրի հետագա ազատականացման մասին: ԾԱԳՀ-ի հոդված 1:2-ը ներկայացնում է ծառայությունների առևտրի չորսը ձևերը, այն է՝ ծառայությունների միջսահմանային տրամադրում, սպառումն արտերկրում, առևտրային ներկայություն և ֆիզիկական անձանց ներկայություն:

Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի հոդված II-ով նախատեսվում է, որ յուրաքանչյուր անդամ ցանկացած այլ անդամի ծառայություն մատուցողներին անհապաղ և անվերապահորեն ցուցաբերում է ոչ պակաս բարենպաստ մոտեցում, քան այն, որն ինքը տրամադրում է ցանկացած այլ երկրի նման ծառայություններին ու ծառայություն մատուցողներին (առավել բարենպաստ ազգի մոտեցում):

7.1.2. Թուրքիայի ծառայությունների ոլորտի ընդհանուր նկարագիրը

Ծառայությունների ոլորտը Թուրքիայի տնտեսության հիմնական հատվածն է, չնայած, վերջին տարիներին երկիրն այս ոլորտում ունեցել է կառուցվածքային մի շարք խնդիրներ, որոնք փորձել է հաղթահարել: Սա մասնավորապես վերաբերում է ֆիքսված քաղաքային և մեծ հեռավորության վրա տեղական ու միջազգային հեռախոսակապի ոլորտում Թուրքտելեկոմի մենաշնորհին, որն ավարտվեց 2004 թ., ինչպես նաև ազատականացման և մասնավորեցման գործընթացին, որն ընդլայնվել է որոշ ենթահատվածներում: Այնուամենայնիվ որոշ կազմակերպություններ շարունակում են գերիշխել ծառայությունների ոլորտում և առանձին դեպքերում ունեն մենաշնորհի կարգավիճակ կամ իրենց ոլորտում գործելու բացառիկ իրավունք: Այդ կազմակերպություններից են, օրինակ, Թուրքիայի փոստային կազմակերպությունը և Թուրքական պետական երկաթուղին:

Թուրքիան ստանձնել է մի շարք պարտավորություններ Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի (ԾԱԳՀ) շրջանակներում և ընդունել է ԾԱԳՀ-ի՝ հիմնական հեռահաղորդակցության և ֆինանսական ծառայությունների վերաբերյալ համապատասխանաբար չորրորդ և հինգերորդ արձանագրությունները¹⁴³: Թուրքիան ունի որոշ բացառություններ առավել բարենպաստ ազգի մոտեցումից՝ պահպանելով ԱՀԿ-ի որոշ անդամներին գործարարության, հաղորդակցության, ֆինանսական և տրանսպորտային ծառայությունների ոլորտում ավելի բարենպաստ մոտեցում տրամադրելու իրավունքը:

Ծառայություններն ընդգրկված չեն Թուրքիայի ու ԵՄ-ի միջև մաքսային միության մասին համաձայնագրում, սակայն բանակցություններ են սկսվել՝ ծառայությունների ոլորտի ազատականացման և պետական գնումների շուկաները բացելու ուղղությամբ¹⁴⁴:

¹⁴³ ԱՀԿ փաստաթղթեր՝ WT/LET/199, 19.11.1997թ. և WT/LET/288 18.02.1999թ.:

¹⁴⁴ 2000 թ. ապրիլի 11-ի «Համայնքի և Թուրքիայի միջև ծառայությունների ազատականացման վերաբերյալ բանակցությունների մեկնարկի և պետական գնումների շուկաների փոխադարձ բացման մասին» ԵՀ-Թուրքիա Համագործակցության խորհրդի թիվ 2/2000 որոշում, Պաշտոնական տեղեկագիր թիվ L 138, 09/06/2000:

7.1.3. Բանկային ծառայություններ

2006 թ. վերջի դրությամբ Թուրքիայի բանկային հատվածում ներգրավված էր մոտ 150,000 աշխատող, և այն ուներ 353.6\$ մլրդ ակտիվներ: Նույն ժամանակահատվածում Թուրքիայում գործում էին 50 բանկ, որից 33-ը՝ առևտրային, 13-ը՝ զարգացման և ներդրումային, և 4-ը՝ մասնակցային: Վերջին տարիներին բանկերի թիվը նվազել է՝ հիմնականում միաձուլումների և մերժված բանկային լիցենզիաների մեծ թվի պատճառով: Սեփականության իմաստով թուրքական բանկերից 21-ը մասնավոր էին, 21-ը՝ արտասահմանյան, իսկ մնացածը կամ պետական էին, կամ գտնվում էին խնայողական ավանդների ապահովագրության հիմնադրամի (ԽԱԱՅ) ենթակայության ներքո: Halk և Ziraat բանկերը խոշորագույն պետական բանկերն են: Halk բանկի մասնավորեցումն արդեն ընթացքի մեջ է, մինչդեռ Ziraat բանկի մասնավորեցման ռազմավարությունը պետք է իրականացվի՝ հիմնվելով Halk բանկի մասնավորեցման փորձի վրա:

Բանկերի վերոնշյալ տեսակներից առավել մեծ դեր ունեն ավանդային բանկերը, որոնց 2007 թ. պատկանում էր ընդհանուր ակտիվների, վարկերի և ավանդների ավելի քան 90%-ը (աղյուսակ 66):


Աղյուսակ 66, Ակտիվների, վարկերի և ավանդների բաշխվածությունն ըստ բանկերի տեսակների

| | Ընդհանուր ակտիվներում մասնաբաժին (%) | | Ընդհանուր վարկերում մասնաբաժին (%) | | Ընդհանուր ավանդներում մասնաբաժին (%) | |
|---------------------------------|--------------------------------------|-------|------------------------------------|-------|--------------------------------------|-------|
| | 2006 | 2007 | 2006 | 2007 | 2006 | 2007 |
| Ներդրումային և զարգացման բանկեր | 3.1 | 3.2 | 3.3 | 3.1 | | |
| Ավանդային բանկեր, որոնց թվում՝ | 94 | 93.4 | 92.4 | 91.9 | 96.3 | 95.8 |
| - պետական | 28.9 | 28.2 | 21.0 | 21.6 | 35.4 | 34.9 |
| - մասնավոր | 53.2 | 52.7 | 56.6 | 55.1 | 51.0 | 50.3 |
| - արտասահմանյան | 11.9 | 12.4 | 14.8 | 15.2 | 9.9 | 10.6 |
| Մասնակցային բանկեր | 2.8 | 3.3 | 4.3 | 4.9 | 3.6 | 4.2 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |

Աղբյուր՝ Թուրքիայի վարչապետի աշխատակազմ՝ Մամուլի և տեղեկատվության գլխավոր վարչություն

Պետք է նշել, որ Թուրքիայի բանկային հատվածի գրեթե բոլոր հիմնական ցուցանիշները դրսևորել են արագ և կայուն աճ: Այսպես, օրինակ, 2007 թ. բանկային համակարգի ընդհանուր ակտիվները կազմել են 581.6 մլրդ նոր թուրքական լիրա, մինչդեռ 2005 թ. այդ ցուցանիշը կազմում էր 397 մլրդ ՆԹԼ (ցուցանիշն աճել է ավելի քան 45%-ով) (զծապատկեր 2):

Զծապատկեր 2, Բանկային հատվածի հիմնական ցուցանիշները (մլրդ ՆԹԼ)



Աղբյուր՝ Թուրքիայի վարչապետի աշխատակազմ՝ Մամուլի և տեղեկատվության գլխավոր վարչություն

Թուրքիայում գործող բոլոր բանկերն ունիվերսալ են, այսինքն՝ դրանց թույլատրվում է զբաղվել ֆինանսական գրեթե բոլոր տեսակի գործառնություններով: Բացառություն են կազմում միայն արժեթղթերի նախնական տեղաբաշխման (underwriting) հետ կապված գործառնությունները, որոնք կարող են իրականացնել միայն ներդրումային և զարգացման բանկերը: Բանկերին թույլատրված է զբաղվել նաև բաժնետոմսերի առքուվաճառքում միջնորդությամբ՝ իրենց մասնաճյուղերի միջոցով: Այլ ֆինանսական հաստատությունները բանկերի համար արդյունավետ մրցակիցներ չեն, քանի որ ապահովագրական և լիզինգային կազմակերպությունների մեծ մասը պատկանում է բանկերին: Արտասահմանյան և տեղական բանկերի հիմնադրման, գործունեության և վերահսկողության համար գործում են նույն կանոնները:

2000-2001 թթ. տեղի ունեցած ֆինանսական ճգնաժամից հետո Թուրքիան գործարկեց Բանկային հատվածի վերակառուցման ծրագիրը՝ արդյունավետ, գլոբալ առումով մրցակցային և հուսալի բանկային հատված ստեղծելու համար: Ծրագիրն ունի չորս հիմնական ուղղություն՝ պետական բանկերի վերակառուցում, ԽԱԱՅ բանկերի արագ վերակառուցում, մասնավոր բանկերի հզորացում և կարգավորող ու վերահսկող շրջանակի հզորացում: Այս ոլորտի համար պատասխանատու միակ մարմինն է Կարգավորող և վերահսկող բանկային գործակալությունը (ԿՎԲԳ): Բանկային համակարգում վերահսկողությունը բարելավելու նպատակով ԿՎԲԳ-ն վերջերս ընդունեց համակարգերի աուդիտի սկզբունքների վերաբերյալ երկրորդային օրենսդրություն, ինչպես նաև հրապարակեց 2006-09 թթ. ռազմավարական ծրագիրը: Այնուամենայնիվ բանկային ոլորտի կարգավորման և վերահսկողության հարցում կան մի շարք խնդիրներ: Մասնավորապես, Երոպական հանձնաժողովի կարծիքով, հիմնական բացթողումն այն է, որ ոչ ֆինանսական խմբերի ընկերությունների դուրս հանումը բանկերի համախմբված հաշիվներից վատթարացնում է այն բանկերի արդյունավետ վերահսկողությունը, որոնք խառը հոլդինգային խմբերի մաս են կազմում:

2005 թ. նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտավ «Բանկային գործունեության մասին» նոր օրենքը, որի նպատակն էր ներդաշնակեցնել թուրքական օրենսդրությունը Երոմիության դիրեկտիվների և միջազգային ստանդարտների հետ: Օրենքով սահմանվեց ռիսկերի վրա հիմնված վերահսկողությունը, ստեղծվեց ֆինանսական ծառայությունների հանձնաժողով՝ վերահսկող գերատեսչությունների միջև համագործակցությունը բարելավելու նպատակով և այլն:

Համաձայն վերոնշյալ օրենքի՝ յուրաքանչյուր բանկ Թուրքիայում պետք է ձևակերպվի որպես բաժնետիրական ընկերություն և ունենա 30 մլն նոր թուրքական լիրա կապիտալ: Արտասահմանյան բանկերը կարող են գործունեություն իրականացնել Թուրքիայում՝ ստեղծելով մասնաճյուղեր, ներկայացուցչություններ կամ համատեղ կազմակերպություններ՝ արդեն ստեղծված կամ ստեղծման ընթացքում գտնվող բանկերի հետ: Արտասահմանյան բանկի առաջին մասնաճյուղի հիմնադրման համար անհրաժեշտ է ԿՎԲԳ-ի հաստատումը: Բացառապես օֆշորային բանկային գործունեությամբ զբաղվելու նպատակով որևէ բանկի հիմնադրումը թույլատրվում է ԿՎԲԳ-ի խորհրդի որոշմամբ: Բանկային ծառայությունների միջսահմանային տրամադրումը իրավաբանորեն սահմանափակված չէ: Հաշվեկշռային և արտահաշվեկշռային ակտիվների վերահսկողությունը (ներառյալ՝ բանկերի վարկային ռիսկերը, կապիտալի համապատասխանության զնահատումը և ներքին վերահսկողությունը) և ռիսկերի կառավարման համակարգերը մեծ մասամբ համապատասխանում են Բազելի սկզբունքներին:

7.1.4. Արժեթղթերի շուկա

Ստամբուլի բորսան արժեթղթերի միակ շուկան է Թուրքիայում: Այն ստեղծվել է՝ բաժնետոմսերի, պարտատոմսերի ու մուրհակների, հասույթի բաշխման սերտիֆիկատների, մասնավոր հատվածի պարտատոմսերի, անշարժ գույքի սերտիֆիկատների և արտասահմանյան արժեթղթերի առևտուրն ապահովելու նպատակով: Բորսան պետական

հաստատություն է, որի կազմում գործում են 104 բրոքերային կառույցներ և 40 բանկեր (բանկերը չեն կարող մասնակցել բաժնետոմսերի շուկայում գործառնությունների իրականացմանը): Մարժային առևտուրը, կարճ վաճառքը, արժեթղթերը պարտքով հանձնելն ու վերցնելը կարգավորվում է Կապիտալի շուկայի հարցերով խորհրդի կողմից: 2007 թ. հուլիսի դրությամբ Բորսայում գրանցված էր 322 կազմակերպություն (2003 թ. օգոստոսի դրությամբ՝ 286), որից 100-ը ներառված է Բորսայի National-100 ինդեքսում: 2006 թ. Բորսայի բաժնետոմսերի շուկայում առևտուրը կազմել էր 229.6\$ մլրդ՝ 2002 թ. 70.8\$ մլրդ-ի դիմաց: Պարտատոմսերի և մուրհակների շուկայի միջոցով ապահովվում է պետական պարտատոմսերի, գանձապետական մուրհակների, Մասնավորեցման գործակալության և մասնավոր հատվածի կողմից թողարկվող պարտատոմսերի առքուվաճառքն ու ռեպո գործառնությունների իրականացումը: 2007 թ. գործող «Միջազգային պարտատոմսերի շուկան», որը գտնվում է «Բորսայի արտասահմանյան արժեթղթերի շուկայի» կազմում, միջավայր է հանդիսանում գրանցված թուրքական անկախ երրօպարտատոմսերով առքուվաճառք իրականացնելու համար:

Ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտն է 1981 թ. «Կապիտալի շուկայի մասին» օրենքը: Կապիտալի շուկայի հարցերով խորհուրդը, ստեղծված 1982 թ., իրավասու է կարգավորելու արժեթղթերի առաջնային և երկրորդային շուկաները, վերահսկելու արժեթղթերի առևտրի միջնորդներին ու կոլեկտիվ ներդրումային հաստատություններին և գրանցել արժեթղթերի բոլոր հրապարակային առաջարկները՝ բացառությամբ կառավարական արժեթղթերի: Ի լրումն՝ այն իրավասու է կարգավորելու նաև կապիտալի շուկայում մասնավոր հատվածի գործիքների թողարկումը: Թուրքիայի բաժնետոմսերի և պարտատոմսերի շուկաները բաց են արտասահմանյան ներդրողների համար, և չկա կապիտալի և շահույթի վերադարձման որևէ սահմանափակում:

Բորսայի և նրա անդամների սեփականությունը հանդիսացող Takas բանկը ներդրումային բանկ է, որն իրականացնում է բաժնետոմսերի և պարտատոմսերի տեղաբաշխումը և կարգավորում է մեկ օրից ավելի տևող գործարքները, մատուցում է նաև այլ ծառայություններ: Կենտրոնական ռեգիստրի գործակալությունը, 2001 թ. «Կապիտալի շուկայի մասին» օրենքով ստեղծված որպես մասնավոր հաստատություն, Թուրքիայում շրջանառվող կապիտալի շուկայի բոլոր գործիքների միակ կենտրոնական դեպոզիտարիան է: 2005 թ. արժեթղթերի համար պահառության գործառույթը Takas բանկից անցավ Կենտրոնական ռեգիստրի գործակալությանը:

2005 թ. Իզմիրում սկսեց գործել Թուրքիայի ածանցյալ գործիքների բորսան (Turkdex), որն ածանցյալ գործիքների առևտուր իրականացնելու համար միակ բորսան է ամբողջ Թուրքիայում:

7.1.5. Ապահովագրություն

Թուրքիայի ապահովագրական շուկան բաղկացած է ապահովագրական և վերաապահովագրական կազմակերպություններից և ապահովագրական միջնորդներից, ինչպիսիք են բրոքերներն ու գործակալությունները: 2006 թ. վերջի դրությամբ Թուրքիայում կար 46 ապահովագրական կազմակերպություն, որից 35-ը գործում էին ոչ կյանքի ապահովագրության, 10-ը՝ կյանքի ապահովագրության և կենսաթոշակային, և 1-ը՝ միայն կենսաթոշակային ոլորտներում: Շուկայում գործում է նաև 1 վերաապահովագրական կազմակերպություն՝ Milli Reasurans TAS-ը, որը մասնավոր կազմակերպություն է և պատկանում է Turkiye Is բանկին: Պետությունը չունի որևէ ապահովագրական կամ վերաապահովագրական կազմակերպությունում բաժնեմասի մեծամասնություն: 2006 թ. վերջի դրությամբ 29 ապահովագրական կազմակերպություններում կար արտասահմանյան կապիտալի մասնակցություն՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն: Արտասահմանյան կազմակերպությունների ստացած ապահովագրական վճարները կազմում էին ընդհանուրի 32.3%-ը: Ապահովագրական և վերաապահովագրական կազմակերպությունների ընդհանուր ակտիվները կազմել են 12.898\$ մլն:

Թուրքիայի ապահովագրական ոլորտը կարգավորվում է Գանձապետական ենթաքարտուղարության կողմից, որը հաշվետու է տնտեսական քաղաքականության

մշակման համար պատասխանատու պետնախարարությանը: Ապահովագրության հարցերով գլխավոր վարչությունը լիազորված է ընդունելու ոլորտին առնչվող կանոնակարգեր և պաշտպանելու ապահովագրված անձանց և կազմակերպություններին: Ապահովագրության վերահսկողության խորհուրդը լիազորված է ոլորտը վերահսկելու, ստուգելու և հետաքննություն անցկացնելու համար: «Ապահովագրության մասին» թիվ 5684 օրենքով սահմանվում են ապահովագրական և վերաապահովագրական կազմակերպությունների վերահսկողության կանոնները: Ե՛ւ թուրքական, և՛ արտասահմանյան ապահովագրական ու վերաապահովագրական կազմակերպությունների նկատմամբ օրենսդրությամբ սահմանված են նույն կանոնները:

Ապահովագրական և վերաապահովագրական կազմակերպությունները կարող են հիմնադրվել միայն որպես բաժնետիրական ընկերություններ: Այնուամենայնիվ ապահովագրական կազմակերպությունները կարող են հիմնադրվել նաև համատեղ կազմակերպությունների տեսքով: Արտասահմանյան ապահովագրական և վերաապահովագրական կազմակերպությունները նույնպես կարող են գործունեություն ծավալել Թուրքիայում՝ իրենց մասնաճյուղերի միջոցով, սակայն այն պայմանով, որ դրանց գործունեությունը երբևէ չի արգելվել հայրենիքում: Հիմնադրումից հետո ապահովագրական և վերաապահովագրական կազմակերպությունները Գանձապետական ենթաարտուղարությունից պետք է ձեռք բերեն լիցենզիա՝ յուրաքանչյուր մասնաճյուղի համար մեկական: Որոշ բացառություններով՝ ոչ կյանքի ապահովագրական ծառայությունների միջսահմանային տրամադրումն արգելված է:

Ապահովագրական կազմակերպությունները կարող են զբաղվել միայն ապահովագրական գործունեությամբ և պետք է իրականացնեն կա՛մ կյանքի, կա՛մ ոչ կյանքի ապահովագրություն, բայց ոչ՝ երկուսը միասին: Արտահանման վարկավորման ապահովագրությունն իրականացվում է ապահովագրական կազմակերպությունների և թուրքական Exim բանկի կողմից: Որոշ մասնավոր ապահովագրական կազմակերպություններ ծածկում են և՛ արտահանման կարճաժամկետ վարկային ռիսկը, և՛ տեղական վարկային ռիսկը: Տոնտիները (համատեղ ֆոնդով ապահովագրության այնպիսի համակարգ, որի դեպքում ապահովագրության ամբողջ գումարը ստանում է կենդանի մնացած վերջին անդամը) Թուրքիայում արգելված են: Ապահովագրական և վերաապահովագրական կազմակերպությունների համար բաժնետերերի վճարած կապիտալի նկատմամբ նվազագույն պահանջը կազմում է 5 մլն նոր թուրքական լիրա: Ապահովագրական ընկերությունների համար միջոցների ու պարտավորությունների նվազագույն տարբերությունը սահմանվում է նրանց ստացած ապահովագրական վճարների և նրանց նկատմամբ ապահովագրական պահանջների տվյալների հիման վրա: Այս ցուցանիշը տարբերվում է կյանքի ու մյուս ապահովագրական ճյուղերում: Պարտադիր պահուստները պետք է ներդրվեն տեղում՝ բացառությամբ արտասահմանում կյանքի ապահովագրությամբ ստացված վճարների, ինչպես նաև կանոնադրական ու ազատ պահուստների, որոնք կարող են ներդրվել արտասահմանում: Ապահովագրական ընկերությունների ներդրումային փաթեթի կազմի և ռիսկային առնչության սահմանափակումներ չկան:

Երկրաշարժից պարտադիր ապահովագրություն է սահմանվում 1999 թ. թիվ 587 օրենքով, ինչի համար ստեղծվել է Թուրքական աղետների ապահովագրության համատեղ միավորումը (ԹԱԱՀՄ): ԹԱԱՀՄ-ը ապահովագրական ոլորտի միակ ուղղությունն է, որն իրականացվում է պետական հատվածի կողմից, և որի նպատակն է նվազեցնել պետական ֆոնդերի հետ կապված ռիսկերը¹⁴⁵: ԹԱԱՀՄ-ը պետական և մասնավոր հատվածների համագործակցության օրինակ է, քանի որ ապահովագրական ծածկույթը տրվում է ԹԱԱՀՄ-ի կողմից, մինչդեռ ապահովագրական քաղաքականությունն իրականացվում է մասնակցող մասնավոր կազմակերպությունների միջոցով: ԹԱԱՀՄ-ը ունի մինչև 1 մլրդ եւրո ապահովագրված կորուստների հատուցման կարողություն: Եթե գումարային վնասները գերազանցեն նշված մակարդակը, ապա ավելցուկը կմնա կառավարության և ապահովագրվածների վրա:

¹⁴⁵ Այն ստեղծվել է Մարմարայում 1999 թ. երկրաշարժից հետո, որից հետո պարզվեց, որ տնտեսական կորստի միայն փոքր մասն էր ապահովագրված, և այդ պատճառով էլ վերականգնման բեռը հիմնականում կրում էր Թուրքիայի կառավարությունը:

Պարտադիր ապահովագրության վճարները /օրինակ՝ երթևեկության հետ առնչվող երրորդ կողմի պարտավորության ապահովագրությունը և երկրաշարժից ապահովագրությունը/ սահմանվում են Պետնախարարության կողմից: Սակայն երթևեկության հետ առնչվող երրորդ կողմի պարտավորության ապահովագրության համար ենթաքարտուղարությունը սահմանում է մի միջակայք, որում ընկերությունները կարող են որոշել իրենց ապահովագրական վճարների չափերը: Ավելին՝ որոշ պարտադիր ապահովագրությունների համար կան նվազագույն ապահովագրական վճարներ, որոնք նույնպես որոշվում են Պետնախարարության կողմից: Ապահովագրության մյուս ճյուղերում ապահովագրական վճարները սահմանվում են ապահովագրական ընկերությունների կողմից:

7.1.6. Հեռահաղորդակցություն և փոստ

Վերջին տարիներին Թուրքիայի հեռահաղորդակցության ոլորտը՝ հատկապես բջջային հեռախոսակապի շուկան, շարունակ աճել է: Բջջային հեռախոսակապի բաժանորդների թիվը 2006 թ. կազմել է 52.7 մլն, ինչն ավելի քան 2 անգամ շատ է 2002 թ. տվյալից (աղյուսակ 67): Ինտերնետային կապ օգտագործողների թիվը նույնպես մեծացել է՝ 2002 թ. 4.3 մլն-ից 2006 թ. հասնելով 12.3 մլն-ի: Թուրքիայի բոլոր գյուղերը միացված են հեռախոսակապի ցանցին: 2006 թ. վերջին սպասարկման մեջ եղել է 18.8 մլն քաղաքային հեռախոսակապի գիծ, և քաղաքային հեռախոսակապի բաժանորդների քանակն արդեն հասել է հազեցածության վերջնակետի¹⁴⁶: Թե՛ քաղաքային և թե՛ բջջային հեռախոսակապի ծածկույթը ցածր է Եւրոմիության միջինից:

Աղյուսակ 67, 2002-06 թթ. Թուրքիայի հեռահաղորդակցության ոլորտի ցուցանիշները

| Ցուցանիշ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|--|---------|---------|---------|---------|--------|
| Հիմնական հեռախոսային գծեր ('000) | 18,890 | 18,917 | 19,125 | 18,978 | 18,832 |
| 100 հոգու հաշվով հիմնական հեռախոսային գծերը | 26.88 | 26.55 | 26.48 | 25.93 | 25.39 |
| Բջջային հեռախոսակապի բաժանորդ ('000) | 23,323 | 27,888 | 34,708 | 43,609 | 52,663 |
| 100 հոգու հաշվով բջջային հեռախոսակապի բաժանորդ | 33.19 | 39.14 | 48.06 | 59.58 | 71 |
| Ինտերնետային կապի օգտագործող ('000) | 4,300 | 6,000 | 10,220 | 11,204 | 12,283 |
| 100 հոգու հաշվով ինտերնետային կապի օգտագործող | 6.12 | 8.42 | 14.15 | 15.31 | 16.56 |
| Ինտերնետային հոստ | 154,585 | 359,188 | 474,129 | 474,129 | .. |
| 10,000 հոգու հաշվով ինտերնետային հոստ | 22 | 50.41 | 65.65 | 65.65 | .. |
| ADSL կապի բաժանորդ ('000) | 2.9 | 56.6 | 452.4 | 1,539.5 | .. |
| Անհատական համակարգիչ ('000) | 3,000 | 3,333 | 3,703 | 3,703 | .. |
| 100 հոգու հաշվով անհատական համակարգիչ | 4.27 | 4.68 | 5.13 | 5.13 | .. |

Աղբյուր՝ Հեռահաղորդակցության միջազգային միություն և Թուրքիայի պետական կառավարման մարմինների կողմից տրամադրված տվյալներ

2000 թ. օգոստոսին Թուրքիայում ստեղծվեց Հեռահաղորդակցության գերատեսչությունը (ՀԳ), որը լիազորված է շնորհել լիցենզիաներ, իրականացնել օպերատորների միջև վեճերի կարգավորման միջոցառումներ և հաստատել

¹⁴⁶ Պետական պլանավորման կազմակերպություն, 2006թ.

հեռահաղորդակցության ոլորտի որոշ ծառայությունների գները: Յուրաքանչյուր կազմակերպություն, որը պատրաստվում է հեռահաղորդակցության ոլորտում մատուցել ծառայություններ կամ կառուցել հեռահաղորդակցության ենթակառուցվածք, պետք է ՅԳ-ից ստանա լիցենզիա կամ թույլտվություն (աղյուսակ 68): Լիցենզիայի համար գանձվող վճարները սահմանում է ՅԳ-ն, իսկ հաստատում է Նախարարների խորհուրդը:

Աղյուսակ 68, Օպերատորների քանակն ըստ լիցենզիայի և ծառայությունների տեսակների

| | 2004 | 2005 | 2006 |
|---|------------|------------|------------|
| Թույլտվության պայմանագրեր | 1 | 2 | 2 |
| Կոնցեսիոն պայմանագրեր | 3 | 4 | 4 |
| Արբանյակային հարթակների օպերատորներ | 3 | 1 | 2 |
| Արբանյակային հեռահաղորդակցության ծառայությունների օպերատորներ | 23 | 24 | 20 |
| Արբանյակի միջոցով բջջային հեռախոսակապի ծառայություններ մատուցող օպերատորներ | 5 | 5 | 4 |
| Երկրի վրա գծերով տվյալների փոխանցում իրականացնող օպերատորներ | 14 | 20 | 20 |
| Ինտերնետային ծառայությունների պրովայդերներ | 91 | 74 | 72 |
| Մեծ հեռավորության վրա հեռախոսակապի ծառայություններ մատուցող օպերատորներ | 43 | 40 | 35 |
| Ընդհանուր ռադիո ծառայություններ մատուցող օպերատորներ | 9 | 48 | 48 |
| Ենթակառուցվածքների հետ կապված ծառայություններ մատուցող օպերատորներ | 0 | 0 | 7 |
| Մալուխային հարթակների ծառայությունների օպերատորներ | 0 | 0 | 5 |
| Ընդհանուր | 192 | 218 | 219 |

Աղբյուր՝ Թուրքիայի պետական կառավարման մարմինների կողմից տրամադրված տվյալներ

Համաձայն Համաշխարհային զարգացման ցուցանիշների՝ Թուրքիայում ինտերնետային կապի ծառայությունները բավականին էժան են և նույնիսկ ունեն նվազման միտում: Մեծ է նաև Թուրքիայում գործող ինտերնետային սերվերների քանակը (աղյուսակ 69), ինչը, ինտերնետային կապի էժան լինելու հետ մեկտեղ, վկայում է այն մասին, որ Թուրքիան ունի ինտերնետային ծառայությունների լավ զարգացած միջավայր, որն էլ ավելի առաջընթաց կունենա մոտ ապագայում:

Աղյուսակ 69, Թուրքիայի ինտերնետային ծառայությունների ցուցանիշներ

| | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---|-------|-------|-------|-------|------|
| Ինտերնետի համար գնային զանբյուղը (ԱՄՆ\$ մեկ ամսում) | 19.83 | 18.84 | 11.61 | 10.87 | - |
| Ինտերնետային ապահով սերվերներ | 496 | 882 | 1229 | 1794 | 2818 |

Թուրքիան ունի ինտերնետային կապի զարգացած միջավայր: Ինտերնետային ծառայությունները բավականին էժան են, իսկ ենթակառուցվածքներն ունեն մեծ կարողություններ: Սա մի կողմից կարող է վտանգ ներկայացնել Հայաստանում գործող ինտերնետային պրովայդերների համար, սակայն մյուս կողմից կարող է դիտվել որպես ապագա խթան՝ Հայաստանում ինտերնետային ցանցի զարգացման, այդ ծառայությունների գների կտրուկ իջեցման և ինտերնետային կապի մատչելիության և որակի բարձրացման համար:

2003 թ. ավարտվեց Թուրքտելեկոմի ֆիքսված քաղաքային հեռախոսակապի¹⁴⁷ և մեծ հեռավորության ու միջազգային հեռախոսակապերի մենաշնորհը¹⁴⁸: 2005 թ. կառավարությունը վաճառեց Թուրքտելեկոմում ունեցած իր 55% բաժնեմասը Ojer Telekomunikasyon AS կոնսորցիումին¹⁴⁹: 2005 թ. երբ ուժի մեջ մտան տեղական ցանցի համատեղ օգտագործման վերաբերյալ նոր կանոնակարգերը, Թուրքտելեկոմը դադարեց լինել ADSL ծառայությունների միակ մատուցողը:

«Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում ունիվերսալ ծառայությունների մասին» 2005 թ. թիվ 5369 օրենքով սահմանված է ունիվերսալ ծառայությունների շրջանակը ծառայությունների որոշ տեսակների համար: Դրանք են՝ ֆիքսված կապի հեռախոսային ծառայությունները, հասարակական վճարովի հեռախոսները, տպագիր կամ էլեկտրոնային տեղեկատու ծառայությունները, արտակարգ իրավիճակներում զանգերի հետ կապված ծառայությունները, հիմնական ինտերնետային ծառայությունները, միայն նավարկելու միջոցով հասանելի տարածաշրջանների համար տրանսպորտային ծառայություններն ու ծովում արտակարգ իրավիճակների ու անվտանգության հետ կապված հաղորդակցության ծառայությունները, տեղեկատվական տեխնոլոգիաները խթանող ծառայությունները՝ ներառյալ համակարգչի ուսուցման դասընթացները, և թվային հեռարձակման ծառայությունները: Ունիվերսալ ծառայություններ մատուցողներն ընտրվում են օպերատորների միջից՝ մրցույթի միջոցով: Մրցույթին կարող է մասնակցել յուրաքանչյուր օպերատոր՝ առանց որևէ սահմանափակման: Օրենքի կիրարկման համար պատասխանատու է Տրանսպորտի նախարարությունը:

2007 թ. «Նշանակալի շուկայական հզորություն ունեցող օպերատորների որոշման մասին» կարգով ապահովվում է նշանակալի շուկայական հզորություն ունեցող օպերատորների ենթակառուցվածքներին բոլոր օպերատորների համար ոչ խտրական և թափանցիկ մուտք: ԶԳ-ն ունի նաև վեճերի լուծման մանրամասն ընթացակարգ: Եթե կողմերը չեն գալիս համաձայնության նույնիսկ ԶԳ-ի միջնորդության ժամանակ, ապա ԶԳ-ն ինքն է սահմանում ցանցին մուտքի ժամկետները, պայմաններն ու գները: Ցանցին մուտքի վերաբերյալ պայմանները հրապարակայնորեն մատչելի են: ԶԳ-ն նաև ապահովում է, որ ծառայությունների տարբեր տեսակների միջև չլինի խաչաձև սուբսիդավորում: 2002 թ. ԶԳ-ն ստորագրել է համագործակցության արձանագրություն Մրցակցության պաշտպանության գերատեսչության հետ՝ ոլորտում կարգավորումը բարելավելու նպատակով: ԶԳ-ի կողմից ստեղծվել է նաև Հեռահաղորդակցության քաղաքականության խորհուրդ, որի անդամներ են օպերատորներ, սպառողներ, փորձագետներ, որի նպատակն է ապահովել հանրության մասնակցությունը ոլորտի կարգավորմանը: ԶԳ-ի խորհրդի համաձայն՝ բջջային ծառայությունների ոլորտում կան շուկայի նշանակալի հզորություն ունեցող 3 օպերատորներ՝ Turkcell-ը, Telsim-ը և Avea-ն:

Թուրքիան ստորագրել է հետևյալ միջազգային համաձայնագրերը. Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ) կանոնադրությունն ու համաձայնագիրը, ՀՄՄ-ի՝ ռադիոյի վերաբերյալ կանոնակարգերը, ՀՄՄ-ի՝ միջազգային հեռահաղորդակցության կանոնակարգերը, INTELSAT-ի¹⁵⁰ համաձայնագիրն ու աշխատանքային համաձայնագիրը, INMARSAT-ի¹⁵¹ կանոնադրությունն ու աշխատանքային համաձայնագիրը և EUTELSAT-ի¹⁵² մասին համաձայնագիրը: Թուրքիան չի ստորագրել որևէ երկկողմ համաձայնագիր այս ոլորտում:

Թուրքիայի փոստային կազմակերպությունը, որը գործում է Տրանսպորտի նախարարության կազմում, փոստային ծառայություններ մատուցող և այդ ոլորտը կարգավորող մարմինն է: «Փոստային ծառայությունների մասին» թիվ 5584 օրենքի համաձայն՝ Թուրքիայի փոստային կազմակերպությունն ունի մենաշնորհ՝ նամակների, բացիկների և հեռագրերի ոլորտում տեղական և միջազգային հասցեագրումների համար:

¹⁴⁷ Թուրքտելեկոմն ունի ֆիքսված հեռախոսակապի՝ աշխարհի 13-րդ ամենամեծ ենթակառուցվածքը:

¹⁴⁸ «Հեռահաղորդակցության ծառայությունների մասին» 1997 թ. ԱԶԿ-ի համաձայնագրի շրջանակում ստանձնած պարտավորությունների համաձայն՝ Թուրքիան պետք է վերացներ հիմնական ծառայությունների մասով Թուրքտելեկոմի մոնոպոլիան մինչև 2005 թ. դեկտեմբերի 31-ը:

¹⁴⁹ Նախարարների խորհրդի թիվ 2005/9146 որոշում (Թուրքտելեկոմ, 2006):

¹⁵⁰ Արբանյակային հեռահաղորդակցության միջազգային կազմակերպություն:

¹⁵¹ Ծովային արբանյակային կապի միջազգային կազմակերպություն:

¹⁵² Արբանյակային կապի եվրոպական կազմակերպություն:

7.1.7. Տրանսպորտ

2005 թ. Տրանսպորտի նախարարության համակարգմաբ մեկնարկեց Տրանսպորտի ոլորտի հիմնարար ռազմավարությունը, որի նպատակն է բարձրացնել ոլորտը կարգավորող մարմինների միջև համակարգման աստիճանը: Ռազմավարության հիմնական կետերից է նաև մինչև 2020 թ. բարձրացնել ընդհանուր բեռնափոխադրումների մեջ երկաթուղային բեռնափոխադրումների մասնաբաժինը ներկայիս 5%-ից մինչև 20%, և ուղևորափոխադրումների մեջ երկաթուղային ուղևորափոխադրումների մասնաբաժինը՝ ներկայիս 2%-ից մինչև 10%: 2007-2013 թթ. զարգացման 9-րդ պլանի համաձայն՝ Թուրքիան նպատակ ունի նաև ստեղծել արդյունավետ տրանսպորտային հատված և բարձրացնել տրանսպորտի բոլոր բնագավառներում անվտանգության մակարդակը (աղյուսակ 70):

Աղյուսակ 70, Թուրքիայի բեռնափոխադրումները 2006 և 2013թթ. համար (մլն տ/կմ)

| Տեղական | 2006 | 2013 | 2007-13 |
|--|---------|-----------|------------------------|
| | | | Տոկոսային փոփոխություն |
| Մայրուղային | 169,500 | 248,000 | 5.6 |
| Երկաթուղային | 8,358 | 25,400 | 17 |
| Ծովային | 5,400 | 8,400 | 6.5 |
| Ինքնաթիռային | 468 | 659 | 5 |
| Նավթամուղ և գազամուղ | | | |
| Նավթահումք, մլն տոննա | 6.1 | 9 | 47.5 |
| Բնական գազ, մլրդ մ ³ | 30.8 | 37.4 | 21.4 |
| Միջազգային | | | |
| Երկաթուղային | 1,318 | 8,248 | 31 |
| Ծովային | 749,000 | 1,740,000 | 12.8 |
| Ինքնաթիռային | 2,613 | 4,777 | 9 |
| Նավթամուղ և գազամուղ | | | |
| Նավթահումք (տարանցիկ), մլն տոննա | 9.6 | 120 | 1,150 |
| Բնական գազ (տարանցիկ), մլրդ մ ³ | 0 | 14 | n.a |

Աղբյուր՝ Պետական պլանավորման կազմակերպություն (2006), 2007-2013 թթ. իններորդ զարգացման պլան, Անկարա


ա. Ծովային տրանսպորտ

Թուրքիան նավերի քանակով 2005 թ. աշխարհում զբաղեցրել է 24-րդ տեղը՝ 2000 թ. 18-րդ տեղի փոխարեն: Սա հիմնականում պայմանավորված է ֆինանսավորման խնդիրներով: 2006 թ. Թուրքիայում կար 61 նավագործարան (2002 թ. 37-ի դիմաց), որոնցում աշխատում է 28,500 մարդ, և որոնք ունեն 1.8 մլն տոննա թեռնատարողության կարողություն (2002 թ. 550,000-ի դիմաց): Համաձայն տրանսպորտի նախարարության տվյալների՝ սպասվում է, որ 2010 թ. այդ թիվը կլինի 6 մլն տոննա¹⁵³: Ծովային տրանսպորտը մեծ նշանակություն ունի Թուրքիայի տեղական և միջազգային առևտրի համար, քանի որ Թուրքիայի հիմնական արդյունաբերական կենտրոններից չորսը (Ստամբուլ-Իզմիր, Իզմիր, Բուրսա և Ադանա) գտնվում են մերձծովյան շրջաններում: Ընդհանուր բեռնավորումն ու բեռնաթափումը ծովային տրանսպորտի ոլորտում աճել է՝ 2006 թ. կազմելով 232 մլն տոննա

¹⁵³ Թուրքիայի տրանսպորտի նախարարության ինտերնետային կայք - www.ubak.gov.tr

(2004 թ. այն եղել է 206 մլն տոննա) (գծապատկեր 3): Նավահանգիստները գնալով էլ ավելի մարդաշատ են դառնում, իսկ դրանց կարողությունները բավարար չեն նավերի աճող քանակը սպասարկելու համար, ինչը հիմնականում բացատրվում է որոշ նավահանգիստներում ընդլայնման և Հյուսիսային Մարմարայի նավահանգստի կառուցման ծրագրերի հետաձգմամբ¹⁵⁴: Նշենք նաև, որ որոշ ուսումնասիրությունների համաձայն՝ թուրքական նավահանգիստների մատուցած ծառայությունները բավականին թանկ են: Այսպես՝ 2004 թ. 20 ոտնաչափի կոնտեյնրի փոխադրումը Թուրքիայի նավահանգիստների միջոցով արժեր մոտ 330€՝ Ալեքսանդրիայի (Եգիպտոս) 70€, Ռադեսի (Թունիս) 210€ և Կասաբլանկայի (Մարոկո) 370€-ի դիմաց¹⁵⁵:

Գծապատկեր 3, 2004-2006թթ. համար ծովային տրանսպորտի ցուցանիշները



Վերջին տարիների ընթացքում մի շարք պետական նավահանգիստներ, որոնք գտնվում էին Թուրքիայի ծովային փոխադրումների կազմակերպության գլխավոր վարչության (ԹԾՓԿԳՎ) իրավասության շրջանակներում, կոնցեսիոն պայմանագրով հանձնվել են մասնավոր ներդրողներին, իսկ մի շարք այլ նավահանգիստների՝ կոնցեսիոն պայմանագրով մասնավոր ներդրողներին հանձնումը ընթացքի մեջ է¹⁵⁶: Այնուամենայնիվ ամենախոշոր 6 նավահանգիստները դեռևս գործարկվում են պետության սեփականություն հանդիսացող Թուրքիայի պետական երկաթուղիների (ԹՊԵ) կողմից: Բոլոր այդ նավահանգիստներն ունեն երկաթուղային մուտք: ԹՊԵ-ի հիմնական խնդիրներից են նավահանգստային սարքավորումների և ենթակառուցվածքների ոչ բավարար մակարդակը և համակարգչայնացման պակասը: Շարունակվում է նաև նավահանգիստներից երկաթուղիներ խաչաձև սուբսիդավորումը: Խաչաձև սուբսիդավորումն իրականացվում է նավահանգիստներում բարձր վճարների սահմանման կամ մաշվածության ոչ պատշաճ հաշվարկման ու վերանորոգման աշխատանքների իրականացման ոչ պատշաճ մակարդակի հաշվին, ինչի արդյունքում նավահանգիստներում գերշահույթներ են ձևավորվում: Նշված խնդիրները դեպի Թուրքիա ներմուծումների բարձր ծախսատարության պատճառ են, ինչն իր հերթին բացասաբար է ազդում Թուրքիայի ծովային բեռնափոխադրումների մրցունակության վրա¹⁵⁷:

¹⁵⁴ Պետական պլանավորման կազմակերպություն, 2006թ.:
¹⁵⁵ EuroMed Տրանսպորտային ծրագրի ինտերնետային կայք - www.euromedtransport.org
¹⁵⁶ Bandirma, Derince, Izmir, Samsun, and Iskenderun նավահանգիստները:
¹⁵⁷ EuroMed Տրանսպորտային ծրագրի ինտերնետային կայք - www.euromedtransport.org

Թուրքիան ունի մեծ առևտրային նավատորմ: Չնայած այն հանգամանքին, որ ծովային տրանսպորտի ոլորտում երկիրն ունի մի շարք խնդիրներ՝ կապված սակագների բարձր լինելու, տեխնիկական հագեցածության նվազ մակարդակի և այլնի հետ, հնարավոր է, որ նույնիսկ այդ պարագայում թուրքական նավահանգիստների մատուցած ծառայություններն ավելի էժան լինեն Փոթիում մատուցվող ծառայություններից: Ի լրումն՝ Թուրքիայում ծովային տրանսպորտի բարելավմանն ուղղված մի շարք ծրագրերի հաջող իրականացումից հետո բարձրանալու է նշված ծառայությունների որակն, ու իջնելու են այդ ծառայությունների գները, ինչն էլ ավելի ձեռնտու կարող է դարձնել հայ արտահանողների և ներմուծողների համար թուրքական նավահանգիստներից օգտվելը:

«Կաբոտաժի մասին» թիվ 815 օրենքի համաձայն՝ առևտրական ծովային տրանսպորտը և ուղևորային ծառայությունները, ինչպես նաև նավահանգիստային մնացած բոլոր ծառայությունները կարող են մատուցվել միայն թուրքական դրոշ կրող նավերի միջոցով: Թուրքիան ունի նավերի գրանցման երկու համակարգ՝ Նավերի ազգային ռեգիստր և Նավերի միջազգային ռեգիստր: Որպեսզի կազմակերպությունը կարողանա գրանցվել Նավերի ազգային ռեգիստրում, անհրաժեշտ է, որ այդ կազմակերպության 51%-ը պատկանի Թուրքիայի քաղաքացիներին¹⁵⁸: Նավերի նավապետները և նրանց առաջին օգնականները պետք է լինեն Թուրքիայի քաղաքացի, մինչդեռ միջազգային բեռնափոխադրումների մեջ ներգրավված նավերի (բացառությամբ կաբոտաժի) անձնակազմի 40%-ը կարող է լինել օտարերկրացի: Թուրքիայի և/կամ օտարերկրյա քաղաքացիների և թուրքական օրենսդրության կանոններով գրանցված կազմակերպությունների նավերն ու զբոսանավերը կարող են գրանցվել Ստամբուլում գործող Նավերի միջազգային ռեգիստրում: Թուրքական են համարվում հետևյալ նավերը՝

- որոնք պատկանում են թուրքական օրենսդրությանը համապատասխան գրանցված այն կազմակերպություններին, որոնց հիմնադիրների խորհուրդների անդամների մեծամասնությունը Թուրքիայի քաղաքացի են, և
- որոնք պատկանում են առևտրական այն կազմակերպություններին, որոնց ղեկավար անձնակազմի և ներկայացուցիչների մեծամասնությունը Թուրքիայի քաղաքացի են և գրանցված են Թուրքիայի առևտրի ռեգիստրում¹⁵⁹:

Թուրքիայի դրոշը կրող նավերը օգտվում են գնային արտոնությունից, այսինքն՝ դեպի արտասահման ուղղված պետական փոխադրումների կամ ռազմավարական նշանակություն ունեցող հումքի փոխադրման դեպքում դրանց գնային առաջարկը կարող է 10%-ի չափով ավելի բարձր լինել, քան այլ պետության դրոշ կրող նավի ամենացածր գնային առաջարկը: Այլ պետության դրոշ կրող նավի միջոցով պետական մարմինների կողմից ներմուծում իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ թույլտվություն՝ տրված Արտաքին առևտրի հարցերով ենթաքարթուղարության կողմից: Այլ պետությունների դրոշ կրող նավերն օգտագործվում են այն դեպքերում, երբ

- Թուրքիայի նավերի գնային առաջարկներն ավելի քան 10%-ով բարձր են, քան այդ նավերի գնային առաջարկները,
- բեռնավորումն իրականացվում է այն նավահանգիստում, որը չի օգտագործվում Թուրքիայի դրոշ կրող նավերի կողմից, և
- Թուրքիայի դրոշ կրող նավի կարողությունը բավարար չէ բեռնափոխադրումն իրականացնելու համար¹⁶⁰:

Թուրքական նավահանգիստների սակագնային համակարգը հիմնված է Թուրքիայի և այլ պետությունների դրոշը կրող նավերի միջև խտրականության բացառման սկզբունքի վրա:

¹⁵⁸ «Առևտրային կանոնների մասին» թիվ 6762 օրենք:

¹⁵⁹ ԱՂԿ փաստաթուղթ թիվ S/NGMTS/W/2/Add.23/Rev.1, 25 սեպտեմբերի 1995 թ.:

¹⁶⁰ Մասնավոր ներմուծողներն ազատ են թուրքական կամ արտասահմանյան նավ ընտրելու հարցում:

Համաձայն թուրքական պետական կառավարման մարմինների կողմից տրամադրված տվյալների՝ նավահանգիստների օպերատորները ազատորեն սահմանում են իրենց սակագները:

Ծովային տրանսպորտի ոլորտում թուրքական ներդրողների համար գոյություն ունեն հատուկ հարկային խթաններ: Նավերի միջազգային ռեգիստրում գրանցված նավերի անձնակազմի աշխատավարձը ազատված է եկամտահարկից, և նավերի միջազգային ռեգիստրում գրանցված նավերի շահագործումից ու դուրսգրումից ստացված հասույթները ազատվում են եկամտահարկից ու շահութահարկից¹⁶¹:

Համաձայն Թուրքիայի պետական կառավարման մարմինների տրամադրած տեղեկատվության՝ Թուրքիան ստորագրել է ծովային տրանսպորտի ոլորտում անվտանգությանը վերաբերող բոլոր միջազգային համաձայնագրերը:

բ. Օդային տրանսպորտ

Ընդհանուր առմամբ Թուրքիայի օդային տրանսպորտի ոլորտում գերիշխում է «Թուրքական ավիաուղիներ» (ԹԱ) պետական կազմակերպությունը: ԹԱ-ից բացի՝ գոյություն ունեն նաև 19 օդային փոխադրող կազմակերպություններ: 2006 թ. 810 ինքնաթիռ գրանցված է եղել որպես թուրքական: Թուրքիայում կա 62 օդանավակայան, որոնք գործարկվում են Պետական օդանավակայանների ձեռնարկության գլխավոր տնօրինության կողմից: Օդանավակայաններից 21-ը բաց են միջազգային թռիչքների համար: 2007 թ. դրությամբ որոշ օդանավակայանների հիմնական տերմինալների օգտագործման իրավունքը տրվել է մասնավոր կազմակերպություններին: Այսպես, օրինակ, Ստամբուլի Աթաթուրք օդանավակայանի հիմնական տերմինալների օգտագործման իրավունքը փոխանցվել է TAV Օդանավակայանային հոլդինգին՝ 15.5 տարով 3\$ մլրդ դիմաց¹⁶²:

Մասնավոր օդային փոխադրողների գրանցումը թույլատրված է 1983 թվականից¹⁶³: Տրանսպորտի նախարարությունը պատասխանատու է նոր փոխադրողների հաստատման համար: Օդային փոխադրողները կարող են տրամադրել տեղական շուկայում ծառայություններ, եթե դրանք գրանցված են Թուրքիայում և ունեն 100 և ավելի նստատեղ ունեցող առնվազն 5 գրանցված ինքնաթիռ, սակայն տարածաշրջանային փոխադրումների համար փոխադրողը պետք է որպես սեփականություն կամ լիզինգով ունենա 20-99 նստատեղ ունեցող առնվազն 2 ինքնաթիռ:

Փոխադրողի գործադիր և լիազորված ներկայացուցիչների մեծամասնությունը պետք է լինի Թուրքիայի քաղաքացի: Բաժնետերերի մեծամասնությունը նույնպես պիտի լինի Թուրքիայի քաղաքացի: Այսպիսով՝ արտասահմանյան բաժնեմասը սահմանափակվում է 49%-ով: Այս ոլորտում օտարերկրյա ուղղակի ներդրումների վերաբերյալ սահմանափակումները նվազեցնելու ուղղությամբ ոչ մի աշխատանք չի իրականացվում: Այն փոխադրողները, որոնց բաժնեմասի մեծամասնությունը պատկանում է օտարերկրացիներին, չեն կարող իրականացնել փոխադրումներ ազգային մեկ կետից մյուսը: Փոխադրողների ֆինանսական և տեխնիկական վերահսկողությունն իրականացվում է Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից:

Օրենքով սահմանված չեն հատուկ բացառություններ՝ օդային տրանսպորտի ոլորտում ազգային ծառայություններ մատուցողների համար: Չկան նաև արտոնություններ՝ պետության սեփականություն հանդիսացող օդային փոխադրողների համար, բացառությամբ այն բանի, որ Թուրքիայի քաղաքացիական ծառայողները պաշտոնական գործուղումների ընթացքում պետք է օգտվեն ազգային փոխադրողի ծառայություններից:

¹⁶¹ 1999թ. դեկտեմբերի 16-ի «Թուրքիայի՝ Նավերի միջազգային ռեգիստրի մասին» թիվ 4490 օրենք, հոդված 12:

¹⁶² Օդանավակայանների պետական գերատեսչության գլխավոր վարչության ինտերնետային կայք - www.dhmi.gov.tr

¹⁶³ Սա հնարավոր դարձավ «Թուրքական քաղաքացիական ավիացիայի մասին» թիվ 2920 օրենքի կիրարկման միջոցով:

Չվացուցակում ընդգրկված ծառայությունների համար փոխադրողների կողմից սահմանված գները պետք է պաշտոնապես հաստատվեն Տրանսպորտի նախարարության կողմից: Կառավարությունը չի միջամտում չվացուցակում չընդգրկված ծառայությունների գնագոյացմանը:

Ինքնաթիռներին առնչվող մի շարք ապրանքների (ԱՏԳ ԱԱ-ի 4 նիշ մակարդակով 78 ապրանքախումբ) ներմուծումը կարող է իրականացվել միայն Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության թույլտվությամբ:

գ. Ծանապահային և երկաթուղային տրանսպորտ

Թուրքիայի երկաթուղային համակարգը կազմում է 10,984 կմ երկաթգիծ, որից 8,697-ը հիմնական գծերն են: Երկաթուղային ոլորտում հիմնական խնդիրներից մեկն այն է, որ խիտ բնակեցված տարածքների միջև առկա երկաթգծերը նախատեսված չեն արագընթաց երթևեկության համար: Կարևոր է առանձնացնել նաև հետևյալ խնդիրները.

- երկաթգծային ցանցի մոտ 95%-ը միակողմ է (single track),
- երկաթգծերի 3,080 կմ հատվածն ունի 20 և ավելի տարվա հնություն,
- հիմնական գծերից 5,586 կմ-ի վրա չկան ազդանշանային համակարգեր,
- չկա բավարար անձնակազմ և այլն:

Մի շարք նախագծեր են պատրաստվում՝ ենթակառուցվածքը բարելավելու համար: Դրանցից են Անկարա-Ստամբուլ արագընթաց երթևեկության ծրագիրը (1,955€ մլն), Անկարա-Կոնյա արագընթաց երթևեկության ծրագիրը (253.2€ մլն), արագընթաց գնացքների (253.2€ մլն) և շոգեքարշների (374.5€ մլն) գնման, կայարանների արդիականացման և այլ ծրագրերը:

Թուրքիայի պետական երկաթուղին (ԹՊԵ) Տրանսպորտի նախարարության կազմում գործող և պետության սեփականություն հանդիսացող կազմակերպություն է, որը երկաթուղային ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ոլորտում ունի դե յուրե մոնոպոլիայի կարգավիճակ: Դրան է պատկանում ամբողջ երկաթուղային համակարգը, ինչպես նաև երկաթուղային մուտք ունեցող 6 նավահանգիստ, որից 5-ը գտնվում են մասնավորեցման փուլում: Թուրքիայում չկան մասնավոր երկաթուղային օպերատորներ: ԹՊԵ-ն ինքնուրույն է սահմանում փոխադրավճարների մակարդակը՝ Տրանսպորտի նախարարության բանավոր համաձայնությունից հետո: Երկաթուղային նոր ենթակառուցվածքի և նոր նավահանգիստների կառուցման իրավասությունը պատկանում է Տրանսպորտի նախարարության Նավահանգիստների, երկաթուղիների և օդանավակայանների կառուցման հարցերով գլխավոր վարչությանը:

ԹՊԵ-ի վերակազմավորումը 2007-13 թթ. Չարգացման 9-րդ պլանով նախատեսված բարեփոխումների հիմնական ուղղություններից մեկն է: Բարեփոխումների հիմնական նպատակներն են՝ բարձրացնել երկաթուղային փոխադրումների տեսակարար կշիռը ընդհանուր փոխադրումներում, ընդլայնել ԹՊԵ-ի ինքնուրույնությունը, համապատասխանեցնել երկաթուղային տրանսպորտի ոլորտում Թուրքիայի օրենսդրությունը Եվրոմիության օրենսդրությանը և այլն:

| |
|--|
| Եվրոմիության համապատասխանեցումը ենթադրում է, որ երկաթուղային փոխադրումների ոլորտում պետք է ձևավորել մրցակցային պայմաններ: Ներկայումս դա հնարավոր չէ, քանի որ թե՛ երկաթգծերը, թե՛ ամբողջ շարժակազմը (գնացքները, վագոնները և այլն) պատկանում են ԹՊԵ-ին: Բայց ԵՄ-ի չափանիշների ներդրումից հետո հնարավոր կլինի, որ Թուրքիայում գործեն մի քանի երկաթուղային փոխադրողներ՝ իրենց սեփական շարժակազմով: Սա նշանակում է, որ ԵՄ-ի չափանիշների ներդրումից հետո Հայկական երկաթուղին հնարավորություն կունենա օգտվել Թուրքիայի երկաթուղային ենթակառուցվածքներից: |
|--|

Թուրքիայում կա 64,195 կմ մայրուղային ցանց: Մայրուղային տրանսպորտի մասնաբաժինը ընդհանուր բեռնափոխադրումներում 2006 թ. կազմել է 92%՝ 2002թ. 88.7%-ի դիմաց: Ուղևորափոխադրումների շուրջ 95%-ն իրականացվում է մայրուղիների միջոցով: Թուրքիայում կայուն տրանսպորտային ոլորտ ձևավորելու համար միջոցառումներ են ձեռնարկվում՝ ծովային և երկաթուղային տրանսպորտի բնագավառը խթանելու համար: Թուրքիան ունի բեռնափոխադրումների համար նախատեսված ամենախոշոր երկրորդ ավտոպարկն ամբողջ Եվրոպայում՝ Իտալիայից հետո: 2004 թ. ավտոպարկը ներառում էր բեռնափոխադրման մոտ 32,000 միջոց՝ 1.4 մլն տոննա բեռնատարողության կարողությամբ: Սակայն կան մի շարք խնդիրներ, որոնք թույլ չեն տալիս արդյունավետորեն օգտագործել այդ միջոցները: Այսպես՝ Համաձայն Թուրքիայի պետական կառավարման մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության՝ Թուրքիայի մի շարք գործընկեր պետությունների կողմից կիրառվող տրանզիտային քվոտաները խոչընդոտում են թուրքական ճանապարհային տրանսպորտային միջոցների արդյունավետ օգտագործմանը: Այդ խոչընդոտներից են նաև երրորդ երկրներում տրանսպորտային ենթակառուցվածքի օգտագործման բարձր ծախսերը, վարորդների համար արտասահմանում երկարաժամկետ վիզաներ ստանալու հետ կապված դժվարությունները, սահմանին առկա խնդիրները՝ մասնավորապես մաքսային գործարքների իրականացման համար հնացած տեխնոլոգիան, տրանզիտային տարբեր ռեժիմները և այլն:

Տրանսպորտի նախարարությունը պատասխանատու է ճանապարհային տրանսպորտի կարգավորման համար: Մասնավորապես այն լիազորված է սահմանելու ոլորտի մասնակիցների համար գործունեության կանոնները, ոլորտում ընդգրկված մարդկանց որակավորումները, նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ապահովել ճանապարհային տրանսպորտի և տրանսպորտի այլ տեսակների միջև փոխգործության հնարավորությունը և խթանել գոյություն ունեցող կարողությունների արդյունավետ օգտագործումը: Գնապարհային տրանսպորտի ոլորտում ծառայությունները մատուցվում են մասնավոր կազմակերպությունների կողմից, որոնք պետք է ունենան Տրանսպորտի նախարարության կողմից շնորհված լիցենզիա: Գնապարհային տրանսպորտի ոլորտում կաբոտաժը չի թույլատրվում: Արտասահմանյան երկրում գրանցված տրանսպորտային միջոցները չեն կարող փոխադրումներ իրականացնել Թուրքիայի մեկ կետից մյուսը: Ապրանքների և ուղևորների փոխադրումը Թուրքիայից, դեպի Թուրքիա և Թուրքիայի տարածքով կարող է իրականացվել միայն երկկողմ կամ բազմակողմ (օր.՝ Միջազգային տրանսպորտային ֆորում) համաձայնագրերի շրջանակներում կամ Նախարարների խորհրդի կողմից շնորհված թույլտվությունների հիման վրա:

Թուրքիան ունի մեծ առևտրային ավտոպարկ: Չնայած այն հանգամանքի, որ ճանապարհային տրանսպորտի ոլորտում երկիրն ունի մի շարք խնդիրներ՝ կապված այլ երկրների կողմից կիրառվող տրանզիտային քվոտաների, տեխնիկական հագեցածության նվազ մակարդակի, մաքսային գործարքների իրականացման տեխնոլոգիաների և այլնի հետ, հնարավոր է, որ նույնիսկ այդ պարագայում թուրքական փոխադրողների մատուցած ծառայություններն ավելի էժան լինեն վրացական ծառայություններից: Ի լրումն՝ Թուրքիայում ճանապարհային տրանսպորտի բարելավմանն ուղղված մի շարք ծրագրերի հաջող իրագործումից հետո բարձրանալու է նշված ծառայությունների որակն, ու իջնելու են այդ ծառայությունների գները, ինչն էլ ավելի ձեռնտու կարող է դարձնել հայ արտահանողների և ներմուծողների համար թուրքական փոխադրողների ծառայություններից օգտվելը:

7.1.8. Զբոսաշրջություն

Թուրքիան զբոսաշրջության եկամուտներով 9-րդն է աշխարհում (11-րդը՝ 2002 թ.)՝ ստանալով 18,1\$ միլիարդ 2006 թ. (աղյուսակ 71)՝ 2002 թ. 11,9\$ միլիարդի դիմաց:

Սպասվում է, որ 2013 թ. այս ցուցանիշը կհասնի մինչև 36,4\$ միլիարդի¹⁶⁴: Ջրոսաշրջային գործունեությունը շարունակում է արագորեն ընդարձակվել վերջին տարիներին՝ հատկապես Ստամբուլում և արևմտյան ու հարավային ծովափնյա շրջաններում: Մեծ թվով հյուրանոցներ, հյուրատներ և հանգստի բնակարաններ են կառուցվել: Կան նաև կարևոր պատմական վայրեր, և ներդրվում է էկոզբոսաշրջության գործունեություն: Լիցենզավորված զբոսաշրջային մահճակալների թիվը աճել է 2002 թ. 619 024-ից մինչև 2006 թ. 783 319-ի: 2006 թ. այցելուների 28,3%-ը եկել է Եւրոպայից, 59,1%-ը ՏՀԶԿ երկրներից (հիմնականում Գերմանիայից՝ ամբողջի 19%): Հյուրանոցների զբաղեցվածության աստիճանը եղել է 47,3%:

Աղյուսակ 71, Ջրոսաշրջության որոշ ցուցանիշներ, 2005-2007 թվականներ

| | 2005 | 2006 | 2007 | Տոկոսային փոփոխություն 2005-06 | Տոկոսային փոփոխություն 2006-07 |
|--|--------|--------|--------|--------------------------------|--------------------------------|
| Եկող զբոսաշրջիկներ ('000) | 21,125 | 20,816 | 22,339 | -1.5 | 7.3 |
| Թուրք զբոսաշրջիկներ արտասահմանում ('000) | 8,246 | 8,180 | 9,000 | -0.8 | 10.0 |
| Ջրոսաշրջային եկամուտ (միլիոն \$) | 18,152 | 18,124 | 19,800 | -0.2 | 9.2 |
| Ջրոսաշրջային ծախսեր (միլիոն \$) | 2,872 | 2,863 | 3,200 | -0.3 | 11.8 |

Աղբյուրը՝ թուրքական իշխանությունների կողմից տրամադրված տեղեկատվություն

Թուրքիայի զբոսաշրջությունն ունի զգալի ներուժ, որը օգտագործվում է տարեցտարի աճող տեմպերով: Հատկանշական է, որ օգտագործվում է կարողությունների միայն կեսը: Սա նշանակում է, որ երկիրը հնարավորություն կունենա ավելի մեծ թվով այցելուների դեպքում նվազեցնել մեկ այցելուի հաշվով ծախսերը և, հետևաբար, գները, ինչն իր հերթին օտարերկրյա այցելուի համար ավելի գրավիչ կդարձնի զբոսաշրջությունը Թուրքիայում և կներգրավի էլ ավելի մեծ թվով այցելուների: Այս ամենը պետք է խիստ մտահոգիչ լինի այն հարևան երկրների համար, որոնք, ունենալով զբոսաշրջության հատված, այդ բնագավառում անսահմանափակ առևտուր սկսեն Թուրքիայի հետ:

Թուրքիայի զբոսաշրջության քաղաքականությունն ունի երեք հիմնական նպատակ. (1) արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ ենթահատվածի ստեղծում՝ այն ավելի շահութաբեր դարձնելու համար, (2) ընդհանուր հարմարությունների առումով օտարերկրյա և տեղական զբոսաշրջիկների պահանջների բավարարում և (3) բնական ու մշակութային միջոցների շարունակականության ապահովում: Ճամփորդական գործակալությունների թուրքական միությունը, որ գործում է Մշակույթի և զբոսաշրջության նախարարության իրավասության ներքո, պատասխանատու է ճամփորդական գործակալությունների վերահսկողության համար: Նախարարության կազմում կա մի ստորաբաժանում, որը պատասխանատու է հյուրանոցների, հանգստի ավանների, առազաստային նավակների ձեռնարկությունների, ճամփորդական գործակալությունների, մասնագիտացված կազմակերպման և մասնագիտացված զբոսաշրջային ուղեկցողների տեսչական ստուգման համար: Ըստ 1982 թ. Ջրոսաշրջության խթանման թիվ 2634 լրամշակված օրենքի՝ ընտրվում են զբոսաշրջային շրջանները, տարածքներն ու կենտրոնները և քաջալերվում են զբոսաշրջային հարմարություններում ներդրումները: Ընդհանուր առմամբ պետությունը պատասխանատու է զբոսաշրջային վայրերում ներդրումների համար:

¹⁶⁴ Պետական պլանավորման կազմակերպություն (2006), 2007-2013 թթ. իններորդ զարգացման պլան, Անկարա:

Կառավարությունը դեռևս գործուն է զբոսաշրջության ենթահատվածում: Այն, ըստ Ջբոսաշրջության խթանման օրենքի, խթաններ է շնորհում զբոսաշրջային ներդրումների համար, զբոսաշրջության համար տրամադրում է ենթակառուցվածքային ու հասարակական ծառայություններ, սահմանում է զբոսաշրջային բարձր ներուժ ունեցող գոտիները, որոշումներով հրապարակում է ընտրված զբոսաշրջային կենտրոնները կամ տարածքները, մշակում և հաստատում է հողօգտագործման պլանները, անց է կացնում շրջակա միջավայրի վերահսկողություն, գովազդում է երկիրը արտասահմանում, կատարում է հետազոտություններ, հավաքում է վիճակագրություն և կազմակերպում է մասնագիտական վերապատրաստում: Տեղական կառավարման մարմինները պատասխանատու են նմանատիպ հարցերի համար՝ տեղական մակարդակով: Ջբոսաշրջության ոլորտում ներդրողները նաև ունեն ներդրումների խթանման ծրագրով շնորհվող խթաններից օգտվելու հնարավորություն:

Ջբոսաշրջության մեջ օտարերկրյա ընկերությունների դերը աճել է՝ սկսած 1980-ական թթ. կեսերից: Օտարերկրյա ներդրումների վրա ոչ մի սահմանափակում չկա: Օտարերկրիա և տեղական ընկերություններից յուրաքանչյուրը սահմանում է իր առավելագույն գինը: Սակայն գները պետք է ամեն տարի հաստատվեն Մշակույթի և զբոսաշրջության նախարարության կողմից: Ձեռնարկություններից չի պահանջվում սահմանել միևնույն գները, բայց նրանք չեն կարող գերազանցել հաստատված առավելագույն գները:

Մշակույթի և զբոսաշրջության նախարարությունը և տեղական կառավարման մարմինները պատասխանատու են հյուրանոցների և ռեստորանների դասակարգման ու հավաստագրման համար: Ըստ իշխանությունների՝ սպասվում է, որ նախարարության ու քաղաքապետարանների կողմից հավաստագրված մահճակալների թիվը կհասնի 550 000-ի և 420 000-ի՝ համապատասխանաբար:

Թուրքիայի հետ զբոսաշրջության բնագավառում անսահմանափակ առևտուրը հարևան երկրների համար կարող է խիստ մտահոգիչ լինել երկու պատճառով. (1) Թուրքիայում զբոսաշրջության գնային ու որակական հարաբերական առավելությունների դեպքում կարող է առաջանալ սեփական զբոսաշրջիկների աննախադեպ արտահոսք, որի հետևանքով կարող են խիստ վնասվել տեղական զբոսաշրջության հատվածն ու դրան սպասարկող բազմաթիվ ծառայությունների ճյուղեր, և (2) զբոսաշրջիկների այդ արտահոսքը, զուգակցվելով արտարժույթի զգալի արտահոսքի հետ, կարող է լրացուցիչ ճնշում ստեղծել հարևան երկրների վճարումների հաշվեկշռի վրա:

7.2. Հայաստանի ծառայություններ

7.2.1. Ֆինանսական ծառայություններ

Ֆինանսական ոլորտին վերաբերող ՀՀ հիմնական օրենսդրությունը ներառում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին», «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին», «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» և «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքները:

Հայաստանի կենտրոնական բանկը իրականացնում է Հայաստանի ֆինանսական հատվածի կարգավորումն ու վերահսկողությունը: Միասնական վերահսկողական մարմին

ստեղծման հիմնական դրդապատճառը ֆինանսական շուկայում ընդհանուր ռիսկերի վերահսկումն է: Աշխարհում ֆինանսական համակարգի զարգացումներին բնորոշ են բանկային, ապահովագրական և արժեթղթերով գործունեությունների մերձեցման միտումները, ըստ որի վերահսկողությունից պահանջվում է համալիր կերպով դիտարկել ֆինանսական շուկայի զարգացման միտումները, գնահատել ֆինանսական շուկայի տարբեր հատվածներին բնորոշ ռիսկերը և դրանց ազդեցությունը ընդհանուր ֆինանսական համակարգի զարգացումների վրա:

Հայաստանի ֆինանսական շուկայի խոշորագույն մասնակիցն է բանկային համակարգը, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 91%-ը: Բանկային համակարգը բաղկացած է 22 առևտրային բանկերից (380 մասնաճյուղերով): Անցյալ տարվա վերջի դրությամբ բանկերի ընդհանուր կապիտալը կազմել է 235,7 մլրդ. դրամ, ընդհանուր ակտիվները՝ 1 տրլն. 24,2 մլրդ. դրամ, իսկ ընդհանուր պարտավորությունները՝ 788,5 մլրդ. դրամ:

Հայաստանի ֆինանսական շուկայի այլ մասնակիցներից են.

- 25 վարկային կազմակերպություններ՝ 48 մասնաճյուղերով,
- 11 ապահովագրական ընկերություններ և 5 ապահովագրական միջնորդներ (բրոքերներ),
- արժեթղթերի շուկայի մասնակիցները՝ 10 ներդրումային ընկերություններ, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան և ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ԲԲԸ-ն,
- 67 գրավատներ,
- արտարժույթի առք ու վաճառք իրականացնող 289 փոխանակման կետեր (ներառյալ՝ մասնաճյուղերը),
- արժույթային դիլերի գործունեությամբ զբաղվող 2 իրավաբանական անձ,
- դրամական փոխանցումներ իրականացնող 11 ընկերություն,
- վճարային գործիքներ և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ ու քլիրինգ իրականացնող 7 կազմակերպություն:

7.2.2. Հեռահաղորդակցություն

Հեռահաղորդակցության բնագավառում ազգային կարգավորող մարմիններն են ՀՀ-ի Տրանսպորտի և կապի նախարարությունը՝ ոլորտի զարգացման քաղաքականության մշակման մասով, և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը՝ լիցենզիաների տրամադրման և դրանց պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման մասով:

Հեռահաղորդակցության հատվածի հիմնական ոլորտներն են համակարգչային ծառայություններն ու հեռախոսակապը: Համակարգչային ծառայությունների ոլորտը մեծամասամբ մասնավորեցված է: Չնայած դրան՝ ոլորտում գործող կազմակերպությունների արդյունավետությունը բավականին ցածր է: Ներկայումս Հայաստանում գոյություն ունեն տվյալների հաղորդման և ինտերնետային ծառայությունների հասանելիության 73 օպերատորներ¹⁶⁵:

ԱՀԿ-ի շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորություններով նախատեսված էր, որ հեռահաղորդակցության բնագավառում Արմենթելի մենաշնորհը կվերացվի 2013 թ.: Սակայն ներկայումս Արմենթելն արդեն իսկ չունի մենաշնորհի թե՛ բջջային և թե՛ քաղաքային հեռախոսակապերի ոլորտում:

¹⁶⁵ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ինտերնետային կայք – www.psrc.am

7.2.3. Տրանսպորտ

ա. Օդային տրանսպորտ

Օդային տրանսպորտի ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտն է «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքը, որն ուղղված է օդանավերի թռիչքների և ավիացիոն անվտանգության ապահովմանը, օդային փոխադրումներով հասարակական պահանջների բավարարմանը, ավիացիոն աշխատանքների, ավիացիայի բնագավառում էկոլոգիական անվտանգության, պետության պաշտպանության և անվտանգության ապահովմանը, պետության շահերի պահպանմանը: Օրենքի իրականացման համար պատասխանատու է ՀՀ Կառավարությանն առընթեր Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը:

ՀՀ-ում շահագործողի վկայական են ստացել 12 ավիաընկերություններ, որոնք իրականացնում են ինչպես կանոնավոր, այնպես էլ ոչ կանոնավոր օդային փոխադրումներ:

Կանոնավոր չվերթներ իրականացնող ավիաընկերություններից ազգային փոխադրող է համարվում Արմավիա ավիաընկերությունը: 2005 թ.-ից Արմավիան համարվում է Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի՝ ԻՍՏԱ-ի իսկական անդամ: 2006 թ. Արմավիայի ուղևորափոխադրումների ծավալը կազմել է մոտ 465 հազար ուղևոր, իսկ 2007թ. 570 հազարից ավելի:

բ. Ճանապարհային և երկաթուղային տրանսպորտ

Հայաստանն ունի մայրուղային ճանապարհների մեծ ենթակառուցվածք. ազգային և միջազգային մայրուղային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 3361 կմ: Դանիան, որը նման է տարածքով և բնակչությամբ, ունի միայն 1618 կմ մայրուղային ճանապարհներ: Սակայն Հայաստանն ունի միայն 4342 կմ տեղական ճանապարհներ՝ Դանիայի 80900 կմ-ի դիմաց: Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով այս ոլորտում հիմնական շեշտը դրվում է արդեն իսկ գոյություն ունեցող միջազգային ճանապարհների ցանցի բարելավման վրա՝ հատկապես կարևորելով կամուրջների վերանորոգումը: Կա նաև ծրագիր՝ ուղղված ճանապարհային նշանների բարելավմանը: Ի լրումն՝ կան ազգային և տեղական ճանապարհների բարելավման ծրագրեր, որոնցից մի մասն իրականացվում է միջազգային (հիմնականում՝ ԱՄՆ-ի) ֆինանսավորմամբ:

ՀՀ-ում կա 842 կմ երկարությամբ երկաթգիծ: Այրում-Վանաձոր երկաթգիծը ՀՀ-ն ու Վրաստանը կապող հիմնական տրանսպորտային օղակն է: Երկաթուղային տրանսպորտը հիմնականում ունի նույն խնդիրները, ինչ ճանապարհային տրանսպորտը: Բավականին հնացած է նաև շարժակազմը, ինչը հաճախ վթարների պատճառ է դառնում: 2008 թ. հայկական երկաթուղին տրվեց կոնցեսիոն կառավարման «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ին, որը պարտավորվեց զգալի ներդրումներ կատարել ենթակառուցվածքում:

Ճանապարհային և երկաթուղային ոլորտը կարգավորող հիմնական ՀՀ օրենսդրությունը ներառում է «Տրանսպորտի մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին» և «Տրանսպորտային տեսչության մասին» ՀՀ օրենքները:

Հայաստանում տրանսպորտի ոլորտի համար պատասխանատու պետական մարմինը ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարությունն է: ՀՀ Տրանսպորտի տեսչությունը գործում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ենթակայության ներքո՝ որպես առանձնացված ստորաբաժանում: Երկաթուղային ոլորտի կարգավորմանը մասնակցում է նաև ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը՝ ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման մեթոդաբանության, օգտագործման վճարի հաշվարկի իրականացման և օգտագործման վճարի հաստատման մասով:

Թուրքիայի երկաթուղային ոլորտում տեղ գտած զարգացումների՝ մասնավորապես երկաթուղային ոլորտում ԵՄ-ի օրենսդրության հետ թուրքական օրենսդրության համապատասխանեցման շնորհիվ հայկական երկաթուղին հնարավորություն կունենա օգտվել թուրքական ենթակառուցվածքից՝ փոխադրումներ իրականացնելու համար: Սակայն որպեսզի դա իրականացվի արդյունավետորեն, պահանջվում են ներդրումներ՝ հատկապես շարժակազմը բարելավելու համար:

7.2.4. Զբոսաշրջություն

Հայաստանն ունի զբոսաշրջության զգալի ներուժ, սակայն միջազգային առաջատար չափանիշներին համապատասխանող ենթակառուցվածքների պակասը սահմանափակում է ոլորտի համապատասխան աճը: Այնուամենայնիվ վերջին տասնամյակում ընդարձակ գովազդի շնորհիվ ոլորտը գրանցել է անընդհատ աճ, և 2007 թ. զբոսաշրջիկների թիվը հասել է 510 000-ի՝ նախորդ տարվա համեմատությամբ 34%-ով ավելի: Մի շարք մասնավոր հաստատություններ են գործում՝ զբոսաշրջության ոլորտում աշխատող մարդկանց վերապատրաստելու համար: Մեծածավալ օտարերկրյա դրամաշնորհներ են ուղղվում Հայաստանի մշակութային ու պատմական հուշարձանների վերականգնմանը: Մասնավոր հատվածի հյուրանոցային, սննդի ու ներքին տրանսպորտի ծառայություններն աստիճանաբար բարելավվում են՝ թեև հիմնականում Երևանում: Առավելագույն թվով զբոսաշրջիկներ գրանցող ամիսների ընթացքում դեռևս կա մահճակալների պակաս: Միջազգային օդանավակայանի հիմնավոր վերանորոգումը, ներառյալ՝ նոր միջազգային տերմինալի կառուցումը բարելավել են օտարերկրյա այցելուների համար ծառայությունները:

Ըստ ԱՀԿ-ին անդամակցության շրջանակներում ձեռք բերած համաձայնությունների՝ Հայաստանը պահպանել է հյուրանոցային, ռեստորանային ու զբոսաշրջային ուղեկցողների ծառայությունների ճյուղերում միջսահմանային տրամադրման և ֆիզիկական անձանց ներկայության առնչությամբ օտարերկրյա անձանց ու ընկերությունների նկատմամբ շուկայի մատչելիության և ազգային մոտեցման որոշ ոչ մեծ սահմանափակումների իրավունք: Սակայն երկրում կա 22 հյուրանոց, որոնք 100%-ով օտարերկրյա սեփականություն են:

Կառավարությունն առանձնակի ուշադրություն է դարձնում ճանապարհային շինարարությանն ու պետական/մասնավոր գործընկերության զարգացմանը: Հատուկ ռզմավարությամբ նախատեսվում է նաև ձմեռային զբոսաշրջության զարգացումը: 2008 թ. կառավարության ընդունած Զբոսաշրջության մասին հայեցակարգում ընդգծվում է զբոսաշրջության դերը շրջանների զարգացման գործընթացում և տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների կիրառման նշանակությունը զբոսաշրջության ոլորտի կառավարման համար:

Զբոսաշրջությունը պետք է զգալի կշիռ ունենա Հայաստանի արտահանումների ծավալում: Անհրաժեշտ է խթանել ենթակառուցվածքների հետագա զարգացումը և, ըստ շրջանների, հավասարակշռված մոտեցում ցուցաբերել: Մահճակալների պակասի լրացումը կարողությունների ավելացմամբ թերևս կարող է գործարար տեսանկյունից չարդարացվել, քանի որ այդ պակասն առկա է միայն որոշ ամիսներին: Այլընտրանք կարող է հանդիսանալ զբոսաշրջիկների հավասարաչափ բաշխումը տարվա ընթացքում՝ գովազդելով Հայաստանը և ուժեղացնելով առաջարկը ցածր պահանջարկ ունեցող ամիսների համար:

Ոլորտի մրցունակությունը բարձրացնելու համար պետք է մեծացնել պետական աջակցության չափն ու որակը, ինչը կարող է արտահայտվել մասնավորապես ենթակառուցվածքային ներդրումների խրախուսման, սպասարկման ոլորտներում ներգրավված ՓՄՁ-ներին տրվող նպատակային աջակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման խթանման ձևով:

7.3. Ծառայությունների համեմատություն

7.3.1. Ֆինանսական ծառայություններ

Երկու երկրների բանկային ոլորտի համեմատության համար դիտարկենք ոլորտի մի քանի ցուցանիշներ: Ըստ աղյուսակ 72-ի՝ հայկական բանկերի միջոցների ֆինանսավորումը հարևան երկրների ու համապատասխան եկամտային ու աշխարհագրական խմբերի համեմատությամբ հարաբերականորեն ավելի շատ է կատարվում սեփական կապիտալի հաշվին, ինչը վկայում է պարտքով ֆինանսավորման տարբերակների և/կամ ավանդների ներգրավման ավելի ցածր մակարդակի մասին: Միևնույն ժամանակ ավելի շատ են լիկվիդային պահուստները, ինչը կարող է վկայել հարաբերականորեն ավելի ցածր արդյունավետության մասին (աղյուսակ 73): Մյուս կողմից՝ չգործող վարկերի ցածր մակարդակը խոսում է ռիսկերի արդյունավետ կառավարման մասին (աղյուսակ 74):

Աղյուսակ 72, Բանկային կապիտալի հարաբերությունը միջոցների վրա (%)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 18.40 | 18.10 | 17.80 | 21.50 | 22.90 | 23.90 |
| Թուրքիա | 11.50 | 13.70 | 14.40 | 12.90 | 11.30 | .. |
| Վրաստան | 28.30 | 26.20 | 21.90 | 18.80 | .. | .. |
| Ադրբեջան | .. | 11.10 | 11.90 | 14.20 | .. | .. |
| Իրան | .. | .. | .. | .. | .. | .. |
| Ստորին միջին եկամուտ | 9.00 | 9.30 | 9.80 | 9.60 | .. | .. |
| Վերին միջին եկամուտ | 9.70 | 9.90 | 9.15 | 9.00 | 9.85 | .. |
| Բարձր եկամուտ | 6.80 | 6.90 | 6.60 | 5.80 | 6.30 | .. |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 13.85 | 12.70 | 12.50 | 12.20 | 10.40 | .. |
| Աշխարհ | 8.90 | 8.80 | 8.70 | 8.60 | 8.90 | .. |

Աղյուսակ 73, Բանկային լիկվիդային ռեզերվների հարաբերությունը միջոցների վրա (%)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 11.49 | 11.37 | 11.88 | 19.80 | 21.48 | 17.82 |
| Թուրքիա | 11.79 | 10.95 | 9.25 | 10.98 | 9.42 | 9.29 |
| Վրաստան | 14.83 | 14.24 | 16.91 | 13.31 | 14.23 | 11.42 |
| Ադրբեջան | 11.61 | 12.45 | 34.58 | 22.50 | 28.95 | 14.74 |
| Իրան | 26.77 | 21.61 | 13.18 | 12.73 | 13.86 | .. |
| Ստորին միջին եկամուտ | 11.99 | 12.39 | 13.19 | 13.19 | 13.86 | 12.35 |
| Վերին միջին եկամուտ | 9.12 | 10.19 | 10.41 | 9.83 | 11.60 | 9.29 |
| Բարձր եկամուտ | 2.85 | 2.53 | 2.38 | 2.00 | 2.37 | 2.36 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 11.37 | 11.37 | 11.70 | 13.30 | 12.06 | 11.31 |
| Աշխարհ | 9.46 | 9.60 | 10.46 | 10.10 | 10.40 | 9.83 |

Աղյուսակ 74, Բանկային չգործող վարկերի հարաբերությունը ամբողջ համախառն վարկերի վրա (%)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|-------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 9.9 | 5.4 | 2.1 | 1.9 | 2.5 | 2.8 |
| Թուրքիա | 12.7 | 8.9 | 5.0 | 3.9 | 3.2 | .. |
| Վրաստան | 7.9 | 7.5 | 6.2 | 3.8 | 2.5 | 2.3 |
| Ադրբեջան | 21.5 | 15.1 | 9.5 | 7.2 | .. | .. |
| Իրան | .. | .. | .. | .. | .. | .. |

| | | | | | | |
|---------------------------|------|------|------|------|------|-----|
| Ստորին միջին եկամուտ | 15.3 | 12.3 | 8.25 | 6.6 | 4.15 | .. |
| Վերին միջին եկամուտ | 6.8 | 5.0 | 3.5 | 3.4 | 2.6 | 2.2 |
| Բարձր եկամուտ | 2.9 | 2.6 | 2.3 | 1.9 | 1.55 | .. |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 10.0 | 8.3 | 6.1 | 4.3 | 3.2 | .. |
| Աշխարհ | 8.0 | 6.6 | 5.1 | 4.15 | 3.0 | .. |

Պետք է նշվի նաև Հայաստանում վարկավորման և ավանդների տոկոսադրույքների բավական մեծ տարբերությունը, ինչը մի կողմից կարող է բացատրվել բանկերի միջև մրցակցության պակասով, իսկ մյուս կողմից՝ տնտեսության կողմից վարկային ռեսուրսների նկատմամբ ցածր պահանջարկով (աղյուսակներ 75, 76 և 77): Մասնավորապես շատ մեծ է վարկավորման և ոչ ռիսկային պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների տարբերությունը (աղյուսակ 78): Թուրքիայում ավանդային բարձր տոկոսադրույքը բացատրվում է ոչ այնքան ռիսկայնության բարձր մակարդակով, որքան ազգային խնայողությունների խիստ ցածր մակարդակով:

Աղյուսակ 75, Ավանդների տոկոսադրույք (%)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. |
|-------------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 9.60 | 6.87 | 4.90 | 5.81 | 5.84 |
| Թուրքիա | 50.49 | 37.68 | 24.26 | 20.40 | 21.65 |
| Վրաստան | 9.82 | 9.28 | 7.24 | 7.55 | 11.44 |
| Ադրբեջան | 8.66 | 9.54 | 9.18 | 8.52 | 10.58 |
| Իրան | .. | 11.68 | 11.70 | 11.78 | .. |

Աղյուսակ 76, Վարկավորման տոկոսադրույք (%)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|-------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 21.14 | 20.83 | 18.63 | 17.98 | 16.53 | 17.52 |
| Թուրքիա | .. | .. | .. | .. | .. | .. |
| Վրաստան | 31.83 | 32.27 | 31.23 | 21.63 | 18.75 | 20.41 |
| Ադրբեջան | 17.37 | 15.46 | 15.72 | 17.03 | 17.86 | 19.13 |
| Իրան | .. | .. | 16.65 | 16.00 | 14.00 | .. |

Աղյուսակ 77, Վարկավորման և ավանդների տոկոսադրույքների տարբերություն

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 11.54 | 13.95 | 13.74 | 12.17 | 10.69 |
| Թուրքիա | .. | .. | .. | .. | .. |
| Վրաստան | 22.02 | 22.99 | 23.98 | 14.08 | 7.31 |
| Ադրբեջան | 8.71 | 5.91 | 6.54 | 8.51 | 7.28 |
| Իրան | .. | .. | 4.95 | 4.22 | .. |
| Ստորին միջին եկամուտ | 8.65 | 7.47 | 7.05 | 7.57 | 7.28 |
| Վերին միջին եկամուտ | 7.43 | 7.41 | 6.39 | 6.48 | 6.27 |
| Բարձր եկամուտ | 4.50 | 4.44 | 4.53 | .. | .. |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 9.06 | 6.87 | 6.55 | 7.36 | 7.30 |
| Աշխարհ | 7.18 | 6.97 | 6.47 | 6.52 | 6.62 |

Աղյուսակ 78, Վարկավորման ռիսկի հատուցում (%)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|-------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 6.39 | 8.92 | 13.36 | 13.93 | 11.66 | 11.43 |
| Թուրքիա | .. | .. | .. | .. | .. | .. |
| Վրաստան | -11.59 | -12.00 | 12.07 | .. | .. | .. |

| | | | | | | |
|---------------------------|------|------|-------|------|------|------|
| Աղբբեջան | 3.25 | 7.46 | 11.10 | 9.51 | 7.83 | 8.49 |
| Իրան | .. | .. | .. | .. | .. | .. |
| Բարձր եկամուտ | 4.56 | 5.55 | 4.02 | 4.57 | 4.12 | 4.52 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 4.69 | 5.46 | .. | .. | .. | .. |

Քննարկված ցուցանիշները վկայում են այն մասին, որ ՀՀ բանկային համակարգում կան խնդիրներ՝ կապված դրանց արդյունավետության հետ: Հնարավոր է, որ հայ-թուրքական սահմանի վերաբացման պարագայում Հայաստանի բանկային ծառայությունների շուկայում հայտնվեն թուրքական արդյունավետ մասնակիցներ: Սա կարող է դրականորեն անդրադառնալ բանկային ոլորտում մրցակցության մակարդակի բարձրացման վրա, ինչն իր հերթին կհանգեցնի վարկային ռեսուրսների մատչելիության բարելավմանը: Այնուամենայնիվ դա կարող է տեղի ունենալ ֆինանսական ճգնաժամի հետևանքների մեղմացումից հետո:

Թեպետ Հայաստանի շուկայում թուրքական մրցակիցների ներկայությունը ինքնին կարող է նպաստել մրցակցության բարելավմանը, սակայն պետք է նաև միջոցառումներ ձեռնարկել՝ տեղական բանկերի արդյունավետությունը բարելավելու ուղղությամբ, որպեսզի վերջիններս կարողանան մրցունակ գտնվել թուրքական բանկերի նկատմամբ:

Վարկերի ընդհանուր մատչելիության առումով պետք է նշել, որ Հայաստանում համապատասխան տեղեկատվության մատչելիությունը բավական բարձր է (աղյուսակ 79): Սակայն վերջին տարիներին կայուն միջինի վրա է գտնվում վարկառուների և վարկատուների իրավունքների մակարդակը (աղյուսակ 80): Սա թերևս հարաբերականորեն ցածր արդյունավետության և ռիսկերի հետ միասին բացատրում է բանկերի կողմից տրված ներքին վարկերի խսիտ ցածր մակարդակը (աղյուսակներ 81 և 82): Իսկ բանկերի միջոցով ներդրումներ ֆինանսավորող ընկերությունների հարաբերական աճը կարող է վկայել տրվող բազմաթիվ փոքր վարկերի մասին (աղյուսակ 83):

Աղյուսակ 79, Վարկային տեղեկատվության մատչելիության ինդեքս (0=քիչ տեղեկությունից մինչև 6=շատ)

| Երկիր/խումբ | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|
| Հայաստան | 3.00 | 5.00 |
| Թուրքիա | 5.00 | 5.00 |
| Վրաստան | 3.00 | 4.00 |
| Աղբբեջան | 4.00 | 4.00 |
| Իրան | 3.00 | 3.00 |
| Ստորին միջին եկամուտ | 2.49 | 2.68 |
| Վերին միջին եկամուտ | 2.95 | 3.14 |
| Բարձր եկամուտ | 4.40 | 4.29 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 2.65 | 3.17 |
| Աշխարհ | 2.62 | 2.69 |

Աղյուսակ 80, Վարկառուների և վարկատուների իրավունքների ինդեքս (0=քիչ վարկային մատչելիությունից մինչև 10=շատ)

| Երկիր/խումբ | 2006թ. | 2007թ. |
|-------------|--------|--------|
| Հայաստան | 5.00 | 5.00 |
| Թուրքիա | 3.00 | 3.00 |

| Երկիր/խումբ | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|
| Վրաստան | 6.00 | 5.00 |
| Ադրբեջան | 7.00 | 7.00 |
| Իրան | 5.00 | 5.00 |
| Ստորին միջին եկամուտ | 4.53 | 4.06 |
| Վերին միջին եկամուտ | 4.95 | 4.89 |
| Բարձր եկամուտ | 6.03 | 5.79 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 5.35 | 5.48 |
| Աշխարհ | 4.81 | 4.56 |

Աղյուսակ 81, Բանկային հատվածի կողմից տրված ներքին վարկեր (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 7.38 | 5.56 | 6.68 | 8.79 | 8.06 | 12.17 |
| Թուրքիա | 48.81 | 44.02 | 42.57 | 43.88 | 45.77 | 48.50 |
| Վրաստան | 20.47 | 20.20 | 19.07 | 21.66 | 23.88 | 31.56 |
| Ադրբեջան | 8.75 | 9.36 | 10.93 | 11.17 | 13.08 | 18.15 |
| Իրան | 44.22 | 47.38 | 46.25 | 45.67 | 48.12 | .. |
| Ստորին միջին եկամուտ | 98.38 | 101.31 | 95.64 | 92.09 | 92.66 | 102.41 |
| Վերին միջին եկամուտ | 56.57 | 56.94 | 54.58 | 53.51 | 56.74 | 54.97 |
| Բարձր եկամուտ | 180.31 | 184.74 | 185.92 | 189.98 | 193.48 | 195.61 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 32.60 | 33.08 | 32.32 | 31.67 | 33.77 | 38.48 |
| Աշխարհ | 160.61 | 164.42 | 163.28 | 163.59 | 164.17 | 166.65 |

Աղյուսակ 82, Մասնավոր հատվածին տրված ներքին վարկեր (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 6.78 | 5.68 | 6.99 | 8.05 | 8.83 | 13.62 |
| Թուրքիա | 15.24 | 15.15 | 17.83 | 21.58 | 25.94 | 29.04 |
| Վրաստան | 8.10 | 8.71 | 9.80 | 14.77 | 19.50 | 28.33 |
| Ադրբեջան | 5.58 | 7.01 | 9.32 | 9.53 | 11.72 | 15.27 |
| Իրան | 31.87 | 35.80 | 38.32 | 40.45 | 46.20 | .. |
| Ստորին միջին եկամուտ | 75.06 | 78.32 | 76.43 | 74.22 | 74.91 | 78.63 |
| Վերին միջին եկամուտ | 32.70 | 33.71 | 34.46 | 35.97 | 40.96 | 42.64 |
| Բարձր եկամուտ | 144.04 | 148.17 | 149.97 | 155.43 | 161.26 | 163.86 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 19.32 | 21.31 | 23.73 | 26.64 | 32.11 | 39.01 |
| Աշխարհ | 126.88 | 130.55 | 130.76 | 132.90 | 135.85 | 137.14 |

Աղյուսակ 83, Բանկերի միջոցով ներդրումներ ֆինանսավորող ընկերությունները (ընկերությունների %)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2005թ. |
|-------------|--------|--------|
| Հայաստան | 4.68 | 35.04 |
| Թուրքիա | 6.03 | 7.54 |
| Վրաստան | 9.20 | 12.50 |
| Ադրբեջան | 2.94 | 0.57 |

Նկարագրված իրադրությունը վկայում է այն մասին, որ Հայաստանի ֆինանսական գրեթե ամբողջ հատվածը ներկայացնող բանկերն ունեն շատ փոքր շուկա և արդյունավետության բարձրացման լուրջ հիմնախնդիրներ: Իհարկե, դրանք միայն բանկային համակարգում առկա խնդիրների պատճառ չեն, փոխկապակցված են երկրում տնտեսական ընդհանուր գործընթացների հետ և պայմանավորված են նաև դրանցով: Սակայն դրանք մասամբ կարող են լուծվել շուկայում հզոր և արդյունավետ կերպով գործող մրցակիցների առկայության դեպքում և պետության կողմից դրանց վերացմանն ուղղված պետական քաղաքականության պարագայում: Արդյունավետ մրցակցություն ապահովելու համար անհրաժեշտ է նաև ունենալ ոլորտում մրցակցության համար պատասխանատու արդյունավետ կառույցներ և դրանց միջև համագործակցության մեխանիզմներ:

7.3.2. Կապիտալի շուկա

Երկու երկրների արժեթղթերի ոլորտի համեմատության համար դիտարկենք ոլորտը նկարագրող մի քանի ցուցանիշներ: Հայկական բորսայում գրանցված ընկերությունների շուկայական կապիտալիզացիայի մակարդակը վկայում է գործնականում գրեթե զրոյություն չունեցող շուկայի մասին: Սակայն հետաքրքրական է նշել Հայաստանի հետ համեմատելի երկրների և երկրների խմբերի այս առումով չափազանց բարձր ցուցանիշների մասին (աղյուսակ 84): Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ Հայաստանում վաճառվում է բորսայում գրանցված ընկերությունների բաժնետոմսերի չնչին մասը, մինչդեռ, օրինակ, ցածր միջին եկամտային խմբի երկրներն այս առումով նույնպես ունեն բարձր ցուցանիշներ (աղյուսակներ 85 և 86):

Աղյուսակ 84, Բորսայում գրանցված ընկերությունների շուկայական կապիտալիզացիան (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 0.43 | 0.97 | 0.51 | 0.87 | 0.94 | 1.14 |
| Թուրքիա | 14.59 | 22.45 | 25.01 | 33.38 | 30.65 | 43.61 |
| Վրաստան | 3.08 | 5.08 | 4.02 | 5.53 | 8.63 | 13.65 |
| Ադրբեջան | .. | .. | .. | .. | .. | .. |
| Իրան | 12.32 | 25.44 | 28.79 | 20.17 | 17.02 | 16.82 |
| Ստորին միջին եկամուտ | 27.60 | 39.27 | 37.90 | 42.93 | 76.97 | 144.53 |
| Վերին միջին եկամուտ | 34.66 | 43.67 | 50.31 | 57.95 | 73.44 | 90.53 |
| Բարձր եկամուտ | 81.80 | 98.44 | 104.71 | 110.82 | 123.46 | 123.86 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 20.64 | 29.85 | 31.21 | 45.62 | 65.59 | 77.32 |
| Աշխարհ | 72.57 | 87.85 | 92.86 | 97.85 | 111.81 | 121.67 |

Աղյուսակ 85, Վաճառվող բաժնետոմսերի ամբողջական արժեքը¹⁶⁶ (ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|----------------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 0.03 | 0.03 | 0.05 | 0.02 | 0.08 | 0.05 |
| Թուրքիա | 30.36 | 32.70 | 37.51 | 41.58 | 42.95 | 46.02 |
| Վրաստան | 0.11 | 0.02 | 0.49 | 0.59 | 1.23 | 0.44 |
| Ադրբեջան | .. | .. | .. | .. | .. | .. |
| Իրան | 1.64 | 3.91 | 8.15 | 4.26 | 2.19 | 3.04 |
| Ստորին միջին եկամուտ | 20.75 | 27.02 | 33.95 | 27.91 | 48.94 | 146.29 |

¹⁶⁶ Շուկայական կապիտալիզացիայի գործակցի համեմատությամբ ցույց է տալիս, թե արդյոք շուկայի չափը համապատասխանում է վաճառքների:

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Վերին միջին եկամուտ | 11.55 | 14.78 | 18.72 | 20.20 | 30.06 | 41.50 |
| Բարձր եկամուտ | 138.50 | 95.34 | 112.61 | 128.95 | 172.42 | 218.54 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 11.53 | 15.68 | 18.99 | 20.31 | 34.27 | 38.69 |
| Աշխարհ | 116.62 | 81.90 | 96.13 | 107.03 | 141.74 | 187.44 |

Աղյուսակ 86, Վաճառվող բաժնետոմսերի շրջանառության գործակից¹⁶⁷ (%)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | .. | 3.86 | .. | 3.66 | 9.40 | 6.10 |
| Թուրքիա | 163.43 | 192.39 | 182.32 | 154.91 | 140.53 | 134.70 |
| Վրաստան | .. | 0.52 | .. | 13.56 | 18.60 | 4.40 |
| Ադրբեջան | .. | .. | .. | .. | .. | .. |
| Իրան | 11.30 | 21.69 | .. | 19.10 | 12.75 | 19.70 |
| Ստորին միջին եկամուտ | 91.40 | 76.58 | 92.10 | 69.42 | 78.54 | 119.60 |
| Վերին միջին եկամուտ | 41.13 | 44.77 | 50.26 | 44.38 | 48.45 | 52.23 |
| Բարձր եկամուտ | 145.25 | 109.69 | 113.26 | 121.59 | 149.41 | 180.79 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 59.92 | .. | 77.17 | 63.08 | 67.52 | 64.52 |
| Աշխարհ | 131.62 | 102.52 | 105.87 | 108.66 | 129.85 | 157.16 |

Հետաքրքրական է նաև միջազգային կապիտալի շուկաների միջոցով ֆինանսավորման վիճակագրությունը: Ինչպես կարող ենք տեսնել, Հայաստանի այս ցուցանիշը բավականին ցածր է և վկայում է այն մասին, որ Հայաստանը գրեթե չի մասնակցում կապիտալի միջազգային շուկաներում տեղի ունեցող գործընթացներին (աղյուսակ 87):

Աղյուսակ 87, Ֆինանսավորում միջազգային կապիտալի շուկաների միջոցով (համախառն, ՀՆԱ-ի %)

| Երկիր/խումբ | 2004թ. | 2005թ. | 2006թ. |
|---------------------------|--------|--------|--------|
| Հայաստան | 0.00 | 0.00 | 0.40 |
| Թուրքիա | 3.89 | 5.02 | 6.91 |
| Վրաստան | 0.00 | 0.00 | 2.06 |
| Ադրբեջան | 13.43 | 5.59 | 26.69 |
| Իրան | 3.42 | 2.29 | 0.48 |
| Ստորին միջին եկամուտ | 2.01 | 2.71 | 3.08 |
| Վերին միջին եկամուտ | 4.36 | 5.04 | 6.03 |
| Բարձր եկամուտ | .. | .. | .. |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 4.47 | 6.23 | 6.86 |
| Աշխարհ | .. | .. | .. |

¹⁶⁷ Վաճառվող բաժնետոմսերի ամբողջական արժեքի հարաբերությունն է միջին շուկայական կապիտալիզացիայի վրա:

Կապիտալի շուկայի առնչությամբ նկարագրված իրադրությունը վկայում է այն մասին, որ Հայաստանում գրեթե բացակայող և արդյունավետության բարձրացման լուրջ հիմնախնդիրներ ունեցող շուկան հակադրվում է դիտարկվող երկրներում ու խմբերում զգալի առաջընթացի հետ: Սա նույնպես փոխկապակցված է երկրում տնտեսական ընդհանուր գործընթացների հետ և պայմանավորված են նաև դրանցով: Այնուամենայնիվ հայ-թուրքական սահմանի վերաբացումը և տարածաշրջանում կայուն տնտեսական զարգացման համար լավ հնարավորությունների ստեղծումը կարող է մեծապես նպաստել Հայաստանում ներդրումների աճին և, հետևաբար, կապիտալի շուկայի զարգացմանը: Այնուամենայնիվ անհրաժեշտ է իրականացնել քայլեր՝ կապիտալի շուկայի զարգացման համար համապատասխան ենթակառուցվածքներ և բարենպաստ պայմաներ ստեղծելու ուղղությամբ:

7.3.3. Ֆինանսական ծառայությունների առևտուր

Ծառայությունների առևտրի (աղյուսակներ 88 և 89) մեջ ապահովագրական և ֆինանսական ծառայությունների կշիռը զգալիորեն ցածր է թե՛ Հայաստանում, թե՛ Թուրքիայում: Բարձր առևտրի մակարդակը կարող էր նշանակել խնդրո առարկա ծառայությունների առնչությամբ բարձր միջազգային ներգրավվածություն և վերջիններիս համար անհրաժեշտ ներդրանքային ծառայությունների ապահովման բարձր կարողություն:

Աղյուսակ 88, Ապահովագրական և ֆինանսական ծառայություններ (առևտրային ծառայությունների արտահանումների %)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 3.81 | 4.52 | 3.68 | 3.75 | 3.87 | 3.81 |
| Թուրքիա | 1.78 | 2.80 | 2.48 | 2.54 | 2.09 | 1.78 |
| Վրաստան | 4.70 | 4.77 | 5.41 | 4.85 | 3.95 | 4.70 |
| Ադրբեջան | .. | 1.15 | 1.66 | 1.27 | 1.79 | .. |
| Իրան | .. | .. | .. | .. | .. | .. |
| Ստորին միջին եկամուտ | 1.25 | 1.44 | 1.55 | 1.83 | 1.61 | 1.25 |
| Վերին միջին եկամուտ | 4.67 | 4.64 | 3.74 | 4.41 | 4.19 | 4.67 |
| Բարձր եկամուտ | 8.14 | 8.20 | 7.94 | 7.82 | 8.92 | 8.14 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 2.06 | 2.16 | 2.10 | 2.28 | 2.37 | 2.06 |
| Աշխարհ | 7.08 | 7.12 | 6.84 | 6.85 | 7.68 | 7.08 |

Աղյուսակ 89, Ապահովագրական և ֆինանսական ծառայություններ (առևտրային ծառայությունների ներմուծումների %)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 5.24 | 6.23 | 4.90 | 4.95 | 5.22 | 7.73 |
| Թուրքիա | 17.96 | 14.89 | 13.23 | 12.54 | 13.53 | .. |
| Վրաստան | 6.43 | 8.40 | 10.21 | 10.47 | 12.30 | 14.05 |
| Ադրբեջան | 1.04 | 1.21 | 1.36 | 1.94 | 4.27 | 5.66 |
| Իրան | .. | .. | .. | .. | .. | .. |
| Ստորին միջին եկամուտ | 7.15 | 7.58 | 7.56 | 7.57 | 7.73 | .. |
| Վերին միջին եկամուտ | 16.24 | 16.51 | 16.36 | 16.89 | 16.49 | .. |
| Բարձր եկամուտ | 7.05 | 7.40 | 7.31 | 7.07 | 7.70 | 8.67 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 8.34 | 8.27 | 7.15 | 6.51 | 6.59 | .. |
| Աշխարհ | 7.99 | 8.34 | 8.26 | 8.12 | 8.59 | 8.28 |

7.3.4 Հեռահաղորդակցություն

Հեռահաղորդակցության հատվածի հիմնական ոլորտներն են համակարգչային ծառայություններն ու հեռախոսակապը: Համակարգչային ծառայությունների ոլորտը մեծ մասամբ մասնավորեցված է: Չնայած դրան՝ ոլորտում գործող կազմակերպությունների արդյունավետությունը բավականին ցածր է: Ինչպես ներկայացված է Աղյուսակ 90-ում, Հայաստանում բավականին ցածր է նաև համակարգիչների և ինտերնետի օգտագործման աստիճանը, ինչը պայմանավորված է նաև ինտերնետային ծառայությունների անհամեմատ քանկ լինելով (աղյուսակ 91): Ներկայումս Հայաստանում գոյություն ունեն տվյալների հաղորդման և ինտերնետային ծառայությունների հասանելիության 73 օպերատորներ¹⁶⁸: Չնայած ոլորտի ազատականացման բավականին բարձր մակարդակին՝ զարգացումն այստեղ ունի բավականին դանդաղ ընթացք, ինչի մասին է վկայում նաև Հայաստանում ինտերնետային սերվերների նվազ թիվը (աղյուսակներ 92 և 93):

Աղյուսակ 90, Համակարգչային զինվածություն և ինտերնետային կապի օգտագործում

| | Հայաստան | Ադրբեջան | Վրաստան | Ցածր-միջին եկամտային խումբ | Բարձր եկամտային խումբ | Համաշխարհային միջին |
|--|----------|----------|---------|----------------------------|-----------------------|---------------------|
| Անհատական համակարգիչներ 1000 հոգու հաշվով (2003) | 15.8 | .. | 31.6 | 35.6 | 466.5 | 100.8 |
| Ինտերնետային օգտագործողներ 1000 կապի հոգու հաշվով (2003) | 37 | 37 | 31 | 75 | 377 | 150 |

Աղբյուր՝ IBM Business Consulting Services, 2007թ.

Աղյուսակ 91, Ինտերնետի համար գնային զանբյուլը (ԱՄՆ\$ մեկ ամսում)

| Երկիր/խումբ | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 44.79 | 46.08 | 52.48 | 56.61 |
| Թուրքիա | 19.83 | 18.84 | 11.61 | 10.87 |
| Վրաստան | 26.19 | 10.03 | 9.89 | 9.18 |
| Ադրբեջան | 108.29 | 51.78 | 9.99 | 10.30 |
| Իրան | 5.94 | 5.25 | 2.26 | 1.98 |
| Ստորին միջին եկամուտ | 25.44 | 21.54 | 16.32 | 16.52 |
| Վերին միջին եկամուտ | 25.84 | 22.46 | 17.21 | 16.73 |
| Բարձր եկամուտ | 20.68 | 24.90 | 18.69 | 19.16 |
| Երրորդ և Կենտրոնական Ասիա | 20.01 | 22.00 | 12.00 | 12.00 |
| Աշխարհ | 26.02 | 26.23 | 21.98 | 21.75 |

Աղյուսակ 92, Ինտերնետային ապահով սերվերներ

| Երկիր/խումբ | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|-------------|---------|---------|---------|--------|
| Հայաստան | 4.00 | 8.00 | 13.00 | 2.00 |
| Թուրքիա | 1229.00 | 1794.00 | 2818.00 | 496.00 |
| Վրաստան | 20.00 | 21.00 | 34.00 | 4.00 |
| Ադրբեջան | 4.00 | 4.00 | 5.00 | 1.00 |
| Իրան | 20.00 | 28.00 | 22.00 | 1.00 |

¹⁶⁸ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ինտերնետային կայք – www.psrc.am.

| Երկիր/խումբ | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|-----------|-----------|-----------|-----------|
| Ստորին միջին եկամուտ | 2672.00 | 3413.00 | 4673.00 | 1280.00 |
| Վերին միջին եկամուտ | 9525.00 | 11914.00 | 16476.00 | 5219.00 |
| Բարձր եկամուտ | 388666.00 | 454671.00 | 601828.00 | 210681.00 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 3077.00 | 4560.00 | 6910.00 | 1419.00 |
| Աշխարհ | 401031.00 | 470238.00 | 623386.00 | 217249.00 |

Աղյուսակ 93, Ինտերնետային ապահով սերվերներ (1 միլիոն մարդկանց հաշվով)

| Երկիր/խումբ | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 0.66 | 1.32 | 1.33 | 2.66 | 4.33 |
| Թուրքիա | 7.01 | 12.40 | 17.05 | 24.58 | 38.14 |
| Վրաստան | 0.88 | 2.44 | 4.47 | 4.74 | 7.73 |
| Ադրբեջան | 0.12 | 0.36 | 0.48 | 0.47 | 0.58 |
| Իրան | 0.01 | 0.19 | 0.29 | 0.40 | 0.31 |
| Ստորին միջին եկամուտ | 0.40 | 0.63 | 0.82 | 1.02 | 1.37 |
| Վերին միջին եկամուտ | 6.66 | 9.39 | 11.89 | 14.59 | 20.04 |
| Բարձր եկամուտ | 206.09 | 302.12 | 373.27 | 433.53 | 570.11 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 3.35 | 5.27 | 7.24 | 10.54 | 15.97 |
| Աշխարհ | 37.03 | 53.09 | 65.14 | 73.50 | 95.91 |

Հեռախոսային կապի առումով նույնպես ՀՀ-ն ունի ցածր ցուցանիշներ: Ֆիքսված գծի գինը հարաբերականորեն ցածր է, և բջջայինի գինը ընդհանուր առմամբ համեմատելի է մյուսների հետ, (աղյուսակներ 94 և 95): Ավելի բանկ է միջազգային հեռախոսակապը (աղյուսակ 96), և բարձր է հեռախոսային խափանումների մակարդակը (աղյուսակ 97):

Աղյուսակ 94, Բջջայինի համար գնային զամբյուղը (ԱՄՆ\$ մեկ ամսում)

| Երկիր/խումբ | 2004թ. | 2005թ. | 2006թ. |
|---------------------------|--------|--------|--------|
| Հայաստան | 12.24 | 8.31 | 8.66 |
| Թուրքիա | 6.39 | 12.57 | 12.72 |
| Վրաստան | 6.51 | 44.09 | 44.09 |
| Ադրբեջան | 10.55 | 15.11 | 15.08 |
| Իրան | 2.93 | 2.64 | 2.66 |
| Ստորին միջին եկամուտ | 9.50 | 8.98 | 9.01 |
| Վերին միջին եկամուտ | 9.96 | 10.95 | 10.94 |
| Բարձր եկամուտ | 14.00 | 14.31 | 14.15 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 9.70 | 11.51 | 11.42 |
| Աշխարհ | 11.12 | 10.40 | 10.43 |

Աղյուսակ 95, Բնակավայրային ֆիքսված գծի համար գնային զամբյուղը (ԱՄՆ\$ մեկ ամսում)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. |
|----------------------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 3.17 | 3.14 | 3.35 | 2.44 |
| Թուրքիա | 10.28 | 12.22 | 14.73 | .. |
| Վրաստան | 4.56 | 4.67 | .. | 9.69 |
| Ադրբեջան | 8.17 | 2.03 | 8.13 | 5.30 |
| Իրան | 2.80 | 2.43 | .. | 2.07 |
| Ստորին միջին եկամուտ | 7.43 | 6.10 | 8.14 | 6.41 |

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|
| Վերին միջին եկամուտ | 10.28 | 12.22 | 12.42 | 10.37 |
| Բարձր եկամուտ | 16.71 | 21.19 | 25.41 | 26.31 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 4.81 | 5.29 | 8.56 | 6.75 |
| Աշխարհ | 9.60 | 10.32 | 11.75 | 9.99 |

Աղյուսակ 96, Դեպի ԱՄՆ հեռախոսային զանգի միջին ծախսը (ԱՄՆ\$ երեք րոպեում)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 0.02 | 0.02 | 0.02 | 0.03 | 0.03 | 0.04 |
| Թուրքիա | 0.13 | 0.14 | 0.15 | 0.16 | 0.14 | .. |
| Վրաստան | 0.03 | 0.03 | 0.23 | 0.25 | .. | .. |
| Ադրբեջան | 0.10 | 0.00 | 0.10 | 0.11 | .. | .. |
| Իրան | 0.01 | 0.01 | .. | 0.01 | 0.01 | .. |
| Ստորին միջին եկամուտ | 0.03 | 0.03 | 0.05 | 0.05 | 0.05 | .. |
| Վերին միջին եկամուտ | 0.09 | 0.09 | 0.09 | 0.08 | 0.09 | 0.07 |
| Բարձր եկամուտ | 0.09 | 0.11 | 0.13 | 0.13 | 0.15 | .. |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 0.03 | 0.03 | 0.05 | 0.05 | 0.05 | .. |
| Աշխարհ | 0.07 | 0.07 | 0.08 | 0.08 | 0.09 | .. |

Աղյուսակ 97, Հեռախոսային խափանումները (100 հիմնական գծերի հաշվով)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 59.96 | 52.90 | 53.90 | 64.41 | .. | .. |
| Թուրքիա | 37.36 | 7.50 | 6.90 | 5.60 | 6.00 | .. |
| Վրաստան | 17.20 | .. | .. | .. | .. | .. |
| Ադրբեջան | .. | 45.20 | 48.10 | .. | .. | .. |
| Իրան | .. | .. | .. | .. | .. | .. |
| Ստորին միջին եկամուտ | 28.18 | .. | 14.57 | .. | .. | .. |
| Վերին միջին եկամուտ | 22.83 | 14.90 | 7.79 | 9.24 | .. | .. |
| Բարձր եկամուտ | 7.82 | 6.39 | .. | .. | .. | .. |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | .. | 18.29 | 12.18 | .. | 11.04 | .. |
| Աշխարհ | 19.73 | .. | .. | .. | .. | .. |

Առևտրային ծառայությունների արտաքին առևտրի մեջ (աղյուսակներ 98 և 99) հեռահաղորդակցությանը վերաբերվող ծառայությունների կշռի առումով Հայաստանի ցուցանիշները հարաբերականորեն ցածր են՝ ի համեմատ երկների խմբերի, սակայն Թուրքիայում դրանք էլ ավելի ցածր են: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Թուրքիայում հատկապես վերջին տարիներին նկատվում է այս ծառայությունների ներմուծումների աճ և արտահանումների անկում: Հայաստանում պատկերը հակառակն է: Ունենալով ծառայությունների առևտրում Թուրքիայից բարձր մասնաբաժիններ դիտարկվող բոլոր տարիներին՝ 2007 թվականի ընթացքում նկատվել է այս ոլորտի ծառայությունների արտահանման նկատելի աճ: Սա կարող է լավ հնարավորություն լինել Հայաստանի համար՝ սահմանի վերաբացման պարագայում նշված ծառայությունների արտահանման ծավալների մեծացման և նոր շուկաների հայտնաբերման առումով:

Աղյուսակ 98, Համակարգչային, հաղորդակցությունների և այլ ծառայությունների (առևտրային ծառայությունների արտահանումների %)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 23.75 | 22.38 | 20.78 | 18.74 | 17.62 | 25.64 |
| Թուրքիա | 17.57 | 11.28 | 13.16 | 10.30 | 10.91 | .. |
| Վրաստան | 7.29 | 9.14 | 7.56 | 6.71 | 5.55 | 7.95 |
| Ադրբեջան | 17.98 | 33.49 | 38.58 | 48.00 | 35.86 | 33.24 |
| Իրան | .. | .. | .. | .. | .. | .. |
| Ստորին միջին եկամուտ | 28.62 | 33.87 | 34.78 | 35.40 | 35.90 | .. |
| Վերին միջին եկամուտ | 22.99 | 22.85 | 22.24 | 23.31 | 24.28 | .. |
| Բարձր եկամուտ | 43.55 | 44.39 | 44.12 | 45.16 | 44.58 | 54.35 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 22.87 | 25.55 | 25.84 | 28.30 | 30.17 | 37.65 |
| Աշխարհ | 40.04 | 41.18 | 40.94 | 41.92 | 41.46 | .. |

Աղյուսակ 99, Համակարգչային, հաղորդակցությունների և այլ ծառայությունների (առևտրային ծառայությունների ներմուծումների %)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. | 2006թ. | 2007թ. |
|---------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Հայաստան | 9.92 | 10.92 | 9.72 | 8.35 | 8.48 | 8.95 |
| Թուրքիա | 13.04 | 13.06 | 12.16 | 12.78 | 17.01 | .. |
| Վրաստան | 13.98 | 16.28 | 9.54 | 11.28 | 7.01 | 7.60 |
| Ադրբեջան | 77.24 | 83.92 | 83.26 | 77.38 | 70.21 | 69.94 |
| Իրան | .. | .. | .. | .. | .. | .. |
| Ստորին միջին եկամուտ | 30.53 | 30.71 | 29.77 | 28.94 | 29.70 | .. |
| Վերին միջին եկամուտ | 27.35 | 28.34 | 26.16 | 25.62 | 26.38 | .. |
| Բարձր եկամուտ | 37.59 | 37.23 | 36.38 | 36.89 | 37.56 | 38.83 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 31.28 | 31.45 | 28.98 | 29.94 | 31.13 | .. |
| Աշխարհ | 35.84 | 35.66 | 34.70 | 35.00 | 35.65 | 38.22 |

Թուրքիայում ինտերնետային կապի ծառայությունները խիստ գերազանցում են հայկական օպերատորների կողմից մատուցվող ծառայություններին թե՛ որակի և թե՛ գնի առումով: Ուստի հայ-թուրքական սահմանի վերաբացումը հնարավորություն կտա Հայաստան ներմուծել էժանագին, սակայն միևնույն ժամանակ որակյալ ինտերնետային ծառայություններ, ինչը կարող է մեծապես նպաստել Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը: Տեղեկատվական տեխնոլոգիաները հանդիսանում են Հայաստանի զարգացման գերակայություններից մեկը:

Ի լրումն՝ Հայաստանի և Թուրքիայի՝ դիտարկվող ծառայությունների արտահանման և ներմուծման ցուցանիշները վկայում են այն մասին, որ սահմանի վերաբացումը կարող է նոր շուկաներ առաջ բերել Հայաստանից այս ծառայությունների արտահանման համար:

7.3.5. Տրանսպորտ

Երկաթուղային և ճանապարհային տրանսպորտ

Երկաթգծերի միջոցով Հայաստանի կողմից փոխադրվող բեռների ծավալները խիստ ցածր են՝ համեմատած բոլոր երկրների և խմբերի հետ (աղյուսակ 100): Սա հիմնականում պայմանավորված է Հայաստանի ոչ բարենպաստ աշխարհագրական դիրքով և Թուրքիայի ու Ադրբեջանի հետ տնտեսական հարաբերությունների բացակայությամբ: Խիստ ցածր է նաև ուղևորափոխադրումների մակարդակը (աղյուսակ 101): Նշված ցուցանիշները վկայում են նաև Հայաստանում երկաթգծերով փոխադրումների իրականացման արդյունավետության ցածր մակարդակի մասին:

Աղյուսակ 100, Երկաթուղային բեռնափոխադրումներ (մլն տոննա/կմ)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. |
|---------------------------|----------|----------|----------|----------|
| Հայաստան | 451.80 | 529.19 | 678.19 | 654.14 |
| Թուրքիա | 7169.00 | 8615.00 | 9334.00 | 9078.00 |
| Վրաստան | 5074.50 | 5538.50 | 4855.80 | 6127.00 |
| Ադրբեջան | 7255.00 | 8131.50 | 7536.00 | 10066.80 |
| Իրան | 15842.00 | 18048.00 | 18182.00 | 19127.00 |
| Ստորին միջին եկամուտ | 2483.50 | .. | 1945.00 | 3917.00 |
| Վերին միջին եկամուտ | .. | 11457.00 | 11637.00 | 12457.00 |
| Բարձր եկամուտ | 9732.00 | 10117.00 | 10105.00 | 10108.00 |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 6803.00 | 8131.50 | 8435.00 | 8874.00 |
| Աշխարհ | 4327.00 | .. | 4688.00 | 6939.00 |

Աղյուսակ 101, Երկաթուղային ուղևորափոխադրումներ (մլն ուղևոր/կմ)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. |
|---------------------------|---------|---------|----------|----------|
| Հայաստան | 48.40 | 41.15 | 30.02 | 26.61 |
| Թուրքիա | 5204.00 | 5878.00 | 5163.00 | 5036.00 |
| Վրաստան | 401.00 | 387.00 | 614.00 | 720.00 |
| Ադրբեջան | 584.40 | 654.30 | 654.00 | 877.90 |
| Իրան | 8582.00 | 9314.00 | 10012.00 | 11149.00 |
| Ստորին միջին եկամուտ | 577.20 | .. | 802.00 | 1228.00 |
| Վերին միջին եկամուտ | .. | 1549.00 | 1931.00 | 1266.00 |
| Բարձր եկամուտ | 6562.00 | 6483.00 | 6533.00 | 6152.00 |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 1023.00 | 1035.00 | 985.00 | 1266.00 |
| Աշխարհ | 2145.00 | .. | .. | 2277.50 |

Տարածաշրջանում քաղաքական և տնտեսական իրավիճակի կայունացման պարագայում Հայաստանը կարող է լուրջ նշանակություն ունենալ երկաթուղային բեռնափոխադրումների տեսանկյունից: Այնուամենայնիվ անհրաժեշտ է բարձրացնել Հայաստանում երկաթգծերով բեռնափոխադրումների արդյունավետությունը և լուծել դրանց հետ կապված խնդիրները, որպեսզի միջազգային տնտեսվարող սուբյեկտների կողմից Հայաստանով բեռների փոխադրումը լինի շահավետ:

Ճանապարհային տրանսպորտի ոլորտում ևս Հայաստանի ցուցանիշները խիստ ցածր են համեմատվող երկրների ու խմբերի ցուցանիշներից (աղյուսակներ 102 և 103), ինչը պայմանավորված է նույն խնդիրներով, որոնք առկա են նաև երկաթուղային տրանսպորտի բնագավառում:

Աղյուսակ 102, Ճանապարհային բեռնափոխադրումներ (մլն տոննա/կմ)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. |
|---------------------------|-----------|-----------|-----------|-----------|
| Հայաստան | 204.50 | 279.60 | 210.40 | 231.30 |
| Թուրքիա | 150912.00 | 152163.00 | 156853.00 | 166831.00 |
| Վրաստան | 543.00 | 562.00 | 570.00 | .. |
| Ադրբեջան | 5334.00 | 6241.00 | 6965.00 | 7536.00 |
| Բարձր եկամուտ | .. | 46600.00 | .. | .. |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 6373.50 | 6840.00 | 12279.00 | .. |

Աղյուսակ 103, Ճանապարհային բեռնափոխադրումներ (մլն ուղևոր/կմ)

| Երկիր/խումբ | 2002թ. | 2003թ. | 2004թ. | 2005թ. |
|---------------------------|-----------|-----------|-----------|-----------|
| Հայաստան | 1711.80 | 1867.00 | 1974.10 | 2131.30 |
| Թուրքիա | 163327.00 | 164311.00 | 174312.00 | 182152.00 |
| Վրաստան | .. | 5150.00 | 5200.00 | .. |
| Ադրբեջան | 9603.00 | 9861.00 | 10279.00 | 10892.00 |
| Եվրոպա և Կենտրոնական Ասիա | 6987.00 | 9611.50 | 9438.00 | .. |

7.3.6. Ջրոսաշրջություն

Երկու երկրների զբոսաշրջության արդյունքը համեմատելու համար դիտարկենք զբոսաշրջության կշիռը ամբողջ ներմուծումների ու արտահանումների մեջ և սերտորեն առնչվող ճամփորդային ծառայությունների կշիռը առևտրային ծառայությունների ներմուծումների ու արտահանումների մեջ (աղյուսակներ 104-107):

Աղյուսակ 104, Միջազգային զբոսաշրջություն, ծախսումներ (ամբողջ ներմուծումների %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|---------------------------|-------|------|------|------|------|
| Հայաստան | 7.68 | 6.90 | 6.27 | 6.87 | 5.24 |
| Թուրքիա | 3.51 | 2.91 | 2.50 | 2.63 | 2.18 |
| Վրաստան | 12.98 | 9.11 | 7.86 | 7.14 | 5.82 |
| Ադրբեջան | 3.52 | 2.52 | 2.22 | 2.68 | 3.15 |
| Իրան | .. | .. | .. | .. | .. |
| Ստորին միջին եկամուտ | 5.61 | 4.55 | 4.38 | 4.09 | 4.01 |
| Վերին միջին եկամուտ | 6.34 | 6.11 | 5.72 | 5.55 | 5.12 |
| Բարձր եկամուտ | 7.09 | 6.82 | 6.69 | 6.38 | 5.86 |
| Եվրոպա և կենտրոնական ասիա | 7.36 | 6.43 | 6.32 | 6.00 | 5.38 |
| Աշխարհ | 6.86 | 6.51 | 6.32 | 6.01 | 5.53 |

Աղյուսակ 105, Միջազգային զբոսաշրջություն, մուտքեր (ամբողջ արտահանումների %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 11.61 | 9.96 | 9.52 | 11.37 | 12.78 |
| Թուրքիա | 21.97 | 19.07 | 17.65 | 19.04 | 15.83 |
| Վրաստան | 14.27 | 13.37 | 12.71 | 13.14 | 14.06 |
| Ադրբեջան | 2.36 | 2.29 | 1.87 | 1.20 | 1.44 |
| Իրան | .. | .. | .. | .. | .. |
| Ստորին միջին եկամուտ | 8.38 | 6.81 | 7.00 | 6.20 | 5.86 |
| Վերին միջին եկամուտ | 8.29 | 8.28 | 7.72 | 7.28 | 6.55 |
| Բարձր եկամուտ | 6.99 | 6.58 | 6.53 | 6.28 | 5.89 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 9.64 | 8.90 | 8.40 | 7.96 | 7.06 |
| Աշխարհ | 7.26 | 6.77 | 6.70 | 6.37 | 5.98 |

Աղյուսակ 106, ճամփորդության ծառայություններ (առևտրային ծառայությունների ներմուծումների %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 24.88 | 25.43 | 42.71 | 45.75 | 47.66 | 33.36 |
| Թուրքիա | 34.01 | 31.58 | 27.47 | 28.21 | 27.02 | .. |
| Վրաստան | 46.03 | 36.67 | 33.52 | 28.92 | 24.25 | 20.17 |
| Ադրբեջան | 8.22 | 5.50 | 4.67 | 6.25 | 7.23 | 7.93 |
| Իրան | .. | .. | .. | .. | .. | .. |
| Ստորին միջին եկամուտ | 26.57 | 23.50 | 23.32 | 22.15 | 21.18 | .. |
| Վերին միջին եկամուտ | 31.75 | 30.13 | 30.18 | 30.10 | 29.37 | .. |
| Բարձր եկամուտ | 29.99 | 29.45 | 29.20 | 28.67 | 27.43 | 25.63 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 36.13 | 32.59 | 34.56 | 34.12 | 32.48 | .. |
| Աշխարհ | 29.75 | 28.93 | 28.68 | 28.13 | 27.00 | 25.43 |

Աղյուսակ 107, ճամփորդության ծառայություններ (առևտրային ծառայությունների արտահանումների %)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|---------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հայաստան | 35.93 | 36.47 | 52.86 | 54.62 | 56.98 | 51.22 |
| Թուրքիա | 60.66 | 73.72 | 69.97 | 68.95 | 69.55 | .. |
| Վրաստան | 34.17 | 35.29 | 34.94 | 37.51 | 38.26 | 37.84 |
| Ադրբեջան | 15.91 | 14.74 | 14.40 | 12.43 | 13.90 | 15.17 |
| Իրան | .. | .. | .. | .. | .. | .. |
| Ստորին միջին եկամուտ | 51.16 | 44.24 | 42.83 | 41.22 | 40.91 | .. |
| Վերին միջին եկամուտ | 48.54 | 48.80 | 50.35 | 48.18 | 48.35 | .. |
| Բարձր եկամուտ | 24.59 | 24.26 | 24.14 | 23.34 | 22.74 | 22.84 |
| Եւրոպա և Կենտրոնական Ասիա | 35.72 | 34.99 | 36.01 | 33.76 | 33.35 | 28.41 |
| Աշխարհ | 29.67 | 28.79 | 28.75 | 27.76 | 27.35 | .. |

Հայաստանի արտագնա զբոսաշրջության կշիռը ներմուծումներում մոտ 2,5 անգամ ավելի շատ է, քան Թուրքիայի այդ ցուցանիշը: Սա այլ հանգամանքների թվում վկայում է նաև զբոսաշրջության ներքին առաջարկի հարաբերականորեն ավելի քիչ մրցունակության մասին: Թուրքիայի զբոսաշրջության կշիռը արտահանումներում հարաբերականորեն ավելի շատ է, և սա վկայում է երկրի զբոսաշրջության ներքին առաջարկի հարաբերականորեն ավելի բարձր մրցունակության մասին: Պատկերը կրկնվում է ճամփորդության ծառայությունների առնչությամբ: Հայաստանը առևտրային ծառայություններում կշիռի հաշվով հարաբերականորեն ավելի շատ է ճամփորդական ծառայություններ ներմուծում, քան Թուրքիան, և ավելի քիչ է դրանք արտահանում, քան Թուրքիան:

8. Եզրակացություններ և առաջարկություններ

8.1. Տնտեսական արդյունք, ազգային եկամուտ և ներդրումներ

Հիմնախնդիր 1

Մեկ շնչի հաշվով թուրքիայի համախառն ազգային եկամուտը ավելի քան 3 անգամ բարձր է Հայաստանի այդ ցուցանիշից: Չնայած Հայաստանի վերջին տարիներին գրանցած բոլոր համեմատությունների մեջ տպավորիչ երկնիշ աճին՝ գնողունակության համարժեքով մեկ շնչի հաշվով թուրքիայի ՀՆԱ-ն ավելի քան 2 անգամ բարձր է Հայաստանի այդ ցուցանիշից: Երկու երկրներում էլ ամբողջ արտաքին առևտուրը կազմում է ՀՆԱ-ի մոտ կեսը, սակայն մեկ շնչի հաշվով այն մոտ 2 անգամ ավելի շատ է թուրքիայում: Այս համեմատությունները ենթադրում են տնտեսական ներուժի զգալի տարբերություն: Տնտեսապես հարաբերականորեն ավելի մեծ ներուժ ունեցող երկրի հետ ապագա գործընկերությունը շահավետ դարձնելու համար անհրաժեշտ է.

- Առևտրի առնվազն հավասար պայմանների հաստատում՝ շուկայի մատչելիության առնչությամբ: Թուրքիան ԵՄ-ին անդամակցության գործընթացի շրջանակներում ունի երրորդ երկրներին ԵՄ-ի կողմից տրամադրվող առևտրի նույն արտոնությունների տրամադրման պարտավորություն, ներառյալ՝ միակողմանի արտոնությունների ընդհանրացված համակարգի (GSP+) ու ազատ առևտրի համաձայնագրերի շրջանակներում:
- Ներքին արտադրողների մրցունակության ու արդյունավետության բարձրացմանը և բավարար խրախուսմանը ուղղված ընդգրկուն ռազմավարության մշակում ու համապատասխան միջոցառումների իրականացում, ներառյալ՝ լիարժեք մրցակցային դաշտի ապահովում, ՓՄՁ-ների հետևողական զարգացում, հետազոտությունների ու զարգացման խրախուսում և պետական նպատակային աջակցություն,
- Ներքին արտադրողների պաշտպանությանը ուղղված օրենսդրության արդյունավետ կիրառում ու համապատասխան միջոցառումների իրականացում, ներառյալ՝ շուկայի պաշտպանության ԱՀԿ-ի այնպիսի կանոնների արդյունավետ կրառումը, ինչպիսիք են հակազնազցման, լրավճարների փոխհատուցման և պաշտպանական միջոցների դրույթները:

Հիմնախնդիր 2

Թուրքիան հարաբերականորեն ավելի շատ է (մեկ շնչի հաշվով մոտ 3 անգամ) ներդրումներ կատարում լիկվիդային միջոցների (կապիտալի և ֆիքսված կապիտալի տարբերություն) մեջ, քան Հայաստանը: Դրանք հետագայում կարող են հոսել դեպի Հայաստան: Հայաստանում վերջին տարիներին ֆիքսված միջոցների մեջ ներդրումների շատ բարձր աճը եղել է տնտեսության զարգացմանը ոչ համընթաց: Դա պայմանավորված է շինարարության ու հանքարդյունաբերական ոլորտներում ներդրումներով և չի ենթադրում մասնավորապես գյուղատնտեսության կամ արդյունաբերական ապրանքների արտադրության ոլորտներում հետագա զգալի առաջխաղացում:

Թուրքիան իր առանձին ոլորտներում պահպանում է օտարերկրյա սեփականության սահմանափակումներ (հեռարձակում՝ 25%, օդային ու ծովային տրանսպորտ՝ 49%) և որոշ ոլորտներում՝ հատուկ թույլտվությունների համակարգ: Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը մեկ շնչի հաշվով զգալիորեն գիջում է թուրքիայի, Երոպայի ու Կենտրոնական Ասիայի զարգացող երկրների խմբի այդ ցուցանիշին: Հայաստանում ներդրումների առնչությամբ պետք է առանձնացնել հետևյալ նկատառումները.

- Հայաստանի համար ապագա ներդրումային նախագծերում թուրքական միջոցների հնարավոր ներգրավման առնչությամբ անհրաժեշտ է ուղիներ փնտրել՝ դրա

արդյունավետությունը բարձրացնելու համար, ինչն այդ նախագծերում պետք է արտահայտվի տեխնոլոգիայի փոխանցմամբ, աշխատատեղերի ստեղծմամբ և սոցիալտնտեսական այլ կարևոր հայեցակետերի ընդգրկմամբ: Այն նախագծերում, որտեղ Հայաստանի կառավարությունը կլինի բանակցային կողմ, սա պետք է ապահովվի առնչվող պարտավորեցնող մեխանիզմներով: Պետք է դիտարկել երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում օտարերկրյա կապիտալի մասնակցությունը սահմանափակելու հարցը:

- Թեև Հայաստանում ներդրումների մակարդակը պայմանավորված է զարգացման ընդհանուր խնդիրներով, սակայն տնտեսության դինամիկ զարգացման համար անհրաժեշտ է ավելի շատ և ոչ միայն հանքարդյունաբերության ոլորտում ներդրումների խրախուսումը: Հայաստանում ներդրողների համար անհրաժեշտ է գյուղատնտեսական ու արդյունաբերական ապրանքների արտադրության ճյուղերը գրավիչ դարձնել: Խթանների ավանդական տարբեր միջոցների (արտոնյալ հարկային, մաքսային, վարկային և այլն) մշակման ու կիրառման հետ մեկտեղ պետք է բարելավել ներդրումային միջավայրը, ներառյալ՝ ուժեղացնել մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունն ու մրցակցային միջավայրը, նվազեցնել կոռուպցիան և այլն:
- Թուրքիայի հետ սահմանի վերաբացումն իր հերթին պետք է խթանի Հայաստանում հետագա նոր օտարերկրյա ներդրումների ներգրավումը, քանի որ Թուրքական շուկայի մատչելիությունն ու աշխարհի հետ տարանցիկ նոր կապը օտարերկրյա ներդրողների համար ավելի գրավիչ կդարձնեն ապագա գործունեությունը Հայաստանում: Այս գործոնը առավելագույն ազդեցություն կունենա՝ Հայաստանի և Թուրքիայի միջև հատկապես ազատ առևտրի հաստատման դեպքում:

8.2. Ներմուծումների վրա ազդող կարգավորում

Հիմնախնդիր 3

Թուրքիայի մաքսատուրքերի առավելագույն դրույքաչափերի ամրագրման խիստ ցածր մակարդակը (բոլոր ապրանքների 50%) չի համապատասխանում բազմակողմ առևտրային համակարգի տարրական պահանջներին: Դա ստեղծում է անկանխատեսելիություն ու անորոշություն երկրի ներմուծման քաղաքականության առնչությամբ, քանի որ չամրագրված դրույքաչափերը կարող են կամայականորեն փոփոխվել: Ավելին՝ շուկաների մատչելիության ընթացիկ բանակցությունների համատեքստում (այն դեպքում, երբ արդեն իսկ 100% ամրագրում ունեցող երկրներից պահանջվում է նվազեցնել դրույքաչափերը) Թուրքիան կարող է դա փոխհատուցել միայն դրույքաչափերի ամրագրման ավելացմամբ: Թուրքիայի մաքսատուրքերի հետ կապված մյուս հիմնական խնդիրներն են.

- Կա շուկայի մատչելիության վրա ազդող բազմապիսի միջոցներ կիրառելու հնարավորություն: Ամբողջությամբ ԵՀ-ի կանոններին անցնելը կարող է մեղմել դրանց միջոցով ներմուծումների սահմանափակման հնարավորությունը: Սակայն, հաշվի առնելով նաև ամրագրված սակագների հարաբերականորեն ցածր կշիռը, ներկայումս գործող կարգը «օրենսդրական սակագների» կամայական կիրառման անկանխատեսելի ու սահմանափակող հնարավորություն է տալիս: Ընթացիկ խնդիրներ ունեցող և ամրագրման պարտավորություններից դուրս ցանկացած ճյուղ կարող է սակագնային լրացուցիչ ուղղակի պաշտպանություն ստանալ:
- Կան բազմաթիվ հատուկ, խառը և փոփոխական մքսատուրքեր: Գործող ոչ արժեքային սակագների բարդ համակարգը թափանցիկության պակասի պայմաններում կարող է ստեղծել անկանխատեսելիություն և, մասնավորապես, արժեքային համարժեքներով ստանձնած պարտավորությունների խախտման հնարավորություն տալ: Մյուս կողմից՝ գործող դրույքաչափերի պարզ միջինը գերազանցում է շատ գործընկեր երկրների նույնիսկ պարտավորություններով

ամրագրված դրույքաչափերի միջին մակարդակը: Գործող դրույքաչափերի մեկ հինգերորդ մասը 10%-ից բարձր է, ինչը լրացուցիչ վկայում է սակագնային պաշտպանության ընդհանուր բարձր մակարդակի մասին:

- Սակագների դրույքաչափերը խիստ տարբեր են՝ ըստ ոլորտների ու ըստ ապրանքների մշակման աստիճանի: Գյուղատնտեսությունը ստանում է ամենաբարձր պաշտպանությունը, ինչը մեծ մասամբ կարող է այդ շուկա չթողնել ցանկացած ներմուծողի: Մնացած ոլորտներում շուկայի մատչելիությունը կախված է ներգրավված ապրանքների մշակման աստիճանից: Այնտեղ, որտեղ ավելի շատ է կարևորվում տեղական արտադրությունը, պաշտպանությունը բարձր է՝ անկախ ապրանքների մշակման աստիճանից (հունք, կիսավարտված, ավարտված): Արդյունքում մուտքի հնարավորությունը մեծ մասամբ կարող է սահմանափակվել մնացած մյուս ճյուղերով:
- Գործող ու ամրագրված դրույքաչափերի կառուցվածքից երևում է, որ գյուղատնտեսական ապրանքների սակագները ամբողջությամբ ամրագրվել են շատ բարձր մակարդակի վրա, իսկ ոչ գյուղատնտեսական ապրանքների ապագա անհրաժեշտ պաշտպանությունը «ապահովագրվել է» դրանց մեծ մասի սակագների չամրագրմամբ: Մյուս կողմից՝ այնտեղ, որտեղ կա ամրագրում, դա միջինով այնքան բարձր է, որ եթե գործող սակագների միջինը ըստ անհրաժեշտության հասցվի այդ մակարդակին, ապա ամրագրված ներքին ճյուղերը միջինով կստանան մոտ երեք անգամ ավելի բարձր պաշտպանություն:
- Թեև Թուրքիան ամբողջությամբ չի կիրառում իր օրենսդրությամբ սահմանված մաքսային այլ հարկերն ու վճարները, դրանք բավական բարդ են: Դրանց ամբողջական կիրառման դեպքում հնարավոր է, որ գումարային մաքսային տուրքերն ու վճարները (գործող սակագնով մաքսատուրքը և մաքսային այլ հարկերն ու վճարները միասին) որոշ ապրանքների համար ավելի բարձր լինեն, քան համապատասխան ամրագրված սակագնային դրույքաչափը: Գումարային մաքսային տուրքերն ու վճարները չպետք է գերազանցեն ամրագրված սակագնային դրույքաչափը, ինչը խախտում է համարվում ըստ բազմակողմ առևտրի կանոնների:

Հայաստանի համար վերը նշված բացահայտ ոչ բարենպաստ դիրքից լավագույն ելքը Թուրքիայի հետ արդյունաբերական ապրանքների մասով ազատ առևտրի համաձայնագիր կնքելն է (գյուղատնտեսական ապրանքների մասով բանակցությունները ավելի հեռու ապագայի խնդիրներ են): Օ-ական մաքսատուրքերի երկկողմ պարտավորությամբ Հայաստանը կապահովագրվի Թուրքիայի սակագնային դրույքաչափերի հնարավոր փոփոխություններից ու բազմակողմ բանակցությունների արդյունքում չհավասարակշռված լրացուցիչ պարտավորություններից և կստանա շուկայի հավասար մատչելիություն: Գյուղատնտեսական ապրանքների համար նշված համաձայնագրում պետք է ներառել գործող դրույքաչափերը ապագայում չբարձրացնելու երկկողմ պարտավորություն:

Հիմնախնդիր 4

Հայաստանի և Թուրքիայի 10 ամենախոշոր ներմուծումների և 10 ամենախոշոր արտահանումների վիճակագրության համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նախ՝ հիմնական ներմուծումների նկատմամբ գործող դրույքաչափերը երկու երկրների դեպքում էլ շատ բարձր չեն, և ընդհանուր առմամբ Թուրքիայի դրույքաչափերը փոքր-ինչ ավելի բարձր են Հայաստանի դրույքաչափերից:

Մյուս կողմից՝ մի երկիրը որպես մյուսի հիմնական արտահանումների պոտենցիալ շուկա դիտարկելիս երևում է, որ Հայաստանի արտահանումները Թուրքիայում չեն բախվի շատ բարձր դրույքաչափերի՝ բացառությամբ խմիչքների ու սպիրտերի (միջին դրույքաչափը՝ 18,69%): Ընդհանուր առմամբ Թուրքիայի հիմնական արտահանումները Հայաստանում նույնպես չեն բախվի շատ բարձր դրույքաչափերի՝ բացառությամբ մանածագործվածքների ու հագուստեղենի (միջին դրույքաչափը՝ 10%) և մրգերի ու ընկույզների (միջին դրույքաչափը՝ 10%):

Պետք է նշել, որ այս համեմատությունը չի ժխտում այն փաստը, որ Թուրքիայի դրույքաչափերը բոլոր ապրանքների նկատմամբ միջինով շատ ավելի բարձր են, քան Հայաստանի դրույքաչափերը: Ավելին՝ պետք է ընդգծել, որ Թուրքիան առևտրի իր հիմնական գործընկերոջ՝ ԵՄ-ի հետ ունի մաքսային միության ռեժիմ, ինչը զգալի խոչընդոտ է հայկական արտահանումների համար: Հետևաբար նշված երկկողմ համեմատությունը Թուրքիայի հետ առևտրի համար միայն նվազագույն հիմքեր է տալիս, քանի որ նույնիսկ դրույքաչափերի հավասար պայմանների դեպքում թուրքական արտահանողները հայկական շուկայում չեն բախվի այնպիսի արտոնյալ մրցակցության, որին կբախվեն հայկական արտահանողները թուրքական շուկայում՝ ի դեմս ԵՄ-ի արտահանողների: Արդյունքում Թուրքիայի հետ առնվազն արդյունաբերական ապրանքների ազատ առևտրի վերաբերյալ պայմանագրի կնքումը Հայաստանի համար կլինի ճիշտ ռազմավարություն:

Հիմնախնդիր 5

Թուրքիայի հետ հետագա առևտրային գործընկերությունը պետք է նաև դիտարկվի ԵՄ-ի հետ նրա պարտավորությունների և ԵՄ-ի հետ Հայաստանի ձեռք բերած համաձայնությունների համատեքստում: Եթե Հայաստանը վայելում է ԵՄ-ի՝ Արտոնությունների ընդհանրացված համակարգի (GSP+) շրջանակներում ԵՄ-ի համապատասխան շուկաների արտոնյալ մատչելիություն, ապա սկզբունքորեն դա պետք է տարածվի նաև Թուրքիայի շուկաների վրա:

Մինչ ազատ առևտրի համաձայնեցումը կամ որպես դրան այլընտրանք՝ Թուրքիայի հետ նոր ստեղծվող առևտրատնտեսական հարաբերությունների հանգամանքներում GSP+ արտոնյալ կարգավիճակ պետք է ձեռք բերվի միանգամից: Այլապես պետք է քննարկվի դրան որոշակի ժամանակահատվածում անցնելու տարբերակը: Հայաստանում պետք է նախաձեռնվեն Թուրքիայի հետ որևէ արտոնյալ առևտրի վերաբերյալ իրազեկության բարձրացման միջոցառումներ:

Հիմնախնդիր 6

ԵՄ-ի GSP+ միակողմանի արտոնյալ համակարգով տրամադրվող արտոնությունների, Հայաստանի՝ ԵՄ-ի հետ հնարավոր ազատ առևտրի համաձայնագրի, ԵՄ-ի կողմից Հայաստանին (երրորդ երկիր) տրամադրված նույն արտոնությունների՝ Թուրքիայի կողմից Հայաստանին հետագա տրամադրման, Թուրքիայի՝ ԵՄ-ին ապագա անդամակցության և Հայաստան-Թուրքիա առևտրատնտեսական հարաբերությունների հաստատման այս ամբողջ համատեքստում կարևոր է ծագման կանոնների խնդիրը:

ԵՄ-ի և Թուրքիայի հետ անհրաժեշտ է նպատակային կերպով ծագման բարենպաստ կանոններ քննարկել: Սա ներառում է արտադրական գործընթացում ավելացված արժեքի կուտակման շահավետ և ըստ անհրաժեշտության փոխշահավետ տարբերակների դիտարկումը՝ արտոնոնյալ կամ ազատ առևտրի շրջանակներում հնարավոր առավելագույն թվով ապրանքախմբեր ընդգրկելու և, ընդհանրապես, արտոնություններից կամ ազատ առևտրից առավելագույնս օգտվելու նպատակով:

Հիմնախնդիր 7

Թուրքիայի մաքսային ընթացակարգերի առկա արդիականացումն ու ճկունությունը կարող է ժամանակ ու այլ ռեսուրսներ տնտեսել ներմուծողների համար: Սակայն վարչարարության ու մարմինների միջև համակարգման խնդիրները դեռևս որոշակի սահմանափակում են ստեղծում ներմուծումների համար: Սա մասնավորապես դրսևորվում է մաքսային հարցերով պատասխանատու մարմիններին ներկայացված բողոքարկումների բարձր մակարդակով: Մեկ այլ խնդիր կարող է լինել միայն առանձին մասնագիտացված մաքսային գրասենյակների միջոցով որոշ ապրանքների ներմուծումը: Հնարավոր է, որ սա ավելացնի ներմուծողի ծախսերն ու լրացուցիչ ժամանակ պահանջի:

Մաքսային հարցերը պետք է առանձնահատուկ քննարկվեն երկկողմ բանակցությունների ժամանակ՝ հիմք ընդունելով երկկողմ առևտրի առավելագույն

հեշտացման կարևորությունը, աշխարհագրական հարևանությունը և մաքսային մարմինների միջև համագործակցության ու տվյալների փոխանակման հնարավորությունը:

Հիմնախնդիր 8

Թուրքիան որոշ ներմուծումների նկատմամբ տուրքերի և հարկերի նպատակային զիջումներ է կատարում, որոնք կարող են հանգեցնել ներմուծող ամբողջ ոլորտների արտադրական և/կամ արտահանման աջակցության: Հետևաբար այդ զիջումները կարող են դիտարկվել որպես հատուկ լրավճարներ, որոնք բազմակողմ առևտրի շրջանակներում աջակցության արգելված միջոց են համարվում: Մասնավորապես Թուրքիայի ոչ բարենպաստ շրջաններում «Ներդրումների աջակցության ծրագիրը» կարող է ներդրումներ խթանել երկրի այնպիսի շրջաններում, որոնք նեղ մասնագիտացված են որոշակի ոլորտներում: Իսկ «դեպի ներս ուղղված մշակման ծրագիրը», խթանելով մշակված որոշակի ապրանքների արտահանում, կարող է հանգեցնել արտահանման արգելված լրավճարների: Այս առումով պետք է նշել, որ.

- Մի կողմից՝ աջակցության ծրագրերի շրջանակներում Թուրքիայի մաքսատուրքերի զիջումները կարող են առնչվող ապրանքների՝ դեպի Թուրքիա արտոնյալ արտահանման հնարավորություն հանդիսանալ ոչ ազատ առևտրի պայմաններում:
- Մյուս կողմից՝ հատուկ լրավճարները արգելված են ԱՀԿ-ի կանոններով, և հարևան երկրների պարագայում դրանք կարող են լինել առնվազն երկկողմ լուրջ խորհրդակցությունների և քննարկումների խնդիր, եթե խանգարեն Հայաստանի որևէ ճյուղի արտահանումներին կամ լուրջ վնաս հասցնեն այդ ճյուղին ներքին շուկայում: Սա պետք է բացահայտվի ներքին շուկայի գների ու ներմուծման ծավալների շարունակական վերահսկողության արդյունքում:
- Ամեն դեպքում հետաքրքրական է այդպիսի աջակցության փորձը: Հայաստանը նույնպես պետք է դիտարկի շրջանների զարգացման ծրագրերի շրջանակներում առանձին ճյուղերի աջակցելու հնարավորությունը և ընդհանուր առմամբ շրջանների զարգացման անհրաժեշտությունը:

Հիմնախնդիր 9

Թուրքիան հաճախ է ներմուծումների տարբեր վիճահարույց սահմանափակումներ կատարել: Թուրքիայի սակագնային քվոտաների, հատկապես արտոնյալ սակագնային քվոտաների կիրառումը խիստ հակասության մեջ է բազմակողմ առևտրային համակարգում ոչ սակագնային սահմանափակումներ չկիրառելու պահանջի հետ: Ավելին՝ գործող կարգը դրանց անարդարացի բաշխման հնարավորություն է տալիս: Քվոտա է կիրառվում Չինաստանից մանածագործվածքների և հագուստի ներմուծումների նկատմամբ, որի հնարավորությունը ամրագրվել է Չինաստանի՝ ԱՀԿ-ին անդամակցության պայմանների մեջ: Երկիրը կրառում է նաև քանակական սահմանափակումներ, որոնք համարվում են շուկայի պաշտպանության խիստ միջոցներ: Թուրքիայի ներմուծման լիցենզավորման համակարգը թեև հիմնավորված նպատակներ է հետապնդում, համակարգում թափանցիկության վերաբերյալ մտահոգությունները մատնանշում են առևտրի վրա դրա հնարավոր սահմանափակող ազդեցության մասին:

Ազատ առևտրի համաձայնագրի դեպքում այս խնդիրը նույնպես մասամբ կարող է լուծվել: Այլապես քվոտաների և քանակական սահմանափակումների խնդիրը պետք է դիտարկվի երկկողմ բանակցությունների ժամանակ՝ հնարավոր առավելագույն բարենպաստ մոտեցում ապահովելու նպատակով: Ներմուծման լիցենզավորման հարցերը նույնպես պետք է քննարկվեն բանակցությունների ժամանակ՝ ընթացակարգերի հնարավոր պարզեցման նպատակով: Հետաքրքրական է Չինաստանից ներմուծումների

սահմանափակման փորձը: Ըստ անհրաժեշտության՝ Հայաստանը կարող է դիտարկել Չինաստանից ներմուծումների սահմանափակումների նպատակահարմարությունը:

Հիմնախնդիր 10

Թուրքիան ակտիվորեն օգտվում է բազմակողմ առևտրային համակարգի ընձեռած հնարավորություններից, ինչը խոսում է նաև տնտեսության տարբեր ճյուղերի կարիքներին համակարգված լուծումներ տալու կարողության մասին: Այդ թվում մտահոգիչ է չնախատեսված առևտրային կարգավորումը՝ առևտրային գործընկերության տեսանկյունից: Մասնավորապես.

- Երկիրն ունի հարուստ փորձ ունեցող և լավ ձևավորված հակազնագցման համակարգ: Հիմնախնդիրները ներառում են ոչ շուկայական տնտեսություններից ներմուծումների առավել բարդ ու ոչ բարենպաստ կանոնները և պետական մարմնի սեփական նախաձեռնությամբ դիտարկումները: Անկախ հետաքննության ելքից՝ չորսից տաս ամիս տևողությամբ ժամանակավոր միջոցները գործնականում կարող են շուկայից դուրս թողնել ներմուծողին, եթե նա զրկվի իր բաշխման ցանցից: Այս խնդիրը ավելի բարդ է մինչև հինգ տարի գործող վերջնական որոշված միջոցների դեպքում:
- Թուրքիան ունի նաև լավ ձևավորված պաշտպանական միջոցների համակարգ: Հիմնախնդիրները ներառում են վերջնական որոշված պաշտպանական միջոցների չորսից տասը տարի տևողությունը, ինչը գործնականում նույնպես կարող է շուկայից դուրս թողնել ներմուծողին, եթե նա զրկվի իր բաշխման ցանցից, և առանձին երկրների նկատմամբ պաշտպանական միջոցներ կիրառելու հնարավորությունը:
- Թուրքիայի հակազնագցման համակարգին առնչվող բանակցությունների ժամանակ պետք է քննարկել գնագցման մտահոգությունները հնարավորինս վաղ փուլում երկկողմ խորհրդակցություններում լուծելու և Հայաստանը որպես շուկայական տնտեսություն դիտարկելու հարցերը: Թուրքիայի պաշտպանական միջոցների համակարգի հետ կապված բանակցությունների ժամանակ պետք է քննարկել ներմուծումներին առնչվող մտահոգությունները հնարավորինս վաղ փուլում երկկողմ խորհրդակցություններով լուծելու հարցը: Պետք է բանակցությունների ժամանակ քննարկել և համաձայնել համատեղ խորհուրդ ստեղծելու շուրջ, որը հետագայում անհրաժեշտ կլինի ընթացքում առաջացած բոլոր խնդիրների, ներառյալ՝ չնախատեսված առևտրային կարգավորման խնդիրների արագ քննարկման համար:

Հիմնախնդիր 11

Առևտրային գործընկերների, հետագայում՝ գուցե նաև Թուրքիայի հետ փոխհարաբերությունների առնչությամբ՝ ԱՀԿ-ին անդամակցությունը Հայաստանի համար պարտավորությունների ու իրավունքների համատեղ փաթեթ է: Կարևորագույն իրավունքներից է վնաս հասցնող ներմուծումներից ներքին արտադրողների պաշտպանությունը: Սակայն չնախատեսված առևտրային կարգավորմանն առնչվող տեխնիկական մեթոդները բավական բարդ են, իսկ Հայաստանի պատասխանատու մարմիններն ունեն փորձի պակաս: Նշված իրավունքից առավելագույնս օգտվելու համար.

- Հայաստանը պետք է հետևողականորեն անհրաժեշտ բարձրության հասցնի իր համապատասխան մարմինների կարողությունները և առնչվող գործընթացների իրականացման մեխանիզմների արդյունավետությունը՝ կապված հակազնագցման, լրավճարների փոխհատուցման և պաշտպանական միջոցների հետ:
- Խիստ կարևորվում է պատասխանատու մարմինների կողմից իրականացվող անընդհատ վերահսկողությունն ու սեփական նախաձեռնությամբ պարբերական

ստուգումները: Այս առնչությամբ անհրաժեշտ է նաև կազմակերպել մաքսային մարմնի հետ արդյունավետ և անընդհատ տեղեկատվական համագործակցություն:

- Պետք է նաև գործարարության շրջաններում բարձրացնել շուկայի պաշտպանության այդ միջոցների ու դրանց առնչվող գործընթացների մասին իրազեկությունը, որպեսզի շուկայում ոչ ցանկալի զարգացումների դեպքում ապահովվի գործարարության արագ արձագանք:

Հիմնախնդիր 12

Երկու երկրներում էլ արտահանումները զիջում են ներմուծումներին, սակայն Հայաստանում արտահանումները հարաբերականորեն ավելի քիչ են, քան Թուրքիայում: Հայաստանում ներմուծումների և արտահանումների տարբերությունը, որպես ՀՆԱ-ի մաս, մոտ 3 անգամ ավելի մեծ է, քան Թուրքիայում, և անհամեմատ ավելի բարձր է, քան դիտարկված եկամտային ու աշխարհագրական խմբերում: Հայաստանում վերջին տարիներին արտահանումների աճը եղել է անկայուն, այն դեպքում, երբ Թուրքիան գրանցել է արտահանումների կայուն և զգալի աճ: Վերջին տարիներին երկու երկրներն էլ գրանցել են ներմուծումների զգալի աճ:

Հայաստանի բացասական առևտրային հաշվեկշռի մեծացումը խիստ մտահոգություն է ընթացիկ հաշվի բացասական հաշվեկշռի մեծացման համատեքստում՝ կապված վերջինիս ֆինանսավորման հնարավոր բարդությունների հետ: Այս առումով պետք է նշել, որ ըստ ներմուծման ամիսների՝ ամբողջ պահուստները թեև համեմատական են Թուրքիայի հետ, սակայն զգալիորեն զիջում են դիտարկված եկամտային ու տարածաշրջանային խմբերին:

Բացի արտահանումների ներուժը բարձրացնելու միշտ առկա անհրաժեշտությունից՝ իրադրության բարդացման դեպքում կարող են նաև սահմանափակվել ներմուծումները՝ օգտվելով այդ նպատակներով հատուկ մշակված ԱՀԿ-ի վճարային հաշվեկշռի խնդիրների հետ կապված դրույթներից: Այդ դրույթներով ԱՀԿ-ի անդամ երկրներին իրավունք է վերապահվում աննախադեպ ներմուծումներով պայմանավորված վճարային հաշվեկշռի խնդիրները մեղմել ներմուծումների սահմանափակման միջոցով:

Հիմնախնդիր 13

Թուրքիայի պետական գնումների համակարգը զարգացում է ապրում՝ դառնալով ավելի պարզ ու արդյունավետ: Կան մրցույթների օտարերկրյա մասնակիցների հստակորեն սահմանված իրավասություններ, թեև պահպանվել է ընթացքում դրանք փոփոխելու հնարավորություն, և ընթացակարգերի թափանցիկություն: Համակարգի կանոններին առնչվող մտահոգություններից է մրցույթների տեղական մասնակիցներին տրվող գնային արտոնությունը, որի չափը (15%) կարող է ոչ բարենպաստ վիճակ ստեղծել մրցակիցների համար:

Թուրքիայի մեծածավալ պետական հատվածի բազմատեսակ գնումների կարիքները կարող են մոտ հարևանությամբ դիտվել որպես լավ հնարավորություն:

Հիմնախնդիր 14

Թուրքիան ունի գործընկեր երկրների հետ փոխհամաձայնեցված առևտրի նշանակալի փորձ: Թուրքիայի զարգացման կայուն միտումներ գրանցող տարատեսակ տնտեսական ոլորտները մոտ հարևանությամբ կարող են ստեղծել փոխհամաձայնեցված առևտրի լայն հնարավորություններ:

- Կարելի է զարգացնել արտահանումների և ներմուծումների փոխշահավետ բազմաթիվ տարբերակներ՝ ելնելով նաև վճարային հաշվեկշռի ու արտարժույթի հետ կապված հնարավոր խնդիրներից:
- Ապագա զարգացումները կարող են ներառել ամբողջ արդյունաբերական ճյուղերի փոխկապակցված զարգացման նախագծեր՝ փոխադարձ մատակարարումների, բարձր տեխնոլոգիական համատեղ ներուժի և ներդրումների ներգրավմամբ:

8.3. Արտահանումների և արտադրության վրա ազդող կարգավորում

Հիմնախնդիր 15

Ազատ գոտիներում գործող կազմակերպությունների համար սահմանված արտոնությունները կարող են բավականին էժանացնել այդ կազմակերպությունների կողմից թողարկվող արտադրանքը, ինչը կարող է վտանգ ներկայացնել Հայաստանի համար՝ այդ գոտիներից դեպի Հայաստան էժան ապրանքների մեծ հոսքերի դեպքում: Սակայն, մյուս կողմից, սա կարող է լավ հնարավորություն համարվել հայկական կապիտալի համար, քանի որ չկա որևէ սահմանափակում ազատ գոտիներում գործող կազմակերպություններում օտարերկրյա կապիտալի մասնակցության համար: Բացի դրանից՝ լավ հնարավորություն կարելի է համարել այդ գոտիներում արտադրվող ապրանքները, որոնք չեն արտադրվում Հայաստանում:

Հիմնախնդիր 16

Թուրքիայում կան ներդրումների խթանման բազմաթիվ ծրագրեր, որոնց զգալի մասը ուղղված է արտահանման ուղղվածություն ունեցող ընկերությունների զարգացմանը: Դրանցով տրամադրվող հնարավորություններից արդյունավետ կերպով օգտվելու դեպքում թուրքական կազմակերպությունները (հատկապես ՓՄՁ-ները) կարող են զգալիորեն նվազեցնել իրենց գործառնական ծախսերը և, հետևաբար, ավելի մրցունակ գտնվել ինչպես ներքին, այնպես էլ միջազգային շուկաներում:

Ավելին՝ ներդրումային մի շարք ծրագրեր ուղղված են տարածաշրջանային անհամաչափ զարգացումը հարթելուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիայի արևելյան շրջանները իրենց զարգացման մակարդակով բավականին զիջում են արևմտյան շրջաններին, պետական աջակցության և արտոնությունների զգալի մասը կուղղվի նաև Հայաստանի հետ սահմանամերձ շրջաններին:

Հիմնախնդիր 17

Թուրքիայի ՓՄՁ-ների զարգացման պետական գործակալությունն ունի թուրքական ՓՄՁ-ների և արտասահմանյան ընկերությունների համագործակցության տվյալների բազա: Այս առումով գործակալության և հայկական համապատասխան պետական կառավարման մարմնի միջև համագործակցությունը կարող է օգտակար լինել նաև Հայաստանում գործող ՓՄՁ-ներին՝ դրանց համար ստեղծելով արտահանման հնարավորություններ:

Հայ-թուրքական սահմանի վերաբացումից անմիջապես հետո անհրաժեշտ է ստեղծել համագործակցության ծրագրեր Թուրքիայի ՓՄՁ-ների զարգացման պետական գործակալության և Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի միջև: Այդ ծրագրերով պետք է նախատեսվի հայկական և թուրքական ՓՄՁ-ների տվյալների համատեղ բազայի ստեղծում, ինչը կարող է կարևոր հիմք հանդիսանալ երկրների ՓՄՁ-ների միջև համագործակցության խթանման և, հետևաբար, Հայաստանում ՓՄՁ-ների զարգացման համար:

Հիմնախնդիր 18

Հայ-թուրքական սահմանի վերաբացումից և երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո Թուրքիայում հայկական դիվանագիտական ծառայությանը կից առևտրական ներկայացուցիչը կամ ներկայացուցչությունը կարող է մեծապես օգտակար լինել թե՛ հայկական արտահանողների, և թե՛ Հայաստանի պետական մարմինների գործունեության համար:

Ուստի հայ-թուրքական սահմանի վերաբացումից անմիջապես հետո անհրաժեշտ է Թուրքիայում հիմնադրել առևտրական ներկայացուցչություն, որի գործառնություններից պետք է

լինեն հայկական տնտեսվարող սուբյեկտների, դրանց աջակցող կառույցների և Հայաստանի պետական մարմինների համար թուրքական տարբեր շուկաների, Թուրքիայում օրենսդրական փոփոխությունների և տնտեսական զարգացումների վերաբերյալ տեղեկատվության հավաքումը:

Հիմնախնդիր 19

Արտահանման խթանման գործում մեծապես կարևորվում է Ջարգացման հայկական գործակալության արդյունավետ աշխատանքը: Անհրաժեշտ է մշակել արտահանման խթանման ծրագրեր՝ մասնավորապես կապված արտահանման վարկավորման և ապահովագրության հետ, որի իրականացման համար պատասխանատու կլինի Ջարգացման հայկական գործակալությունը: Մինևույն ժամանակ անհրաժեշտ է բարելավել Գործակալության աշխատանքների արդյունավետությունն ու թափանցիկությունը, հանրամատչելի դարձնել ԶՀԳ-ի գործունեության վերաբերյալ հաշվետվությունները:

Հիմնախնդիր 20

Թեպետ հակամրցակցային համաձայնությունները Թուրքիայում արգելված են, Մրցակցության պաշտպանության մարմնի խորհուրդն իրավասու է մի շարք դեպքերում թույլատրել այդ համաձայնությունները, ինչը կարող է չարաշահումների առարկա հանդիսանալ և վտանգավոր լինել հայ տնտեսվարող սուբյեկտների համար:

Հիմնախնդիր 21

Թեպետ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ոլորտում Թուրքիայի օրենսդրությունը, որը հիմնականում համապատասխանում է Եւրոմիության օրենսդրությանը, նախատեսում է մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության բավարար մակարդակ, այնուամենայնիվ դրա կիրարկման համար անհրաժեշտ վարչական կարողությունները բավարար չեն, ինչը հանգեցնում է խախտումների, ներառյալ՝ կեղծ ապրանքների բավականին բարձր մակարդակի, որոնք կարող են թափանցել նաև հայկական շուկա: Նշենք նաև, որ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ոչ բավարար մակարդակը կարող է հանգեցնել դեպի թուրքական շուկա արտահանվող ապրանքների նկատմամբ անօրինական մրցակցության:

Հայաստանում մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության մակարդակը նույնպես բավականին ցածր է, ինչը հնարավոր է դարձնում Թուրքիայից մտավոր սեփականության իրավունքները խախտող ապրանքների ներմուծումը, ինչպես նաև՝ դրանց շուկայահանումը Հայաստանում:

Հայաստանում մտավոր սեփականության ոլորտում արդյունավետ օրենսդրության և ինստիտուցիոնալ համակարգի առկայությունը հնարավորություն կտա կանխել մտավոր սեփականության իրավունքները խախտող թուրքական ապրանքների ներհոսքը հայկական շուկա:

Անհրաժեշտ է Հայաստանում ներդնել մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության արդյունավետ համակարգ: Սա մասնավորապես ենթադրում է արդյունավետ վերահսկողություն սահմանի վրա և շուկայի ներսում: Միջազգային կառույցների կողմից այս ոլորտում ՀՀ օրենսդրությանը, ինչպես նաև ՀՀ մտավոր սեփականության գործակալությանը տրված գնահատականները համեմատաբար բարձր են, մինչդեռ ամենամեծ խնդիր է համարվում օրենսդրության կիրարկումն ու շուկայում վերահսկողության իրականացումը, որի համար պատասխանատու է ՀՀ կ/ա ոստիկանությունը: Ոլորտում արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ են հիմնարար բարեփոխումներ այս համակարգում, համապատասխան բաժնի մարդկային և ֆինանսական ռեսուրսների կտրուկ զարգացում, բաժնի աշխատանքների թափանցիկության բարձրացում և այլն: Հնարավոր է նաև դիտարկել ՀՀ կ/ա ոստիկանությունից այս գործառույթի դուրս հանումը և մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության առանձին կառույցի ստեղծումը: Ի լրումն՝ անհրաժեշտ է

ստեղծել նաև մաքսային մարմինների և Ոստիկանության համապատասխան բաժնի միջև տեղեկատվության փոխանակման համակարգ:

Հիմնախնդիր 22

Թուրքիայում գոյություն ունեն բազմաթիվ պետական կառույցներ և ծրագրեր, որոնց միջոցով պետական աջակցություն է տրամադրվում թուրքական կազմակերպություններին: Սակայն Հայաստանում չկա արտադրության խթանմանն ուղղված բավարար պետական աջակցություն: Տրամադրվող աջակցության գերիշխող մասը կրում է սոցիալական կամ հանրային նշանակության բնույթ: ՓՄՁ-ներին տրվող աջակցությունը կարելի է համարել պետական աջակցության միակ ուղղությունը, որն ունի գործարարության խթանման և արդյունավետության բարձրացման նպատակ:

Անհրաժեշտ է վերանայել Հայաստանում պետական աջակցության ամբողջ համակարգը: Պետք է մշակել համապատասխան ռազմավարություն, որով կսահմանվեն Հայաստանում պետական աջակցության հետագա զարգացումները: Մասնավորապես կարևոր է դիտարկել արդյունավետության ու մրցունակության բարձրացմանը և տեխնոլոգիաների ներդրմանը, ինչպես նաև ՓՄՁ-ների գործառնական ծախսերի նվազեցմանն ուղղված պետական աջակցության ընդլայնման հնարավորությունները:

Հիմնախնդիր 23

Թուրքիայում պետական պաշտոնյաներին տրվող ոչ պաշտոնական վճարումների բարձր մակարդակը վկայում է մասնավորապես այն մասին, որ երկրի շուկայում առկա են օրենսդրությանը չհամապատասխանող մեծ թվով ապրանքներ: Ի լրումն՝ նշենք, որ Թուրքիայում շատ է նաև այն կազմակերպությունների թիվը, որոնք, ելնելով հարկային նկատառումներից, ամբողջությամբ չեն ներկայացնում իրենց վաճառքի ծավալները: Այս խախտումները կարող են բարձրացնել դեպի Հայաստան արտահանվող թուրքական ապրանքների մրցունակությունը: Թուրքիայի տնտեսությունում ստվերի խիստ բարձր մակարդակը կարող է նաև զգալիորեն դժվարացնել ապագայում հայկական արտահանողների՝ թուրքական շուկայում արդյունավետ մրցակցելու հնարավորությունը: Բացի դրանից՝ սա հերթական անգամ կարևորում է սահմանի վրա Թուրքիայից Հայաստան ներմուծվող ապրանքների նկատմամբ խիստ և արդյունավետ վերահսկողության սահմանափակումները՝ մտավոր սեփականության իրավունքների խախտումների, տեխնիկական պահանջներին անհամապատասխանության և օրինական գործելակերպի այլ խախտումների վաղ բացահայտման համար:

Ելնելով վերոնշյալից՝ անհրաժեշտություն է առաջանում բարձրացնել հակազնազցման համար պատասխանատու մարմնի, ինչպես նաև ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կարողությունները (օր.՝ աշխատավարձերի բարձրացումը, ինչն առաջարկվում է իրականացնել՝ հանձնաժողովի աշխատողների վարձատրության համակարգը դուրս բերելով քաղաքացիական ծառայության վարձատրության համակարգից՝ այն կարգավորելով առանձին օրենքով) և վերջինիս ու Թուրքիայի մրցակցության պաշտպանության կառույցի միջև ստեղծել համագործակցության և տվյալների փոխանակման մեխանիզմ: Նախքան ՀՀ էկոնոմիկայի համապատասխան ստորաբաժանման կարողությունների հզորացումը՝ որպես խնդրի լուծման միջանկյալ տարբերակ կարող է դիտարկվել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ համագործակցության ստեղծումը (օրինակ՝ մասնագետներից կազմված համատեղ հանձնաժողովի ձևավորումը):

Հիմնախնդիր 24

Թուրքիայում հետազոտությունների և զարգացման վրա կատարվող ավելի մեծածավալ ծախսերը, ինչպես նաև գիտության ավելի բարձր մակարդակը կարող են երկարաժամկետ հեռանկարում շատ ավելի արդյունավետ դարձնել Թուրքիայի տնտեսությունը:

Այս հանգամանքն անհրաժեշտություն է առաջացնում Հայաստանում գործող կազմակերպությունների համար ստեղծել բարենպաստ պայմաններ՝ հետազոտությունների

և զարգացման ուղղությամբ դրանց կողմից ներդրումների ծավալների մեծացման համար: Մասնավորապես անհրաժեշտ է ստեղծել համապատասխան մեխանիզմ՝ գիտական արդյունքն անմիջապես արտադրության մեջ փոխանցելու համար: Դա կարող է իրականացվել որևէ հիմնադրամի միջոցով, որը կապող օղակ կհանդիսանա ներդրողների և գիտական արդյունքի ստեղծման համար ֆինանսական աղբյուրների անհրաժեշտություն ունեցողների միջև:

Հիմնախնդիր 25

Թուրքիան համարվում է բավականին անկայուն առևտրային գործընկեր, ինչի մասին վկայում են նաև ԱԶԿ-ի վեճերի կարգավորման շրջանակում երկրի հանդեպ երրորդ երկրների կողմից բարձրացված խնդիրները, որոնց մի մասը երկար ժամանակ լուծում չի ստանում: Սա կարող է հանգեցնել հայկական արտահանողների նկատմամբ առևտրի ոչ արդար կանոնների կիրառմանը: Այս ամենը անհրաժեշտություն է առաջացնում Թուրքիայի հետ առևտրատնտեսական հարաբերությունները կառուցել ավելի կայուն և թափանցիկ հիմքերի վրա: Դա կարող է իրականացվել նաև երկրների միջև վեճերի կարգավորման առանձին մեխանիզմի ստեղծման շնորհիվ, որը կարող է գործել թե՛ ազատ առևտրի քննարկվող համաձայնագրի շրջանակներում և թե՛ առանձին:

Հայաստան-Թուրքիա վեճերի կարգավորման մեխանիզմ մշակելու համար դիտարկվել են մի քանի համաձայնագրեր, և որպես վեճերի լուծման լավագույն համակարգ ունեցող համաձայնագիր ընտրվել է 2002 թ. Եւրոմիության և Չիլիի միջև կնքված ընկերակցության համաձայնագիրը: Դիտարկենք այդ համաձայնագրում ներառված վեճերի կարգավորման ընթացակարգերը:

Վեճերի կարգավորման վերաբերյալ գլուխը գրեթե չի սահմանում բացառություններ՝ վեճերի կարգավորման ընթացակարգով կարգավորման ենթակա խնդիրների կապակցությամբ: Բացի այն խնդիրներից, որոնք կարգավորվում են Մրցակցության գլխով, վեճերի կարգավորման վերաբերյալ դրույթները տարածվում են առևտրի և առևտրին առնչվող բոլոր հարցերի վրա /համաձայնագրի IV մաս/: Ցանկացած իրականացված գործողություն, որը դիտվում է որպես համաձայնագրի խախտում, առաջին հերթին ներկայացվում է Ընկերակցության կոմիտեին¹⁶⁹: Եթե գործը չի լուծվում 45 օրվա ընթացքում (ֆինանսական ծառայությունների պարագայում՝ 90 օրվա ընթացքում, հոդ. 129.2), հայցվոր կողմը կարող է պահանջել ձևավորել արբիտրների խումբ: Ի տարբերություն այլ համաձայնագրերի՝ արբիտրները չեն ընտրվում ընթացիկ կարգով: Ընկերակցության համաձայնագիրը պարտավորեցնում է Ընկերակցության կոմիտեին համաձայնագրի ուժի մեջ մտնելուց վեցամսյա ժամկետում կազմել 15 հնարավոր արբիտրների հաստատված ցուցակ: Ցուցակում ներգրավված յուրաքանչյուր երրորդ արբիտրն ազգությամբ չպետք է լինի չիլիացի կամ եւրոպացի, և արբիտրների խմբի նախագահը պետք է ընտրվի միայն այս հինգ արբիտրներից (հոդ. 185.2):

Այնուհետև նախատեսվում է արբիտրների խմբի ստեղծումը եռօրյա ժամկետում (հոդված 185.3): Ընկերակցության կոմիտեի նախագահն արբիտրների ցուցակից ընտրում է երեք արբիտր. առաջին արբիտրն ընտրվում է հայցվոր կողմի առաջադրած արբիտրներից, երկրորդը՝ պատասխանող կողմի առաջադրած արբիտրներից, իսկ երրորդը՝ նախագահը, այն արբիտրներից, որոնք հատկորոշվել են հոդված 185.2-ի շրջանակներում այդ նպատակի համար: Ուստի արբիտրների խմբի ձևավորումը բարդ խնդիր չէ, քանի որ կողմերը նախապես ընտրում են թե՛ հնարավոր արբիտրներին և թե՛ արբիտրների հնարավոր նախագահին: Ֆինանսական ծառայությունների դեպքում նախագահը չի ընտրվում ցուցակից, այլ ընտրվում է ֆինանսական հարցերով զբաղվող նախապես ընտրված 5 փորձագետների խմբից, որոնք գտնվում են համանման պայմանների մեջ (հոդ. 129): Արբիտրների խմբին վերաբերող կանոնները և ընթացակարգերը, ինչպես նաև վարքագծի կանոնագիրքը ներկայացված են Ընկերակցության համաձայնագրի առանձին հավելվածներում (հավելվածներ XV և XVI):

¹⁶⁹ Եւրոմիության և Չիլիի միջև կնքված համաձայնագրի իրականացման համար պատասխանատու գլխավոր մարմին:

Արբիտրների խումբը պետք է հրապարակի իր որոշումները և եզրակացությունները դրանց կայացումից հետո եռամսյա ժամկետում կամ ցանկացած դեպքում՝ ոչ ուշ, քան հնգամսյա ժամկետում: Այս որոշումները և եզրակացությունները վերջնական են: Ուստի երկու կողմերն էլ հնարավորություն չունեն ազդել վերջնական հաշվետվության պատրաստման վրա՝ դիտողություններ անելով նախնական որոշման վերաբերյալ: Այնուամենայնիվ երկու կողմերն էլ կարող են իրենց գրավոր առաջարկները ցանկացած ժամանակ ներկայացնել մինչև վերջնական հաշվետվության հրատարակումը՝ անկախ այն բանից, թե արբիտրների խումբը դրա անհրաժեշտությունն ունի, թե ոչ: Ավելին՝ ծագած վեճում շահագրգիռ կողմ հանդիսացող ոչ պետական կազմակերպությունները իրավունք ունեն հանդես գալ, այսպես կոչված, դատական խորհրդատուի առաջարկներով: Նման առաջարկներ կարող են արվել «այն պայմանով, որ դրանք կատարվեն արբիտրների խմբի ստեղծումից հետո 10 օրվա ընթացքում, և որ դրանք լինեն ամփոփ և ուղղակիորեն առնչվեն արբիտրների խմբի կողմից դիտարկվող գործի փաստացի և իրավական հանգամանքներին» (հոդված 35, հավելված XV): Չնայած այն բանին, որ արբիտրների խումբը պարտավոր է այս կանոնի շրջանակներում կատարված առաջարկները ներկայացնել կողմերին՝ դիտողություններ ստանալու նպատակով, իր վերջնական որոշման մեջ պարտադիր չէ, որ անդրադառնա այդ առաջարկներում ներկայացված փաստարկներին (հավելված XV, հոդված 37):

Ի տարբերություն դիտարկված այլ համաձայնագրերի՝ Ընկերակցության համաձայնագիրը հստակորեն սահմանում է, որ արբիտրների խմբի կայացրած որոշումը պետք է հրապարակվի (հոդ. 187.1): Նույնիսկ լսումները կարող են կրել հրապարակային բնույթ, եթե երկու կողմերն էլ համաձայն են: Այնուհետև սահմանվում է /հոդված 188.3/, որ «որոշումը կողմերին և Ընկերակցության կոմիտեին ներկայացնելուց հետո երեսուն օրվա ընթացքում այն կողմը, որին ներկայացվել է մեղադրանք, մյուս կողմին ծանուցում է.

ա) այն հատուկ միջոցառումների իրականացման մասին, որոնք կապահովեն որոշման իրականացումը,

բ) վերոնշյալն իրականացնելու համար անհրաժեշտ ողջամիտ ժամանակահատվածի մասին,

գ) ժամանակավոր փոխհատուցման համար կոնկրետ առաջարկի մասին՝ մինչև այն հատուկ միջոցառումների լրիվ իրականացումը, որոնք անհրաժեշտ են որոշման հետ համապատասխանությունն ապահովելու համար»:

Ուստի ազդեցություն կրած կողմի ժամանակավոր փոխհատուցման վերաբերյալ մշակվել է հստակ դրույթ: Եթե կողմերը հոդված 188.3-ում նշված որևէ կետի վերաբերյալ ձեռք չբերեն համաձայնություն, նրանք կդիմեն արբիտրների խմբին, որպեսզի վերջինս 45 օրվա ընթացքում ապահովի պատասխանող կողմի առաջարկած միջոցառումների համապատասխանությունը վերջնական հաշվետվության հետ (հոդ. 188.4): Այս հարցը կարող է նաև բարձրացնել հայցվոր կողմը, եթե վերջինս այն միջոցառումների իրականացումը, որոնց նպատակն է վերջ դնել պարտավորությունների խախտմանը, համարի անբավարար (հոդ. 188.5): Որոշում կայացնելու վերջնաժամկետը նույնպես 45 օր է:

Եթե հայցվոր կողմը վկայակոչի վերոնշյալ երկու հոդվածներից որևէ մեկը և այն պայմանով, որ արբիտրների խմբի կայացրած որոշումները հօգուտ հայցվորի են, ապա սահմանվում է, որ եթե համաձայնություն ձեռք չի բերվել փոխհատուցման ուղղությամբ, հայցվոր կողմն իրավունք ունի կասեցնել համաձայնագրի շրջանակներում տրամադրված արտոնությունների կիրառումը այն չափով, որը համարժեք է համաձայնագիրը խախտող միջոցառման պատճառով արտոնությունների վատթարացմանը /հոդված 188.6/: Կողմերից մեկը, որը պիտի կասեցնի արտոնությունների կիրառումը, դա, ըստ էության, իրականացնում է այն ոլորտներում, որտեղ մյուս կողմը խախտել է համաձայնագիրը: Այնուամենայնիվ կողմերից մեկը կարող է նաև կասեցնել արտոնությունների կիրառումը այլ ոլորտներում, եթե նա նույն ոլորտում արտոնությունների կիրառման կասեցումը համարում է «ոչ կիրառելի» կամ «ոչ արդյունավետ»: Ավելին՝ «արտոնությունների կիրառումը կասեցնելու դեպքում գերակայություն պետք է տրվի այն արտոնություններին, որոնք նվազագույնն են խաթարում համաձայնագրի գործողությունները» (հոդ. 188.7): Կասեցումը պետք է ժամանակավոր բնույթ կրի և պետք է վերացվի այն ժամանակ, երբ մյուս կողմը դադարեցնում է խախտել համաձայնագիրը (հոդ. 188.8): Հայցվոր կողմի արտոնությունների կասեցման պահից հնգօրյա ժամկետում մյուս կողմը կարող է դիմել արբիտրների խմբին՝ որոշում կայացնելու

(կրկին 45 օրվա ընթացքում), թե արդյոք կասեցված արտոնությունները համարժեք են իր կողմից համաձայնագրի խախտման հետևանքով արտոնությունների կորստին կամ վատթարացմանը: Այն կարող է նաև դա անել ցանկացած ժամանակ, երբ արդեն իսկ կասեցված կլինեն արտոնությունները (հոդ. 188.10):

ԱՀԿ-ի սահմանած իրավունքներին և պարտավորություններին առնչվող վեճերը պետք է կարգավորվեն ԱՀԿ-ի սահմանած ընթացակարգերի համաձայն: Ուստի Ընկերակցության համաձայնագիրը ապահովում է, որ եթե համաձայնագրի խախտումը, ըստ էության, համարժեք է ԱՀԿ-ի սահմանած պարտավորությունների խախտմանը, ապա նախապատվությունը պետք է տրվի ավելի շատ ԱՀԿ-ի կանոններով և ընթացակարգերով, այլ ոչ թե համաձայնագրով վեճը կարգավորելուն (եթե կողմերը այլ կերպ չեն պայմանավորվում, հոդ. 189.4(գ)):

Վեճերի կարգավորման առումով Եւրոմիության և Չիլիի միջև կնքված Ընկերակցության համաձայնագիրը կարող է համարվել մինչ այժմ առևտրի երկկողմ համաձայնագրերում ամենաընդգրկունը: Այս համաձայնագրի հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ընթացակարգերն առավել մանրամասնեցված են, և վեճերի կարգավորման գործընթացն առավել արագ է: Կարևոր և նոր հայեցակետն այն է, որ արբիտրներն ընտրվում են նախապես՝ այսպիսով կրճատելով այն վտանգը, որ քաղաքական գործունեության արդյունքում կարող է հետաձգվել արբիտրների ընտրման գործընթացը, երբ կողմերից մեկը պահանջի արբիտրների խմբի ստեղծում: Վեճերի կարգավորման իրավական բնույթը կարող է յուրաքանչյուր կողմին ետ պահել համաձայնագիրը խախտելուց:

8.4. Գյուղատնտեսություն

Հիմնախնդիր 26

Թուրքիայում գյուղատնտեսական ոլորտի վերահսկողության ցածր մակարդակը զգալի հիմնախնդիր է ներմուծողների համար: Մասնավորապես ներքին գյուղատնտեսական արտադրանքի չհարկման արդյունքում այն ավելի բարենպաստ վիճակում է ներմուծումների համեմատությամբ: ԱՀԿ-ի չհարկման արդյունքում տեղի է ունենում միջազգային առևտրի հիմնարար սկզբունքի՝ ազգային վերաբերմունքի խախտում: Եկամտահարկի չհարկման արդյունքում ըստ էության ոլորտին տրամադրվում է համարժեք լրավճար, որը կարող է զգալիորեն գերազանցել ներքին աջակցության թույլատրվող չափը (10%): Այս հարցերի

առնչությամբ պետք է նշել հետևյալը.

- Թուրքիայի գյուղատնտեսության զգալի մասի չհարկման խնդրի լուծման բանակցային հնարավորությունը կարելի է բացառել, հնարավոր չէ նաև փոխհատուցման այլ միջոցների՝ արտահանման լրավճարների տրամադրումը: Արդյունքում հնարավոր որևէ մրցունակությունը կարող է հիմնվել միայն շատ բարձր արդյունավետության, արտադրողունակության և որակի վրա:
- Մրցունակություն ապահովելու թույլատրելի միջոցները սահմանափակ են և թույլատրելի սահմաններում, լրավճարներից (5%) բացի, ներառում են անսահմանափակ ընդհանուր ծառայությունները՝ հետազոտությունները, վնասատուների ու հիվանդությունների վերահսկողությունը, վերապատրաստումն ու խորհրդատվությունը, տեսչական ստուգումը, շուկայավարման ու առաջխաղացման ծառայությունները և ենթակառուցվածքային ծառայությունները: Պետք է բարձրացնել նշված ընդհանուր ծառայությունների ծավալն ու արդյունավետությունը:

Հիմնախնդիր 27

Թուրքիայի գյուղատնտեսական ոլորտի, ինչպես նաև ձկնարտադրության զգալի ներուժը ենթադրում է ապագայում ներքին արտադրության շարունակվող զարգացում: Սա կարող է ուղեկցվել ինչպես հնարավոր ներմուծումների՝ ներքին արտադրանքով

փոխարինմամբ, այնպես էլ արտաքին շուկաների անընդհատ ընդլայնմամբ և արտահանման ծավալների աճով: Ի լրումն՝ Թուրքիայի ներքին գյուղատնտեսական արտադրողներն ընթացիկ բարեփոխումների արդյունքում ստանում են զգալի պաշտպանություն: Վերջինիս հետ առնչվող հիմնական խնդիրներն են.

- Մի կողմից՝ պաշտպանությունը արտահայտվում է պաշտոնական ուղղակի ներքին զգալի աջակցությամբ: Մյուս կողմից՝ նվազեցվում են միջամտական գնումները, որի արդյունքում ներքին շուկայում ձևավորվող ցածր գները կարող են նվազեցնել այդ շուկայի մատչելիությունը ներմուծումների համար և ավելացնել առնչվող ապրանքների մրցունակությունը հարևան շուկաներում:
- Թեև աստիճանական անցում է կատարվում Ուղղակի եկամտային աջակցության վճարումների, օրենքով դեռևս պահպանվում է արտադրության հետ կապված աջակցության հնարավորությունը: Այսպիսի աջակցության կիրառումը կարող է զգալի ադավադումներ մտնել շուկայում, իսկ այդպիսի հնարավորության պահպանումը զգալի անկանխատեսելիություն է ստեղծում՝ պայմանավորված շուկայի հետագա զարգացումներով:
- Գնման գների սահմանման հնարավորությունը անորոշության ու անկանխատեսելիության միջավայր է ստեղծում: Որպեսզի ներքին արտադրողի եկամտի մակարդակը ապահովելու հետ մեկտեղ պահպանվի նաև իր իսկ շուկայում նրա գնային մրցունակությունը, արդյունքում բարձր են պահվում ներմուծման մաքսատուրքերը: Այս ամենը խոսում է Թուրքիայում ներքին արտադրողի/շուկայի խիստ պաշտպանվածության մասին:
- Արտոնյալ վարկային մեխանիզմը, որն աշխատում է արտադրանքի գնման վրա, վերջինիս համար պահանջարկ է ավելացնում՝ արդյունքում ավելացնելով դրա գինը: Սա նույնպես վկայում է ներքին արտադրողի պաշտպանության հետևանքով անկանխատեսելիության միջավայրի ձևավորման մասին:
- Արտադրության խթանման ուղղված ներդրանքային, փոխհատուցման և ուղղակի վճարումների աջակցության գործիքները լրացվում են գնային աջակցության հնարավորությամբ՝ սպառելով ներքին արտադրողի պաշտպանության բոլոր ձևերը: Այս հանգամանքներում Թուրքիայում գյուղատնտեսական ներքին արտադրանքը գտնվում է առավել բարենպաստ վիճակում՝ հնարավոր ներմուծումների համեմատությամբ:
- Թուրքիայի գյուղատնտեսական արտահանման լրավճարները սահմանափակված են բյուջեի սղությամբ այն դեպքում, երբ միջազգային առևտրային համակարգում գյուղատնտեսական մթերքների արտահանման լրավճարներն արդեն վաղուց պետք է աստիճանական վերացման ավարտական փուլում գտնվեին: Հայաստանը խիստ անբարենպաստ վիճակում կարող է հայտնվել ոչ միայն չունենալով համարժեք լրավճարներ կիրառելու թույլտվություն/հնարավորություն, այլև չունենալով իր իսկ շուկաները պաշտպանելու բավարար թույլտվություն/հնարավորություն:
- Թուրքիայի գյուղատնտեսական քաղաքականության իրականացման արդյունքները ցույց են տալիս, որ երկրում գյուղատնտեսական աջակցությունը տեղի է ունենում սպառողների և ընդհանուր ծառայությունների հաշվին: Սա նշանակում է, որ այդ աջակցությունը կրում է առավելապես ներքին արտադրողին պաշտպանելու բնույթ: Թուրքիայում աջակցության ամբողջական փոխանցումները ՀՆԱ-ում տոկոսի հաշվով նույնիսկ ՏՀՁԿ-ի երկրների համեմատությամբ մոտ չորս անգամ ավելի շատ են:
- Թուրքիայի ներքին աջակցության չափը, հաշվի առնելով նաև ոլորտի չհաշվառվող զգալի մասը, հնարավոր է, որ գերազանցի առավելագույն թույլատրվող մակարդակը: Վերջինս (10%), երկու անգամ ավելի բարձր է Հայաստանի՝ ԱՀԿ-ի պարտավորություններով ամրագրված աջակցության առավելագույն հինգ տոկոս մակարդակից: Գյուղատնտեսական հատվածը մի շնչի հաշվով իր ծավալով երկու երկրների համար ունի հարաբերականորեն հավասար կարևորություն: Դրա հիմքում ընկած է այն, որ մի կողմից՝ հայ գյուղատնտեսական աշխատողի արտադրողականությունը առնվազն 2 անգամ բարձր է իր թուրք գործընկերոջ արտադրողականությունից: Մյուս կողմից՝ Թուրքիայում ավելի շատ են

օգտագործվում այլ միջոցներ, մասնավորապես մշակվող հողի միավորի հաշվով թուրքիայում ավելի քան 4 անգամ ավելի շատ է պարարտանյութ օգտագործվում, քան Հայաստանում: Վերջինս ուղղակիորեն կապված է աջակցության չափի հետ:

Թուրքիայի գյուղատնտեսության՝ վերը նշված ներուժով և աջակցության զգալի չափերով պայմանավորված ոչ բարենպաստ իրադրության փոխհատուցման սահմանափակ միջոցների առնչությամբ պետք է նշել, որ.

- Թուրքական գյուղատնտեսությունն ունի ցածր արտադրողականություն, և Հայաստանի ու Թուրքիայի գյուղատնտեսական շուկաներում հայկական արտադրողները կարող են մրցունակություն ապահովել միայն անհամեմատ ավելի բարձր արտադրողականության ու արդյունավետության շնորհիվ:
- Հայաստանում լրավճարների և ընդհանուր ծառայությունների ուղղություններով պետական աջակցությունը պետք է լինի նպատակային և արդյունավետ:
- Հայաստանի շուկայում գների ու ներմուծման ծավալների շարունակական վերահսկողություն պետք է կատարվի և, ըստ անհրաժեշտության, հակազնագցման, փոխհատուցման և պաշտպանության միջոցներ պետք է կիրառվեն:
- Թուրքիայից հնարավոր ներմուծումների առնչությամբ պետք է նշել, որ հայկական արտադրողների՝ ԱԱՀ-ից ազատվող մոտ 99%-ի համար լրավճարների նշված տարբերությունը ավելի քան կհատուցվի ներմուծումների նկատմամբ ԱԱՀ-ի կիրառմամբ: Հայկական այն արտադրողները, որոնց նկատմամբ կկիրառվի ԱԱՀ, կարող են մասամբ հետ ստանալ այն՝ գները նվազեցնելու խիստ պայմանով, քանի որ ԱԱՀ-ն փաստացի վճարում են սպառողները: Մյուս կողմից՝ այս արտադրողները լինելով մեծ՝ կարող են մրցակցել նաև բարձր արդյունավետությամբ, արտադրողականությամբ և մասշտաբից տնտեսումով:

Հիմնախնդիր 28

Թուրքիան գյուղատնտեսության ոլորտում բոլոր ուղղություններով իրականացնում է արդյունավետության, արտադրողականության, որակի ու մրցունակության բարելավման քաղաքականություն: Ի լրումն՝ Թուրքիայի արտաքին առևտրատնտեսական քաղաքականության (այդ թվում՝ գյուղատնտեսական) հանգուցային մաս է կազմում դրա համապատասխանեցումը Երրոմիության քաղաքականության հետ:

Թուրքիայի հետ գյուղատնտեսության ոլորտում հետագա արդյունավետ առևտրատնտեսական հարաբերությունների կայացման համար անհրաժեշտ է բոլոր ուղղություններով մշակել և հետևողականորեն իրականացնել արդյունավետության, արտադրողականության, որակի ու մրցունակության բարելավման համարժեք քաղաքականություն: Պետք է նաև դիտարկել գյուղատնտեսության ոլորտում Թուրքիայի քաղաքականության՝ Երրոմիության հետ համապատասխանեցման փորձը, օրինակ՝ որոշ կառավարման համակարգերի (միասնական վարչական վերահսկողության համակարգ, Ֆերմերային տնտեսությունների հաշիվների տվյալների ցանց) ստեղծումը:

Հիմնախնդիր 29

Հայաստանի գյուղատնտեսությունը, իր սոցիալտնտեսական կարևորությամբ հանդերձ, ունի բազմաթիվ խնդիրներ, որոնք համակարգված լուծում են պահանջում: Սա պետք է ներառի հետևյալը.

- Օգտագործելով թույլատրելի բոլոր հնարավոր միջոցները՝ պետք է նվազագույնի հասցնել հատվածի արդյունքի՝ բնակլիմայական պայմաններից կախվածությունը, ստեղծել ու զարգացնել շուկայահանման նոր համակարգեր, և վերանայել սարքավորումներով ու պարարտանյութով ապահովման հնարավորությունները:
- Ոռոգման մեխանիզմը պետք է վերանայվի ամբողջությամբ: Ջրօգտագործողին աջակցելուց բացի՝ պետք է միջոցները ուղղվեն ոռոգման մատակարարման արդյունավետության բարձրացմանն ու սակագների նվազեցմանը: Այս առումով

ջրամատակարարողին աջակցելու հետ մեկտեղ պետք է նաև դիտարկվի ոլորտում մրցակցություն ստեղծելու անհրաժեշտությունը:

Հիմնախնդիր 30

Թուրքիան ունի անտառային տնտեսության զգալի ներուժ, ինչը ենթադրում է անտառային արտադրության շարունակվող զարգացում:

Թուրքական անտառային արտադրությունը աշխարհագրական մոտ հեռավորության առումով կարող է ծառայել որպես բարենպաստ պայմաններով անտառային արտադրանքի ներկրման հնարավորություն: Սա նույնպես պետք է ներառել բանակցային քննարկման առարկաների թվում:

Հիմնախնդիր 31

Հայաստանի գյուղատնտեսական հումքի արտահանումների կարևորությունը արտահանվող այլ ապրանքների համեմատությամբ ավելի մեծ է, քան Թուրքիային: Հակառակ պատկերն է ներմուծումների դեպքում. ներմուծվող այլ ապրանքների համեմատությամբ Թուրքիայի գյուղատնտեսական հումքի ներմուծումների կարևորությունը ավելի մեծ է, քան Հայաստանին: Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով Թուրքիայի ապրանքների ներմուծումների զգալի մակարդակը, եկիրը նաև զգալի քանակությամբ գյուղտնտեսական հումք է ներմուծում:

Իհարկե, Թուրքիան նախ իր մանածագործվածքների ու հագուստի ոլորտի կարիքների համար ահռելի քանակությամբ բամբակ է ներմուծում (\$2,8 միլիարդ): Երկիրը նաև զգալի քանակությամբ ներմուծում է սոյա, արևածաղկի սերմեր ու ՆՅ 12 ապրանքախմբի մեջ մտնող այլ յուղային սերմեր (\$1 միլիարդ), տարբեր հացահատիկ (ՆՅ 10, մոտ \$1 միլիարդ), տարբեր կենդանական ու բուսական ճարպեր ու յուղեր (ՆՅ 15, մոտ \$0,8 միլիարդ), բուրդ ու այլ կենդանական մազ (ՆՅ 51, մոտ \$0,5 միլիարդ), ծխախոտ և այլն: Թեև անժխտելի է թուրքական գյուղատնտեսության ներուժը, գյուղատնտեսական հումքի ներմուծումների թուրքական այս պահանջարկի առնչությամբ պետք է դիտարկել հայկական ապագա արտահանումների հնարավորությունը:

8.5. Սանիտարական և բուսասանիտարական կարգավորում

Հիմնախնդիր 32

Սննդի անվտանգության, սանիտարական և բուսասանիտարական ոլորտներում Թուրքիայի օրենսդրությունն ունի Եւրոմիության չափանիշների հետ որոշ անհամապատասխանություններ: Թուրքական օրենսդրությունում հիմնական բացերը վերաբերում են գենետիկորեն փոփոխված օրգանիզմներին և նոր տեսակի սննդին: ԵՄ-ի պահանջներին չի համապատասխանում որոշ աղտոտիչների՝ մասնավորապես աֆլատոքսինի վերաբերյալ թուրքական օրենսդրությունը, ինչպես նաև չի համապատասխանում ԵՄ-ի, այսպես կոչված, «հիգիենայի վերաբերյալ օրենսդրական փաթեթին», ինչը Եւրոմիությունը համարում է սննդի անվտանգությանը վերաբերող թուրքական օրենսդրության հիմնական խնդիր:

Թեպետ Հայաստանում սննդի անվտանգության, բուսասանիտարական և անասնաբուժական ոլորտը կարգավորող օրենսդրությունն առկա է, սակայն Եւրոմիության իրավական ակտերին դրա համապատասխանության մակարդակը ցածր է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիայում ակտիվորեն ընթանում է օրենսդրության՝ ԵՄ-ի չափանիշներին համապատասխանեցման գործընթացը, և բազմաթիվ ակտեր արդեն իսկ ներդաշնակեցվել են ԵՄ-ի օրենսդրության հետ՝ Հայաստանից արտահանումները դեպի Թուրքիա կարող են հանդիպել բազմաթիվ տեխնիկական

խոչընդոտների, քանի որ Հայաստանի չաճանիշների համապատասխանությունը Եւրոմիության չափանիշներին ակնհայտորեն ավելի ցածր է, քան Թուրքիայինը:

Այս առումով կարևոր է ՀՀ առնչվող օրենսդրության ԵՄ-ի հետ աստիճանական ներդաշնակեցումը, ինչը հեռանկարում հնարավորություն կտա հայ արտադրողների համար մուտք գործել Թուրքիայի և ԵՄ-ի շուկաներ՝ առանց խոչընդոտների: Ուստի անհրաժեշտ է սննդի անվտանգության, սանիտարական և բուսասանիտարական ոլորտներում Եւրոմիության չափանիշներին ՀՀ օրենսդրության համապատասխանեցման ծրագիր՝ հիմնվելով ՀՀ և Եւրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման ազգային ծրագրի վրա:

Հիմնախնդիր 33

Շուկայում վերահսկողության իրականացմանը վերաբերող թուրքական օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում Եւրոմիության օրենսդրությանը: Բանակցությունների ընթացքում Թուրքիան նշել է, որ չի հասցնի համապատասխանեցնել իր օրենսդրությունն այս փաթեթին՝ նախքան Եւրոմիությանն անդամակցելը: Սա վկայում է այն մասին, որ Թուրքիան խնդիրներ ունի՝ կապված օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացման համակարգի հետ, ինչն իր հերթին կարող է պոտենցիալ վտանգ հանդիսանալ հայ սպառողների համար: Շուկայում վերահսկողության խնդիրների առկայությունը նշվել է նաև Եւրոպական հանձնաժողովի կողմից, որի գնահատականների համաձայն՝ մարդկային և ֆինանսական ռեսուրսների ցածր մակարդակը թույլ չի տալիս արդյունավետ վերահսկողություն իրականացնել սննդի ոլորտում գործող բավականին մեծ թիվ կազմող հաստատություններում:

Բացի դրանից՝ Հայաստանում սահմանի վրա սանիտարական և բուսասանիտարական ստուգումներն իրականացվում են անարդյունավետ կերպով, ինչը կարող է լուրջ վտանգ ներկայացնել հայկական սպառողների համար՝ հայ-թուրքական սահմանի վերաբացման պարագայում: Փաստորեն, մի կողմից՝ Թուրքիայում մեծ քանակությամբ անորակ սննդամթերքի առկայության հնարավորությունը, մյուս կողմից՝ Հայաստանում սահմանի վրա և Հայաստանի ներսում անարդյունավետ սանիտարական և բուսասանիտարական ստուգումները լուրջ ռիսկեր են առաջացնում հայկական սպառողների համար:

Անհրաժեշտ է հայ-թուրքական սահմանին գտնվող մաքսակետը զինել նորագույն սարքավորումներով և բարձրակարգ մասնագետներով՝ վերոնշյալ ստուգումներն արդյունավետ կերպով իրականացնելու համար: Սա թույլ կտա կանխել անորակ սննդամթերքի մուտքը դեպի հայկական շուկա՝ պաշտպանության և անվտանգության բավարար մակարդակ ստեղծելով հայ սպառողների համար: Անհրաժեշտ է նաև բարձրացնել սննդի անվտանգության, սանիտարական և բուսասանիտարական ստուգումներ իրականացնող տեսչությունների կարողությունները՝ հայկական շուկայից արդեն իսկ հայտնված անորակ սննդամթերքի արդյունավետ դուրս հանումը ապահովելու համար:

Հիմնախնդիր 34

Հայաստանում սանիտարական կանոնների և նորմերի միջոցով սահմանվում են տեխնիկական կանոնակարգերի կարգավորմանը բնորոշ պարտադիր պահանջներ, ինչը կարող է հայտնվել Թուրքիայի կառավարության ուշադրության կենտրոնում և դառնալ քննարկումների ու պարզաբանումների առարկա:

Անհրաժեշտ է սանիտարական կանոնների և նորմերի միջոցով կարգավորվող խնդիրները տեղափոխել տեխնիկական կանոնակարգերի կարգավորման դաշտ՝ միևնույն ժամանակ ընդունելով նաև յուրաքանչյուր տեխնիկական կանոնակարգի համար պատասխանատու պետական կառավարման մարմնի նշանակման կարգը:

Հիմնախնդիր 35

Եւրոմիության հետ անասնաբուժության ոլորտում Թուրքիայի հիմնական անհամապատասխանությունը կենդանիների և կենդանական ծագման ապրանքների ներմուծման համար տրվող անհատական լիցենզիաների համակարգն է: Թուրքիան պարտավորվել է վերացնել այն՝ փոխարենը ներդնելով լիցենզիայի ընդհանուր, այլ ոչ թե անհատական պայմաններ:

8.6. Արդյունաբերություն

Հիմնախնդիր 36

Թուրքական արդյունաբերությունը աչքի է ընկնում ոչ բարձր տեխնոլոգիական արտադրությամբ, որը կազմում է երկրի ապրանքների արտահանումների գերակշիռ մասը՝ կենտրոնանալով հարևան երկրների շուկաների վրա: Սյուս կողմից՝ Թուրքիան հարաբերականորեն ավելի քիչ է ներմուծում արդյունաբերական ապրանքներ, հիմնականում՝ բարձր տեխնոլոգիական: Սա առաջմ բարձր կամ ցածր տեխնոլոգիական արտադրության և արտահանումների ներուժ չունեցող Հայաստանի համար երկկողմ առևտրի առումով կարող է միայն ենթադրել ոչ բարձր տեխնոլոգիական արդյունաբերական ապրանքների զգալի ներհոսք:

Թուրքիայի ներդրումային աջակցության ծրագրերի երկարաժամկետ նպատակների թվում են բարձր տեխնոլոգիական ներդրումները, սակայն ներդրումային աջակցություն է ստանում հիմնականում թեթև արդյունաբերությունը, ինչը մոտ ապագայում չի ենթադրում բարձր տեխնոլոգիական արտադրության և արտահանումների կշիռի փոփոխություն: Իսկ թեթև արդյունաբերությունը ստանում է ներքին շուկայի զգալի պաշտպանություն, և պատահական չէ, որ ճյուղը գրանցել է և կգրանցի արտադրության ու արտահանումների հետևողական աճ:

Հայկական արդյունաբերությունը, իր սոցիալտնտեսական կարևորությամբ հանդերձ, ունի զարգացման բազմաթիվ խնդիրներ. հատվածի վերակառուցման գործընթացը դանդաղ է, ընկերությունների գործունեությունը դեռևս դժվար է, նրանց ապրանքները մրցունակ չեն գնի, որակի ու շուկայավարման խնդիրների պատճառով, հատվածի աճը կանոնավոր չէ և կախված է մի քանի հանգուցային ճյուղերի միտումներից, ճյուղային արդյունքը անհավասարաչափ է և այլն: Նաև Հայաստանում ցածր է ՓՍԶ-ների զարգացման մակարդակը:

Հայաստանի արդյունաբերության հատվածը մի շնչի հաշվով իր ծավալով հարաբերականորեն ավելի փոքր է, քան Թուրքիայի արդյունաբերական հատվածը: Հայաստանի արդյունաբերական ապրանքների արտադրության ոլորտը վերջին տարիներին ցուցաբերել է աճի անկայուն ու ավելի ցածր տեմպեր: Այն կազմում է հայկական արդյունաբերական հատվածի ընդամենը մոտ 1/3-ը, մինչդեռ թուրքական արդյունաբերական ապրանքների արտադրության ոլորտը կազմում է թուրքական ավելի ծավալուն արդյունաբերական հատվածի 2/3-ը: Թուրքական արդյունաբերական ապրանքների արտադրությունը մի քանի անգամ գերազանցում է հայկականին և կարող է զգալի մրցակցային ճնշում հանդիսանալ հայկական արտադրական ճյուղերի վրա ու խոչընդոտել դրանց զարգացմանը:

Արտահանվող այլ ապրանքների համեմատությամբ Հայաստանի արդյունաբերական ապրանքների արտահանումների կարևորությունը մեծ է, սակայն զգալիորեն զիջում է Թուրքիային: Իսկ ներմուծվող այլ ապրանքների համեմատությամբ Հայաստանի արդյունաբերական ապրանքների ներմուծումների կարևորությունը ավելի մեծ է, քան Թուրքիայինը: Սննդի ոլորտում Հայաստանի և արտահանումների, և ներմուծումների կարևորությունը ապրանքների առևտրի մեջ ավելի մեծ է, քան Թուրքիայինը: Հայաստանի արտահանումներում շատ կարևոր են հանքանյութերի և մետաղների արտահանումները, մինչդեռ վերջիններիս ներմուծումը հարաբերականորեն ավելի կարևոր է Թուրքիայի ներմուծումներում:

Թուրքիայի հետ ապագայում արդյունաբերական ապրանքների գոհացնող հաշվեկշռի հասնելու համար Հայաստանում անհրաժեշտ է.

- Նախ՝ խթանել հարաբերականորեն ոչ բարձր տեխնոլոգիական ապրանքների արտադրությունը՝ նմանատիպ ներմուծումները (օրինակ՝ պլաստիկ նյութերն ու դրանցից պատրաստված ապրանքները) դրանցով փոխարինելու համար:
- Անհրաժեշտ է մշակել բարձր տեխնոլոգիական ապրանքների արտադրության և արտահանման ներուժի զարգացման ռազմավարություն և հետևողականորեն իրականացնել այն: Այդ ռազմավարության հանգուցային կետերը պետք է լինեն օտարերկրյա ներդրումների խրախուսումը՝ հիմնված Թուրքիայի պահանջարկի և Հայաստանի ու Թուրքիայի միջև լավագույն դեպքում ազատ առևտրի առկայության, ինչպես նաև Հայաստանում մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության բարձրացման և ներդրումային միջավայրը բարելավող այլ միջոցառումների իրականացման վրա:

Համաշխարհային ճգնաժամի հետևանքները հաղթահարելու հետ մեկտեղ Հայաստանում անհրաժեշտ է համակարգված լուծում տալ դրա հետ կապ չունեցող նախկին խնդիրներին.

- Արդյունաբերական հատվածի տարերային զարգացման փոխարեն պետք է ստեղծել համընդհանուր խթանող միջավայր, որտեղ կբացահայտվեն հին ու նոր ճյուղերի ներուժը և դրանց զարգացման մոտեցումները: Հատվածին տրվող աջակցությունը պետք է ուղղվի դրա ճյուղերի արդյունավետության ու արտադրողականության բարձրացմանը:
- Մրցունակության բարձրացումը պետք է ավելի կարևորվի, քան ներմուծումների համար հայկական շուկայի մատչելիության սահմանափակումը: Պետք է ավելացվի ՓՄՁ-ների աջակցությունն ու այդ աջակցության արդյունավետությունը, քանի որ ՓՄՁ-ները հանդիսանում են տնտեսության մեջ արտադրողականության, արդյունավետության, մրցունակության և առնչվող նորարարությունների ու նորանուծությունների շարժիչ ուժը:

Հիմնախնդիր 37

Թուրքիայի արդյունաբերությանը հատկացվող պետական աջակցությունը հասնում է զգալի չափերի: Թեև այն ուղղված է հիմնականում ՓՄՁ-ների աջակցությանը, արդյունքում աջակցություն են ստանում առանձին ճյուղեր (օրինակ՝ թեթև արդյունաբերությունը), որոնցում գերակշռում են ՓՄՁ-ները, և, հետևաբար, այդպիսի աջակցությունը կարող է դիտվել որպես հատուկ: Այս առումով պետք է նշել, որ.

- Հատուկ լրավճարները արգելված են ԱՀԿ-ի կանոններով և, հարևան երկրների պարագայում, դրանք կարող են լինել առնվազն լուրջ երկկողմ խորհրդակցությունների և քննարկումների խնդիր ամենասկզբից կամ հետագայում, եթե խոչընդոտեն Հայաստանի որևէ ճյուղի արտահանումներին կամ ներքին շուկայում լուրջ վնաս հասցնեն այդ ճյուղին: Սա պետք է բացահայտվի ներքին շուկայի գների ու ներմուծման ծավալների շարունակական վերահսկողության արդյունքում:
- Մյուս կողմից՝ հետաքրքրական է այդպիսի աջակցության փորձը: Հայաստանը նույնպես պետք է դիտարկի ՓՄՁ-ների շրջանակներում առանձին ճյուղերի աջակցելու հնարավորությունը և, ընդհանուր առմամբ, ՓՄՁ-ների աջակցության ծավալների մեծացման անհրաժեշտությունը:

Հիմնախնդիր 38

Թուրքիան ունի երկաթի և պողպատի կայացած արդյունաբերություն, որը, սակայն, ունի ընթացիկ վերակառուցման ու արդիականացման և, հետևաբար, որակի խնդիրներ: Թուրքիան ունի նաև ավտոմեքենաշինության զարգացող արդյունաբերություն, որն արդեն

կուտակել է զգալի ներուժ և ստանում է զգալի պաշտպանություն ու արտահանումների աջակցություն:

Սուտ հարևանությամբ սա կարող է դիտարկվել որպես մոտ ապագայում արդյունավետ մատակարարման լավ հնարավորություն: Թուրքիան արդեն իսկ գտնվում է Հայաստանի երկաթի և պողպատի հիմնական մատակարարների թվում: Երկաթի և պողպատի որակի խնդիրները լուծելու համար Թուրքիան այդ ճյուղին տալիս է վերակառուցմանն ու արդիականացմանը ուղղված լրավճարներ, ինչը կարող է ենթադրել հետագա լավ առաջխաղացում: Իսկ ավտոմեքենաշինության ներքին արտադրողի պաշտպանությունն ու արտահանումներին ուղղված աջակցությունը ճյուղի հետագա զարգացման տեսանկյունից դրական երևույթ է և կարող նվազեցնել արտադրանքի գները:

Հիմնախնդիր 39

Թուրքիայի հանքարդյունաբերությունը կազմում է երկրի տնտեսության չնչին մասը, այն նաև չի առանձնանում բարձրարժեք բնական ռեսուրսների զգալի պաշարներով: Սակայն, չնայած դրան, և ոլորտում մրցակցության, արտադրողականության, և արդյունավետության հնարավոր խնդիրներին ու պետական կարգավորման ու վերահսկման ոչ արդյունավետ համակարգմանը՝ Թուրքիայի հանքարդյունաբերությունն ունի արդյունահանվող տարատեսակ հանքանյութեր (77 տնտեսապես արդյունահանվող հանքանյութեր՝ չհաշված նավթն ու քարածուխը) և որոշակի զարգացման միտումներ:

Սուտ հարևանությամբ սա կարող է լինել լավ հնարավորություն: Թուրքիայի հանքարդյունաբերության մմեջ ներդրումների խթանումն ու ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ուղղություններով վարկային լրավճարների տրամադրումը կարող է հիմք հանդիսանալ ոլորտի կայուն զարգացման համար: Հաշվի առնելով նաև ոլորտում Թուրքիայի նպատակադրված մրցունակության բարձրացման գնային ու որակական կողմը՝ անհրաժեշտ է ուսումնասիրել Հայաստանի համար թուրքական արդյունահանվող հանքանյութերի առևտրային նշանակությունը երկու ուղղությամբ.

- Ոլորտի արտադրանքը (օրինակ՝ թուրքական կավը, որ հայտնի է իր առանձնահատուկ որակով) կարող է Հայաստանի արդյունաբերական տարբեր ճյուղերում (օրինակ՝ կերամիկական տարբեր ապրանքների արտադրություն) անհրաժեշտ հումքի մատակարարման մոտ այլընտրանք հանդիսանալ:
- Թուրքական չմշակված տարատեսակ հումքային նյութերի առկայությունը կարող է հնարավորություն ստեղծել Հայաստանում դրանց վերամշակման արդյունաբերության տարբեր ճյուղերի ստեղծման ու զարգացման և հանքանյութերի մատակարարման կամ վերամշակման համատեղ նախագծերի իրականացման համար:

Հիմնախնդիր 40

Հայաստանի հանքարդյունաբերությունն ունի սահմանափակ հնարավորություններ: Ավելին՝ հատվածի արդյունքը կախված է ներդրումների մակարդակից և համաշխարհային գներից: Ոլորտի գործունեության հետ սերտորեն առնչվում է շրջակա միջավայրի պաշտպանության խնդիրը:

Անհրաժեշտ է խթանել հին ու նոր հանքանյութերի որոնումների ու արդյունահանման լրացուցիչ հնարավորությունների օգտագործումը: Ձուգահեռաբար պետք է խստացնել շրջակա միջավայրի պաշտպանությունը՝ կապված առողջության, առողջության տեսանկյունից գյուղատնտեսության ապահովության և զբոսաշրջության որակի հետ:

Հիմնախնդիր 41

Թուրքիան ունի էներգիայի անընդհատ աճող սպառման և ներմուծումների զգալի հավակնություններ: Դա երկրի աշխարհագրական դիրքի հետ մեկտեղ այն դարձնում է էներգակիրների միջազգային առևտրի հոսքերի կարևոր նպատակակետ կամ տարանցիկ

տարածք: Հայաստանը Թուրքիայի էներգետիկական ներմուծումների համար կարող է լինել թե պոտենցիալ մատակարար (էլեկտրաէներգիա և գուցե վերամշակված վառելանյութ) և թե տարանցիկ տարածքի հարևան օղակ: Այս առումով պետք է նշել հետևյալը.

- Այստեղ շոշափելի են տարածաշրջանային տարանցիկ նախագծերից դուրս մնալու նախկին մտահոգությունները: Սակայն ապագա նախագծերի՝ բոլոր կողմերի համար արդյունավետ իրականացման պնդումով Հայաստանը պետք է ստանա մասնակցության հնարավորություն:
- Հայաստանը գտնվում է էներգակիրների միջազգային առևտրի հոսքի տարանցիկ գոտում և ունի լավ հնարավորություն՝ մասնագիտանալու հումքի վերամշակման ոլորտներում, հասնելու ինքնապահովման և զարգացնելու արտահանումները: Այդ առումով, օրինակ, Իրանը, լինելով նավթային երկիր, չունի նավթի վերամշակման ու, մասնավորապես, բենզինի արտադրության բավարար կարողություններ և բենզին է ներմուծում: Ներմուծվող գազից ստացված էլեկտրաէներգիայի արտահանման օրինակով Հայաստանը կարող է դիտարկել ներմուծվող նավթից ստացված բենզինի արտահանման հարցը՝ ընդլայնվող հարևան շուկաների համար:

Հիմնախնդիր 42

Թուրքիայի համար էլեկտրաէներգիայի արտադրության կարողության բարձրացումը բարձր գերակայություն է, և նոր ներդրումների ու ենթաուղրտի վերակառուցման համար ներգրավվում է նաև մասնավոր հատվածը: Ներկայումս Թուրքիան ունի բազմաթիվ էլեկտրակայանների կառուցման և գործարկման նախագծեր, այդ թվում՝ մոտ ապագայում միջուկային էլեկտրակայանի շինարարությունը: Երկարաժամկետ հեռանկարում երկիրը կարող է հասնել էլեկտրաէներգիայի ինքնապահովման:

Հաշվի առնելով Թուրքիային էլեկտրաէներգիա մատակարարելու Հայաստանի հավակնությունները՝ պետք է նշել, որ դա պետք է դիտարկվի հիմնականում Հայաստանի առկա կարողությունների շրջանակներում: Հաշվի առնելով Թուրքիայի էլեկտրաէներգիայի արտադրության կարողությունների բարձրացման մտադրությունը՝ Թուրքիային էլեկտրաէներգիա մատակարարելու նպատակով լրացուցիչ ներդրումների անհրաժեշտությունը պետք է հիմնվի երկկողմ համաձայնությունների վրա, և արտահանման ապագա ակնկալվող ծավալները պետք է գնահատվեն համապատասխանաբար:

8.7. Տեխնիկական պահանջներ

Հիմնախնդիր 43

Տեխնիկական կանոնակարգերի թուրքական օրենսդրության՝ Եւրոմիության պահանջներին համապատասխանության աստիճանը բավականին բարձր է: Սա նշանակում է, որ որոշ ոլորտներում հայկական արտահանողները կարող են տեխնիկական խոչընդոտների հանդիպել:

Քանի որ Եւրոմիության տեխնիկական օրենսդրության ներդրումը Հայաստանում կարող է լուրջ խնդիր առաջացնել ազգային տնտեսվարող սուբյեկտների համար, առաջին հերթին անհրաժեշտ է ապահովել թուրքական տեխնիկական օրենսդրության մատչելիությունը հայկական արտահանման ներուժ ունեցող արտադրողների համար՝ թուրքական համապատասխան ինտերնետային կայքերը հայ գործարարներին մատչելի դարձնելու և ՀՀ ստանդարտների ազգային ինստիտուտի և Թուրքիայի համապատասխան մարմնի միջև համագործակցություն հաստատելու միջոցով, այնուհետև մշակել համապատասխան ծրագիր՝ հայկական տեխնիկական օրենսդրությունը ԵՄ-ի չափանիշներին արագ համապատասխանեցնելու համար: Ծրագիրը պետք է հիմնվի ՀՀ և Եւրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև կնքված

Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման ազգային ծրագրի վրա:

Հիմնախնդիր 44

Թուրքիայի տեխնիկական պահանջների ոլորտում Եւրոմիության հիմնական մտահոգությունը վերաբերում է շուկայում վերահսկողության իրականացմանը: Թուրքական կառավարության ռեսուրսները բավարար չեն շուկայում արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար, ինչի արդյունքում շուկայում կարող են հայտնվել տեխնիկական պահանջներին չհամապատասխանող ապրանքներ:

Միևնույն ժամանակ Հայաստանում շուկայի վերահսկողության առումով պետք է նախ՝ նշել, որ ՀՀ ստանդարտների ազգային ինստիտուտում ստանդարտացման և սերտիֆիկացման գործառնությունների համատեղումը հակասում է «շահերի բախումը» բացառելու վերաբերյալ ԵՄ-ի պահանջին: Մյուս կողմից՝ սերտիֆիկացումից ու փորձարկումից ստացված հասույթներով բավարար բյուջեի ապահովման մտադրությունը կարող է հանգեցնել սերտիֆիկացման գործընթացում չարաշահումների և հետագայում ստեղծել տեխնիկական պահանջներին չհամապատասխանող թուրքական ապրանքներին սերտիֆիկատների շնորհման հնարավորություն:

Շուկայում արդյունավետ վերահսկողության իրականացումը հայ-թուրքական սահմանի վերաբացման համատեքստում առանցքային խնդիրներից մեկն է: Ուստի հայ-թուրքական սահմանի վերաբացման պարագայում ՀՀ որակի պետական տեսչության կարողությունների ոչ բավարար մակարդակը կարող է համարվել կարևորագույն խնդիրներից մեկը: Ի լրումն՝ այս ոլորտում հասարակական կազմակերպությունների համեմատաբար ցածր ակտիվությունը հնարավորություն չի տալիս ստեղծել նաև հասարակական վերահսկողության արդյունավետ համակարգ, որը կկարողանար լրացնել պետական վերահսկողության բացերը:

Հայ-թուրքական սահմանի վերաբացման դեպքում անհրաժեշտ է բարելավել սերտիֆիկացման և շուկայում վերահսկողության համակարգերը: Մասնավորապես սերտիֆիկացման օղակում անհրաժեշտ է առանձնացնել ստանդարտացման և սերտիֆիկացման գործառնությունները՝ շահերի բախումից խուսափելու համար, ինչի հետևանքով կարող են սերտիֆիկացվել նույնիսկ տեխնիկական օրենսդրությամբ չհամապատասխանող ապրանքները:

Նշված խնդիրների պատճառով Հայաստանը չի կարողանում կնքել երրորդ երկրների հետ համապատասխանության գնահատման արդյունքների փոխադարձ ճանաչման համաձայնագրեր, իսկ Եւրոմիության դեպքում հնարավոր է նաև Հայաստանի կողմից արդյունքների միակողմանի ճանաչում: Սա կարող է անհավասար պայմանների մեջ դնել Հայաստանի և Թուրքիայի արտահանողներին, եթե Թուրքիան այս ոլորտում էլ ձգտի համապատասխանեցնել իր արտաքին առևտրային քաղաքականությունը Եւրոմիության քաղաքականությանը: Ուստի բանակցությունների արդյունքում անհրաժեշտ է, որ Թուրքիային չտրամադրվի համապատասխանության գնահատման արդյունքների միակողմանի ճանաչման, կամ այդպիսի ճանաչումը քննարկվի Հայաստանի համար շահավետ մեկ այլ զգալի զիջման փոխարեն:

Ի թիվս համապատասխանության հավաստման և սերտիֆիկացման օղակների՝ անհրաժեշտ է նաև բարելավել վերահսկողության համակարգը: Մասնավորապես անհրաժեշտ է բարձրացնել բոլոր տեսչությունների (հատկապես ՀՀ որակի պետական տեսչության) կարողությունները տեխնիկական ռեսուրսների առումով և տեսուչների համար կազմակերպել անզլերեն լեզվի դասընթացներ, որպեսզի նրանք կարողանան աշխատել միջազգային ստանդարտներով: Ի լրումն՝ պետք է ստեղծել խորհուրդ՝ ՀՀ վարչապետի նախագահությամբ, որը կհամակարգի բոլոր տեսչությունների աշխատանքները: Անհրաժեշտ է նաև բարելավել տեսչությունների և մաքսային մարմինների միջև համագործակցությունը՝ ստեղծելով տվյալների միասնական բազա, որը հնարավորություն կտա արդյունավետ վերահսկողություն իրականացնել Թուրքիայից ներմուծվող ապրանքների նկատմամբ:

Անհրաժեշտ է նաև խթանել հասարակական կազմակերպությունների ակտիվությունը՝ դրանց համար բացահայտելով ֆինանսավորման հնարավոր աղբյուրներ:

8.8. Ծառայություններ

Հիմնախնդիր 45

ՀՀ բանկային համակարգում կան խնդիրներ՝ կապված դրանց արդյունավետության հետ: Հնարավոր է, որ հայ-թուրքական սահմանի վերաբացման դեպքում Հայաստանի բանկային ծառայությունների շուկայում հայտնվեն թուրքական արդյունավետ մասնակիցներ: Սա կարող է դրականորեն անդրադառնալ բանկային ոլորտում մրցակցության մակարդակի բարձրացման վրա, ինչն իր հերթին կհանգեցնի վարկային ռեսուրսների մատչելիության բարելավմանը: Սակայն դա կարող է տեղի ունենալ ֆինանսական ճգնաժամի հետևանքների մեղմացումից հետո:

Թեպետ Հայաստանի շուկայում թուրքական մրցակիցների ներկայությունը ինքնին կարող է նպաստել մրցակցության բարելավմանը, սակայն պետք է նաև միջոցառումներ ձեռնարկել՝ տեղական բանկերի արդյունավետությունը բարելավելու ուղղությամբ, որպեսզի վերջիններս կարողանան մրցունակ գտնվել թուրքական բանկերի նկատմամբ:

Հիմնախնդիր 46

Հայաստանում գրեթե բացակայող և արդյունավետության բարձրացման լուրջ հիմնախնդիրներ ունեցող կապիտալի շուկան զգալիորեն ետ է մնում տարբեր ցուցանիշներով զարգացած և զարգացող մի շարք երկրներից: Սա փոխկապակցված է երկրում տնտեսական ընդհանուր գործընթացների հետ և պայմանավորված է նաև դրանցով: Այնուամենայնիվ, հայ-թուրքական սահմանի վերաբացումը և տարածաշրջանում կայուն տնտեսական զարգացման համար լավ հնարավորությունների ստեղծումը կարող է մեծապես նպաստել Հայաստանում ներդրումների աճին և, հետևաբար, կապիտալի շուկայի զարգացմանը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է իրականացնել քայլեր՝ կապիտալի շուկայի զարգացման համար համապատասխան ենթակառուցվածքներ և բարենպաստ պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

Հիմնախնդիր 47

Թուրքիան ունի ինտերնետային կապի զարգացած միջավայր: Ինտերնետային ծառայությունները բավականին էժան են, իսկ ենթակառուցվածքներն ունեն մեծ կարողություններ: Սա կարող է մրցակցային ճնշում գործադրել Հայաստանում գործող ինտերնետային պրովայդերների վրա:

Այս փաստը կարող է դիտվել որպես ապագա խթան՝ Հայաստանում ինտերնետային ցանցի զարգացման, այդ ծառայությունների գների կտրուկ իջեցման և ինտերնետային կապի մատչելիության և որակի բարձրացման համար: Սա հատկապես կարևոր է այն պատճառով, որ տեղեկատվական տեխնոլոգիաները հայտարարվել են Հայաստանի զարգացման գերակայություններից մեկը:

Ի լրումն նշենք, որ Հայաստանից համակարգչային ծառայությունների արտահանման մասնաբաժինը առևտրային ծառայությունների ընդհանուր արտահանման մեջ գերազանցում է այդ ծառայությունների՝ առևտրային ծառայությունների ընդհանուր ներմուծումներում համակարգչային ծառայությունների ներմուծման մասնաբաժինը, ինչը վկայում է Հայաստանում այդ ծառայությունների առկա ներուժի մասին: Միևնույն ժամանակ Թուրքիայի դեպքում հակառակ պատկերն է. համակարգչային ծառայությունները ներմուծվում են ավելի մեծ չափով, քան դրանք արտահանվում են: Հայաստանի և Թուրքիայի դիտարկվող ծառայությունների արտահանման և ներմուծման ցուցանիշները վկայում են այն մասին, որ սահմանի վերաբացումը կարող է ծառայությունների նոր շուկաներ ստեղծել Հայաստանից այս ծառայությունների արտահանման համար:

Քանի որ Հայաստանի համար թուրքական էժան և որակյալ ինտերնետային կապի ծառայությունները կարող են լավ միջոց հանդիսանալ Հայաստանում ոլորտի զարգացման համար, ինչպես նաև Թուրքիան կարող է գրավիչ շուկա լինել Հայաստանից

համակարգչային ծառայությունների արտահանման համար, ուստի անհրաժեշտ է նշված ծառայությունների համար հնարավորինս ազատական պայմաններ ստեղծել Թուրքիայի հետ:

Հիմնախնդիր 48

Տարածաշրջանում քաղաքական և տնտեսական իրավիճակի կայունացման դեպքում Հայաստանը կարող է լուրջ նշանակություն ունենալ երկաթուղային բեռնափոխադրումների տեսանկյունից, սակայն Հայաստանի երկաթուղային տրասպորտն ունի խնդիրներ՝ հատկապես կապված շարժակազմի հնացած լինելու և երկաթգծերի վերանորոգման հետ:

Երոմիության չափանիշներին Թուրքիայի օրենսդրության համապատասխանեցումը ենթադրում է, որ երկաթուղային փոխադրումների ոլորտում պետք է ձևավորել մրցակցային պայմաններ: Ներկայումս դա հնարավոր չէ, քանի որ թե՛ երկաթգծերը, թե՛ ամբողջ շարժակազմը (գնացքները, վագոնները և այլն) պատկանում են Թուրքական պետական երկաթուղուն: Սակայն ԵՄ-ի չափանիշների ներդրումից հետո հնարավոր կլինի, որ Թուրքիայում գործեն մի քանի երկաթուղային փոխադրողներ՝ իրենց սեփական շարժակազմով: Սա նշանակում է, որ ԵՄ-ի չափանիշների ներդրումից հետո Հայկական երկաթուղին հնարավորություն կունենա օգտվել Թուրքիայի երկաթուղային ենթակառուցվածքներից:

Հայաստանում անհրաժեշտ է բարձրացնել երկաթգծերով բեռնափոխադրումների արդյունավետությունը և լուծել դրանց հետ կապված խնդիրները, որպեսզի միջազգային տնտեսվարող սուբյեկտների կողմից Հայաստանով բեռների փոխադրումը լինի շահավետ:

Թուրքիայի երկաթուղային ոլորտում տեղ գտած զարգացումների՝ մասնավորապես երկաթուղային ոլորտում ԵՄ-ի օրենսդրության հետ թուրքական օրենսդրության համապատասխանեցման շնորհիվ հայկական երկաթուղին հնարավորություն կունենա օգտվել թուրքական ենթակառուցվածքից՝ փոխադրումներ իրականացնելու համար: Սակայն որպեսզի դա իրականացվի արդյունավետորեն, պահանջվում են ներդրումներ՝ հատկապես շարժակազմի վիճակը բարելավելու համար: Անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ կառավարությունը Ռուսական երկաթուղիների ուշադրությանը ներկայացնի Թուրքիայի երկաթուղային ոլորտում հնարավոր զարգացումները, և ըստ այդմ վերանայվեն ներդրումային ծրագրերը կամ մշակվեն նորերը:

Նշենք նաև, որ տարածաշրջանում քաղաքական և տնտեսական իրավիճակի կայունացման դեպքում Հայաստանը կարող է լուրջ նշանակություն ունենալ երկաթուղային բեռնափոխադրումների տեսանկյունից: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է բարձրացնել Հայաստանում երկաթգծերով բեռնափոխադրումների արդյունավետությունը և լուծել դրանց հետ կապված խնդիրները, որպեսզի միջազգային տնտեսվարող սուբյեկտների կողմից Հայաստանով բեռների փոխադրումը լինի շահավետ:

Հիմնախնդիր 49

Թուրքիան ունի մեծ առևտրային նավատորմ: Չնայած այն հանգամանքի, որ ծովային տրանսպորտի ոլորտում երկիրն ունի մի շարք խնդիրներ՝ կապված սակագների բարձր լինելու, տեխնիկական հագեցվածության նվազ մակարդակի և այլնի հետ, հնարավոր է, որ նույնիսկ այդ դեպքում թուրքական նավահանգիստների մատուցած ծառայություններն ավելի էժան լինեն Փոթիում մատուցվող ծառայություններից: Ի լրումն՝ Թուրքիայում ծովային տրանսպորտի բարելավմանն ուղղված մի շարք ծրագրերի հաջող իրագործումից հետո բարձրանալու է նշված ծառայությունների որակն, ու իջնելու են այդ ծառայությունների գները, ինչի շնորհիվ հայ արտահանողների և ներմուծողների համար թուրքական նավահանգիստներից օգտվելը ավելի ձեռնտու կլինի:

Հիմնախնդիր 50

Թուրքիան ունի մեծ առևտրային ավտոպարկ: Չնայած այն հանգամանքին, որ ճանապարհային տրանսպորտի ոլորտում երկիրն ունի մի շարք խնդիրներ՝ կապված այլ

երկրների կողմից կիրառվող տրանզիտային քվոտաների, տեխնիկական հագեցվածության նվազ նակարդակի, մաքսային գործարքների իրականացման տեխնոլոգիաների և այլնի հետ, հնարավոր է, որ նույնիսկ այդ պարագայում թուրքական փոխադրողների մատուցած ծառայություններն ավելի էժան լինեն վրացական ծառայություններից: Ի լրումն՝ Թուրքիայում ճանապարհային տրանսպորտի բարելավմանն ուղղված մի շարք ծրագրերի հաջող իրագործումից հետո բարձրանալու է նշված ծառայությունների որակն ու իջնելու են այդ ծառայությունների գները, ինչի շնորհիվ հայ արտահանողների և ներմուծողների համար թուրքական փոխադրողների ծառայություններից օգտվելը ավելի ձեռնտու կլինի:

Հիմնախնդիր 51

Թուրքիայի զբոսաշրջությունն ունի զգալի ներուժ, որը օգտագործվում է տարեցտարի աճող տեմպերով: Հատկանշական է, որ օգտագործվում է կարողությունների միայն կեսը: Սա նշանակում է, որ երկիրը հնարավորություն կունենա ավելի մեծ թվով այցելուների դեպքում նվազեցնել մեկ այցելուի հաշվով ծախսերը և, հետևաբար, գները, ինչը իր հերթին օտարերկրյա այցելուի համար ավելի գրավիչ կդարձնի զբոսաշրջությունը Թուրքիայում և կներգրավի էլ ավելի մեծ թվով այցելուների: Այս ամենը պետք է խիստ մտահոգիչ լինի այն հարևան երկրների համար, որոնք, ունենալով զբոսաշրջության հատված, այդ բնագավառում առևտուր սկսեն Թուրքիայի հետ:

Թուրքիայի հետ զբոսաշրջության բնագավառում առևտուրը Հայաստանի համար կարող է խիստ մտահոգիչ լինել երկու պատճառով. (1) դա Թուրքիայում զբոսաշրջության գնային ու որակական հարաբերական առավելությունների դեպքում կարող է առաջ բերել սեփական զբոսաշրջիկների աննախադեպ արտահոսք և արդյունքում կարող է խիստ վնասել տեղական զբոսաշրջության հատվածին ու դրան սպասարկող բազմաթիվ ծառայությունների ճյուղերին, (2) զբոսաշրջիկների այդ արտահոսքը, զուգակցվելով արտարժույթի զգալի արտահոսքի հետ, կարող է լրացուցիչ ճնշում ստեղծել Հայաստանի վճարային հաշվեկշռի վրա:

Հայաստանի արտագնա զբոսաշրջության կշիռը ներմուծումներում մոտ 2,5 անգամ ավելի շատ է, քան Թուրքիայի նույն ցուցանիշը: Սա, ի թիվս այլ հանգամանքների, վկայում է նաև զբոսաշրջության ներքին առաջարկի հարաբերականորեն ավելի քիչ մրցունակության մասին: Թուրքիայի զբոսաշրջության կշիռը արտահանումներում հարաբերականորեն ավելի շատ է, և սա վկայում է երկրի զբոսաշրջության ներքին առաջարկի հարաբերականորեն ավելի բարձր մրցունակության մասին: Պատկերը կրկնվում է ճամփորդության ծառայությունների առնչությամբ. Հայաստանը առևտրային ծառայություններում կշիռի հաշվով հարաբերականորեն ավելի շատ է ճամփորդական ծառայություններ ներմուծում, քան Թուրքիան, և ավելի քիչ է դրանք արտահանում, քան Թուրքիան: Նշված բոլոր խնդիրների առնչությամբ պետք է նշել հետևյալը.

- Ջբոսաշրջությունը պետք է զգալի կշիռ ունենա Հայաստանի արտահանումների ծավալում: Անհրաժեշտ է խթանել ենթակառուցվածքների հետագա զարգացումը և ըստ շրջանների հավասարակշռված մոտեցում ցուցաբերել: Սահմակալների պակասը լրացնելը կարողությունների ավելացմամբ թերևս կարող է գործարար տեսանկյունից չարդարացվել, քանի որ այդ պակասն առկա է միայն որոշ ամիսներին: Այլընտրանք կարող է հանդիսանալ զբոսաշրջիկների հավասարաչափ բաշխումը տարվա ընթացքում՝ գովազդելով Հայաստանը և ուժեղացնելով առաջարկը ցածր պահանջարկ ունեցող ամիսների համար:
- Ոլորտի մրցունակությունը բարձրացնելու համար պետք է մեծացնել պետական աջակցության չափն ու որակը, ինչը կարող է արտահայտվել մասնավորապես ենթակառուցվածքային ներդրումների խրախուսման, սպասարկման ոլորտներում ներգրավված ՓՄՁ-ներին տրվող նպատակային աջակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման խթանման ձևով:

Հավելված

Աղյուսակ , Ամբողջ բնակչությունը

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|----------|----------|----------|----------|----------|----------|
| Հայաստան | 3050157 | 3037617 | 3026879 | 3017661 | 3009549 | 3000874 |
| Թուրքիա | 69626000 | 70712000 | 71149750 | 72065000 | 72975000 | 73887733 |
| Վրաստան | 4613639 | 4563848 | 4516981 | 4473409 | 4432981 | 4395770 |
| Ադրբեջան | 8171893 | 8234039 | 8306400 | 8391850 | 8484400 | 8570966 |
| Իրան | 66013857 | 67044289 | 68068944 | 69087070 | 70097913 | 71021039 |

Աղյուսակ , ՀԱԵ, Ատլաս մեթոդ (ընթացիկ \$)

| Երկիր/խումբ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|
| Հայաստան | 2894102784 | 3507423488 | 4516699136 | 5891739648 | 7925489152 |
| Թուրքիա | 251715567616 | 339710574592 | 442886914048 | 516317118464 | 592850190336 |
| Վրաստան | 3943831040 | 4763675648 | 5945451520 | 7413342720 | 9337313280 |
| Ադրբեջան | 6766806016 | 7894757376 | 10619123712 | 16042102784 | 21871826944 |
| Իրան | 130682806272 | 150723559424 | 177606180864 | 207373811712 | 246544498688 |

Աղյուսակ , ՀՆԱ, գնողունակության համարժեք (ընթացիկ միջազգային \$)

| Երկիր/խումբ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|--------------|--------------|--------------|--------------|--------------|
| Հայաստան | 9418779519 | 10703018262 | 12559497502 | 14683254658 | 17138770360 |
| Թուրքիա | 588475900928 | 689301324653 | 747327022610 | 841781908795 | 922188540374 |
| Վրաստան | 12810614082 | 13945697580 | 15746772991 | 17773082354 | 20513558484 |
| Ադրբեջան | 25566876721 | 28974010933 | 37730965781 | 52364919032 | 64082380286 |
| Իրան | 552450800425 | 597007469083 | 643503423966 | 703140596241 | 776537945430 |

Աղյուսակ , Համախառն կապիտալի ձևավորում (ընթացիկ \$)

| Երկիր/խումբ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|-------------|-------------|-------------|--------------|--------------|
| Հայաստան | 680934912 | 889803200 | 1492982784 | 2144117632 | 2907078400 |
| Թուրքիա | 53598752768 | 76210257920 | 96748019712 | 116875689984 | 145672585216 |
| Վրաստան | 1105250176 | 1448189312 | 1832978816 | 2067633280 | 2955900928 |
| Ադրբեջան | 3868490240 | 4643351040 | 5501464576 | 6265166848 | 8588709888 |
| Իրան | 49134784512 | 58791690240 | 65455788032 | 74750132224 | 99885137920 |

Աղյուսակ , Համախառն ֆիքսված կապիտալի ձևավորում (ընթացիկ \$)

| Երկիր/խումբ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|-------------|-------------|--------------|--------------|--------------|
| Հայաստան | 645532608 | 853510144 | 1460088704 | 2125774208 | 2863216640 |
| Թուրքիա | 51817041920 | 79950340096 | 101787107328 | 118121381888 | 141276758016 |
| Վրաստան | 1064313792 | 1407299456 | 1799618176 | 1979892736 | 2876736000 |
| Ադրբեջան | 3847436032 | 4617788416 | 5471530496 | 6231924224 | 8284343808 |
| Իրան | 38909480960 | 46640992256 | 52068847616 | 59462324224 | 83946020864 |

Աղյուսակ , Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսք (Վճարային հաշվեկշիռ, ընթացիկ \$)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|-------------|------------|------------|------------|------------|-------------|
| Հայաստան | 110738700 | 120872200 | 218797000 | 258233400 | 343480000 |
| Թուրքիա | 1137000000 | 1752000000 | 2883000000 | 9801000000 | 20070000000 |
| Վրաստան | 160212000 | 334649000 | 492329000 | 452752000 | 1059761000 |
| Ադրբեջան | 1392435000 | 3284998000 | 3556099000 | 1679920000 | -583985000 |
| Իրան | 548000000 | 482000000 | 996000000 | 300000000 | 901076000 |

Աղյուսակ , Գյուղատնտեսության ավելացված արժեք (ընթացիկ \$)

| Երկիր/խումբ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|
| Հայաստան | 604333312 | 808155008 | 931590592 | 1151397504 | 1507117056 |
| Թուրքիա | 30231644160 | 37260881920 | 45282070528 | 43786117120 | 50568822784 |
| Վրաստան | 770384192 | 840364928 | 947070272 | 867610944 | 955856512 |
| Ադրբեջան | 904086400 | 953805120 | 1211629568 | 1401841536 | 1777650688 |
| Իրան | 16003876864 | 18048663552 | 19622021120 | 22408237056 | 25712508928 |

Աղյուսակ , Արդյունաբերության ավելացված արժեք (ընթացիկ \$)

| Երկիր/խումբ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|-------------|-------------|--------------|--------------|--------------|
| Հայաստան | 982405120 | 1243667072 | 1904953600 | 2556792576 | 3598207488 |
| Թուրքիա | 75949146112 | 97312718848 | 119579516928 | 131818520576 | 161475821568 |
| Վրաստան | 961319744 | 1239220352 | 1523459200 | 1682225920 | 2106461568 |
| Ադրբեջան | 3531584512 | 4407062016 | 7786795520 | 13251485696 | 17500649472 |
| Իրան | 54739689472 | 68703707136 | 84183670784 | 96137273344 | 118863986688 |

Աղյուսակ , Արդյունաբերական պրանքների արտադրության ավելացված արժեք (ընթացիկ \$)

| Երկիր/խումբ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|-------------|-------------|-------------|-------------|--------------|
| Հայաստան | 541111168 | 686598400 | 937733824 | 984553920 | 1245680384 |
| Թուրքիա | 54000840704 | 68333420544 | 83571367936 | 91113242624 | 108605120512 |
| Վրաստան | 520152352 | 626481408 | 775545984 | 861339648 | 1080118784 |
| Ադրբեջան | 628363904 | 719042688 | 859331456 | 1055480576 | .. |
| Իրան | 15033762816 | 18118899712 | 22201356288 | 25353820160 | 30222143488 |

Աղյուսակ , Սիջազգային զբոսաշրջություն, մուտքեր (ընթացիկ \$)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|
| Հայաստան | 810000000 | 900000000 | 1020000000 | 1610000000 | 1930000000 |
| Թուրքիա | 11901000000 | 13203000000 | 15888000000 | 19720000000 | 18441000000 |
| Վրաստան | 1440000000 | 1720000000 | 2090000000 | 2870000000 | 3610000000 |
| Ադրբեջան | 630000000 | 700000000 | 790000000 | 1000000000 | 2010000000 |
| Իրան | 16070000000 | 12660000000 | 13050000000 | 13640000000 | 15130000000 |

Աղյուսակ , Սիջազգային զբոսաշրջություն, ծախսումներ (ընթացիկ \$)

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|
| Հայաստան | 850000000 | 970000000 | 1020000000 | 1460000000 | 1330000000 |
| Թուրքիա | 18800000000 | 21130000000 | 25240000000 | 32100000000 | 31540000000 |
| Վրաստան | 1890000000 | 1700000000 | 1960000000 | 2370000000 | 2570000000 |
| Ադրբեջան | 1100000000 | 1200000000 | 1400000000 | 1880000000 | 2560000000 |
| Իրան | 39900000000 | 41200000000 | 44020000000 | 45600000000 | 50040000000 |

Աղյուսակ , Միջազգային զբոսաշրջություն, ժամանողների թիվ

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|-------------|----------|----------|----------|----------|----------|
| Հայաստան | 162000 | 206000 | 263000 | 319000 | 381000 |
| Թուրքիա | 12790000 | 13341000 | 16826000 | 20273000 | 18916000 |
| Վրաստան | 298000 | 313000 | 368000 | 560000 | 983000 |
| Ադրբեջան | 834000 | 1014000 | 1349000 | 1177000 | 1194000 |
| Իրան | 1585000 | 1546000 | 1659000 | .. | .. |

Աղյուսակ , Միջազգային զբոսաշրջություն, մեկնողների թիվ

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 |
|-------------|---------|---------|---------|---------|---------|
| Հայաստան | 131000 | 169000 | 221000 | 269000 | 329000 |
| Թուրքիա | 5131000 | 5928000 | 7299000 | 8246000 | 8275000 |
| Վրաստան | 317000 | .. | .. | .. | .. |
| Ադրբեջան | 1141000 | 1376000 | 1473000 | 1830000 | 1836000 |
| Իրան | 2921000 | .. | .. | .. | .. |

Աղյուսակ , Ապրանքների արտահանումներ (ընթացիկ \$)

| Երկիր/խումբ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|-------------|-------------|-------------|-------------|--------------|
| Հայաստան | 685600000 | 715030000 | 950400000 | 1004295000 | 1219088000 |
| Թուրքիա | 47253000000 | 63167000000 | 73476408000 | 85535000000 | 107154000000 |
| Վրաստան | 461000000 | 648754000 | 865454000 | 992610000 | 1240200000 |
| Ադրբեջան | 2591718144 | 3615400000 | 4347000000 | 6372157000 | 9300000000 |
| Իրան | 33750000000 | 41697000000 | 56252000000 | 77012000000 | 83000000000 |

Աղյուսակ , Ապրանքների ներմուծումներ (ընթացիկ \$)

| Երկիր/խումբ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|-------------|-------------|--------------|--------------|--------------|
| Հայաստան | 1279500000 | 1350980000 | 1768000000 | 2194317000 | 3281800000 |
| Թուրքիա | 69340000000 | 97540000000 | 116774151000 | 139577000000 | 169987000000 |
| Վրաստան | 1141000000 | 1847860000 | 2490920000 | 3677800000 | 5216700000 |
| Ադրբեջան | 2626200000 | 3516000000 | 4211210000 | 5267640000 | 6050000000 |
| Իրան | 24798000000 | 31976000000 | 40041000000 | 40772000000 | 45000000000 |

Աղյուսակ , Ապրանքների և ծառայությունների արտահանումներ (ընթացիկ \$)

| Երկիր/խումբ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|-------------|-------------|--------------|--------------|--------------|
| Հայաստան | 902544384 | 979445312 | 1336599936 | 1407489920 | 1748115840 |
| Թուրքիա | 70040346624 | 92566462464 | 105778282496 | 120135057408 | 144212934656 |
| Վրաստան | 1270758528 | 1617473280 | 2164027648 | 2546142208 | 3206963968 |
| Ադրբեջան | 3056613120 | 4235002880 | 8336195584 | 13954516992 | 16869713920 |
| Իրան | 36877357056 | 47412875264 | 73628180480 | 90623803392 | 88739495936 |

Աղյուսակ , Ապրանքների և ծառայությունների ներմուծումներ (ընթացիկ \$)

| Երկիր/խումբ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|-------------|--------------|--------------|--------------|--------------|
| Հայաստան | 1404513024 | 1506738048 | 1983799936 | 2328249856 | 3102214656 |
| Թուրքիա | 73218646016 | 102919307264 | 122699259904 | 146160762880 | 177336860672 |
| Վրաստան | 1852880256 | 2469711104 | 3306658048 | 4417165824 | 5875724288 |
| Ադրբեջան | 4769302016 | 6312111104 | 7006432768 | 8132598784 | 8300858368 |
| Իրան | 34805325824 | 42321739776 | 57231409152 | 73281060864 | 81340612608 |

Աղյուսակ , Առևտրային ծառայությունների արտահանում (ընթացիկ, 1000\$)

| Երկիր/խումբ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|------------|------------|------------|------------|-----------|
| Հայաստան | 199,326 | 324,366 | 402,741 | 475,129 | 517,238 |
| Թուրքիա | 17,909,000 | 22,706,000 | 26,328,000 | 24,233,000 | .. |
| Վրաստան | 416,764 | 505,487 | 643,699 | 816,867 | 1,018,288 |
| Ադրբեջան | 391,592 | 453,480 | 624,638 | 841,492 | 1,171,983 |
| Իրան | .. | .. | .. | .. | .. |

Աղյուսակ , Առևտրային ծառայությունների ներմուծում (ընթացիկ, 1000\$)

| Երկիր/խումբ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|-----------|-----------|------------|------------|-----------|
| Հայաստան | 263,524 | 418,751 | 516,639 | 600,163 | 697,722 |
| Թուրքիա | 6,690,000 | 9,188,000 | 10,182,000 | 10,152,000 | .. |
| Վրաստան | 354,961 | 439,683 | 583,903 | 687,123 | 871,424 |
| Ադրբեջան | 2,027,124 | 2,702,263 | 2,625,096 | 2,783,889 | 3,324,488 |
| Իրան | .. | .. | .. | .. | .. |

Աղյուսակ , Բորսայում գրանցված տեղական կազմակերպություններ

| Երկիր/խումբ | 2002 | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|------|------|------|------|------|------|
| Հայաստան | 161 | 213 | 194 | 198 | 35 | 29 |
| Թուրքիա | 288 | 284 | 296 | 302 | 314 | 319 |
| Վրաստան | 282 | 278 | 277 | 257 | 231 | 161 |
| Ադրբեջան | .. | .. | .. | .. | .. | .. |
| Իրան | 327 | 370 | 411 | 420 | 332 | 329 |

Աղյուսակ , Բորսայում գրանցված ընկերությունների շուկայական կապիտալիզացիան (ընթացիկ 1000\$)

| Երկիր/խումբ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|------------|------------|-------------|-------------|-------------|
| Հայաստան | 27,112 | 18,105 | 42,800 | 60,171 | 105,000 |
| Թուրքիա | 68,379,200 | 98,298,500 | 161,537,430 | 162,398,640 | 286,572,050 |
| Վրաստան | 202,600 | 206,156 | 354,650 | 668,332 | 1,389,000 |
| Ադրբեջան | .. | .. | .. | .. | .. |
| Իրան | 34,443,618 | 46,995,060 | 38,723,812 | 37,943,328 | 45,573,815 |

Աղյուսակ , Վաճառվող բաժնետոմսերի ամբողջական արժեքը (ընթացիկ, \$1000)

| Երկիր/խումբ | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 |
|-------------|------------|-------------|-------------|-------------|-------------|
| Հայաստան | 735 | 1,619 | 1,114 | 4,840 | 5,000 |
| Թուրքիա | 99,610,660 | 147,426,380 | 201,258,140 | 227,615,110 | 302,401,900 |
| Վրաստան | 800 | 25,000 | 38,030 | 95,162 | 45,213 |
| Ադրբեջան | .. | .. | .. | .. | .. |
| Իրան | 5,290,973 | 13,304,471 | 8,187,470 | 4,885,885 | 8,238,370 |